

ԱԼԲԵՐՏ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

ՀԱՏՈՐ Ա





ALBERT A. STEPANIAN

**ANCIENT GREECE:
RESEARCH ESQUISSES**

VOLUME FIRST

**FROM THE ARCHAIC SOCIAL
TRANSITIVITY
TO THE SPARTAN RITUAL AND
MILITARY STABILITY**



**YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN – 2025**

ԱԼԲԵՐՏ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

**ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ**

ՀԱՏՈՐ Ա

**ԱՐԽԱԻԿ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆԶԵՎ
ՍՊԱՐՏԱՅԻ ՌԱԶՄԱԾԻՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ**



ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2025

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝

Դավիթ Վ. Պետրոսյան, Տիգրան Վ. Մկրտչյան

Գլխավորներ՝

Տիգրան Ռ. Եփրեմյան, Սմբատ Խ. Հովհաննիսյան, Զ. Կ. Կճանյան

ՀՏԴ-94(38)

ԳՄԴ-63.3(4Հու)4

U 887

Ա. Ա. Ստեփանյան

U 887 Հին Հունաստան. հետազոտական էսքիզներ: Հատոր Ա: Արխայիկ անցումային հասարակությունից մինչև Սպարտայի ռազմածիսական կայունությունը / Ա. Ստեփանյան. –Եր.: 2025. – 224 էջ:

Առաջարկվող հատորը ընդհանուր հետազոտական ծրագրի առաջին մասն է: Ծրագիր, որը խնդիր ունի բացահայտելու հին հունական պատմության հիմնակազմիկ դիտանկյունները: Այս ծիրի մեջ սևեռումի առարկան քաղաք-պետությունն է՝ ձևավորված ի հետևանս Ուշբրոնզեդարյան քաղաքակրթական փլուզումի: Պալատական կենտրոնները քանդվեցին, և հասարակությունը հետադիմեց գյուղական համայնքների մակարդակի: Նոր քաղաքակրթական ընձյուղումը, որ կատարվեց Արխայիկ դարաշրջանում (Ք.ա. 8–6-րդ դդ.), չկրկնեց նախորդի փորձը: Գնաց ինքնիշխան քաղաք-պետությունների ձևավորման ճանապարհով, որոնք ավելի հարիք էին Հունաստանի սահմանափակ ռեսուրսներին: Պակասը որոշվեց լրացնել էրգաստիկ-մշակութայնստեղծ գործունեությամբ՝ տեխնոլոգիաներ, գիտություններ, բառարվեստ, թատրոն, ռազմարվեստ, հանրային համախմբման և կառավարման նոր ձևեր: Այս հիմնարար խթանը, սակայն, նույնընթաց չէր բոլոր քաղաք-պետություններում. հոլովույթի համաձիքում առանձնանում էր երկու հակոտնյա բևեռ՝ Սպարտան և Աթենքը: Առաջինը հրնթացս ժամանակի հանգեց Արխայիկ դարաշրջանի «տեխնոլոգիական-ընկերային շարժի» կասեցմանը: Երկրորդը, ընդհակառակը, դրա հետագա զարգացմանը: Ներկա հատորը լուսաբանում է սպարտական ուղին: Այն ծնունդ տվեց համակեցական մի համաձուլվածքի, որը պարառում էր ամբողջատիրության, կաստայականության և ժողովրդավարության ինչ-ինչ բաղադրատարրեր: Թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ ամեն բան պայմանավորված էր ռազմական հրամայականի կանոնով: Շուրջ երկուսուկես դար Սպարտան հունական աշխարհի ռազմական հեգեմոնն էր: Սակայն «անսպասելի» փլուզվեց իր հաղթությունների ծանրության ներքո՝ անհաղորդ արտադրության և կառավարման նոր տեխնոլոգիաներին:

Պետության իր տեսլականում Պլատոնը մեկնարկում էր սպարտական հարացույցից՝ ժխտելով, սակայն, դրա «ծննդյան արատները»: Հանդերձ այդու պատկերը ստացվել է մտացածին՝ հեռու կյանքի կոչվելու հեռանկարից: Այդ որակով էլ այն շարունակում է մնալ իբրև քաղաքագիտական մտքի կարևոր ձեռքբերում:

ՀՏԴ-94(38)

ԳՄԴ-63.3(4Հու)4

ISBN 978-5-8084-2725-9

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427259>

© ԵՊՀ հրատ., 2025

© Ստեփանյան Ալբերտ, 2025


**Նվիրվում է պրոֆ. Գևորգ Ա. Տիրացյանի
հիշատակին, որ էր այր բազմախորհուրդ
և իմաստուն:**

CONTENTS

Introduction.....	9
Part I. The Archaic Period. From Social Crisis to Development.....	21
Entrance	22
1. Technological Progress of the Epoque.....	26
2. "The Polis Revolution".....	40
3. Early Greek Tyranny	52
4. Great Colonization	60
5. Intellectual and Cultural Panorama of the Epoque	67
6. Conclusion	75
Part II. Ancient Sparta. Life between Vertical Imperative and Corporative Justice	79
Entrance	80
1. The Lycurgan Rhetra. Immobile Image of Social Community.....	84
2. The Legal Substratum of the Rhetra.....	111
3. Social Involvement of a Spartiate	130
4. Marriage and Family.....	142
5. Army and Military Order.....	147
6. Sparta in Historical Perspective. A Short Survey	153
7. The Social Ideal of Sparta. Plato	166
Conclusion	176
Epilogue	181
Conclusion	192
Abbreviations.....	197
Bibliography	201
Index.....	219

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	9
Հանգույց առաջին. Արխաիկ դարաշրջան. համակեցական ճգնաժամից դեպի կայացում (Ք.ա. 8–6-րդ դդ.)	21
Մուտք	22
1. Դարաշրջանի տեխնոլոգիական առաջընթացը	26
2. «Պոլիսային հեղափոխությունը»	40
3. Վաղ հունական տիրանիան	52
4. Մեծ զաղությանցումը	59
5. Դարաշրջանի մտավոր–մշակութային համապատկերը	66
Համաբերում	75
Հանգույց երկրորդ. Հին Սպարտա. կյանքը ուղղաձիգ հրամայականի և կորպորատիվ արդարության միջև	79
Մուտք	80
1. «Լիկուրգյան Ռեթրան». հանրակարգի անշարժ պատկերը. ընկերային կառույց	84
2. Ռեթրայի իրավաքաղաքական հենքը. կառավարման համակարգ	111
3. Սպարտիատի ընկերային ներգրավվածությունը. դաստիարակություն	130
4. Ամուսնություն և ընտանիք	142
5. Բանակ և ռազմակարգ	147
6. Սպարտան պատմության հոլովություն. համառոտ ակնարկ	153
7. Սպարտայի ընկերային տեսլականը. Պղատոն	166
Համաբերում	176
Մակարան	181
Հակիրճանք	197
Մատենագիտություն	201
Դասիչ	219



ՆԱԽԱԲԱՆ

Հետաքրքրությունը հին Հունաստանի նկատմամբ այսօր էլ կենսական է: Գալիս են հետազոտողների նոր սերունդներ, որոնք նոր հարցեր են ուղղում նրա անցյալին՝ մեկնարկելով իրենց ժամանակաշրջանի արժեքանական համալիրից:¹ Համոզում կա, որ նոր մոտեցումները և երկխոսության հնարավորություններն ի գործ են բացահայտելու անցյալի (մեկնության և հասկացումի) նոր հեռանկարներ: Եվ ամեն անգամ պատմությունը ներկայանում է տարբեր նրբերանգներով և ալգորիթմերով: Աստ բացահայտվում է մի հին ըմբռնում. բացի անհոլովույթ ճշմարտություններից՝ պատմությունը հանգրվանային ճշմարտությունների միջավայր է: Եվ կարիք ունի *վերագրման*՝ իր սահմանների վերաձևման և վերիմաստավորման փորձառությամբ:

Նախատեսվող մենագրության երկու հատորները խնդիր ունեն լուսաբանելու հին հույների քաղաքակրթական ուղին՝ սկսյալ Ուլբրոնգեդարյան փլուզումից մինչև Ք.ա. 4-րդ դարի սկիզբը: Բովանդակային առումով պարառում է Մութ, Արխաիկ և Դասական դարաշրջանները՝ շուրջ յոթ հարյուրամյակ: Հընթացս դրանց՝ պատմությունն ընթացել է տարբեր

¹ Արդի տեսաբանները հաճախ դա բանաձևում են իբրև *մերահոգևոր պլազմա*: Նկատի ունենք նախ և առաջ ֆրանսական տարեգրական դպրոցի ներկայացուցիչներին: Տես **Ստեփանյան**, 2019, 51-53, **Հովհաննիսյան**, 2022, 62:

արագությամբ և ներունակությամբ՝ աստիճանաբար բյուրեղացնելով հիմնարար արժեքներ ընկերային համակեցության այլազան տիրույթներում՝ տնտեսություն և կառավարման համակարգ, կրոն և աստվածախոսություն, գիտություն և իմաստասիրական միտք, գրականություն և թատրոն, ճարտարապետություն և իրավական համակարգ, ճարտասանություն և հոգեբանություն: Դրանք արդյունք էին այն յուրահատուկ երգաստիկ-ստեղծագործական միջավայրի, որի ծիրում ի մի էին աշխարհագրական միջավայրը, բնական պաշարները, էթնիկ առանձնահատկությունները, ազգային հոգևոր կերտվածքը, քաղաքացիական արժեհամակարգը: Հայտնի է՝ այս համաձուլվածքը շատ կողմերով պայմանավորել է Արևմուտքի մտահոգևոր ձեռքբերումները:

Ի տարբերություն մերձավորարևելյան բնօրինակների՝ վաղ հունական քաղաքակրթական կենտրոնները ձևավորվել էին աշխարհագրական մի միջավայրում, որտեղ բացակայում էին խոշոր գետերը, մետաղի հարուստ հանքավայրերը կամ էլ անտառները: Դրանց մշակումը սովորաբար նպաստում էր գյուղական համայնքների համախմբմանը և տարածքային քաղաքական միավորումների ձևավորմանը: Նախ կազմավորվում էին քաղաքային կենտրոններ իրենց հարակա գյուղական միջավայրերով, ապա հեգեմոնիկ կապերով համաբերվում նախնական պետական միավորների մեջ: Եվ դա կատարվում էր կրոնաքարիզմատիկ, վարչական ու ռազմական խթանների ներքո:²

Մերձավոր Արևելքում ասվածը հաստատվում է Եգիպտոսի և Միջագետքի փորձառությամբ՝ սկսյալ Ք.ա. 4-րդ հազարամյակից: Խոսքը շումերական քաղաք-պետությունների և եգիպտական նոմերի մասին է, որոնք հընթացս ժամանակի ներգրավվեցին խոշոր տարածքային-վարչական-

² Այս դիտանկյունից հույժ ցուցանելի է հետևյալ փաստը. *փարափոն* եզրույթը (pharaoh) նախապես մեկնաբանվում էր իբրև «մեծ տուն»: Տե՛ս **Gardiner**, 1957, 71-76: Նշված գործընթացները համակողմանի լուսաբանված են հետազոտական գրականության մեջ, և մենք խնդիր չունենք ներկայացնելու դրանց մանրամասնությունները: Տե՛ս ի մասնավորի՝ **Kramer**, 1963, 73-79, 104-112, **Diakonoff**, 1975, 127-131, **Diakonoff**, 1989, 76-84, **Finer**, 1999, 109-126, 155-169:

քաղաքական միավորումների մեջ՝ ձևավորելով միացյալ Միջազգետք (Բաբելոնիա) և Եգիպտոս: Բոլոր մակարդակներում ուժային խթանները բխում էին տեղական կամ համապետական պալատական համալիրներից: Աստ գործառուում էին կառավարիչները, արքաները և իրենց մերձավոր շրջապատը: Նրանց իշխանությունը կրոնաքարիզմատիկ բովանդակություն ուներ:³ Հուսկ արդի հետազոտողները նման քաղաքակրթական միավորներն սկսեցին անվանել *պալապական*:

Միջին և Ուշ բրոնզի դարաշրջանում (2-րդ հազ.) պալատական քաղաքակրթության ծիրի մեջ ներքաշվեցին Ասորեստանը և Խեթական պետությունը, որոնք տերունական համահարթեցմամբ միավորեցին ընդլայն տարածաշրջաններ և ազգաբնակչությանը պարտադրեցին ստանդարտ վարչակազմ, օրենքներ, քարոզչություն, հարկային համակարգ, ճանապարհների ցանց: Գերխնդիրը շարունակում էր մնալ կարևորագույն քաղաքակրթական պաշարների վերահսկողությունը՝ ազգաբնակչություն, մետաղ, տեխնոլոգիաներ, արտադրություն, եկամտի վերաբաշխում:⁴ Սակայն այժմ դա կատարվում էր բացառապես ի հաշիվ ուղղահայաց հրամայականի:

Ավելի ուշ այս քաղաքակրթական համացանցին միացավ նաև Փյունիկիան, որը, սակայն, սկսեց ընթանալ միանգամայն այլ ուղիով: Ծովահայաց էր՝ հիմնված բարձր տեխնոլոգիաների վրա՝ մետաղագործություն, կերամիկա, գործվածքներ, ներկեր, նավաշինություն, նավագնացություն, առևտուր:⁵ Անցում կատարեց տեղեկույթի գրանցման, պահպանման և հաղորդման այբբենական

³ Խորքային առումով այդ բոլոր իշխանական կազմավորումները կառավարվում էին սրբազնային խթանով, և երկրային կառավարիչները դրա մարմնավորումներն էին համարվում: Տես **Classen**, 1984, 368-370, **Diakonoff**, 1989, 84-88, **Kozyreva**, 1989, 84-87, **Finer**, 1999, 139-144: Նման խթանի բացակայությունը կարող էր վկայել իշխանության ոչ օրինականության մասին: Տես **Jones**, 2020, 255-261:

⁴ Տվյալ պարագային նկատի ունենք Միջին Ասորեստանը և Ուշ Խեթական տերությունը՝ Ք.ա. 14-11-րդ դարեր: Տես **Van de Mieroop**, 2004, 111-119, **Jakob**, 2017, 148-161:

⁵ Տես մանրամասն **Հովհաննիսյան**, 2012, 22-29:

համակարգին: Հանդերձ այդու, չձևավորեց միացյալ տա-
րածքային պետություն: Պահպանվեցին և զորացան քա-
ղաք-պետությունները՝ Բերիտ, Բիրլուս, Սիդոն, Տիրոս,
Աքրա՝ իրենց քաղաքացիների համայնքով, ընտրովի տի-
րաններով, վարչակազմով, օրենքներով և ինքնավարու-
թյամբ:⁶ Ներքին բախումներ չեն արձանագրվել, զի նրանց
դիմաց բաց էր Միջերկրածովքը, որը հարուստ էր բազ-
մազան պաշարներով: Եվ փյունիկացիները զբաղված էին
դրանց վերամշակմամբ, տեղափոխությամբ ու առևտրով:
Նպատակին հետամուտ՝ ստեղծեցին իրենց յուրահատուկ
նավերը, որոնք համարվում էին դարաշրջանի կարևոր
տեխնոլոգիական նորույթներից՝ դյուրին կառավարելի և
հույժ տարողունակ:⁷ Դրանց միջոցով փյունիկացիները
կապի մեջ էին իրենց գաղութների հետ, որ սփռված էին
ողջ Միջերկրածովքում: Անտարակույս, նրանց միջև ըն-
թանում էր մրցակցություն, բայց այն տեղիք չէր տալիս
ռազմական նշանակալից ընդհարումների:⁸

Ուշերոնգեղարյան փուլումը խախտեց այս քաղաքա-
կրթական հավասարակշռության (և փոխաբացման) իրա-
վիճակը (Ք.ա. 13–12-րդ դդ.)՝ տևական երաշտ, սով,
ազգաբնակչության անկում, արհեստների և առևտրի հե-
տադիմություն, ժողովուրդների աննախադեպ տեղաշարժ,
ռազմական բախումներ: Դրանք ուղեկցվում էին տերու-
թյունների և քաղաքակրթական կենտրոնների ավերմամբ:⁹

⁶ Ավելի մանրամասն փյունիկյան քաղաք-պետությունների քա-
ղաքացիական համայնքի, կառավարման համակարգի, տնտեսու-
թյան, կրոնի, գաղափարաբանության մասին տես **Markoe**, 2000,
68–76, 93–98, **Quinn**, 2017, 201–223:

⁷ Միջերկրածովքում փյունիկյան ծավալումի և գաղութացման գոր-
ծընթացների մասին առկա է բավական հարուստ գրականություն: Քա-
ղաքակրթության համացանցացման այս փորձությունից հետագայում
պետք է օգտվեին հույները: Տես **Diakonoff**, 1992, 178–185, **Niemeyer**,
2004, 248–250, **Հովհաննիսյան**, 2012, 26–27, **Scott**, 2018, 28–33:

⁸ Տես **Հովհաննիսյան**, 2012, 30–35:

⁹ Որոշ հետազոտողներ Ուշերոնգեղարյան փուլումը քննա-
րկում են համապատմական աղետների համաձիթում և կատարում
ընդհանրական (և հույժ ուշագրավ) դիտարկումներ: Տես **Deger-
Jalkotzy**, 2008, 387–394, **Middleton**, 2012, 285–286: Ոմանք էլ շեշ-

Շատ տեղերում ընկերային կյանքը վերադառնում էր գյուղական համայնքի մակարդակի: Ավելի կամ պակաս չափով այս հեռանկարից խույս տվեցին փյունիկացիները. նրանց ծովային քաղաքակրթական համացանցը բազմադեմ էր ու ճկուն: Ուստի կարողացան հարիր պատասխաններ մշակել պատմության մարտահրավերներին: Եվ շուտով սկսվեց վերելքի նոր շրջափուլ:¹⁰ Այլով բանիվ՝ ի համեմատություն ցամաքային տերությունների՝ ծովահայաց քաղաք-պետություններն ավելի դիմացկուն գտնվեցին համընդհանուր ճգնաժամի նկատմամբ:

Հետազոտողները գտնում են, որ մերձավորարևելյան քաղաքակրթական այս հետնախորքը կարևոր է վաղ հունական պատմության կերպափոխություններն ըմբռնելու համար: Ի մասնավորի՝ խոսքը վերաբերում է Հետմիկենյան դարաշրջաններին (Ք.ա. 11–4-րդ դդ.): Սակայն դրանց բնութագրման նպատակով հարկ է կրկին հատկազօել աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունը. հունական ծավալման նախնական միջավայրը գուրկ էր էական բնական պաշարներից: Նման վիճակը տիրական էր դրա բոլոր շրջաններում՝ Բալկանյան Հունաստան, Փոքր Ասիայի առափնյա շրջաններ, Էգեյան ավազանի կղզիներ:

Բալկանյան Հունաստանում Միկենյան դարաշրջանում նույնպես ձևավորվել էին պալատական կենտրոններ՝ Միկենք, Արգոս, Սպարտա, Տիրինթոս, Պիլոս, որոնց ավերակները պահպանվել են առայսօր:¹¹ Մոտավորապես

տում են բնական աղետը, ընկերային պատճառները կամ բանակը և զենքերի նոր տեսակները: Տե՛ս **Drews**, 1993, 114-122, **Knapp and Manning**, 2016, 102-113, 123-134:

¹⁰ Հետազոտողներից ոմանք հակված են փյունիկյան վերընձյուղման կողքին դնել նաև ասորեստանյանը՝ հանձին նրա նոր թագավորության: Գտնում են, որ աստ պատճառը պետք է փնտրել բանակային հետևազորի մեջ, որը կենտրոնական իշխանության ընկերային ներուսակ հենարանն էր: Տե՛ս **Drews**, 1993, 138-140:

¹¹ Միկենյան պալատական այս կենտրոնների ընկերային կառույցի, կառավարման համակարգի, տնտեսության և այլ հիմնախնդիրների մասին տե՛ս **Mylonas**, 1992, 714-715, **Chadwick**, 1976, 69-83, 135-153, **Burns**, 2010, 9-20:

Ք.ա. 1400–ականներից դրանք ազատագրվել էին Կրետեի գերակայությունից և ընթացել իրենց պատմական ուղիով: Սակայն պաշարների սահմանափակությունը լուրջ խոչընդոտ էր: Հարկ էր դուրս գալ անդրծովյան տարածքներ: Եվ հոմերոսյան էպիքական ասքի Տրոյական պատերազմը պետք է դիտարկել հենց այս լույսով: Փորձն անավարտ մնաց: Ուշբրոնզեդարյան փլուզման ալիքը շուտով հասավ և Պելոպոննես՝ ավերելով վերոհիշյալ միկենյան քաղաքակրթական կենտրոնները: Կարծիք կա, որ այդ գործում ճակատագրական են եղել բնական աղետը (տոսական երաշտ) և հյուսիսից արշավող դորիացիների ռազմատեխնոլոգիական առավելությունը:¹²

Սակայն ներկա հետազոտության առարկան Հեոմիկենյան ժամանակահատվածն է: Բավական երկար ընթացք, երբ Հունաստանը կանգնած էր երկրնտրանքի առջև՝ կամ վերադառնալ նախորդ (պալատական քաղաքակրթության) վիճակին, կամ ստեղծել ինչ-որ այլ բան, որը չէր եղել անցյալում: Ընտրվեց երկրորդ ճանապարհը՝ լի տարաբնույթ նորամուծություններով ու կերպավիճակությամբ, որոնք ունեին ինչպես կարճժամկետ, այնպես էլ համապատմական բովանդակություն:¹³

Ի մոլոր դիպարկման պարագային բացահայտվում են Հելոմիկենյան ժամանակաշրջանի կարևոր իրողություններ. բախվել էին տարասեռ էթնիկ-քաղաքակրթական միջավայրեր՝ դորիացիներ-էոլացիներ, դորիացիներ-հոնիացիներ, դորիացիներ-աբալացիներ: Արդյունքները տարբեր էին. մի դեպքում եկվորներն իրենց տիրապետությունն էին հաստատում տեղացիների նկատմամբ (Պելոպոննես), մյուս դեպքում՝ խնդիրը լուծվում էր փոխ-

¹² Փլուզումի ընդհանրական պատկերի մասին տես **Middleton**, 2012, 268-273: Դորիացիները բերում էին մարտական սայլը, հոծ հետևակը, բալիստիկ նետը, երկար երկաթե սուրը: Տես **Drews**, 1995, 21-25, 29-30: **Hammond**, 1992, 363, **Cook**, 1962¹, 18-22:

¹³ Դիտարկվող քաղաքակրթական *անցումը* և նրա հիմնարար արդյունքները, ըստ Բալկանյան Հունաստանի գանազան տարածաշրջանների, լուսաբանվում են հիմնականում հնագիտական նյութի հիմամբ: Տես **Knodel**, 2021, 237–248:

զիջմամբ (Այրտիկա), երրորդ դեպքում՝ եկվորները հեռանում էին կողոպտարից հեյրո (Թեապիա): Սակայն բոլոր դեպքերում Կեդի էր ունենում քաղաքակրթական արժեքների փոխանակություն: Հարկամբ՝ ներունակության Կարքեր ասարիճաններով, և այս գործում կարևոր էր վերնասամերի դերակապարտությունը:¹⁴

Հետազոտողներն այս անցումային դարաշրջանում առանձնացնում են հետևյալ շրջափուլերը.

1. *Մուք դարաշրջան՝* Բ.ա. 11-9-րդ դարեր, երբ գերակայում էին տոհմական կառույցները, և աստիճանաբար քայլ էր կատարվում առ հանրային պետական-տարածքային համախմբում: Համոզում կա, որ Հոմերոսի նկարագրած ընկերային միջավայրը հենց այս շրջափուլի արտահայտությունն է:¹⁵ Իսկ տեխնոլոգիական իրավիճակի առումով (թեպետ տակավին թույլ հասկազոտված) անցում էր նախանշվում Բրոնզի դարից դեպի Երկաթի դար:

2. *Արիստիկ դարաշրջան՝* Բ.ա. 8-6-րդ դարեր: Հատկազոտներն էին՝ ա. արտադրական նոր տեխնոլոգիաների ներմուծումը և զարգացումը, բ. մտքի և հանրային պահվածքի, մշակույթի և հոգեբանության նոր հարացույցների մշակումը, գ. ընկերային կյանքի և կառավարման նոր միջավայրերի համաբերումը: Դրանց ընդհանրական արդյունքը դարձավ պոլիսը՝ քաղաք-պետությունը: Հենց նրա ծիրում էլ պետք է հասունանային ապագա ծաղկման դարաշրջանի սերմերը:

¹⁴ Հիմնախնդրի լուսաբանման համար, բացի սկզբնաղբյուրների պատումից՝ առասպելական շարքեր, Հերոդոտ, Թուկիդիդես, Քսենոփոն և այլք, շրջանառվում է հնագիտական կյուրը: Եվ դրանց համադրումից էլ ձևավորվում է պատմության համաձիրը: Տես **Hall**, 1997, 61-63, **Hall**, 2014, 44-47: Հետազոտողներից ոմանք էլ այդ համադրումից հանգել են ծայրահեղ եզրակացության, թե Մուք դարաշրջանում Լակեդեմոնը կորցրել էր իր համարյա ողջ ազգաբնակչությունը: Տես **Cartledge**, 1979, 81-92:

¹⁵ Այլով բանիվ՝ Ռապտոդի պատումի վերին շերտը վերաբերում է Միկենյան դարաշրջանին, մինչդեռ խորքայինը՝ Մուք դարաշրջանի վերջին շրջափուլին: Զի իր պատմական փորձառությամբ նա (և իր շրջապատը) մոտ էր դրան: Տես **Chadwick**, 1976, 180-187:

3. *Դասական դարաշրջան*՝ Ք.ա. 6-րդ դարի երկրորդ կես – 4-րդ դարի առաջին կես: Ընկերային զարգացումը հասնում է իր կատարումին՝ էնտելեքիա: Գործընթացը ծավալվում է բազում տարբերակներով, որոնցից ավանդաբար առանձնացնում են երկուսը՝ Սպարտան և Աթենքը: Տակավին Արխաիկ դարաշրջանում Սպարտան սահմանափակեց իր ազատական զարգացումը և կանգ առավ կաստայական–կորպորատիվ համալսմբման վրա: Եվ ամրագրեց դա սահմանադրությամբ՝ *Լիկուրգյան ռեթրայով*: Հասարակական *անդորոն* ապահովվում էր նախ և առաջ ռազմածիսական հրամայականով: Դրան հակառակ՝ Աթենքը շարունակեց Արխաիկ դարաշրջանի ստեղծագործականությունը: Եվ բարենորոգչական փորձառությամբ հանգեց ժողովրդավարական արժեքների՝ ինքնավար քաղաքացիական համայնք, ազատություն, իրավահավասարություն: Դրանք ևս ամրագրվեցին սահմանադրությամբ, օրենքներով և պետական հաստատություններով: Նաև մշակութային համալիրով:

Մեկ անգամ էլ հատկազոծենք. երկու համակեցական հարացույցերն էլ ծագում էին Արխաիկ դարաշրջանից, բայց արժեքային տարբեր հիմքերով: Ասվածի իմաստն ըմբռնելու համար, կարծում ենք, նպատակահարմար է մեկնարկել դարաշրջանի խորքային ըմբռնումից:

Վերոբերյալ նկարագրությունները վկայում են, որ այն (սխալի չնչին հավանականությամբ) կարելի է դասել, այսպես կոչված, *անցումային դարաշրջանների* կարգին, որի կարևոր բաղադրիչը ճգնաժամն է: Հընթացս դրա ներուսակ հանրույթները որոշումներ են կայացնում՝ իրավիճակից դուրս գալու համար: Նախապես այդ որոշումները բխում էին հանրույթի կոլեկտիվ հիշողություններից և ավանդություններից, ըմբռնումներից և իրավական սովորություններից, որոնց պահապանը համարվում էր ավագանին: Սակայն հետագայում սկսեցին շրջանառել ու ներդրվել ընկերային, քաղաքական, իրավական բարեփոխումների ծրագրեր: Դրանց հեղինակները հանրահայտ անհատականություններ էին՝ Լիկուրգոս, Սոլոն, Պերիանդրոս, Կլիսթենես: Նրանք փորձում էին հանրույթի նկատմամբ կիրարկել երգաստիկ–ստեղծագործական աշխա-

տանք և առաջնորդել դեպի «բաղձալի ապագա»:

Ընդամին, սպարտական ավագանին խնդիր էր հետապնդում ապահովելու սպարտիատների փոքրամասնության գերակայությունը հասարակության մեծամասնության նկատմամբ: Ուստի ձևավորեց կաստայական–ռազմական–աստիճանակարգային ընկերային կառույց և ամրագրեց սահմանադրորեն: Մինչդեռ արենական բարենորոգիչների ընդունած որոշումները միտված էին ձևավորելու հասարակական ընդլայն մասնակցումի միջավայր, որը ճանապարհի պետք է հարթեր դեպի ժողովրդավարություն: Հարկավ, քաղաքակրթական որոշումների որակի վրա մեծապես ազդում էին նաև մշակութային և հոգեբանական միջավայրերը: Եվ աստ նույնպես Սպարտայի ու Աթենքի տարբերությունները խիստ ակնառու էին:

Ի մի բերելով ասվածը՝ կարող ենք հաստատագրել, որ առաջարկվող մենագրության կենտրոնական խնդիրը հին հունական համակեցության ունիվերսալ միավորի՝ քաղաք–պետության տիպաբանական ուսումնասիրությունն է՝ ծագում, զարգացում, ընկերային–քաղաքական առանձնահատկությունների բազմազանություն: Նաև դրա երկու ծայրաբևեռների՝ Սպարտայի և Աթենքի զարգացման առանձնահատկությունները, պատմական կոնկրետ ժամանակի, տարածության և մշակութաարժեքանական համաձիթում:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը խառնված է երկու հիմնագաղափարի վրա: Առաջինը, ինչպես հատկազոծեցինք, առնչվում է *անցումային հասարակություն* (transitive society) հղացքին, որը բովանդակում է ճգնաժամերը և դրանց լուծման ուղիները: Հիշենք՝ հունարեն κρίσις եզրույթն արտածվում է κρίνω բայաձևից՝ «առանձնացնել, ընտրել, որոշել»:¹⁶ Մեր քննության ժամանակահատվածում հունական քաղաքակրթական միջավայրը հասարակական անցումների տարասեռ շարք էր ներկայացնում: Տարասեռությունները բխում էին, կրկնենք մեկ անգամ էլ, ընդունված որոշումների որակից և համապատասխանության աստիճանից: Միով բանիվ՝ անցումայ-

¹⁶ Տե՛ս Liddell, Scott, 1940, 364:

նության հղացքը պետք է դառնա հին Հունաստանի պատմության հետազոտական կարևոր հենքը:

Սյուս հենքն այժմ բավական տարածում ունի: Խոսքը ուսումնասիրության միջգիտակարգայնության մասին է: Հետևելով այս ավանդույթին՝ որոշել ենք լուսաբանել հունական պատմական անցյալը տարբեր գիտակարգների արդյունքների համադրությամբ՝ պատմություն և ընկերաբանություն, գրականություն և քաղաքագիտություն, տեքստաբանություն և իմաստասիրություն, կրոն և հասարակական միտք: Դրանց հավելած նաև հնագիտության և արվեստաբանության տվյալները: Միայն այս պարագային պատումային տեքստը կարող է ծնունդ տալ հետազոտական մեկնության ու հասկացումի:

Նպատակին հետամուտ՝ կարծում ենք, հարկ է բնութագրել հետազոտության աղբյուրագիտական հենքը: Այն հարուստ ու բազմազան է՝ հիմնված հիմնականում գրավոր սկզբնաղբյուրների տեղեկույթի վրա. ա. պատմագրություն՝ Հերոդոտ, Թուկիդիդես, Քսենոփոն, Պոլիբիոս, Դիոդորոս Սիկիլիացի, բ. քերթողական արվեստ և թատերագրություն՝ Հոմերոս, Հեսիոդոս, Տիրտեոս, Պինդարոս, Սոփոկլես, գ. երկրագրություն՝ Ստրաբոն, Պավսանիաս, դ. ճարտասանություն՝ Իսկրատես, Էսքինես, ե. ընկերային իմաստասիրություն և բարոյագիտություն՝ Պլատոն, Արիստոտել, Պլուտարքոս: Դրանք համալրվում են հնագիտության, արվեստագիտության, նշանաբանության և տեքստաբանության արդի ըմբռնումներով:

Այս հիմամբ ձևավորվել են արդի պատմագիտական տեքստերը հին Հունաստանի պատմության առաջարկվող հիմնախնդիրների վերաբերյալ: Դրանց անդրադառնալու ենք հընթացս շարադրանքի: Իսկ արդ ցանկանում ենք ընդգծել դրանց ընդհանրական պատկերը: *Առաջին*, պատումային տեքստեր, որ նպատակ ունեն լուսաբանելու պատմության տրամաբանությունը ժամանակի երկար տևողությունների մեջ:¹⁷ *Երկրորդ*, տիպաբանական հետա-

¹⁷ Տե՛ս Martin, 1996, Pomeroy, Burstein, Donlan, Roberts, Tandy, Tsouvala, 2004, Osborne, 2007, Hall, 2009, Cartledge, 2009, Buckley, 2010, Tirwall, 2010.

զոտություններ, որոնք միտված են պատմությունը ներկայացնելու բովանդակային կայուն համալիրների միջոցով:¹⁸ *Երրորդ*, անցյալի մասնակի (բայց կարևոր) դիտանկյունների լուսաբանությունը՝ պատմական ամբողջի պատկերը հստակեցնելու, բազմազանացնելու նպատակով:¹⁹

Ներկա մենագրության մեջ սկզբնաղբյուրների և արդի հետազոտական գրականության արդյունքների համադրությամբ քայլ է ձեռնարկվում դիտարկելու Արխաիկ դարաշրջանի համընդգրկուն շարժի ներազդեցությունը երկու համակեցական միջավայրերի վրա՝ Սպարտայի և Աթենքի: Քաղաք-պետություններ, որոնք քաղաքակրթական մարտահրավերին տվեցին տրամագծորեն տարբեր պատասխաններ՝ թե՛ ընկերային կառույցի, թե՛ կառավարման համակարգի, թե՛ կրոնի, թե՛ մշակույթի տիրույթներում: Հանդերձ այդու, Ք.ա. 4-րդ դարի սկզբին երկուսն էլ քաղաքական անկում ապրեցին. մեկը՝ բացարձակության ձգտող խմբիշխանական հրամայականի, մյուսը՝ ամբոխավարական ազատականության ներքո: Խորքային իմաստով պատճառը նորից պոլիսի ավանդական սահմանափակությունն էր, որին երկու կողմերն ի գործու չեղան տալու հարիր քաղաքակրթական պատասխաններ:

Միով բանիվ՝ Հեռմիկենյան պատմական դարաշրջանի ինչպես նվաճումները, այնպես էլ կորուստները հետևանք էին քաղաք-պետության հնարավորությունների: Դրանք կարիք ունեին կառավարման և անընդհատ թարմացման: Հակառակ պարագային լճացումն ու անկումն անխուսափելի էին:

¹⁸ Sten Nilsson, 1929, Starr, 1986, Фролов, 1988, Raaflaub, 2005, Суриков, 2005, Hansen, 2006, Bresson, 2007, Köiv, 2011, Ստեփանյան, 2014, Степанян, 2014:

¹⁹ Sten Seager, 1945, Snodgrass, 1965, Lloyd-Jones, 1976, Vidal-Naquet, 1989, Hölkeskamp, 1992, Signe, Skydsgaard, 1995, Fleck, Hanssen, 2013, Brock, 2013, Тапцова, 2017: Հավելենք, որ հենց այս մոտեցմամբ էլ համաբերվել է P. Cartledge (ed.), 1998, The Cambridge Illustrated History of Ancient Greece (Cambridge UP) ծողովածուն: Դրանում նորովի վերլուծված են հարստության ու աղքատության, աշխատանքի ու ժամանցի, իշխանության ու պետության, պատերազմի ու խաղաղության, ընտանեկան ու հասարակական հարաբերությունների հունական ընկալումները:

Մենագրության առաջին հատորը խնդիր է հետապնդում մեկնաբանելու ու հասկանալու Արխաիկ ստեղծագործ դարաշրջանի և Սպարտայի քաղաքակրթական հանդիպումը: Նշենք, որ այս հիմնախնդիրը նույնպես արդի հետազոտական սևեռումների առարկա է ինչպես կոնկրետ պատմագիտական, այնպես էլ քաղաքագիտական ու ընկերաբանական դիտանկյուններից:²⁰ Այս նկատառումներով էլ թելադրված է մենագրության կառույցը՝ երկու հետազոտական հանգույց՝ «Արխաիկ դարաշրջան. համակեցական ճգնաժամից դեպի կայացում (Ք.ա. 8–6-րդ դդ.)» և «Հին Սպարտա. կյանքը ուղղաձիգ հրամայականի և կորպորատիվ արդարության միջև»՝ իրենց առընթեր Նախաբանով, Մակաբանով և Մատենագիտությամբ: Հաջորդ հատորը նախատեսվում է նվիրել Աթենքի *ընկերային թաղրունին* և դրա մտահոգևոր արծարծումներին:

Այս բարդ ու բազմաշերտ աշխատանքն ի մի բերելիս զգացել ենք մեր անմիջական շրջապատի գիտական և հոգեբանական օժանդակությունը: Եվ ցանկանում ենք խորին երախտագիտություն հայտնել նրանց՝ Դավիթ Պետրոսյան, Տիգրան Մկրտչյան, Անահիտ Թելունց, Արամ Մեհրաբյան, Տիգրան Եփրեմյան, Սմբատ Հովհաննիսյան, Նարեկ Մկրտչյան, Ջուլիա Կճանյան և Արաքս Ալեքսանյան:

14. 08. 2024

Երևան

²⁰ Տե՛ս Huxley, 1962, Jones, 1966, Sihler, 1983, Forrest, 1986, Shipley, 1993, Lendon, 1997, Miller, 1998, Pomeroy, 2002, Ստեփանյան, 2006, Richer, 2007, Luraghi, 2008, Андреев, 2014, Powell, 2015, Powell, 2017, Schofield, 2021:

ՀԱՆԳՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

ԱՐԽԱԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆ. ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԴԵՊԻ ԿԱՅԱՑՈՒՄ (Ք.ա. 8–6-րդ դդ.)

*«Իմ պայտումը կարող է օգտակար լինել նրանց,
ովքեր ձգտում են հստակ պատկերացում ունենալ
անցյալի մասին: Նաև ապագայի, զի ի հերևանս
մարդկային բնության՝ այն կարող է լինել մոտավոր-
րապես նույնը»:*

Thuc., I, 22,4



ՄՈՒՏՔ

Արդեն հատկագծել ենք՝ վաղ հունական քաղաքակրթական կենտրոնները ձևավորվել էին աշխարհագրական մի միջավայրում, որտեղ բացակայում էին խոշոր գետերը կամ մետաղի հարուստ հանքավայրերը: Խոսքը, ի մասնավորի, վերաբերում էր Միկենքին, Արգոսին, Սպարտային, Տիրինթոսին, Պիլոսին:¹ Այդ բացը կարող էր փոխհատուցվել (այն էլ՝ սահմանափակ չափերով) ստեղծագործ տեխնոլոգիաներով և աշխատանքով: Ուստի Բրոնզեդարյան փուլումն աստ հատկապես կործանարար եղավ: Դրա հետ մեկտեղ համակեցական կյանքի նոր հարացույցի անհրաժեշտությունն էլ առավել սուր երանգներով դրսևորվեց: Այլ ձևակերպմամբ՝ Հունաստանը կարող էր կամ վերադառնալ իր նախորդ վիճակին, կամ ստեղծել ինչ-որ այլ բան:

¹ Բրոնզեդարյան փուլումի բազմապիսի բաղկացուցիչները Մերձավոր Արևելքի, Էգեյան ավազանի և Բալկանյան Հունաստանի տարբեր շրջաններում ի հայտ էին գալիս զանազան համադրություններով: Հնագիտական նյութը հիմք է տալիս մտածելու, որ Միկենյան քաղաքակրթության համար ճակատագրական են եղել բնական աղետը (տոնական երաշտ) և դորիացի եկվորների ռազմատեխնոլոգիական առավելությունը՝ մարտական սայլ, հոծ հետևակ, բալիստիկ նետ, երկար երկաթե սուր: **Drews**, 1995, 21-25, 29-30:

Երկրորդ տարբերակը Հունաստանում դարձավ տիրական առաջիկա երկուսուկես դարերի ընթացքին: Կերպափոխությունը բնութագրելիս որոշել ենք մեկնարկել արդի պատմագիտության (և ընդհանրապես հումանիտար մտքի) կարևոր հղացքներից մեկից՝ *transitive society* – *անցումային հանրակարգ*: Այն խնդիր ունի լուսաբանելու հանրույթի վերակառուցման հոլովույթը, որը պարառում է նրա պահվածքի կորագիծը կայուն վիճակից դեպի ճգնաժամ և ապա նոր կայունություն: Ընդամին, հույժ կարևորվում է ճգնաժամի շրջափուլը՝ կրիզիս (crisis): Կրկին հիշենք, եզրույթն արտածվում է հունարեն *κρίσις* բաժանից՝ «առանձնացնել, ընտրել, գնահատել» նշանակությամբ:²

Հուսկ արդի միտքը ճգնաժամի շրջափուլին ներհատուկ քայքայմանը զուգընթաց տեսնում է նաև կարևոր որոշումներ կայացնելու պատեհություն՝ թելադրված պատմական մղումով կամ գիտակցական ընտրությամբ: Այդ որոշումները հանրույթի համակարգային վերակառուցման մասին են՝ տնտեսություն, ընկերային կառույց, կառավարման համալիր, կրոն, մշակույթ, հանրային պահվածք և հոգեբանություն:³ Հարկավ, խոսքը ներունակ հանրույթների մասին է, որոնք

² Համակարգային ուսումնասիրություններում այս շրջափուլը երբեմն բանաձևում են իբրև «քառսի կառավարում», որը սկսվում է վերջինիս հարիր գնահատությունից: Middleton, 2017, 137-148: Ֆիզիկոսներն ավելի են մասնավորեցնում այդ գործընթացը՝ քառսի մեջ առանձնացնելով երկու շրջափուլ՝ սահմանային և ներքին: Հենց վերջինիս ժամանակ քայլեր են ձեռնարկվում քառսի հաղթահարման ուղղությամբ: Տե՛ս Gregori, Ott, Yorke, 1983, 182:

³ Հնագիտական տվյալներով՝ հետազոտողները նշված դիտանկյուններից հատկապես առանձնացնում են էթնիկ հետնախորքը, առօրեականությունը, կառավարման համակարգը և մշակույթը: Տե՛ս Papadopoulos, 2015, 178-185:

ունեն ինքնահայեցողության և ինքնակարգաբերման պաշար և կամք: Հետազոտողները հակված են մտածելու, որ Արխաիկ դարաշրջանի Հունաստանը պատկանում էր հենց այս տիպաբանությանը:⁴

Դժվար է խոսել դիտարկվող հոլովույթի պատճառահետևանքային բոլոր կարևոր առնչությունների մասին: Ավելի դյուրին է ուրվագծել դրա արդյունքները, որոնց մասին մենք պատրաստվում ենք հարիր մանրամասնությամբ խոսելու տվյալ հանգույցի առանձին ենթաբաժիններում: Իսկ մինչ այդ ցանկանում ենք հատկագծել Արխաիկ դարաշրջանի պատմական գործընթացի մի քանի հիմնականգմիկ չափույթ. *ա.* հանրային մտքի (բարենորոգչական մղումներ և ծրագրեր) ներգործության աճը ընթացիկ գործընթացների նկատմամբ, *բ.* պատմության ընթացքի արագացումը և նպատակամիտվածության գործակցի բարձրացումը. *ժ.* մասնակի կարճ տևողություններում տեղի են ունենում հանրային կարևորության ավելի շատ իրադարձություններ, *զ.* հայտնաբերվում է հանրային պահվածքի նոր հարացույց՝ *մրցակցությունը* (ագոն), որը պարանում է արտադրության և սպառման, գործողության և մտահոգվող դադարի, պահվածքի և հոգեբանության տարբեր դիտանկյուններ, *դ.* կարևորվում են մտքի և պահվածքի տարասեռությունները, որոնք էլ խթանում են *ներհանրությանին երկխոսությունը*, *ե.* նորարարությունը դառնում է կյանքի կարևոր չափույթ՝ ընդգրկելով համակեցության թե՛ նյութական, թե՛ մտահոգվող

⁴ Մոտավորապես նույն եզրաբանությամբ Արխաիկ դարաշրջանը ներկայացվում է արդի առաջատար հետազոտողների գրույթում: Նրանցից ոմանք գտնում են, որ արմատական կերպափոխությունների հիմքերը հարկ է փնտրել տակավին Միթ դարաշրջանում: *Sten Martin*, 1996, 36–50:

տիրույթները, զ. հաղթահարվում է (մտահոգևոր և նյութական-աշխարհագրական) տարածության կրոնաէքստատիկ վերապրումը. ճանապարհն առ աստվածներ և հեռավոր հորիզոններ սկսում է դառնալ տեսանելի և (անգամ) չափելի, է. քաղաքական, տնտեսական և ընկերային պայմանների ներքո՝ ասվածը տանում է դեպի հունականության էկումենիկ ցրումի ու համացանցացման, ը. այս *ընդհանրականությունը* ծավալվում է *անհատականացման* հետնախորքի վրա՝ սկսյալ քաղաք-պետություններից մինչև ականավոր քաղաքական և տնտեսական, կրոնական և մշակութային գործիչներ:⁵

Միասին վերցված՝ հիշյալ չափույթները պարագծում էին համակեցական մի միջավայր, որը ապագա անդրական միտքը պետք է նույնացնի իդեալական բոլորակի (կամ կաթիլի) հետ: Նկատի էին առնվում նրա որակական կերպափոխության և *սահքի* հնարավորությունները:⁶ Եվ դա ճանաչվում է իբրև հունական նոր ինքնության կարևորագույն չափույթ:

⁵ Այս հոլովույթի ինչպես ընդհանրական, այնպես էլ առանձնակի դիտանկյունները քննարկված են բազում հետազոտություններում: Տե՛ս Hammond, 1959, 72-92, 109-125, 129-134, Starr, 1961, 222-229, 318-324, 335-345; Фролов, 2004, 94-123, Martin, 1996, 70-93: Պակասում է միայն դրանց ալգորիթմիկ *ընթերցումը*, ինչն ի գործ է բացահայտելու (ցաքուցրիվ թվացող) տարասեռությունների միասնությունն ու նպատակը: Դրա խորհրդանիշ համարվում է պոլիսի հրապարակը՝ ագորան: Տե՛ս Степанян, 2014, 354-356:

⁶ Նկատի ունենք Էմպեդոկլեսի չորս նախատարբերի մասին տեսությունը: Ավելի ճշգրիտ՝ դրա առանձին տարրերը ընդգծվել էին տակավին Պարմենիդեսի և Հերակլիտեսի իմաստասիրական տեքստերում: Էմպեդոկլեսը դրան համակարգային ամբողջություն հաղորդեց: Տե՛ս de Castilho, 2021, 916-921:

1. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋՐՆԹԱՅԸ

Արխաիկ դարաշրջանը հատկազօվում էր նոր տեխնոլոգիական իրավիճակով: Դա պայմանավորված էր մի կողմից՝ հին (բրոնզեդարյան) արտադրական հմտությունների զարգացմամբ, մյուս կողմից՝ Արևելքից ներմուծված և հիմնովին յուրացված նոր (երկաթի) տեխնոլոգիաների գործառությամբ, երրորդ կողմից՝ դրանց կիրարկման հանրային նոր միջավայրի ձևավորմամբ:⁷ Այս երեք միտումները համաժամանակյա էին և փոխլրացնում էին միմյանց ինչպես ավանդական երկրագործության և անասնապահության, այնպես էլ արհեստագործության, երթևեկի, ծովագնացության, շուկայական և ընկերային հարաբերությունների ծիրում:

1.1. Երկրագործություն

Բալկանյան Հունաստանի տարածքի միայն 20 տոկոսն էր պիտանի տնտեսական գործունեության այս տեսակի համար: Բարեբեր հողատարածքները կղզյակներ էին՝ շրջապատված լեռներով, խոր կիրճերով ու ծովախորշերով: Սահմանափակ էին նաև

⁷ Այս փոխկապակցված գործընթացները ներազդեցին Արխաիկ դարաշրջանի հունական համակեցության ամենատարբեր մակարդակների վրա՝ սկսյալ նյութական արտադրությունից մինչև հասարակական հոգեբանություն: Տե՛ս **Martin**, 1996, 51-69, **Osborne**, 2007, 277-289: Հետազոտողներն այս հոլովույթի մեջ տեսնում են հանրային համախմբման նոր հարացույցի ծնունդը, որը տանելու էր անհատական առաջնորդության վերասերմանը և քաղաք-պետության ձևավորմանը: Տե՛ս **Starr**, 1961, 325-329, 335-345:

դրանց ոռոգման հնարավորությունները:⁸ Եվ սովի վտանգն աստ առկա էր մշտապես:

Ք.ա. 7-րդ դարից սկսյալ Բալկանյան Հունաստանի տարբեր շրջաններում արմատավորվեցին երկաթե (կամ երկաթե ծայրակալով) արորը, բահը, տափանակը, մանգաղը, կալսիչը:⁹ Լայն տարածում ստացավ հողերի պարարտացումը գոմաղբով, կրաքարով, ջրիմուռով: Հարդյունս բարձրացան մշակվող հողատարածքների ծավալը և բերքատվությունը՝ մոտ երկու անգամ: Հարկավ, դա արդյունք էր նաև տեղական նշանակության ջրանցքների կառուցման և երկդաշտային համակարգի ներմուծման:¹⁰ Հացագգիններից արտադրում էին գարի, վարսակ, աշորա:¹¹ Դրանք հույների սննդակարգի կարևոր բաղադրիչներն էին, որոնց բազմազանություն էին հաղորդում ընդեղենը և հատկապես մրգերը՝ խնձոր, տանձ, թուզ, նուռ, խաղող:¹² Հետագայում ներմուծվեց ձիթապտուղը և

⁸ Հետազոտողները տարբերակում են ոռոգման երկու համակարգ՝ տեղական և համեմատաբար ընդլայն: Առաջինը (κέρος) նկատելի է տակավին Արխաիկ դարաշրջանում: Մինչդեռ երկրորդը՝ սկսյալ Դասական դարաշրջանից՝ պայմանավորված տեխնոլոգիաների զարգացմամբ: Տե՛ս **Osborne**, 1992, 379–385, **Krasilnikoff**, 2010, 109–117:

⁹ Գյուղատնտեսական գործիքների տեսակների և դրանց կատարելագործման գործընթացի մասին տե՛ս **Morris**, 2004, 730–731:

¹⁰ Ասվածը վերաբերում էր հատկապես Հունաստանի այնպիսի տարածաշրջաններին, ինչպիսիք էին Ատտիկան, Բեոտիան և Թեսալիան: Տե՛ս **Isager**, **Skydswood**, 1992, 21–23:

¹¹ Արգավանդ հողատարածքների, հատիկեղենի արտադրության և ապրանքայնացման մանրամասների մասին տե՛ս **Sign**, **Skyds-gaard**, 1995, 30–54:

¹² Հարկ է տարբերակել գյուղատնտեսական այգիները, որ միաված էին բերքի արտադրության և քաղաքային դեկորատիվ այգիներից: Առաջինները գերակա էին տակավին Միկենյան դարաշրջանում: Տե՛ս **Shaw**, 1993, 661–675: Դասական դարաշրջանում (թերևս Արևելքի ազդեցությամբ) երկրորդ տեսակը լայն տարածում ստացավ: Տե՛ս **Maureen**, 1992, 84–91:

այնքան տարածվեց, որ դարձավ հույների կենսեռանդի հիմնական աղբյուրներից: Եվ որ կարևոր էր՝ չէր պահանջում արգավանդ հողեր և առանձնահատուկ մշակություն:¹³ Հավելենք ասվածին նաև վուշի մշակությունը, որի մանրաթելերից պատրաստվում էին լայն օգտագործման գործվածքներ՝ հագուստից մինչև առագաստ:

Ավելի պահպանողական էր անասնապահությունը: Երկիրը զուրկ էր հարուստ արոտավայրերից: Եղածներն էլ էրոզիայի էին ենթարկվել հրկեղացու հարյուրամյակների: Բացառություն էին թերևս Թեսալիան, Մեսսենիան և Արգոլիդան: Եվ դիտարկվող դարաշրջանում գերակա էր մանր կենդանիների բուծումը՝ այծ, ոչխար, խոզ: Խոշոր կենդանիներից եզն օգտագործվում էր տարաբնույթ աշխատանքների և փոխադրության նպատակներով: Իսկ ձին՝ նաև բանակում: Բացի սննդամթերքից (կաթ, պանիր, յուղ, միս)՝ անասնապահությունը տալիս էր բուրդ, թաղիք, կաշի, որոնք ենթակա էին հետագա արհեստագործական մշակման:¹⁴

Ընդհանրացնելով Արխաիկ դարաշրջանի գյուղատնտեսության պատկերը՝ հատկազոծելի է հետևյալ իրողությունը. կտրտված մանր հողաբաժինների մշակումը չէր պահանջում աշխատանքի մեծ կենտրոնացում և կառավարում: Ի տարբերություն գետային քաղաքակրթությունների՝ աստ բացակայում էր արտադրական գործունեության համահուն-

¹³ Համաձայն անտիկ բուսաբանության տվյալների՝ ձիթենին երևացել է Հունաստանում դեռևս Բրոնզեդարյան շրջանում: Սակայն տնտեսական կարևորություն է ստացել Արխաիկ դարաշրջանում: Տե՛ս **Hartmann, Bugas**, 1970, 443-446:

¹⁴ Տե՛ս մանրամասն **Sign, Skydsgaard**, 1995, 90-114:

կան խթանը: Դրանով պայմանավորված՝ բացակայում էր նաև ուժեղ ու կենտրոնացված վարչակազմի և համազգային պետության անհրաժեշտությունը:¹⁵

1.2. Արհեստագործություն

Ձեռքբերումներն աստ անհամեմատ ավելի էական էին: Ասվածի պատճառահետևանքային բովանդակությունը բացահայտելու աղագավ հետազոտողները սովորաբար ուշադրություն են հրավիրում դարաշրջանի մի առանձնահատկության վրա. ի տարբերություն Արևելքի՝ աստ համակեցական կյանքը զգալիորեն ապաստարանացված էր:¹⁶

Միկենյան քաղաքակրթության փլուզումից հետո, մինչև վերջ չբացահայտված հանգամանքների ներքո Հունաստանում վերացել էր մի կարևոր հանրային միավոր՝ քրմական դասը: Կային քրմախմբեր, որք սպասարկում էին առանձին աստվածների պաշտամունքը՝ Չևս, Պոսեյդոն, Ապոլոն, Ափրոդիտե, Աթենաս:¹⁷ Հուսկ նրանց կրոնաժխական հրամայականը

¹⁵ Հետազոտողների մի խումբ հունական համակեցության հիմնախնդիրը դիտարկում է նախապատմության հետևախորքին՝ շեշտադրելով աշխարհագրական միջավայրի և նյութական պաշարների, ազգաբնակչության և ինքնակառավարման, կրոնի և ընկերային համախմբվածության սերտ կապը: Դրանց հարաբերումի կերպից էլ նրանք արտածում են ապագա տարածքային պետությունների կամ քաղաք-պետությունների ի հայտ գալը: Եվ հունական պոլիսային փորձառությունն ընդհանուր գծերով համապատասխանում է առաջարկվող հղացքին: **Bailey**, 1981, 1-8, **Bailey, Davidson**, 1983, 87-91, **Ruschenbusch**, 1983, 171-178:

¹⁶ Հետազոտողներից ոմանք տեղաշարժի հիմնապատճառ են համարում ներհունական էթնիկ-մշակութային կապերի խզումը, ոմանք՝ հասարակական կառույցի ատոմացումը, մյուսները՝ ռազմական և մտահոգվող հրամայականների կապի խզումը: Հիմնախնդրի մասին տես **Hansen**, 2006, 107-109, **Vernant**, 2007, 41-44:

¹⁷ Ավելի ճշգրիտ ձևակերպմամբ՝ հույների մտահոգվող կյանքը

համընդգրկուն բովանդակություն չուներ: Այդ ազդեցությամբ, ի մասնավորի, արհեստները հնարավորինս ազատ էին:

Սա էական շեղում էր Արևելքից, որտեղ արհեստագործական աշխատանքը դիտարկվում էր իբրև սրբազնային գործառնությունների ազդրիթմ՝ կախյալ ասարվածային կամքից և միջնորդյալ արհեստախմբի ծխակարգով: Այսու արհեստավորը հիմնականում կրկնում էր աշխատանքի դարերով հասարակված կարգը: Կրկնությունը համարվում էր նրա անխախտ պարտքը ինչպես ասարվածների, այնպես էլ արհեստախմբի նկատմամբ:¹⁸ Հարդյունս՝ կերպարվորություններն ասար կարարվում էին չափազանց դանդաղ:

Այլ էր հույների պարագան: Նրանց միջավայրում սկսեց կարևորվել աշխատանքի մի տարատեսակ, որը բանաձևվում էր *εργος* եզրույթով: Վերջինիս իմաստային դաշտը գերծ էր ծխական-կրավորական բացարձակությունից: Կրողը վարպետն էր, որի մտահղացումը և ստեղծագործ կամքը նկատվում էին իբրև արդյունագործության կարևորագույն խթան: Հատկանշական է հետևյալ փաստը. թե՛ արարիչ աստծու, թե՛ արհեստավոր վարպետի համար հույներն օգտագործում էին միևնույն եզրույթը՝ *δεμιουργός* (դեմիուրգոս):¹⁹ Հայսմ հատկագծվում էր,

հիբրիդային կառույց ուներ, զի հարադրում էր բանական հայեցողությունը և կրոնախնդիրով վերապրումը: Ընդամեն, հարադրության բովանդակությունը փոփոխվում էր դարաշրջանից դարաշրջան: Տե՛ս Vernant, 2007, 45:

¹⁸ Կրկնությամբ կառուցված աշխատանքը երբեմն բնութագրվում է իբրև *ինքնընթաց գործառնություն* (*bricoleur*): Այն այսօր էլ առկա է տարբեր ոլորտներում: Տե՛ս **Levi-Strauss**, 1961, 30-33, հմմտ. **Louridas**, 1999, 523-527:

¹⁹ Այս եզրույթը հունական աշխարհատեսության կարևորագույն բաղադրիչներից էր: Պարառում էր մտակեցվածքի համարյա բոլոր

որ ճշմարիտ վարպետը նույնպես ի վիճակի է մտանցելու իր գործառույթի բոլոր շրջափուլերը և կանխատեսելու դրանց ընդհանրական արդյունքը: Այս կապակցությամբ ճշգրիտ է Հեսիոդոսը.

*Եվ լավագույնը նա է մարդկանցից, ով իր գործը միշտ
Քննարկում է և կանխատեսում արդյունքը դրա:*

Hesiod., Erg., 293-294

Ժամանակակիցներն այս գործելակերպը լծորդում էին մեկ այլ եզրույթի հետ՝ *τέχνη* – «հմտություն, հնարք, վարպետություն, ճարտարություն»: Հատկանիշներ, որոնք սահմանակցում էին *շեղումին* և անգամ *անպարարությանը*: Հավելենք, որ հենց տեխնեն էլ համարվում էր վարպետի և նրա արհեստախմբի հիմնական սեփականությունը: Պղատոնի բանաձևմամբ. «Յուրաքանչյուր արհեստ (և արվեստ) ուժ և իշխանություն է այն տիրույթում, որտեղ այն կիրարկվում է» [Plato, Rep., 342c]:²⁰

Հընթացս ժամանակի էրգոսը և տեխնեն հունական միջավարում ծնունդ տվեցին *նորարարության ոգուն*: Պատմությունը պահպանել է վարպետների անունները, որոնք կերպափոխել են գործունեության իրենց տիրույթը. Գլավկոս Քիոսացի, Թեոդորոս Սամոսացի (մե-

տիրույթները՝ առտնին մտքից մինչև իմաստասիրական ըմբռնում: Միաժամանակ համադրում էր աշխատանքային գործունեության հիմնարար ձևերը՝ գործից մինչև աստվածային արարչություն: Տես **Stenudd**, 2005, 115-117: Սակայն, բացի այս բարձրահունչ եզրույթից, օգտագործվում էին նաև այլ եզրույթներ. ի մասնավորի՝ *βανασος* – *սևագործ* և *τεχνίτης* – *գործավոր* ամենալայն իմաստով՝ սկսյալ մանածագործից ու բրուտից մինչև բժիշկ ուսուցիչ, դերասան ու ճարտասան: Տես **Blondé, Muller**, 1998, 832-834:

²⁰ Տեխնոլոգիաների մասին արդի գիտելիքը պղատոնական այդ գաղափարն ընդունում իբրև մեկնակետ՝ տարակերպ զարգացումների իմաստավորման համար: Տես **Feenberg**, 1999, 14-17:

տաղի ձուլում և եռակցում), Կլեոն Կորնթացի (բարձր ջերմաստիճանի բրուտագործական վառարան), Անդրոկլես Սամոսացի (քարի մշակություն և ագուցում):²¹ Շատ անուններ էլ մնացել են անհայտ, բայց առկա էր նրանց գործը՝ այլազան ամբարձիչներ, գործիքներ (հատիչ-քերիչներ, մուրճեր, ունելիներ): Նրանց ստեղծագործ եռանդի բարձրագույն դրսևորումներից էր նավաշինությունը, որը Պլատոնը որակում էր իբրև համադրական արհեստ [Plato, Phileb., 54b]: Հի միավորում էր տարբեր արհեստների նվաճումները՝ սկսյալ մանածագործությունից և կաշեգործությունից մինչև հյուսնություն և մետաղամշակություն, զինագործություն, բրուտագործություն, նավաշինություն:

Արխաիկ դարաշրջանում հետազոտողներն առանձնացնում են շուրջ 70 հիմնական արհեստ: Աշխատանքի տրոհման-մասնագիտացման հետևանքով դրանց թիվը շուտով հասավ մոտ 150-ի:²² Թեպետ այս բազմազանությանը՝ հետազոտողները դարաշրջանը բնութագրում են իբրև անցում բրոնզից երկաթի, զի այդ տիրույթում էին ներդրվում տեխնոլոգիական բոլոր կարևոր նորամուծությունները:

²¹ Տե՛ս Bresson, 2007, 192-198, **Ստեփանյան**, 2014, 281-289: Հանդերձ այդու, դեռ երկար ժամանակ հունական գիտակցության մեջ հողագործի աշխատանքը նկատվում էր նախընտրելի, զի այն ապահովում էր ինքնաբավ կենսընթաց: Մինչդեռ արհեստավորը կախված էր ուրիշներից [Xen., Oec., IV, 2]: Մյուս կողմից՝ չունեք *ազապ ժամանակ* (σχολή) նվիրելու իրեն և այլոց: Իսկ դա համարվում էր ընկերային համախմբման կարևոր խթան: Հմմտ. [Plato, 495d-e]: Ազատ ժամանակի ընկերային և կրոնամշակութային բովանդակության մասին տե՛ս **Фролов**, 2004, 292-297:

²² Դիտարկվող տնտեսական կերպավորությունները հետազոտողները քննարկում են *սպառում-արտադրություն-նորարարություն-կենսամակարդակ-ժողովրդագրություն* շղթայի համաձիքում: Տե՛ս Morris, 2004, 729-736:

Գործընթացներն ուղեկցվում էին աշխատանքի և նրա արդյունքների չափաբերմամբ (ստանդարտացում):²³ Հենց այս լույսով էլ պետք է մեկնաբանել Պղատոնի խոսքերը. «Մենք արգելում ենք կոշկագործին զբաղվելու երկրագործությամբ, ջուլհակությամբ կամ շինարարի գործով: Ճիշտ նույն կերպով մնացած բոլորին հանձնարարում ենք կատարելու մի գործ՝ պատշաճ իրենց բնական հակումին: Դրանով նրանք պետք է զբաղվեն ողջ կյանքում և չշեղվեն դեպի այլ բան: Եվ եթե ժամանակը զուր չվատեն, ապա կհաջողեն ամեն բանում» [Plato, Rep., 374c]:

Ավելին, հընթացս ժամանակի տրոհում–մասնագիտացումը ներթափանցեց միևնույն արհեստի տիրույթ և ծնունդ տվեց գործատանը (*ἐργαστερία*), որտեղ աշխատում էր մինչև հարյուր գործավոր, և ամեն մեկն իրագործում էր աշխատանքի իր մասնաբաժինը: Իսկ միասին արտադրում էին միևնույն ապրանքը՝ կոշված բավարարելու պայմանական պատվիրատուի «ընդհանրական պահանջմունքը»: Արդի ընկերաբանության դիտանկյունից՝ անցում էր կատարվում դեպի *արդյունագործություն*:²⁴ Եվ նրանք հարկեր էին վճարում հոգուտ պետության, որը պարտավորություն

²³ Աշխատանքի տրոհում–մասնագիտացումից հետագոտողներն արտածում են կյանքի համարյա բոլոր տիրույթների բանականացումը: Համարվում է, որ հայդն անցում է կատարվում «կենսաշխարհից դեպի համակարգ»: Տե՛ս Habermas, 1989, 119-127, 153-160:

²⁴ Հետագոտողների շրջանում երկար ժամանակ թերահավատություն կար Արիստիլ դարաշրջանի տնտեսական առաջընթացի ընդգրկումների վերաբերյալ: Այն ներկայացվում էր իբրև նախնական քայլերի ալգորիթմ: Նոր ժամանակներում այս թեակաությունը ցայտուն դրսևորում է ստացել Մ. Ֆինլիի հետագոտական դպրոցում: Տե՛ս Finley, 1999, 14-34, հմմտ. Morley, 2000, 97-98: Հետագոտողներից ոմանք էլ արդյունագործության ձևավորման գործում առանձնացնում են մրցակցության դերակատարությունը: Տե՛ս Acton, 2014, 33-46:

ուներ ապահովելու «կայուն գործարար միջավայր»։ Դրանք ուղղակի էին (εἰσφορία)՝ գանձված ըստ գործարքների, կամ անուղղակի (λειτουργία)՝ հոծարակամ ներդրում հանրության առօրեական, ռազմական, կրոնական և մշակութային ձեռնարկումների մեջ։²⁵

Ի հետևանս էրգոսի, տեխնիկ և նորարարության՝ ձևավորվեց արտադրական և (ընդհանրապես) հասարակական պահվածքի մի նոր հարացույց, որը կոչվում էր ἀγών – *մրցակցություն*։ Վերջինիս դիտանկյունից աշխարհի տոհմական-վերջավոր սահմաններն այլևս կապանքներ էին։²⁶ Այն կրող անհատն սկսեց չհամընկնել իր նմաններին ո՛չ տնտեսապես, ո՛չ ընկերային դերակատարությամբ, ո՛չ հոգեբանությամբ։ Եվ այս հարցում կրկին ճշգրիտ է Հեսիոդոս քանաստեղծը.

*Այդ մրցակցում է հարևանը հարևանին, զի ամբողջ
սրտով ինչքի է ձգվում,
Եվ նախանձում է բրույրը բրույրին, հյուանը՝ հյուանին,
Երգիչը՝ երգչին, [անգամ] աղքատը՝ աղքատին։*

Hesiod., Erg., 24-26

Սակայն շուտով ակնհայտ դարձավ նաև հակընթաց միտումը, որը խնդիր ուներ համաչափելու (և այդու՝ համահարթելու) արտադրության ու ընկերային պահվածքի տարասեռությունները։ Այդ նպատակավ

²⁵ Տե՛ս Morris, 2004, 732-733:

²⁶ Հարկավ, Արիստիլ Հունաստանում առկա էին նաև արհեստագործության նախնական մակարդակներ, որոնք գործառում էին *յոնավարության* ծիրում։ Օրինակ՝ գյուղական միջավայրում արհեստը տարանջատված չէր երկրագործությունից։ Գյուղացին սովորաբար ինքն էր հոգում իր պահանջմունքները՝ պատրաստելով տարաբնույթ գործիքներ, անոթներ, կահկարասի, գործվածքներ, հագուստ։ Անկասկած, դրանք ավելի ցածր որակի էին, բայց բավարարում էին նրան։ Տե՛ս Amouretti, 2007, 146-153:

հույներն սկսեցին արհեստները տարբերակել երկու հիմնական դասի՝ *կարարողական* և *կառավարման*: Առաջինը ներկայացնում էր մասնակի արհեստներն ու դրանց ենթատեսակները: Երկրորդը՝ համադրական արհեստները, որոնք նպատակ ունեին համաբերելու մասնակիները: Ի շարս դրանց Պղատոնը հատկազծում է նավավարությունը և պետության կառավարումը [Plato, Rep., 342b]: Ի մասնավորի՝ ուշադրություն է դարձնում այն իրողության վրա, որ երկուսի համար էլ հունարենն օգտագործում էր միևնույն եզրույթը *κυβερνήτης* – *կառավար*:²⁷

Համադրման և կառավարման դիտանկյունների ընկերային հեռանկարը զարգացնելով՝ Պղատոնը հատկազծում է. «Շատ բաների կարիքից դրդված՝ մարդիկ միավորվում են համատեղ ընկերային կյանքի (*ἐπὶ κοινονίαν*), որպեսզի օգտվեն միմյանցից» [Plato, Rep., 369c]: Այլով բանիվ՝ ընկերային համակեցությունը գործառնական միջավայր էր՝ կառուցված ըստ հանրային աշխատանքի տրոհման և միավորման սկզբունքի:

1.3. Փոխանակություն և շուկա

Արխաիկ դարաշրջանում վերջինիս կայացումն ընթանում էր ինչպես տնտեսական, այնպես էլ զուտ քաղաքական խթանների ներքո: Հույները համոզված էին, որ շուկան ներկայացնում էր հանրային կյանքի կարևորագույն չափույթներից մեկը: Ի հաստատումն՝ սիրում էին հիշատակել, որ պարսիկների հակոտնյա ընկերային միջավայրն անծանոթ է դրան. «Պարսիկները բնավ առևտուր անելու սովո-

²⁷ Տե՛ս այս մասին Hicks, 1989. 42-45:

րություն չունեն: Նրանց միջավայրում շուկան բացակայում է» [Herod., I, 153]: Հարկավ, ասվածը հեռու էր իրականությունից, սակայն պնդումն օգնում էր հույների հատկագծելու իրենց պատմական ուղու առանձնահատկությունը:

Ընդունված է մտածել, որ շուկայի կայացման ճանապարհին կարևոր է (առնվազն) երկու *տեխնիկական* նախադրյալի առկայությունը. մի կողմից՝ երթևեկի համացանցը, մյուս կողմից՝ տարածության, չափուկչոյի և դրամական միավորների չափաբերումը:²⁸ Առաջին նախադրյալի կապակցությամբ հետազոտողներն առանձնացնում են մի կարևոր հանգամանք. ի հետևանս տարածքի կտրտվածության և դժվարանցանելության՝ ցամաքային երթևեկը Հունաստանում սահմանափակ էր: Համազգային տնտեսության դիտանկյունից ավելի կարևորություն ուներ ծովային երթևեկը: Դրան նպաստում էին հարմար ծովախորշերը: Նաև՝ Էգեյան ծովի բազում կղզիները, որոնք բավական մոտ էին միմյանց, ուստի նավարկությունը դեպի Փոքր Ասիա և հակառակ ուղղությամբ կապված չէր առանձին դժվարության հետ: Պատահական չէ, որ տնտեսապես հառաջացած բոլոր քաղաքները ծովահայաց էին՝ Միլետ, Հալիկարնաս, Սամոս, Կորնթոս, Մեգարա, Աթենք:²⁹

²⁸ Շուկայի մասին ասելիքն ամբողջացնելու նպատակով հարկ ենք համարում հավելել, որ դիտարկվող ժամանակաշրջանում Հունաստանի տնտեսապես հառաջացած տարածաշրջաններն արդեն հաղթահարել էին շուկայական հարաբերությունների «ագրարային դեմադեմի» և «տեղական ընդգրկման» շրջափուլերը և արդ կանգնած էին համացանցացման հեռանկարի առջև: Հմմտ. Braudel, 1977, 51-62, Collins, 1990, 112-114:

²⁹ Մ.Վերբերը մշակել է *ծովահայաց քաղաքակրթությունների* իր տեսությունը, որտեղ հատկազգծվում են քաղաքային կյանքի, տնտեսության, ընկերային պահվածքի և հոգեբանության նոր հարացույցներ՝ միտված առ ծավալումը և ավանդական ընդհանրական

Շուտով հույն ճարտարագետներն ստեղծեցին նավի իրենց տարատեսակը՝ եռահարթակ թեթև ու արագընթաց *տրիեմր*։ Այն հեշտությամբ կտրում–անցնում էր տարածություններ։ Օգտագործվում էր ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական նպատակներով։

Հունարեն՝ տրիորոս – սովորաբար 37–40 մետր երկարությամբ, 4.5–5 մետր բարձրությամբ նավ։ Անձնակազմը՝ 170–200 նավազ, մեծ մասը՝ թիավարներ, որոնք նստած էին երեք մակարդակով։ Լավ մարզված էին, գիտեին նավավարի և նրա օգնականների նշան–հրահանգները և կարարում էին անվերապահ ճշգրտությամբ։ Գիտարկվող դարաշրջանում անձնակազմը ծագում էր հիմնականում թեյերի (սակավունակ, բայց ազատ) հանրախմբից։³⁰ Հրնթացս ժամանակի ձևավորվեց նավազնացների արհեստախումբը՝ մարդիկ, որ քաջարեղյակ էին ծովին՝ քամիներ, հոսանքներ, խութեր։ Գիտեին «կարդալ երկինքը» [Hesiod., Erg., 139–141]։ Ծնորհիվ հենց նրանց ջանքերի՝ Մեծ գաղութացման ընթացքին ձևավորվեց հունական սիյուռքի համընդգրկուն ցանցը։ Հեյրագայում տրիեմրը սկսեց օգտագործվել նաև ռազմական նպատակներով։ Հարկավ՝ կառուցվածքային կարևոր նորամուծություններից հետո միայն։

Ինչ վերաբերում է երկրորդ նախադրյալին, ապա այն դիտարկվում է իբրև տվյալ հասարակության զարգացվածության ցուցանիշ։ Չմտնելով մանրամասնությունների մեջ՝ հատկազօ ենք, որ Արիստիլ Հունաստանն ուներ բավական զարգացած համակարգեր, որոնք ապահովում էին չափաբերման ճշգրտություն՝ հարիր դարաշրջանի պահանջմունքներին և պատկե-

ըմբռնումների (Kollektivbegriffen) բանական հաղթահարումը։ Տե՛ս Roth, 1976, 306–308։

³⁰ Տե՛ս Starr, 1992, 1095։

րացումներին:³¹ Դրանք վերաբերում էին տարբեր ապարեզների՝ երկարություն, մակերես, կշիռ:³² Դրամական միավորները նախապես սերտ աղերսված էին կշռի միավորներին, բայց հետագայում տարանջատվեցին և կազմեցին ինքնուրույն համակարգ՝ էվբեյան տաղանդից (26.196 կգ) մինչև դրաքմա (4.36 գ) և օրոդոս (0.9 գ):³³

Չափաբերման տարածքային կիզակետը նախ և առաջ քաղաքային հրապարակն էր, որը նույնական էր շուկային: Երկուսն էլ ներկայացվում էին միևնույն եզրույթով՝ *ἀγορά* (ագորա): Եվ դա արդյունք էր պատմական զարգացման: Հոմերոսյան դարաշրջանում այն տարածք էր՝ կոչված համաբերելու մի քանի ցեղային համայնք՝ սրբազնային, վարչական և պաշտպանական նպատակներով:³⁴ Տնտեսական խթանը թույլ էր, սակայն ապագան նրան էր պատկանում:

Հենց տնտեսական չափույթում էլ բացահայտվեց ագորայի խորքային-անդրական իմաստը: Այն կապված էր նախ և առաջ շուկայական սահքի հետ, որը պարառում էր առևտրի և փոխանակության համար նախատեսված ապրանքները: Ձերբազատյալ

³¹ Ընդլայն իմաստով՝ չափաբերման գործընթացը դիտարկվում էր իբրև հանրույթի համախմբման և կառավարման կարևորագույն միջոց: Դարաշրջանից դարաշրջան այն կերպափոխվում էր և լցվում նոր բովանդակությամբ: Տե՛ս **Himbert**, 2009, 26-27, հմմտ. **Nichelson**, 1912, 33-37:

³² Երկարություն՝ ստադիոնից (178. 8 մ) մինչև դակտիլոս (մատնաչափ – 1. 85 սմ), կշիռ (տորոն նյութ)՝ մեդիմնոսից (52. 5 լ) մինչև խոյնիկս (1. 09 լ), կշիռ (հեղուկ)՝ մերետից (39. 46 լ) մինչև խյուս (3. 28 լ), կշիռ (մետաղ)՝ էգինյան տաղանդից (36 կգ) մինչև օրոդոս (0. 9 գ): Հմմտ. **Sherwin-White**, 1992, 659-660.

³³ Հմմտ. **Pryce, Lang**, 1992, 1138.

³⁴ Այս դիտանկյունների մասին տե՛ս **Donlon**, 2005, 21-25; հմմտ. Սպարտայի օրինակով՝ **Hodkinson**, 2005, 44-48:

իրենց կոնկրետ սպառողական հատկանիշներից՝ նրանք միմյանց հետ մտնում էին զուտ քանակային համահարաբերակցության մեջ, որը միջնորդվում էր ընդհանրական ապրանքով (դրամ): Հընթացս այս սահքի՝ հագուստը փոխանակվում էր կավե սկիհի, ուտելիքը՝ կահույքի, կոշիկը՝ ապարանջանի հետ:³⁵

Եվ սահքը պարառում էր նաև մարդկանց: Ձերբազատյալ իրենց անհատական և տոհմիկ, ունեցվածքային և հոգեբանական հատկանիշներից՝ նրանք աստիճանաբար սկսում են հարաբերակցվել իբրև միևնույն համայնքի անդամներ, որք հավասար էին օրենքների առջև:³⁶ Դա էլ ապահովում էր նրանց սահքը ազորայի տարածքում՝ տնտեսական, իրավաքաղաքական, կրոնական, մշակութային: Դա էլ ճանապարհ էր հարթում դեպի համայնական կյանքի մի նոր հարացույց, որն իր անդամներին կայուն քաղաքացիական իրավունքներ էր խոստանում:³⁷ Այս կապակցությամբ, կրկնենք մեկ անգամ էլ. Արխաիկ Հունաստանի զարգացած տարածաշրջաններում նախընտրեցին պատ-

³⁵ Շուկայի մասին այս գաղափարներն արծարծելիս մեկնարկել ենք Կ. Մարքսի տնտեսական իմաստասիրության հիմնագաղափարներից՝ արտադրված բարիքից մինչև ապրանք, սպառում, փոխանակություն, ընդհանրական ապրանք, դրամ, շուկայական տարերք և այլն: Տե՛ս **Маркс**, 1968, 131-144:

³⁶ Գրավոր օրենքների ձևավորման, հանրույթի ընկերային և քաղաքական համայնքման նոր հնարավորությունների հիմնախնդիրը բացահայտելի է այն հոլովույթի համաձիթում, որը հետազոտողները բանաձևում են իբրև «արխաիկ օրենսդրական բարեփոխություն»: Տե՛ս **Фролов**, 1988, 124-132:

³⁷ Տիպաբանորեն դա Արխաիկ դարաշրջանի կարևորագույն արդյունքն էր նկատվում, որն ի մի էր բերում նրա բոլոր մասնակի ձեռքբերումները: Նման համադրականությունը հիմք էր տալիս հույն մտածողներին պոլիսը զուգահեռելու նավին՝ տրիեր: Ասվածը ցայտուն ձևակերպում է ստացել Ալկեոս Միթիլենացու, Սոլոնի, Պղատոնի և այլոց գրույթներում: Տե՛ս **Brock**, 2013, 53-68:

մական մի ուղի, որն արմատապես տարբեր էր նախորդից: Կատարվեց դա դանդաղ ընթացքով՝ փնտրտուքի և փորձառության ճանապարհով:³⁸

Ասվածին հավելենք մեկ այլ նկատառում. շուկայի ներգործությամբ կերպավորվում էր Արխաիկ դարաշրջանի մարդու ներաշխարհը: Ի մասնավորի՝ ճակատագրական *անխուսափելությունն* (ἀνάγκη) սկսեց զուգահեռվել *քախր* (τύχη) եզրույթով: Ի տարբերություն առաջինի՝ վերջինս պատկերվում էր կույր ու անկանոն՝ հանգույն շուկայական տարերքին: Այն կարող էր չափաբերվել մարդու բանական մտածողությամբ, ընտրությամբ և գործողությամբ:

2. «ՊՈԼԻՍԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

Հունական կայացման այս նոր ճանապարհի ընդհանրական արգասիքը դարձավ պոլիսը՝ քաղաք-պետությունը: Այն կոչված էր միննույն համակեցական միավորի ծիրում միավորելու քաղաքային կենտրոնը և նրան առընթեր գյուղական տարածքը (πόλις καὶ χώρα):³⁹ Եվ կրկին հավելենք՝ այս նոր միավորն արդյունք էր զարգացման տևական ընթացի:

2.1. Նախապոլիսը

Ամրացված բնակավայր էր (ἄστυ)՝ բաղկացյալ գյուղական մի քանի համայնքներից (κόμαι), որոնք

³⁸ Հմմտ. **Finer**, 1999, 330-336:

³⁹ Արդի հետազոտություններում քաղաք-պետությունը ճանաչվում է իբրև մի ընդգրկուն միջավայր, որն առավել համապատասխանում էր ինչպես հունական աշխարհագրական միջավայրին, այնպես էլ նրա էթնիկ, մշակութային, կրոնական, քաղաքական տարաստեղծություններին և համախմբման պաշարներին: Տե՛ս **Martin**, 1996, 65-68:

միավորված էին *միասնական բարիքի շուրջ* (ἀγαθόν) [Arist., Pol., 1252b, 7]: Ընդամին, այս *համախմբման կամ համաբնակեցման* (συννοικοσιμός) նախաձեռնող էթնիկ-քնկերային խմբերի միջև հաստատվում էին հավասարաբանական հարաբերություններ՝ ամրագրված նախնյաց իրավական սովորույթներով (θέσμοι):⁴⁰ Վերջինիս առաջնային նպատակն էր երաշխավորելու նախ և առաջ ընդհանուր պաշտպանությունը և ապահովությունը:⁴¹ Այն նաև հոգևոր կենտրոն էր (սրբատեղի, տաճար), որն ապահովում էր հանրության անդամների կրոնաժխական կապը աստվածային ոլորտի հետ: Այս նախնական վիճակը հետագոտողները երբեմն բնութագրում են իբրև *նախապոլիս*՝ միտված առ մարդկանց բնական իրավունքների բավարարումը (ius naturale):⁴² Հարկ է ուշադրություն դարձնել, որ նման վիճակը հատկանշական էր Հունաստանի այն շրջան-

⁴⁰ Հետագոտողներն ուշադրություն են հրավիրում այն փաստի վրա, որ տակավին Թուկիդիդեսը տարբերակում էր համաբնակեցման մի քանի մակարդակ՝ սպարտական (գյուղական համայնքների համաբերմամբ), քաղաքական (կենտրոնական իշխանության գերակայությամբ) և բնական (տարածքի և ազգաբնակչության համախմբմամբ): Համաձայն պատմագրի՝ վերջին երկու քաղաքիչների ավարտական միավորում-կայացումը Աթենքում տեղի է ունեցել *Երկար պարսպի* կառուցմամբ միայն՝ Ք.ա. 461-456 թվականներին: [Thuc., II, 14, 2]: Տե՛ս **Gouschin**, 1999, 174-178:

⁴¹ Որոշ հետագոտողներ իշխանական և ռազմական դիտանկյունները դիտարկում են իբրև պոլիսի գոյացման նախնական խթաններ, որոնցից էլ արտածվել են մնացած բոլորը: Տե՛ս **Thomas**, **Conant**, 1999, 233-235, **Raaflaub**, 2005, 26-32:

⁴² Հետագոտողներից ոմանք նախապոլիսը դիտարկում են իբրև հունական հանրության լուծարման, քաղաքական, կրոնական միավորման տարակերպ, որը գոյություն ուներ արդեն կայացած պոլիսի գոյահետ: Բավական կայուն էր և նկատելի ոչ միայն Արխաիկ, այլ նաև Դասական դարաշրջանում՝ իբրև վերջինիս այլընտրանք: Այս մոտեցումը արդի պատկերացումներին բազմաչափություն է հաղորդում: Տե՛ս **Фролов**, 1988, 84-93, **Forrest**, 2000, 280-288:

ներին, որոնք բրոնզեդարյան փուլումից «ուշքի էին եկել» համեմատաբար ավելի արագ՝ Ք.ա. 11–9-րդ դարերում:⁴³

Նախապոլիսն ինքնաբավ էր ու ինքնավար՝ կառուցված իր անդամների փոխադարձ լրացման հարաբերությունների սկզբունքով: Տարածքը մեծ չէր. Լակեդեմոնը, օրինակ, զբաղեցնում էր 8400 կմ², Աթենքը՝ 2500 կմ², Կորնթոսը՝ 2000 կմ²: Կային պոլիսներ, որ զբաղեցնում էին ընդամենը 2–3 տասնյակ կմ²: Արդի գիտությունը դրանց քանակը որոշարկում է մոտ հազարի սահմաններում: Մի մասը զարգացավ և ծնունդ տվեց հունական նշանավոր քաղաք-պետություններին, մյուս մասը բավարարվեց տեղական նշանակությամբ կամ էլ ընդհատեց գոյությունը:⁴⁴

Հընթացս ժամանակի սկսեցին կարևորվել պոլիսային համակեցության այլ հատկագծեր: Ի մասնավորի՝ խոսքը նրա հրապարակի վարչաիրավական և դատական գործառույթների մասին է. այստեղ էին գումարվում Աշխարհաժողովի և դատական ատյանների նիստերը: Եվ միավորյալ գյուղական համայնքներն սկսեցին աստիճանաբար կերպավորվել *քաղաքացիական համայնքի*:⁴⁵ Այս ճանապարհին

⁴³ *Գյուղական համայնք–նախապոլիս–պոլիս* քաղաքակրթական անցումների հետազոտական դիտանկյունների մասին տե՛ս մանրամասն **Зайцев**, 2001, 54–67:

⁴⁴ Հիրավի, ի տարբերություն մերձավորարևելյան քաղաք-պետությունների՝ հունական բնօրինակն աչքի էր ընկնում, մի կողմից՝ փոքր տարածքով, մյուս կողմից՝ քաղաքի և պետության առավել սերտ առնչությամբ: Դրանք նրան հաղորդում էին պատմության մարտահրավերներին պատասխանելու ավելի մեծ ներուժ և ճկունություն: Տե՛ս **Hansen**, 2006, 137–146, հմմտ. **Köiv**, 2011, 148–153:

⁴⁵ Հետազոտողներն ուշադրություն են հրավիրում այս գործընթացի խորքային բովանդակության վրա՝ բանաձևնելով դա իբրև անցում բաժանումից և տարասեռումից դեպի համաբերում և հա-

կարևոր խթան դարձան գրավոր օրենքները՝ արձանագրյալ տախտակների վրա և կախյալ հրապարակում: Դրանք սահմանում էին նույնական իրավունքներ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց ծագումից, հասարակական դիրքից և ունեցվածքից:⁴⁶ Աստ միանգամայն հարիր է հիշել պատմագիր Թուկիդիդեսի բանաձևը. «Զի քաղաքը մարդիկ են և ոչ պատերը, միևնույն ժամանակ էլ այն նազ չէ առանց մարդկանց» [Thuc., VII, 77, 7]:

2.2. Պոլիսը (քաղաք-պետություն)

Ի հետևանս այս կերպափոխումների՝ ամրացված *քաղաքային բնակավայրը* վերածվեց պոլիսի՝ *քաղաք-պետության*, որը միավորում էր քաղաքի, գյուղի և պետության հիմնատարերը:⁴⁷ Վերջինիս նկատմամբ միանգամայն կիրարկելի է պետության արդի ըմբռնումը. «[...] հաստատությունացված քաղաքական կառույց՝ նպատակավ մենատիրելու օրինականացված

մախմբում: Տե՛ս Hölkeskamp, 1992, 102–107, Степанян, 2014, 342–347:

⁴⁶ Գրավոր օրենքները ճանապարհի էին ուղղագծում *պահվածքի հաստատագրված նորմերից դեպի օրենսդրություն*: Իսկ դրանց հասանելությունը հանրային բոլոր անդամներին ենթադրում էր նոր հաստատության՝ հանրային կարծիքի կարևորությունը: Այն պահանջում էր հասարակության համախմբման մի նոր հարացույց՝ ըստ նրա անդամների անհատական ընդունակությունների և կարողությունների: Միաժամանակ չէր ժխտվում վերջիններիս կապը նախնիին ավանդական իրավաքաղաքական համալիրի հետ: Ուսումնասիրողներից մեկի պատկերավոր արտահայտությամբ՝ գրավոր օրենքները գտնվում էին «տաճարի և հրապարակի միջև»: Տե՛ս Hölkeskamp, 1992, 94–97, հմմտ. Степанян, 2014, 349:

⁴⁷ Այս համաձևումը երկար պատմական հոլովույթի հետևանք էր, որի սկիզբը հետազոտողները փնտրում են տակավին Մուք դարաշրջանում: Մյուս կողմից՝ դրա ներգործությունը հույժ զգալի էր հետագա պատմական դարաշրջաններում: Այլով բանիվ՝ դա հարընթաց կերպափոխումների շարք էր: Տե՛ս Bintliff, 1999, 50–52:

բռնի ուժը»:⁴⁸ *Օրինականացված բռնի ուժը* կիրարկվում էր նախ և առաջ սեփական տարածքի և ազգաբնակչության նկատմամբ:

Չուզընթաց գորացավ նաև տնտեսական բաղադրիչը. հրապարակն սկսեց վերածվել շուկայի, որտեղ տեղի էին ունենում գյուղատնտեսական ապրանքների վաճառք և դրամական գործարքներ: Արհեստների զարգացման և դրանց՝ գյուղատնտեսությունից տարանջատման հետևանքով հրապարակում սկսեցին երևալ գործատուներ և դրամատուներ:⁴⁹ Հավելենք՝ այս բազմաշերտ միասնությունը կողավորված էր լեզվամտածողության մեջ. հունարենի *ἀγορά* գոյականը համաբերում էր «հրապարակ», «շուկա» և «աշխարհաժողով» իմաստները: Այսինքն՝ ագորան սահքի տարածք էր՝ ապրանքների, դրամի, հանրային կարևորության գաղափարների, քաղաքացիների: Հետագայում այս սահքի ծիրում ընդգրկվեցին նաև իմաստասերները, որք հանրույթի ներկայությամբ վարում էին իրենց զրույցները՝ միտված առ բարիքը, արդարը, առաքինին ու ճշմարիտը:⁵⁰

Մ'նում է հավելել, որ 8–6-րդ դարերի այս տարաչափ կերպավորվածությունները Հունաստանի տարբեր ծագե-

⁴⁸ Տե՛ս Weber, 1978, 29:

⁴⁹ Հմմտ. Wycherley, 1969, 78-83:

⁵⁰ Ի մասնավորի՝ ասվածը վերաբերում էր սոփիստներին, որոնք տրամաբանության սկզբունքներ ներբերեցին հունական միջավայր՝ լեզվի, մտածողության, բարոյականության, մասնավորության և այլ տիրույթներում: Անուրանալի էր նրանց ավանդը մարդակենտրոն իմաստասիրության ձևավորման գործում՝ Պրոտագորաս, Գորգիաս, Փիլեբոս: Բայց հընթացս ժամանակի՝ *ազայր մտածողության* (մտածողություն հանուն մտածողության) ներքո սոփիստներն սկսեցին հակվել դեպի ճշմարտության հարաբերականության գաղափարը (relativism), և նրանց ազդեցությունը սահմանափակվեց մտավորական նեղ շրջանակներում: Տե՛ս Kerferd, 1981, 83-97:

րում ձևավորում էին այլազան համակեցական համադրություններ՝ կապված տեղանքի, էթնիկ կազմի, կրոնի, մշակույթի, քաղաքական ավանդույթի հետ: Դրանք էլ պայմանավորում էին քաղաք-պետությունների տեղական առանձնահատկությունները: Այդու՝ Հունաստանը ներկայանում էր իբրև մեկ-բազումի միջավայր, որի ծիրում համակեցական ընդհանրական հատկագիծը հանդիպում էր տեղական բազումին: Հետազոտողները դրանում տեսնում են ընդհանուր փոխլրացման միտում, որը, սակայն, երբևէ չհասավ իր կատարումին: Զորեղ էին *բազումի* կենտրոնախույս մոդումները: Հարդյունս՝ չձևավորվեց մոնոլիտ-միասնական ընկերային և քաղաքական, մշակութային և հոգեբանական, կրոնական և ծիսական դաշտ իր պետական հանդերձանքով: Ձևավորվեց հունական աշխարհը՝ հանդերձ իր տարասեռություններով:⁵¹

Մեկնարկելով տվյալ ըմբռնումից և տիպաբանելով առկա փաստերը՝ հետազոտողները հունական միջավայրում սովորաբար առանձնացնում են քաղաք-պետության երեք տարակերպ՝ սպարտական, կորնթական, աթենական: *Առաջինը* ներկայացնում էր էթնիկ փոքրամասնության (սպարտիատներ) իրավաքաղաքական և կրոնածիսական հրամայականը մեծամասնության նկատմամբ: Հրամայական, որը պարուրված էր ժողովրդավարության ինչ-ինչ հատկագծերով ու երանգներով: *Երկրորդը* ներկայացնում էր ազնվապետության գերակայությունը հասարակության մեծամասնության նկատմամբ: Ընդամին, ազնվապետությունն աստ առա-

⁵¹ Այլով բանիվ՝ սկսյալ այս վաղ ժամանակներից՝ հունականությունը գնաց *համացանցացման* ուղիով: Հընթացս պատմության դրա սահմանները կերպափոխվել են, սակայն հիմնական միջ բաղադրիչները մնացել են կայուն: Տե՛ս **Martin**, 1996, 66-69:

ջին հերթին ձեռներեցների հանրադասն էր՝ նավատերեր, ձեռնարկատերեր, դրամատերեր: *Երրորդը* հատկազօվում էր ժողովրդավարությամբ, որը նախապես սահմանափակված էր ունեցվածքային ցենզով, իսկ հետագայում ձեռք բերեց ընդհանրական ընդգրկում՝ քաղաքացիների անվերապահ մասնակցությամբ:⁵²

Հունական քաղաք-պետություններում քաղաքական իշխանության հարցն ուներ սկզբունքային կարևորություն: Այն հասարակաշինական ծրագիր ու խթան էր պարունակում: Համաբնակեցում-համախմբումին զուգընթաց աստ նախապես տեղի էր ունեցել արքայական իշխանության ինքնահաստատում: Այն գալիս էր տոհմիկ միջավայրից և սկզբնապես անգամ ժառանգական չէր: Իրական էր ավագանու իշխանական և արժեքանական պատկերացումների համատեքստում՝ կառուցված քաջության, նախնյաց փառքի, բարոյական կատարելության վրա: Պատմական հանգամանքների բերումով այս իրավիճակը (հարկավ, կերպափոխություններով հանդերձ) պահպանվել էր հատկապես Սպարտայում: Երկու արխեգետոս-արքաների և Ծերակույտի (Գերուսիա) համագործակցությունը, որը սկիզբ էր առել տակավին դորիական նվաճումների ընթացքին, պահպանվեց երկար դարեր: Այս առումով հարկ է կրկին հիշատակել, որ սպարտիատներն իրենց պետությունում էթնիկ-ընկերային փոքրամասնություն էին և համախմբումն իրենց *առաջնորդների շուրջ* համարում էին ներքին անդորրի նախապայման:⁵³

⁵² Հարկավ, ընկերային կյանքը և կառավարման համակարգերն ավելի բազմազան էին: Հետազոտողները կանգ են առնում հիշյալ երեքի վրա՝ համոզված, որ դրանցից կարելի է արտածել մնացած բոլորը: Տվյալ դիտանկյան տնտեսական, ընկերային, քաղաքական չափոյթների մասին տես **Curran**, 2012, 33-35, **Степанян**, 2014, 348-353:

⁵³ Այլով բանիվ՝ սպարտական արքայական իշխանությունն ընդ-

Սպարտական հարացույցին հետազոտողները սովորաբար հակադրում են արենականը, զի Աթենքում պատմությունն ընթացավ միանգամայն այլ ուղիով. արքայական իշխանության և տոհմիկ ավագանու միջև գոյացավ անջրպետ, որը հընթացս ժամանակի հանգեցրեց ներքաղաքական լարումների: Ի վերջո, արքայական իշխանությունը տանուլ տվեց և ստիպված էր լքել պատմական ասպարեզը:⁵⁴ Աստ միանգամայն հարիր է հիշատակել Հոմերոսի բանաձևը, որը, սակայն, միշտ չի արժանանում հարիր ուշադրության.

*Արքան ունակ է խժռելու ազգը,
Ունակ է իշխելու լոկ վախկոպներին:*

[Hom., Iliad., II, 12]

Սակայն արենական պատմական ավանդությունը հրաժարել է այս բացասական գնահատականից և ստեղծել *վերջին իմաստուն արքայի* կերպարը՝ զոհյալ հանուն հայրենյաց:⁵⁵ Ամենայն հավանականությամբ դա տեղի է ունեցել Ք.ա. 9-րդ դարի կեսերին: Դրանից հետո ավագանին իր ձեռքին է կենտրոնացրել պետության իշխանական (թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր) լծակները՝ Արքոնտների խորհուրդը և Արեոպագոսը: Իսկ ավանդական Աշխարհաժողովի գործառնություն իջեցվել էր ծիսական մակարդակի:⁵⁶

գծված առնչություն ուներ ռազմական իշխանության հետ: Հիշենք՝ Արիստոտելը նրանց անվանում էր «ժառանգական զորահրամանատարներ» [Arist., Pol., 1285a]: Ասվածը նրանց կառավարմանը հաղորդում էր կայունություն, բայց մյուս կողմից՝ ճկունության պակաս: Տես **Thomas**, 1974, 257-260:

⁵⁴ Այս գերակա միտումի մասին տես **Bury**, 2015, 73-76:

⁵⁵ Խոսքը Աթենքի վերջին արքա Կոդրոսի մասին է. տե՛ս **Fontenrose, Gomm, Cadoux**, 1992, 257: Նրա կերպարին պատրաստվում ենք անդրադառնալ աշխատության երկրորդ հատորում:

⁵⁶ Այս կերպափոխության մասին համարյա տեղեկություն չու-

2.3 «Հոպլիսական հեղափոխությունը»

Որքան էլ միայնացից տարբեր՝ երկու պոլիսներում ընթանում էին զուգահեռ հոլովույթներ: Դրանցից մեկը հետազոտողները հաճախ բանաձևում են իբրև *հոպլիսական հեղափոխություն*: Բովանդակությունը հետևյալն էր. ինչպես Սպարտայում, այնպես էլ Աթենքում ընտրախավը բարեհաճ վերաբերմունք ուներ միջին ունեցվածքի գյուղացիության (γεωμόροι) նկատմամբ՝ նրանում տեսնելով ընկերային հենարան: Ժամանակի ընթացքում այս դասն սկսեց բարգավաճել և հավակնել ինքնուրույն հասարակական դերակատարության: Եվ հասավ հաջողության:⁵⁷ Ցավոք, այս գործընթացի մանրամասնությունների վերաբերյալ մեր տեղեկույթը բավական աղքատ է:

Հետազոտողները համարում են, որ այս գործում շրջադարձային եղավ բանակում տվյալ հանրադասի դերի փոփոխությունը: Նախկինում բանակի հիմնական ուժը ավագանու հեծելագորն էր. ձիու, հանդերձանքի և զենքի ծախքը հոգում էր ինքը՝ զինվորը: Ծառայությունը նկատվում էր իբրև հասարակական դիրքի և հեղինակության աղբյուր, որոնք ավելի էին,

ներք և ստիպված ենք բավարարվել ընդհանուր դատողություններով: Մինչդեռ այն խորքային բնույթ ուներ, որի նկարագրությունն իսկ կարևոր եզրակացությունների է հանգեցնում: Տե՛ս Vernant, 2007, 34-36: Ի տարբերություն Աթենքի՝ Սպարտայում կանգ առան կեսճանապարհին և պահպանեցին արքայական իշխանությունը սահմանափակ ներուժով: Տե՛ս Ստեփանյան, 2006, 119-121, Bury, 2015, 120-126:

⁵⁷ Նախկինում հետազոտողները սովորաբար սևեռվում էին հոպլիսների հիմնախնդրի ռազմական բաղադրիչի վրա: Արդ ընկերային դիտանկյունն ավելի ու ավելի է կարևորվում ինչպես Սպարտայի, այնպես էլ Աթենքի պատմության համաձիթում՝ իբրև Ուշ Արխաիկ դարաշրջանի էական կերպափոխություններից մեկը: Տե՛ս Trundle, 2001, 1-5, հմմտ. Pomeroy, Burstein, Donlan, Roberts, Tandy, Tsouvala, 2004, 85-87:

քան ինչքը: Նոր պայմաններում միջին ունեցվածքի գյուղացիությունն ի գործու դարձավ ապահովելու իրեն ծանրագեն հետևակի հանդերձանքով և զենքով՝ երկաթե կարճ սուր, երկար նիզակ, մեծ բրոնզե (կամ կաշվե) վահան, բրոնզե սաղավարտ ու կրծքակալ: Եվ հետո՝ իր ծախսը ռազմարշավի ժամանակ: Սա մի ամբողջ կարողություն էր պահանջում: Այսպես պատմության ասպարեզ իջան հուպիտը (ὅπλίτης) և իր խիտ ռազմակարգը՝ փաղանգը (φάλαγξ), որը շուտով դարձավ պոլիսի հիմնական ռազմուժը: Հեծելազորը մղվեց հետին հարթակ:

Իրերի տրամաբանությունը ենթադրում էր քաղաքացու դերի համապատասխանություն ինչպես ռազմակարգում, այնպես էլ հանրակարգում: Նման հարաբերակցության հաստատումը Սպարտայում տեղիք չի տվել լուրջ խաթարումների:⁵⁸ Այս առումով, կարծում ենք, պատեհ է կրկին հիշել վերոբերյալ փաստարկն առ այն, որ սպարտիստները հանրության քանակական փոքրամասնությունն էին և կարիք ունեին համախմբման լրացուցիչ խթանի:⁵⁹ Հարդյունս՝ աստ ոչ միայն ամրագրվեց սպարտիստների Աշխարհաժողովի դերակատարությունը, այլ նաև ստեղծվեց մի նոր պաշտոնություն՝ Էփորների խորհուրդը, որը կոչված էր հակակշիռ դառնալու արքաների և ավագանու իշխանությանը⁶⁰:

⁵⁸ Հետազոտողներից ոմանք խոսում են սպարտիստների միասնական (կոլեկտիվ) բռնատիրության մասին, որին հակադրված էին մնացյալ բոլոր հանրախմբերը: Տե՛ս **Trundle**, 2001, 14–16: **Martin**, 1996, 75–78:

⁵⁹ Որոշ հետազոտողներ կարծում են, որ սպարտական համախմբումն ավելի լայն ընդգրկում ուներ և միտված էր «կորպորատիվ արդարության» խթանով այդ հոլովության մեջ պահել նաև ստորին խավերին: Տե՛ս **Ma**, 2016, 408–413:

⁶⁰ Էփորատի ծագման, իրավաքաղաքական հիմնավորման և տա-

Այլ էր Աթենքի պարագան. ավագանին այստեղ ձգտում էր անխաթար պահել իր գերակայությունը և ընդդիմանում էր հոպլիտների ընկերային կարգավիճակի և իրավունքների ընդլայնմանը: Պատմությունը ցույց տվեց, որ պատկերը նույնական էր նաև այլ զարգացած քաղաք-պետություններում՝ Միլեթ, Սամոս, Կորնթոս, Մեգարա և այլն: Եվ հակասությունները սովորաբար լուծվում էին *տիրանիայի* ճանապարհով:⁶¹ Այն միտված էր ընդդեմ տոհմիկ ավագանու իշխանության և հանդես էր գալիս «հանուն ժողովրդի բարեկեցության»:

Ապագան պետք է տաներ պոլիսի համակողմանի կայացմանը, որի լավագույն մեկնաբան համարվում է Արիստոտելը: Նա քաղաք-պետության հիմնախնդիրը դիտարկում է երկու հարթությամբ՝ ընկերային և քաղաքական: Առաջինի պարագային հատկազոծվում է դրա բնականոն զարգացումը տան կառույցից (οἰκία) դեպի բնակավայր (κώμη) և հասնում իր կատարումին պոլիսի ծիրում (πῶλις): Բոլոր հարթակներում կարևորվում է *կառավարողի* և *կառավարվողի* հարաբերությունների կարգաբերումը: Եվ դրա բարձրագույն արտահայտությունն իմաստասերը տեսնում է պոլիսի ծիրում. «[...] համակե-

րակերպ գործառույթների մասին մանրամասն խոսք կլինի սույն աշխատության՝ Սպարտային նվիրված հանգույցում: Առայժմ բավարարվենք հանրագիտարանային հղումով: **Woodward, Forrest**, 1992, 368:

⁶¹ Այլով բանիվ՝ հառաջացած պոլիսներում տոհմիկ ավագանին ձգտում էր հասնել բացարձակ գերակայության՝ հակառակ իր դասային սահմանափակ պաշարների: Սակայն փորձը վեհերոտ էր և անվճռական, ինչը տեղիք տվեց հասարակական ցնցումների ու տիրանիայի: Դա էլ դարձավ այս քաղաք-պետությունների զարգացման մայրուղին: Տե՛ս **Stein-Hölkeskamp**, 2009, 112–114; **Ma**, 2016, 403–406:

ցության բոլոր ձևերը միտված են առ ինչ-որ բարիք, իսկ դրանց գերագույն ձևը, որը պարառում է մնացած բոլորը, միտված է առ գերագույն բարիքը: Այս ձևը կոչվում է պոլիս՝ պետություն կամ քաղաքական միավորում» [Arist., Pol., 1252d, 5-8]:⁶² Այն հատկազովում է ինքնաբավությամբ և բարեկեցությամբ, որոնց ազդակով բացահայտվում են մարդկանց առաքինությունը, արդարամտությունը և ինքնաչափաբերումը (ἀρετή, δικαιοσύνη, σωφροσύνη):

Քաղաքական հարթությունում շեշտադրվում է պոլիսի վերահսկողության ներքո գտնվող տարածքի ազատ բնակչության բնականոն մղումը՝ միավորվելու *քաղաքացիական համայնքի* մեջ (κοινωνία πολιτών): Նրանք բնութագրվում են առաջին հերթին իրենց անկապտելի իրավունքով՝ մասնակցելու պետության օրենսդրական և դատական գործառույթներին [Arist., Pol., 1275a, 3-5]:⁶³ Աստ բացահայտվում է *կառավարողի և կառավարվողի* հարաբերությունների մի նոր դիտանկյուն. բնեռներն սկսում են ընկալվել իբրև սկզբունքորեն շրջելի: Այսինքն՝ կառավարվող քաղաքացին կարող էր (ընտրության ճանապարհով) ստանձնել կառավարչի դերակատարություն: Եվ ընդհակառակը. օրվա կառավարիչը (ընտրություններ

⁶² Երջանկությունն Արիստոտելի բարոյական տեսության ծիրում նկատվում է ինչպես անհատի, այնպես էլ ընկերային հանրույթի (պոլիս) գերագույն նպատակը: Խորքային իմաստով այն նույնական է էստելեքիային: Տե՛ս David, 2017, 105-112:

⁶³ Հետազոտողները համոզված են՝ Արիստիլ դարաշրջանի վաղ օրենքները միտված էին կարգավորելու կառավարող դասի հարաբերությունները համայնքի հետ: Միայն հետագայում դրանք սկսեցին առնչվել քաղաքացիների ընկերային պահվածքին՝ ունեցվածքային, իրավական, ընտանեկան, կրթական: Տե՛ս Osborne, 2009, 174-176:

րի հետևանքով՝ վերադառնալ հասարակ քաղաքացու կարգավիճակի: Սակայն մինչ այդ երկար ճանապարհ կար անցնելու:⁶⁴

3. ՎԱՂ ՀՈՒՆԱԿԱՆ ՏԻՐԱՆԻԱՆ⁶⁵

Այս վարչակարգը սոսկ մասամբ կարելի է ներկայացնել արդի *քոնսպիրություն* եզրույթով, զի բացի «խավար դիմակից»՝ ուներ նաև «լուսավոր դիմակ»: Արդի հետազոտողներն այն հաճախ դիտարկում են իբրև անցումային ժամանակաշրջանի ցուցիչ: Եվ ասվածը հեռու չէ ճշմարտությունից: Տիրանները հաճախ տեղական ավագանու ներկայացուցիչներ էին, որք տարբեր պատճառներով հեռացել էին նրանից՝ ինչք, հանրային դիրք, անձնական փառք: Նպատակին հետամուտ՝ գործում էին առկա իրավակարգի դեմ՝ երբեմն դավադիրների փոքր խմբով, երբեմն՝ ժողովրդական զինված ընդվզմամբ, երբեմն՝ խաղաղ ընտրություններով:⁶⁶ Պատմու-

⁶⁴ Բացի կոնկրետ քաղաքական դիտանկյունից՝ հղացքն ուներ նաև խորագույն միստիկ-բարոյագիտական բովանդակություն. ճշմարիտ մարդը իր բանական սկզբին է ենթարկում մարմնական և զգացական մղումները և հասնում կատարելության: Տե՛ս **Ստեփանյան**, 1999, 151–152:

⁶⁵ Որոշեցինք օգտագործել հունական տիրանիայի տարբաժանումը ըստ հին և նոր տիպաբանության՝ ասելիքը հայ ընթերցողին ավելի դյուրընկալելի դարձնելու նպատակով: Հինը Արխաիկ դարաշրջանին էր պատկանում (Ք.ա. 8–6-րդ դդ.), նորը՝ Հետդասական դարաշրջանին (Ք.ա. 4–3-րդ դդ.): Տե՛ս **Մե**, 1922, 9–10, **Фролов**, 2001, 71–73: Մերօրյա հետազոտողները դրանք սովորաբար միավորում են՝ հատկազօծելով տիպաբանական ընդհանրությունները: **Ehrenberg**, 1992, 1102, **Andrews**, 1956, 7–19:

⁶⁶ Հարկավ, հիշյալ տարատեսություններից անդին առկա էր ընդհանրությունների համացանց, որը հստակ գիտակցում էին տակավին ժամանակակիցները: Գիտակցում էին նաև տիրանների դարաշրջանի անցումային բնույթը՝ տոհմիկ ավագանու բացարձակ

թյունը պահել է ականավոր տիրանների անունները՝ Թրասիբուլոս Միլեթացի, Պոլիկրատես Սամոսացի, Պերիանդրոս Կորնթացի, Թեագենես Մեգարացի, Պիսիստրատես Աթենացի:⁶⁷

3.1 Տիրանիայի ընկերային ծրագիրը

Չնայած իրենց գործունեության եսակենտրոն դր-դապատճառներին՝ տիրաններն ունեին պատմական աներկրա կարևորություն: Արդեն հատկազօծել ենք՝ ասպարեզ իջան Ք.ա. 7–6-րդ դարերում, երբ ծայր աս-տիճան սրվել էին ժողովրդի (դեմոս) և տոհմիկ ավա-զանու (էվպատրիտներ) հարաբերությունները, ինչը խաթարում էր քաղաք–պետությունների բնականոն զարգացման հեռանկարը: Պետք էր ընկերային շարժ ապահովել դեպի ազատական միջավայր: Եվ ձևավոր-վեց մի պարադոքսալ իրավիճակ, որի շրջագծում մի-մյանց հանդիպեցին տիրանների եսակենտրոնությունը և պատմական ընթացքի տրամաբանությունը:

գերակայությունից դեպի ժողովրդավարության տեսանելի հանգր-վան: Տե՛ս Stein-Hölkeskamp, 2009, 100-107:

⁶⁷ Ավելի մանրամասն նրանց գործունեության մասին տե՛ս Drews, 1972, 129-144: Ընդամեն, հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ իրողությանը. վաղ հունական պատմագրությունը տիրա-նիայի վերաբերմամբ ունի տարտամ գնահատական: Հերոդոտի գրությամբ «տիրան» եզրույթը երբեմն պատկերվում է բացասա-կան արժեքանությամբ [Herod., I, 62, 2]: Սակայն ավելի հաճախ այն գուրկ է գնահատականից և համարժեք «մենիշխանությանը» [Herod., III, 80-82]: Թուկիդիդեսը նույնպես չի խորշում բացասա-կան գույներից և պատկերներից [Thuc., II, 63, 2, III, 37, 2]: Միևնույն ժամանակ հատկազօծում է տիրանիայի նպաստը հանրային զար-գացման գործին [Thuc., I, 13, 3-4]: Տե՛ս White, 1955, 63-66: Միայն Ք.ա. 4-րդ դարից հասկացությունն անվերապահորեն ազդուվում է «բռնատիրությանը»: Այս անցումը հստակ է Արիստոտելի գրությամբ [Arist. Pol., 1314a, 1-25]: Հմնտ. Jordovič, 2011, 37-45:

Գալով իշխանության՝ տիրաններն անցկացնում էին բարեփոխություններ հոգուտ ստորակա հանրախավերի. վերացնում էին պարտային ստրկությունը և հաստատում ընդհանուր քաղաքացիություն: Ի հաշիվ ավագանու՝ *տառապայալներին* առաջարկում էին հողակտոր և պետական աջակցություն, զարկ էին տալիս արհեստներին, առևտրին և նավագնացությանը:⁶⁸ Հայսմ քայլ էր կատարվում ընդլայնելու միջին ունեցվածքի հանրադասի սահմանները՝ այն հաշվարկով, որ առաջիկա մի քանի տասնամյակի ընթացքին վերջինս դառնալու էր զարգացած պոլիսների առաջատար ընկերային ուժը:⁶⁹ Հետազոտողները հատկազծում են մի կարևոր իրողություն. տիրանները բարյացկամ էին Աշխարհաժողովի հանդեպ և իրենց որոշումները հաստատագրում էին «ժողովրդի կամքով»: Հարկավ, շատ դեպքերում դա ձևական բնույթ ուներ, սակայն կողմերը պահպանում էին խաղի կանոնները:⁷⁰

Սահմանվում էր համապետական հարկ՝ սովորաբար քաղաքացիների եկամտի տասը տոկոսի չափով: Ձևավորվում էին նոր դատարաններ՝ քաղաքացիների ընդգրկմամբ: Ստեղծվում էին ոստիկանություն ու բանտեր: Վերջին բարենորոգությունների կապակ-

⁶⁸ Հետազոտողները հաճախ հատկազծում են տիրանիայի *հուպլիդական խթանը*, որը դարձավ նրա ընկերային նորացման ելակետը: Տե՛ս Nilsson, 1929, 240-249, Salmon, 1977, 97: Ավելին, այս հանրախումբը երբեմն ճանաչվում է հասարակական նորացման առաջատար ուժ, իսկ տիրանիան՝ նրա գործիքը: Տե՛ս Fleck, 2013, 397-402:

⁶⁹ Տե՛ս Padgug, 1975, 103-105:

⁷⁰ Աշխարհաժողովի այս ավանդույթը պահպանվեց նաև կրտսեր տիրանիայի ժամանակ: Ի հաստատումն ասվածի՝ հետազոտողները հաճախ անդրադառնում են Ք. ա. 4-րդ դարի Սիրակուզայի (Սիկիլիա) տիրանների փորձառությանը: Տե՛ս Lewis, 2021, 58-61:

ցությամբ հետազոտողները հակված են մտածելու, թե տեղի էր ունենում պետության վերջնական տարանջատումը էթնիկ հանրույթից:⁷¹ Ընդամին, հատկազօվում է, որ միայն այդ պարագային է հնարավոր նրանց արդյունական համագործակցությունը:

Հարդյունս տիրանների և ժողովրդի *համագործակցության* ստեղծվում էին գրավոր օրենքներ (կոդեքս), որոնք, արձանագրյալ բրոնզե տախտակների վրա, կախվում էին ազորայում՝ հատկազօվով, որ հասանելի են ու նույնիմաստ բոլոր քաղաքացիների համար:⁷² Համոզում կա, որ դրանք խթանում էին հասարակական կարծիքի ձևավորման գործընթացը:⁷³

Բացի այս ընդհանրական ձեռնարկումներից՝ տիրանները կազմակերպում էին տեղական կարևորության միջոցառումներ. կառուցում էին ջրանցքներ, ճանապարհներ, նավամատույցներ, ստեղծում էին արդյունագործական ձեռնակություններ, նավատորմ, զարկ էին տալիս շուկային և դրամաշրջանառությանը: Այս կապակցությամբ սկզբնաղբյուրներն առանձնացնում են Պոլիկրատես Սամոսացու, Պերիանդրոս Կորնթացու և Պիսիստրատես Աթենացու գործունեությունը:⁷⁴

⁷¹ Բազմադեմ էին ընկերային հանրույթի և կառավարման համակարգի փոխհարաբերությունները: Ներուսակության բնեռները փոխում էին իրենց տեղերը՝ նպաստելով հասարակության նպատակամետ շարժին: Տես **Weber**, 1978, 921-923:

⁷² Արդ հանրույթի անդամները հնարավորություն էին ստանում գնահատելու օրենքների կիրարկման յուրաքանչյուր դեպք: Եվ արդարությունը կամաց-կամաց դառնում էր ապացուցելի ու թափանցիկ Տես **Stein-Hölkeskamp**, 2009, 112-114, **Степанян**, 2014, 349-351:

⁷³ Արդի ձևակերպմամբ՝ հաղորդակցություն էր սկզբնավորվում «կառավարող վերնախավի և զանգվածի միջև», հընթացս որի կարևորվում էին տեղեկույթի առաքման և ընդունման գործառնությունները: Տես **Ober**, 1989, 107-112:

⁷⁴ Տես **Ure**, 1922, 14-21:

3.2 Տիրանիայի մշակութային ձեռնարկումները

Տպավորիչ էին այս վարչակազմի մշակութային ձեռնարկումները: Ավագանու ինքնահատկության գաղափարին տիրանները հակադրում էին հանրային մշակութային միասնության գաղափարը: Այս ճանապարհին քայլեր էին ձեռնարկվում դեմոսի «տեղական» աստվածներին և ոգիներին օլիմպիական (արիստոկրատական) աստվածների համալիր ներբերելու: Ի մասնավորի՝ խոսքը Դիոնիսոսի մասին էր՝ մեռնող և հարություն առնող բնության, խաղողի որթի, գինու և արքունքի աստվածության, որի պաշտամունքը լայն տարածում ուներ ժողովրդի շրջանում: Նա ճանաչվեց ամենակար Զևսի որդի, և օրինականացվեցին նրան նվիրված ամենամյա տոնակատարությունները:⁷⁵ Ի հետևանս՝ նրա պաշտամունքին նվիրված տաճարը կառուցվեց Ապոլոնի դելֆյան համալիրի տարածքում:⁷⁶

Տիրանները սովորաբար սերտ հարաբերությունների մեջ էին քրմության հետ՝ դիմավորվելով իբրև էպիքական հերոսներ, որք առաջնորդվում էին աստվածային կամքով ու ճակատագրով: Այս առումով հայրկապես կարևորվում էին Դելֆի Ապոլոն աստվածուհու պաշտարի քրմերը և նրա հանրահայտ գուշակաբանը:⁷⁷ Ի պատասխան «աստվածային հաճության»՝ տիրանները պաշտարում էին թե՛ տրեսա-

⁷⁵ Աթենքում դիոնիսական տոնակատարությունների օրինականացման մեջ տիրան Պիսիստրատեսի ջանքերի և գործընթացի ընկերային, կրոնական և մշակութային արդյունքների մասին տե՛ս **Romily**, 1973, 15-17, **Park**, 1977, 128-130:

⁷⁶ Հոլովոյթն այս ուներ բազում դրսևորումներ և բացատրություններ, որոնք նվիրված էին տարբեր օլիմպիական աստվածների հետ Դիոնիսոսի առնչություններին. բացի հայր Զևսից՝ նաև Հերմեսի, Դեմետրայի, Ապոլոնի: Այս մասին տե՛ս **Clay**, 1996, 87-100:

⁷⁷ Տե՛ս **Lloyd-Jones**, 1976, 60-73; **Scott**, 2014, 13-14:

կան, թե՛ քաղաքական, թե՛ ռազմական միջոցներով: Սակայն հարաբերությունները խաթարվեցին Ք.ա. 6-րդ դարի երկրորդ կեսին, երբ Դելփքը հայտնվեց Սպարտայի ազդեցության ներքո: Զրնությունը որդեգրեց հակադիրաձևական կեցվածք:⁷⁸

Ի հետևանս Դիոնիսոսի պաշտամունքի մասնակի ապասրբագնացման և աշխարհայնացման՝ ծնունդ առավ հունական թատրոնը իր երեք հիմնատիպերով՝ ողբերգություն, կատակեգություն և սատիրական դրամա: Տիրանները հովանավորում էին ռապսոդներին ու բանաստեղծներին: Նրանց մի խումբ էլ առաջադրանք ստացավ գրի առնելու և համաբերելու Հոմերոսի տարասեռ բանավոր տեքստերը: Դրանք մաքրվեցին հակասություններից ու կրկնություններից: Հատկազոծվեցին էպիքական պատումի սկիզբը, զարգացումը և ավարտը: Հանդերձ այդու հոգևոր կյանք ներմուծվեց *յոնքսյուսկենյությունը*, որը նոր խթան հաղորդեց հունական ինքնության հոլովույթին:⁷⁹ Այն սկսեց ընկալվել իբրև երկխոսային դաշտ իր կենտրոնով (Հոմերոս) և ծայրամասով (հանրույթ):

3.3 Տիրանիայի «խավար դիմակը»

Ինչպես նշեցինք վերը, տիրանիան ուներ նաև *խավար* դիմակ: Հասնելով բացարձակ իշխանության (և

⁷⁸ Տե՛ս **Drews**, 1972, 135-138: Հետազոտողներն առանձնացնում են դիոնիսական տոնակատարությունների համաժիրում ողջ հանրույթի ներգրավվածության հանգամանքը, որը ապագայում պետք է դառնար «ժողովրդավարության հանրային թատրոնի» հատկագիծը: Տե՛ս **Connor**, 1996, 217-226, հմմտ. **Cartledge**, 1997, 16-18:

⁷⁹ Տե՛ս **Степанян**, 2014, 351-353: Դասական դարաշրջանում ինքնության կենտրոնի բովանդակությունն ավելի բազմազան դարձավ՝ շնորհիվ թատերական, ճարտասանական և իմաստասիրական տեքստերի ներմուծման:

հաճախ էլ շրջապատված ժողովրդի անկեղծ սիրով՝ տիրաններն սկսեցին վեր դասվել իրենց իսկ ընդունած օրենքներից՝ գործելով ապօրինություն, հանցանք, անգամ սպանություն: Ապրում էին առանձնահատուկ կյանքով՝ շքեղ արքունիք, նրբագեղ հագուստ, համադամ ուտելիք, շողոքորթ մտավոր շրջապատ և կանայք: Այս միտումը ներհատուկ էր հատկապես նրանց կառավարման վերջին շրջափուլին, երբ ակներև էր դառնում, որ վարչակարգն արդեն սպառել է իր ստեղծագործ պաշարը և պետք է լքի ասպարեզը:⁸⁰

Այդպես էլ տեղի ունեցավ. Բ.ա. 6-րդ դարի ավարտին վերջին տիրանները լքեցին պատմության ասպարեզը դավադրությամբ, ժողովրդական շարժմամբ կամ էլ խաղաղ ընտրություններով: Գործընթացի ներունակ ուժը կրկին միջին ունեցվածքի (հոպլիտական) հանրադասն էր, որը նպաստել էր տիրանների իշխանության գալուն և ապա վերջնական ձևավորվել նրանց «բարի ցանկությամբ»: Հետազոտողներից մեկը տիրանիայի մասին գրում է. «[...] փրփուրանման երևույթ էր՝ առանց արմատի. եկավ, կատարեց իր դերը և հեռացավ»:⁸¹ Եվ որքան էլ տարօրինակ հնչի՝ հող

⁸⁰ Հոլովույթը ներկայացնելիս հետազոտողները սովորաբար հատկազծում են արենական օրինակը: Պակաս կարևոր չէր և կորնթական տիրանների փորձառությունը՝ Կիպսելոս և Պերիանդրոս, որք կառավարել են ավելի քան յոթանասուն տարի (Բ.ա. 657-585 թթ.): Նրանց իշխանությամբ Կորնթոսը վերածվեց Միջերկրածովքի արհեստագործական և առևտրական, քաղաքական և ռազմական կարևորագույն կենտրոնի: Աստ նույնպես առկա էր տիրանների սերտ կապը Դելփիի քրմության հետ: Տե՛ս **Drews**, 1972, 132-135, **Salmon**, 1984, 191-202:

⁸¹ Արտահայտությունը պատկանում է Հ. Բերվեին, որը, սակայն, էական ճշգրտումի կարիք ունի: Տե՛ս **Berve**, 1967, 234: Նշել ենք՝ արդի հետազոտողները հակված են մտածելու, որ տիրանները իշխանության գալիս օգտվում էին «հոպլիտական դասի» օժանդակությունից: Սակայն հընթացս ժամանակի, երբ բացահայտվեց նրանց

նախապատրաստեց իր հակաձևի՝ ժողովրդավարության ձևավորման համար:

Սպարտան խուսափեց տիրանիայից՝ շնորհիվ կառավարող էթնիկ-ընկերային հանրադասի (սպարտիատներ) համախմբման: Մինչդեռ մյուս զարգացած պոլիսներում տիրանիան դարձավ անցումային դարաշրջանի խորհրդանիշը՝ Միլեթ, Կորնթոս, Մեգարա, Սիկիոն:⁸² Ասվածը, հարկավ, վերաբերում էր նաև Աթենքին: Մենք պատրաստվում ենք հետագայում մանրամասն դիտարկել այս հիմնախնդիրը, իսկ արդյունքում ենք ամրագրել հետևյալը. շուրջ մեկ հարյուրամյակ (Ք.ա. 6-րդ դ.) ականավոր տիրանների առաջնորդությամբ այս պետությունն անցավ բարեփոխումների միջով՝ Սոլոն, Պիսիստրատես, Կլիսթենես: Ի հետևանս հասարակաշինական այս աննախադեպ փորձառության՝ այն դուրս եկավ ժողովրդավարության ուղի, որն էլ իր հետագա զարգացմամբ դարձավ նման բոլոր վարչակարգերի բնօրինակը:⁸³

4. ՄԵԾ ԳԱՂՈՒԹԱՅՈՒՄԸ

Հետազոտողները Արիստիլ դարաշրջանի հասարակաշինական փորձառության անկապտելի բաղադրիչ են նկատում նաև *Հունական մեծ գաղութացումը*: Այն աշխարհաքաղաքական չափույթ հաղորդեց հու-

խավար դիմակը, համագործակցությունն աստիճանաբար ի չիք դարձավ: Եվ միայն այս հավելումի պարագային կարելի է ընդունելի համարել Բերվեի միտքը:

⁸² Տե՛ս մանրամասն **Фролов**, 2004, 142-152:

⁸³ Թուկիդիդեսի փոխանցմամբ՝ այս ըմբռնումը դարձել է հանրահայտ «Պերիկլեսի սգո ճառի» հիմնագաղափարը: Ընդամին, Աթենքը ճանաչվում է իբրև «ողջ Հունաստանի դպրոցը» [Thuc., II, 39, 1]:

նականությանը՝ նրա առջև բացելով զարգացման նոր հորիզոններ:⁸⁴ Գործընթացն արդյունք էր Հունաստանում ընթացող տնտեսական և ընկերային, քաղաքական և աշխարհայացքային, ժողովրդագրական և մշակութային այն բոլոր կերպափոխությունների, որոնք համատեղ կազմում էին Արխաիկ դարաշրջանի ընդհանրական պատկերը: Պատկեր, որին բավական հանգամանորեն արդեն անդրադարձել ենք:

4.1. Յրումի ընկերային հեղինակությունը

Արդ խնդիր ունենք լուսաբանելու այն իրական պատճառները, որոնց ազդեցությամբ հույները տարածվեցին բնակեցված աշխարհի (οἰκουμένη) հեռավոր ծագերը: *Առաջին*, նոր տեխնոլոգիաների և քաղաք-պետությունների սահմանափակ հումքային պաշարների խզումն էր: Ընդամին, տոհմիկ ավագանին ընդհանուր առմամբ անտարբեր էր արհեստների, ծովագնացության և արտաքին շուկաների նկատմամբ: Նրան ձեռնտու էր ներքին սահմանափակ շուկան՝ իր հսկողության ներքո: *Երկրորդ*, նոր ժողովրդագրական իրավիճակն էր. վերջին երկու հարյուրամյակի ընթացքին զարգացած պոլիսների ազգաբնակչությունը ավելացել էր մեկուկես – երկու անգամ: Սա վերաբերում էր առաջին հերթին ստորին խավերին, որոնց միաբեջիջ ընտանիքը վերարտադրության ավելի մեծ հնարավորություններ ուներ: Սակայն առկա սննդի պաշարները բավարար չէին բոլո-

⁸⁴ Հետազոտողներն ուշադրություն են հրավիրում այն փաստին, որ զարգացումը ներհատուկ էր հունական ողջ պատմությանը՝ Բրոնզեդարյան շրջանից ի վեր: Խնդրո առարկա արխաիկ զարգացումն այդ հոլովույթի յուրահատուկ դրսևորումներից էր՝ իր պատճառներով, ծավալով և արդյունքներով: Տե՛ս Bérard, 1961, 53-60, հմմտ. Фролов, 1988, 163-171:

րի համար:⁸⁵ *Երրորդ*, ավագանու բացարձակ գերակայությամբ հանրության կաստայականացման հեռանկար էր ուրվագծվում: Տեսանելի արդյունքը սակավունակ խավի ներկայացուցիչների վաճառքն էր ի պարտային ստրկություն:⁸⁶ *Չորրորդ*, ավագանու և դեմոսի միջև խորանում էր կրոնամշակութային խզումը՝ այլազան հավատալիքներ, տոնակատարություններ և ծեսեր, տարբեր նախնիներ, հերոսներ և (անգամ) աստվածություններ: *Հինգերորդ*, ավագանու կողմից քաղաքական իշխանության բռնազավթումը և այս գետնի վրա դեմոսի և նրա միջև զինված ընդհարումների սկիզբը: Պոլիսի սահմանափակ տարածքում դրանք ինքնատույնացման վտանգ էին պարունակում:⁸⁷

Հուսկ զարգացած պոլիսներին վիճակված էր կամ անտեսել այս մարտահրավերները և աստիճանաբար հետադիմել, կամ հարիր պատասխաններ մշակել և շարունակել առաջընթացը: Մեծ գաղութացումը երկրորդ այլընտրանքի արդյունքներից է հա-

⁸⁵ Ի տարբերություն ավագանու նահապետական բազմաբջիջ ընտանիքի՝ որտեղ ապրում էր մի քանի սերունդ, այն բաղկացած էր հիմնականում ծնողներից ու զավակներից: Հետազոտողներից ոմանք այս նոր ժողովրդագրական իրավիճակը համարում են Ք.ա. 8-6-րդ դարերի *համահունակյան հեղափոխության* կարևորագույն բաղադրիչներից մեկը: Դրա ազդեցությամբ է, որ արմատական կերպափոխություններ կատարվեցին ռազմարվեստի, արհեստագործության, առևտրի, կառավարման համակարգի և այլ ոլորտներում: Տե՛ս Morris, 2009, 64-72:

⁸⁶ Մեկ անգամ էլ հատկազօնք՝ այս երևույթը համարվում է Արևելքի քաղաքային համայնքներին ներհատուկ ընկերային կերպափոխություն: Տե՛ս Grosby, 2020, 210-215:

⁸⁷ Հարկավ, ասվածը կարելի է մասնավորեցնել՝ հավելելով նաև այլ պաշարների սահմանափակությունը: Ասվածն առաջին հերթին վերաբերում էր ջրային պաշարներին, մետաղահանքերին, անտառանյութին: Գաղութացման պատճառների և արդյունքների ընդհանուր պատկերի մասին տե՛ս Hammond, 1959, 121-125, Starr, 1961, 373-379, հմմտ. Bugnell-Bury, 2015, 86-89:

մարվում: Հոլովույթի մակերեսին հույների ցրումն էր Միջերկրական և Պոնտական ծովերի ավազանում և շուրջ 500 նոր քաղաքների կամ քաղաքատիպ բնակավայրերի հիմնումը:⁸⁸ Դրանց մի մասը այսօր էլ կանգուն է և անգամ հանրահայտ՝ Մարսել, Նեապոլ, Սիրակուսա:

4.2. Ցրումը՝ իբրև հասարակաշինական ծրագիր

Հանդերձ այդու առկա էր հիմնախնդրի խորքային ըմբռնում, որը հիմա էլ հետազոտական սկեռումի խնդիր է: Համաձայն վերջինիս՝ գաղութացումը նախ և առաջ կազմակերպված գործընթաց էր՝ միտված պատմության տարերային ընթացքին ծրագիր, նպատակ ու միտում հաղորդելու:⁸⁹ Այս գործում հույժ կարևորվում էր գաղութի հիմնադրի (οικοιστής) դերակատարությունը, որը համարվում էր ընդդիմության ամենաբանիմաց և հարգված առաջնորդը: Սովորաբար նա այցելում էր Դելփք՝ Ապոլոնի տաճար, և լսում Գուշակի խոսքը ապագա գաղութի մասին: Դրանից հետո մերձավոր համախոհների հետ քննարկում էր դրա հիմնահարցերը՝ ի՞նչ տնտեսություն, ընկերային կազմ, կառավարման կարգ, օրենքներ: Նաև՝ տաճարներ, ծեսեր, տոնակատարություններ: Մեկնարկելով այս կողմնորոշումներից՝ փնտրում էին հարիր տեղանք: Այցելում էին այն, ուսումնասիրում բնական

⁸⁸ Հնաժողովրդագրության տվյալներով՝ յուրաքանչյուր գաղութի ներգաղթյալների թիվը տատանվել է 200-ից մինչև 400-ը: Երկու հարյուր տարվա ընթացքին այն երբեմն հասել է 9-10000՝ շտրիկ բնական աճի և նոր ներգաղթյալների: Siss Zisis, Zafeiris, Xanthopoulou, Papageorgopoulou, 2021, 135-137:

⁸⁹ Siss Pomeroy, Burstein, Donlan, Roberts, Tandy, Tsouvala, 2004, 74-76:

պաշարները, հնարավոր ցամաքային և ծովային ուղիները, էթնիկ շրջապատը: Եվ ապա կայացնում որոշում:

Դրականի դեպքում հենց տեղում՝ գետնի վրա, գծում էին ապագա գաղութի (*ἀποικία*) հատակագիծը՝ ագորա, տաճարներ, կառավարման հիմնարկներ, փողոցներ, տներ, քաղաքային պատեր:⁹⁰ Այնուհետև մայր քաղաքից (*μητρόπολις*) նավերով այստեղ էին բերվում առաջին բնակիչները: Ագորայում սովորաբար կառուցվում էր Հեստիա դիցուհու տաճարը, որը մարմնավորում էր ընտանեկան օջախը: Դրա հուրը բերվում էր հայրենիքից: Շատ դեպքերում այստեղ ներկայացվում էին գաղութի հիմնարար օրենքները՝ արձանագրյալ բրոնզե տախտակների վրա: Հաճախ դրանց կողքին կանգնած էր լինում օրենսդրի (*νομοθέτης*) արձանը, որի անձը նույնպես պաշտամունքի առարկա էր:⁹¹

Հնագիտական պեղումների արդյունքներով հետազոտողները պնդում են, որ վաղ գաղութների տնտեսությունում գերակշռում էր գյուղմթերքների (հատկապես հացի և ձիթապտղի) արտադրությունը: Եվ տարօրինակ չէ, որ գաղութաբնակներին հաճախ անվանում էին նաև հողատերեր (*κληροῦχοι*): Հիշենք՝ Հունաստանին հանապազ սպառնում էր սևնդի պաշարների սակավությունը:

⁹⁰ Վաղ հունական գաղութացման գործընթացի համապատմական զուգահեռները լուսաբանելիս հետազոտողներն ավելի ու ավելի ուշադրություն են հրավիրում դրա կազմակերպիչների անհատական նախաձեռնությանը և անսխալընթաց որոշումներին: Տե՛ս **Antonaccio**, 2007, 205-211:

⁹¹ Հընթացս ժամանակի այս գործողությունները (ամրագրված կրոնաձիսական ալգորիթմների մեջ) չնչին տարբերություններով կրկնվում էին ամենուրեք: Տե՛ս **Hammond**, 1959, 121-125, **Starr**, 1961, 365-372, **Фролов**, 1988, 163-171:

Սակայն հրնթացս ժամանակի գաղութների *մասնագիրացումն* ակներև դարձավ: Ելնելով տեղական բնական պայմաններից՝ նրանց մի մասն սկսեց զարգացնել մետաղագործությունը, մյուսը՝ բրուտագործությունը, երրորդը՝ նավաշինությունը, չորրորդը՝ մանածագործությունը և կաշեգործությունը: Կային գաղութներ, որոնք զբաղվում էին առավելաբար առևտրով ու նավագնացությամբ: Հրնթացս գաղութների զարգացման՝ այս նոր քաղաքների և շրջակա *քարքարոս աշխարհի* միջև սկսեցին ուրվագծվել փոխլրացման հարաբերություններ:⁹²

Եվ հունականությունը վերածվեց համացանցի՝ տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային, ռազմական: Աստիճանաբար դրանց հավելվեց և իրավական դիտանկյունը: Եվ համացանցը վերածվեց ռացիոնալ փոխլրացման (պայմանագրային) հարաբերությունների միջավայրի:

Ասվածը վերաբերում էր նաև գաղութի և մայր պոլիսի առնչություններին: Դրանք երբեմն շատ սերտ էին՝ ընդհանուր քաղաքացիություն ու պաշտամունք, պատմական հիշողություն և տնտեսական շահեր: Սակայն նկատվում էր նաև հակառակ իրավիճակը: Այս պարագային հարաբերությունները զարգանում էին համացանցի այլ մասնակիցների հետ: Աստ սկսեց կարևորվել գաղութի կարգավիճակը՝ լիարժեք և ինքնաբավ պոլիսից մինչև առևտրական կենտրոն (ἐμπορία), քաղաքային բնակավայրից (ἄστυ) մինչև ծովային կամ ռազմական հենակետ (ναύκρατις):⁹³

⁹² Այս մասին տե՛ս **Starr**, 1961, 373-379, **Martin**, 1996, 73-75:

⁹³ Այս դիտանկյունը հետազոտողները սովորաբար կապում են նաև աշխատանքի համահունական բաժանման և մասնագիտացման հետ: Հատկազօժեր, որոնք գաղութացման ալիքով սկսեցին տա-

Դրանք շփումների մեջ էին նաև տեղական ժողովուրդների և էթնիկ խմբերի հետ. նրանց էին փոխանցում հունական տեխնոլոգիական և մշակութային ձեռքբերումները: Միաժամանակ նաև ազդվում էին նրանցից՝ ցամաքային երթևեկի, ձիաբուծության, կաշեգործության, մանածագործության, սննդի արտադրության և այլ ասպարեզներում:⁹⁴

4.3. Ցրումի ինքնագիտակցումը

Մեծ գաղութացումը հունականությանը հաղորդեց աշխարհաքաղաքական և քաղաքակրթական նոր հեռանկարներ: Սակայն առկա է մի կարևոր դիտանկյուն, որը հազվադեպ է արժանանում հարիր ուշադրության: Խոսքը հունական աշխարհայացքի վրա գաղութացման հոլովույթի ներգործության մասին է: Սովորաբար հույնը ծնվում, մեծանում, ապրում և մահանում էր նյութական, ընկերային և մշակութային պայմաններում, որոնք եղել էին իրենից առաջ և համարվում էին անխաթարելի: Համաձայն հավատքի և գաղափարաբանության՝ դրանք ստեղծել էին աստվածները կամ նրանց առաջնորդությամբ գործող հերոսները: Արդ անցյալատեսական այս հայացքին փոխարինելու էր գալիս ներկայատեսականը՝ սևեռված ականավոր անհատների ստեղծագործ փորձառության վրա: Ինչպես վերը նշվեց, դրանք գաղութների հիմնադիրներն ու իրենց համախոհներն էին,

րածվել ողջ բնակեցված աշխարհում՝ խթանելով ծովային առևտուրը և երթևեկը: Տե՛ս **Buckley**, 2010, 31-38:

⁹⁴ Հարաբերությունները տեղաբնիկների հետ տարաբնույթ էին, բայց դրանք սովորաբար սկսվում էին տնտեսական շփումներից և փոխադարձ օգուտի գիտակցումից: Տե՛ս մանրամասն **Graham**, 2001, 45-57:

որոնք որոշարկում էին ապագա հայրենիքի հիմնարար ընկերային, տնտեսական, քաղաքական, կրոնածիսական և մշակութային չափույթները, իսկ ապա փորձում մարմնավորել դրանք իրական պատմական ժամանակի ու տարածության մեջ:

Հավելենք, որ հակադարձ ազդեցությամբ այս կերպափոխությունը ներագդեց նաև մայր քաղաքների հասարակական մտքի և պահվածքի վրա: Այդ ազդեցությամբ էլ սկսեցին երևալ բարենորոգիչներ, որոնց հետազոտողները սովորաբար միավորում են տիրանների խմբի մեջ: Հարկավ, կապն այս աստիճան ակնհայտ և միանշական չէ, բայց դրա ժխտումն էլ հնչում է անհավաստի:⁹⁵

5. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՏԱՎՈՐ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

Արխաիկ կյանքի այս դիտանկյան ինչ–ինչ դրսևորումներին արդեն անդրադարձել ենք նախորդ շարադրանքում: Արդ խնդիր ունենք համակարգելու դրանք և հավելելու նորերը: Այլով բանիվ՝ նպատակ չունենք մտնել մանրամասնությունների և նկարագրությունների մեջ, այլ՝ մեկնությունների և ըմբռնումների:⁹⁶

⁹⁵ Բավական է հիշել, որ հետազոտողներից ոմանք գաղութների հիմնադիրներին երբեմն համեմատում են տիրանների հետ՝ նկատի առնելով նրանց նպատակի և գործունեության կերպի բավական ակներև զուգահեռականությունը՝ տնանկ հանրադասի առաջնորդ, քարիզմատիկ կապ Ապոլոնի Դելֆյան տաճարի քրմության հետ, գրավոր օրենքների հեղինակ, հանրության լիիրավ անդամների իրավահավասարության հաստատագրող և այլն: Տե՛ս **Dillon, Garland**, 2010, 48–53:

⁹⁶ Արխաիկ դարաշրջանի մտավորական տեղաշարժերի ավելի մանրամասն և տիպաբանական պատկերի մասին տե՛ս **Raaflaub**, 2009, 564–584:

5.1. Խոսքի գեղագիտությունը

Տիրանիայի կապակցությամբ խոսել ենք Հոմերոսի տեքստի խմբագրման ու համաբերման աշխատանքի մասին՝ ի կատար ածված անհայտ ռապսոդոսների և բանաստեղծների ջանքերով: Ի հետևանս՝ «Իլիական» և «Ոդիսականի» էպիքական պատումը դարձել էր կարգաբերված գրավոր տեքստ (գիրք), որը հունական մտավոր միջավայրին հաղորդել էր գրական-տրոնություն: Այսինքն՝ արդյ կենտրոնում դրվում էր տեքստը, որի նկատմամբ բացառվում էր *կամայական* վերաբերմունքը: Այն ընկալվում էր իբրև անխաթար տրվածություն, որը կարելի է հիշել, մեկնել և ըմբռնել: Գործառույթներ, որք կապվում էին անհատի մտավոր ունակությունների հետ՝ ընտրելու իդեալական անցյալի իրադարձությունները, իրադրությունները և կերպարները: Այլով բանիվ՝ կոլեկտիվ ծիսական և էքստատիկ ընկալումն սկսում էր կորցնել իր բացարձակ գերակայությունը:⁹⁷ Ի հետևանս՝ հոմերոսյան տեքստերն սկսեցին ձեռք բերել «համազգային հանրագիտարանի» նշանակություն, սակայն այժմ էլ՝ իր նոր կարծրատիպերով և մտավոր պատկերներով (առասպելությոներ):⁹⁸

⁹⁷ Այս վաղ բանականացման հոլովույթը պարառում էր հունական համակեցական տեքստի համարյա բոլոր տիրույթները: Եվ չէր սահմանափակվում միայն Արիստիլ դարաշրջանով, այլ ներկայացնում էր անընդհատ նորացման ընթացք: Հմմտ. Зайцев, 2001, 184-191: Ober, 2022, 4-11:

⁹⁸ Այս միջոցին բանավոր տեքստ-ներկայացման նկատմամբ կիրարկվում է գործողությունների մի ամբողջ շարք՝ գրավոր հաստատագրում, պատումային միասնական տարբերակի ընտրություն, խմբագրում և հանրայնացում: Դրանք կատարվել են ըստ ուշ Արիստիլ դարաշրջանի ընկերային և մշակութային պատկերացումների: Տե՛ս Ready, 2015, 13-25, 28-33, 47-51:

Ընդունված է կարծել՝ այս նույն հոլովույթին էական խթան է հաղորդել նաև Հեսիոդոսի տեքստը՝ մանրամասն մշակված բանաստեղծի ձեռամբ: Այն ներկայանում է երկու կերպավորմամբ՝ «Աստվածների ծագումնաբանությունը» և «Աշխատանք ու օրեր»: Համարվում է, որ դրանցում բանաստեղծը կամրջել է առասպելամտածողությունն աշխարհի իմաստասիրական ընկալման հետ՝ սկսյալ տիեզերքի արարումից մինչև մարդկային հանրույթ: Հոլովույթն ընթանում է ընդ առաջնորդությամբ Նախախնամության (ἀνάγκη), որն արարում է ամենայն ինչ ըստ «շարժման, հանգստի և կառավարման» կանոնի: Դրան ենթակա են թե՛ աստվածները, թե՛ մարդիկ: Սակայն վերջիններս ունեն ընտրության հնարավորություն բարու և չարի միջև: Կարևոր է նաև արդարի խորհուրդը և ամենօրյա աշխատանքի կարևորությունը՝ ժխտելու կեղծիքն ու անարդարը: Դրանք ճանաչվում են իբրև հանրային և անհատական բարեկեցության նախապայմաններ:⁹⁹

Այս կերպափոխությունները հող նախապատրաստեցին քնարերգական քերթողական արվեստի ձևավորման համար: Այն բազմաժանր էր և բխում էր ծիսական միջավայրից՝ պեան, հիմն, օդա, թրենոս: Սակայն բոլորին միավորում էր մի էական հատկագիծ. բառը, միտքը և հույզը (որ հնչում էին քնարի նվագակցությամբ) նվիրված էին աստվածներին

⁹⁹ Տե՛ս մանրամասն **Priou**, 2014, 235-244, 252-256: Ապացուցված է համարվում՝ տիեզերքի արարման և աստվածների երեք սերունդների մասին հեսիոդոսյան պատումն ակներև աղերսներ ունի աքքադական և խեթական առասպելապատումների հետ: Բանաստեղծը դրանց հաղորդել է իմաստասիրական մտքին աղերսվող խորություն՝ ձերբազատելով մարդ էակին զուտ կրավորական պահվածքից: **West**, 1992, 510:

կամ ականավոր անհատներին: Խորալ էին կամ մոնադիկ, ուղեկցվում էին երբեմն երգով, պարով, մնջախաղով՝ միտված բավարարելու որոշակի հանրադասի կամ անհատների մտահոգևոր և գեղագիտական պահանջմունքները:¹⁰⁰

Եվ նրանց կորպորատիվ կամ անձնական *հակառակ հեռանկարը* հասարակական կարևորություն էր ստանում: Տիրտեոսի, Սիմոնիդեսի, Պինդարոսի քերթվածները նվիրված էին ռազմի հանրադասին՝ պանծալի մահ, հաղթության բերկրանք, բարոյական կատարելություն (կարծր ընկերային դիմակ): Մինչդեռ Սապֆոյի, Ալկեոսի, Ալկմանի, Անակրեոնի, Թեոգնիդեսի, Սիմոնիդեսի սևեռումի առարկան առավելաբար անձնական ապրումն էր՝ էրոսն ու ցավը, նվիրումն ու մերժումը, հուզականությունն ու կյանքի իրական-թրթռուն պատկերը (շարժուն ընկերային դիմակ):¹⁰¹

Այս ներայնացումը հատկանշական էր ժողովրդավարացման ճանապարհով ընթացող պոլիսի քաղաքացիներին: Թեպետ քերթողները, հետևելով ավանդույթին, իրենց ներկայացնում էին իբրև *մոլեալ աստվածներից ու մուսաներից*, սակայն ակնհայտ էր նրանց աշխատանքը (երգու)՝ խոսք և մեղեդի (ἔπος καὶ μέλος) ստեղծելիս: Այլով բանիվ՝ խորագույն առումով նրանք նույնպես արհեստավարժ-վարպետ էին:¹⁰²

¹⁰⁰ Դրանց տաղաչափական առանձնահատկությունները դուրս են մեր քննության սահմաններից: Մեր խնդիրն է տալ արվեստական խոսքի և հանրույթի համաչափելությունը: Հմմտ. Ford, 2019, 59-63:

¹⁰¹ Տե՛ս Bowra, 1992, 630-631, Bowra, 1961, 1-11, հմմտ. Hallett, 1979, 462-444: Հանդերձ այդու, այս դիմակը նույնպես կարծրանալու միտում ուներ:

¹⁰² Տարօրինակ չէ, որ նրանք էլ հաճախ որակվում էին իբրև տեխնիկոներ: Նույն վերաբերմունքը կար նաև դերասանների, ճարտա-

5.2. Մարմնի գեղագիտությունը

Ստեղծագործականության հաջորդ տիրույթը, որին ցանկանում ենք անդրադառնալ, վերաբերում է մարմնակրթանքին: Հընթացս պոլիսային կյանքի կայացման ակներև դարձավ, որ այն քաղաքացու առօրյայի անկապտելի մասն է՝ սկսյալ դպրոցական դաստիարակությունից մինչև հասուն տարիքի ազատ ժամանցը (σχολή):¹⁰³ Այս մասին վկայում են գիմնասիոնների ավերակները՝ պահպանված համարյա բոլոր զարգացած պոլիսներում:

Գրանք մարզական հաստատություններ էին, որոնք կառավարվում էին պետական ընտրովի պաշտոնեության ձեռամբ (γυμνάριοι): Նա էր վարձում և վճարում մարզիչներին, որոնք վարում էին մարմնակրթանքի տարբեր ընթացքներ՝ վազք, թռիչք, սկավառականետություն, նիզականետություն, կռիվամարտ, ըմբշամարտ և պանկրատիոն:¹⁰⁴ Գիմնասիոններն ունեին կրթանքի հարթակներ մարզաձևերից յուրաքանչյուրի համար:¹⁰⁵

սանների և անգամ իմաստասերների նկատմամբ, զի զբաղված էին «աստվածային վերարտադրությունների վերարտադրությամբ»: Այս կապակցությամբ ուրվագծելի է մտավոր հայեցողության ուղին՝ սկսյալ Պլատոնից մինչև Պլոտինոս: Vernant, 1965, 71-72, հմմտ. Ստեփանյան, 1999, 168-169:

¹⁰³ Ազատ ժամանցն Արիստոտելը զուգակցում է քաղաքացու հիմնարար նպատակի՝ երջանկության հետ (εὐτυχία, εὐδαιμονία)։ «Թերևս երջանկությունը կախված է ազատ ժամանցից. մենք աշխատում ենք, որպեսզի վայելենք ժամանցը, ճիշտ ինչպես պատերազմում ենք, որպեսզի վայելենք խաղաղությունը» [Arist., Eth., 1117b, 10], հմմտ. Balme, 1984, 140-141:

¹⁰⁴ Այս համալիրի մասին տե՛ս Howland, 1992, 142; Ինչ վերաբերում է պանկրատիոնին, այն ներմուծվեց ավելի ուշ և համադրում էր ըմբշամարտի և կռիվամարտի հիմնատարրերը: Տե՛ս Harris, 1964, 68-69, հմմտ. Crowther, 1996, 34-36:

¹⁰⁵ Հայտնի է՝ Աթենքում կար երեք գիմնասիոն: Բացի դրանցից՝ կային նաև պալեստրաներ՝ ապահովելով մասնավոր մարզումներ,

Նաև սրահներ լոգանքի և մերսման համար: Խորքային իմաստով՝ աստ մարմնի նկատմամբ կատարվում էր նույն (էրգաստիկ) աշխատանքը, ինչն արհեստավարժ-վարպետը կատարում էր անկենդան նյութի, իսկ քերթողը՝ բառի նկատմամբ:

Եվ ծնվում էր քաղաքացու նոր մարմինը, որի կատարելության աստիճանը որոշելու համար պահանջվում էր մրցակցություն:¹⁰⁶ Դրա կարևորագույն միջավայր դարձան Օլիմպիական համահունակաՆ խաղերը, որոնք հրավիրվում էին հյուսիսային Պելոպոննեսում չորս տարին մեկ անգամ՝ սկսյալ Ք.ա. 776 թվականից: Նվիրված էին Զևս Օլիմպիականին: Տևում էին հինգ օր, հընթացս որոնց հունական աշխարհում հռչակվում էր սրբազան խաղաղություն (εἰρήνη). կանգնեցվում էին թշնամանքն ու պատերազմները:¹⁰⁷

Գոյության առաջին երկու հարյուր տարիներին Օլիմպիական խաղերը դասվում էին այլ համահունակաՆ խաղերի շարքին՝ Պյութական, Նեմեսական, Իսթմական: Դասական դարաշրջանում նրանց հեղինակությունն արդեն վեր էր մրցակցությունից: Հաղթողներն սրանում էին պսակ հասարակ ձիթապտղի ճյուղերից: Սակայն խիստ քարձր էր հաղթանակի հանրային հնչեղությունը. նրանք հռչակվում էին հե-

հիմնականում պատանիների համար: Տե՛ս մանրամասն **Gardiner**, 1930, 72–98:

¹⁰⁶ Մրցակցությունն ուներ նաև կրոնաձիսական խոր արմատներ, որոնք սերմանվում էին ապագա քաղաքացու կրթության ընթացքին: Տե՛ս **Scalon**, 2002, 9 –12:

¹⁰⁷ Հետագոտողները ուշադրություն են դարձնում գործընթացի հոգեբանական-բարոյական դիտանկյան վրա. այն սկսվում էր ամոթից (αἰδώς) և առաջնորդում օլիմպիկոսին դեպի առաքինություն (ἀρετή): Եվ տարօրինակ չէր, որ հաղթողները մեծ հարգանքով ու հեղինակությունը էին շրջապատված: Տե՛ս **Зайцев**, 2001, 106–107, 138–140:

րոսներ, և (անգամ) արձանները կանգնեցվում էին հարազատ քաղաքներում:¹⁰⁸

Չնայած իրենց երգաստիկ բնույթին՝ ինչպես քերթողությունը, այնպես էլ մարմնակրթանքը ծագում էին ավագանու շրջանակից: Եվ արտահայտում էին այդ հանրադասի ներքին հակասությունը՝ քաղաքական պահպանողականությունը՝ համադրված մշակութային արարումին:

5.3. Մերավոր հարաբերումի գեղագիտությունը

Ասվածի յուրատեսակ դրսևորում է նկատվում նաև արիստոկրատական գրույց-խնջույքը (συμπόσιον): Այն միտված էր միավորելու արիստոկրատական պահվածքը (հագուստ, ժեստ, ճաշակ) իմաստնության հետ (խոսք, խոհ, գաղափար):¹⁰⁹

Հրավիրյալ սեղանապետի (συμποσίαρχος) նախաձեռնությամբ մասնակից այրերը գինու, երաժշտության ու պարի զուգակցությամբ գրուցում էին նախապես ընտրված թեմայի շուրջ: Վերջինս ընտրվում էր այն հաշվարկով, որպեսզի մասնակիցները փոխլրացնեն միմյանց՝ խոհի, խոսքի, հույզի համաձիւրում: Գահավորակների թիվը, որոնց վրա թիկնում էին, սովորաբար յոթն էր՝ հանգույն կիթառի լարերին, որոնք համապատասխանում էին հարմոնիայի աստիճաններին: Եվ հավաքը չէր վերաճում գինարբուքի, ամեն բան մնում էր չափի մեջ, զի նպատակը ոչ թե մարմնական, այլ մտահոգևոր հաճույքն էր [Xen., Symp., II, 26]:

¹⁰⁸ Տե՛ս, Gardiner, 1930, 31-34:

¹⁰⁹ Տե՛ս Coffey, 1992, 1028:

Զրույց-խնջույքի մասին տիպական է նկարվում Բ.հ. 2-րդ դարի ճարտասան Աթենետաի միտքը, որը գտնում էր, որ դա մրահոգևոր չափավորության բուժման միջավայր է. «Չափավորությունն առաքինությունների ուղեկիցն է, որը պետք է ներդրվի յուրաքանչյուրի մեջ: Մարդիկ պետք է հանգիստը նվիրեն դրան, իսկ ներուժը՝ բարիքին: Եվ բարիքն էլ կիսեն այլոց հետ» [Athen., Deip., I, 15]:

Հունական սկիհագրությունը նման հավաքների բազում տեսարաններ է պարունակում: Ընդունված է կարծել, որ դրանք իմաստասիրական մտքի և երկխոսության նախօրինակներ էին:¹¹⁰ Ասվածի լավագույն հաստատումը Պլատոնի երկասիրություններն են՝ գրված իմաստուն այրերի հավաքի և երկխոսության կանոնով [Plat., Symp., 176a-e]: Դրանցում սեղանապետի դերակատարությունը սովորաբար վստահված է Սոկրատեսին: Դիմակ, որի տակ հաճախ ուրվագծվում է նաև իր՝ Պլատոնի դեմքը:¹¹¹

Վերջին երգաստիկ ժանրը, որին ցանկանում ենք անդրադառնալ, մեզ վերադարձնում է դեմոսի կուլեկտիվ հայեցողության միջավայր: Խոսքը ձևավորվող *թատրոնի* մասին է: Դրան նույնպես մոտեցել ենք տի-

¹¹⁰ Հին հունական գրույց-խնջույքի ընկերային և մշակութային իմաստաբանության մասին տես **Lissarrague**, 1990, 47-59, **Hobden**, 2013, 1-21:

¹¹¹ Զրույց-խնջույքը տիպաբանորեն միջակա դիրք էր զբաղում, մի կողմից՝ տղամարդկանց հինավուրց կրոնաժխտական միությունների և ճաշկերույթների, մյուս կողմից՝ իմաստասիրական գրույց-փաստարկումների միջև, որի ծիրում «բացահայտվում էին մարդկային հոգին» և նրա անդրական արժեքները: Տես **Moors**, 1978, 77-79: Ձևական առումով Պլատոնն իր երկասիրություններում մեկնարկում է գրույց-խնջույքի իմաստաբանությունից և հարստացնում այն գիտելիքի և մեկնարկետի այլևայլ հնարքներով: Տես **Cossutta**, 2003, 48-49:

րանիայի առնչությամբ և հատկազօծել իբրև դեմոսի մշակութային ստեղծագործականության դրսևորում: Այն ծագում էր Դիոնիսոսին նվիրված տոնակատարություններից՝ հյուսված ծիծաղի ու լացի ծիսական դիմակների հարադրումից:

Ընդունված ըմբռնումներից մեկը եզրույթն արտածում է *θεάομαι* բայաձևից՝ «նայել, տեսանել, հասկանալ»:¹¹² Այս հայացքն է, որ հարընթաց ծիսակարգի մեջ սկսում է ուրվագծել բանական խաղընթացի հիմնարար բաղադրիչները՝ սկիզբ, զարգացում, ավարտ: Դրանք մարմնավորում են պատումի պայմանական ամբողջականությունը և շարժն առ իմաստային հանգուցալուծում: Եվ Դիոնիսոսին նվիրված գինարբուքն այս հոլովությունում դրվում է զգացմունքի և իմաստի սահմանափակումի ու կշռության մեջ: Եվ այս փորձառության արդյունքները հասցեագրվում են ոչ թե որևէ հանրախմբի, այլ ամբողջ հանրության:¹¹³

Ասվածի լույսով ձևավորվում է առաջին հայացքից անգամ պարադոքսալ թվացող մի պատկեր. միմյանց հակոտնյա ավագանին և դեմոսը էրգաստիկ մղումով ապածիսականացնում էին մշակութային դաշտը և ստեղծում բանական արժեքներ: Դրանք խորքային իմաստով բավական մոտ էին միմյանց: Եվ տարօրինակ չէ, որ արդեն հաջորդ՝ Դասական դարաշրջա-

¹¹² Ասվածի իմաստը մինչև վերջ ընկալելու համար հարկ է հիշել, որ ծեսերը (թեպետ հանրության լայն մասնակցության) պարունակում էին գաղտնիք, որ տեսանելի էր միայն ընտրյալներին: Տես **Meineck**, 2011, 95-97: Թատրոնի պարագային համոզում կար, որ տեսանելության սահմաններն ընդլայն են ու հասանելի բոլորին: Տես **Meineck**, 2011, 117-119, **Bakola**, 2018, 165-171:

¹¹³ Միով բանիվ՝ Արխաիկ դարաշրջանի մշակութային արարումն ընթանում է երկու հարթակներում՝ համընդգրկուն ու մասնակի: Եվ դա ներհատուկ էր նաև ապագա *արևմտյան* մշակույթներին:

նում, դրանց սպասում էր համաբերման հեռանկարը: Եվ միասին վերջիններս կազմելու էին հունական մշակութային ինքնության նոր հարացույցի կարևորագույն հատկագիծը:

ՀԱՄԱՐԵՐՈՒՄ

Ամփոփելով Արխաիկ դարաշրջանին նվիրված հետազոտական Առաջին հանգույցի արդյունքները՝ ցանկանում ենք առանձնացնել դրա հետևյալ իմաստային շարքը:

1. Հունաստանի պատմության Արխաիկ դարաշրջանը (Ք.ա. 8–6-րդ դդ.) հետևանք էր Բրոնզեդարյան պալատական քաղաքակրթության փլուզման և դրան հաջորդած դարերի ընկերային հետադիմության (Ք.ա. 11–9-րդ դդ.): Այս համընդգրկուն ճգնաժամի ծայրագույն շրջափուլում (ինչպես հատուկ է բոլոր համակարգերին) քայլ կատարվեց համաբերելու համակեցական նոր հարացույց: Կատարվեց դա ոչ թե ըստ կանխագծված հասարակաշինական ծրագրերի, այլ պատմական ընթացքի ընդհանրական տրամաբանությամբ, որն այլազան էր տարբեր տարածաշրջաններում՝ Լակեդեմոն, Ախաիա, Արգոլիդա, Բեոտիա, Ատտիկա, Թեսալիա: Հընթացս սկսեց ձևավորվել հանրային կյանքի կազմակերպման հունական ունիվերսալ միավորը՝ քաղաք-պետությունը (πόλις)՝ իր տարասեռ ընկերային և կառավարման հաստատություններով, կրոնական և մշակութային հարացույցերով:

2. Ասվածի ի մոտո քննությունը բացահայտում է հանրային շարժի, սահքի և որակական կերպա-

փոխության մի ամբողջ շարան, որն ընդգրկում էր կյանքի համարյա բոլոր տիրույթները՝ սկսյալ աշխատանքի նոր հարացույցից (էրգոս) մինչև հանրային պահվածք, մտածողություն և ինքնագիտակցություն: Ընդամին, հետազոտողներն առանձնացնում են այս հոլովույթի հետևյալ կարևոր չափույթները՝ արտադրական և մտահոգևոր նոր տեխնոլոգիաները, հանրային կյանքի կազմակերպման պոլիսային ձևը և կառավարման տարասեռ համալիրները, պատմական գործընթացի բանականացումը և անհատականացումը: Նման արմատական տեղաշարժերի դրսևորումներից պետք է նկատել նաև հանրակարգի կառուցվածքային կերպափոխությունը, երբ տոհմիկ ավագանու կողքին (երբեմն բախումներով, երբեմն փոխհամաձայնությամբ) սկսեց ձևավորվել միջին ունեցվածքի հանրադասը՝ ապագա առաջընթացի շարժիչ ուժը: Գործընթաց, որը հաճախ բանաձևում են իբրև «հոպլիտական հեղափոխություն»:

3. Արխաիկ դարաշրջանը հասարակական ճգնաժամի հաղթահարման մի քանի հարացույց է փորձարկել: *Առաջինը* հունականության ցրումն ու սփյուռքայնացումն էր: Գաղութացման ալիքով բազում հենակետեր հիմնվեցին բնակեցված աշխարհի տարբեր ծագերում՝ պոլիսներ, արհեստավորական, առևտրական, գյուղական բնակավայրեր: Դրանց թիվը նախապես հասնում էր շուրջ հինգ հարյուրի՝ Կոլխիդայից մինչև Սպանիա (Իբերիա): Այս համացանցն ապահովվում էր հիմնականում ծովային երթևեկով: Այն առևտրանացրեց ներհունական աշխարհը և աննախադեպ ընդլայնեց դրա բնական պաշարների հնարավորու-

թյունը: *Երկրորդ* հարացույցն արտահայտում էր բարեփոխումների մի ողջ համալիր, որը պարառում էր ընկերային, քաղաքական, իրավական, մշակութային տիրույթները: Դա կապվում էր տիրանների գործունեության հետ, որոնց պատմական առաքելությունն էր (թեպետ իրենց եսակենտրոն մղումներին) հաղթահարել տոհմիկ ավագանու գերակայությունը և ուղի հարթել հանրակարգի ազատականացման համար: *Երրորդ* հարացույցն առնչվում էր մշակութային կյանքին: Այն խթան հաղորդեց մտքի ու ճաշակի, հասարակական պահվածքի ու հոգեբանության նոր տարատեսակներին՝ դիդակտիկ ասքից մինչև մարմնակրթանք, քերթողական արվեստ, իմաստասիրական խոհ և թատրոն:

4. Դրանց բոլորին միավորում էին չափավոր ապաստանագումը և բանականացումը: Իզուր չէ, որ դարաշրջանը կապում էին իմաստնության յոթ անառարկելի հեղինակությունների հետ՝ Թալես Միլեթացի, Պերիանդրոս Կորնթացի, Կլեոբուլոս Լինդացի, Բիաս Պրիենացի, Պիտտակոս Միթիլենացի, Սոլոն Աթենացի, Բիլոն Սպարտացի:

5. Հուսկ Արխաիկ դարաշրջանը կարելի է բանաձևել իբրև պատմության անցումային (ճգնաժամային) շրջափուլ, որը նախ ձևավորեց պոլիսային համակեցական միավորը և ապա շրջափոխեց դրա լիիրավ անդամի ինքնագիտակցությունը. նա իրեն այլևս չէր տեսնում համայնքի կրավորական միավորի դերում: Իրեն և սեփական պոլիսին արդ միավորում էին երգաստիկ-ստեղծագործական հարաբերությունները: Այսինքն՝ որքան ինքն էր դրա արգասիքը,

նույնքան էլ դա էր իր արգասիքը: Ասվածը նոր հունական ինքնության ամենակայուն հատկագծերից մեկը դարձավ: Դրա արդյունքները շատ առումներով պայմանավորեցին Դասական դարաշրջանի ընկերային և մշակութային նվաճումները, որոնք համապատմական արժեք ունեն:

ՀԱՆԳՈՒՅՑ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆ ՍՊԱՐՏԱ.

ԿՅԱՆՔԸ ՈՒՂՂԱԶԻԳ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ

ԵՎ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

«Սպարտան, թեպեւ ամենանոսր բնակեցված,
բայց [արդ] Հունաստանի ամենազոր և հայտնի
քաղաք-պետությունն է: Ես զարմացա՜մ ինչ է հնա-
րավոր: Սակայն երբ դիպարկեցի նրա հասարակու-
թյունները, զարմանքս ի չիք դարձավ»:

Xen.. Lac., Polit., I, 1, 3.



ՄՈՒՏՔ

Սպարտական համակեցությունը կայացել է Լակեդեմոնում՝ Բալկանյան Հունաստանի հարավում, Պելոպոննես երկրամասի քարքարոտ և համարյա անջրդի հատվածում: Գետերը քիչ էին. դրանցից լոկ մեկն ուներ տնտեսական կարևորություն՝ Էվրոտասը: Սակավաթիվ բարերեր հողակտորները կտրտված էին քարոտ բլուրներով և լեռնապարերով: Անբերրիության և սովի վտանգը մեծ էր: Եվ դա փարատվեց, երբ Սպարտան Ք.ա. 8-7-րդ դարերում գրավեց հարևան բարերեր Մեսսենիան և ազգաբնակչության մեծ մասին վերածեց ստրուկի: Անտաքակույս, հենց այս ժամանակաշրջանին են վերաբերում Հերոդոտի խոսքերը. «[Սպարտայում] ավելի շատ գարի են աճեցնում, քան այլուր» [Herod., VI, 58]:

Որոշ հետազոտողներ (ոչ առանց հիմքի) մտածում են, որ նման նյութական պայմանները և մշտակա ներհանրությւյն լարումը կարող էին պատճառ լինել սպարտական ընկերային ուղղաձիգ կառույցի և իշխանական բացարձակ հրամայականի: Անհրաժեշտ էր խիստ վերահսկողություն սահմանել հասարակական արտադրության, բարիքների համագրման և բաշխման գործընթացների նկատմամբ:

Միկենյան դարաշրջանն այս արդյունքին հասնում էր շտրիիվ պալատական համալիրների կազմակերպական նախաձեռնության ու եռանդի: Սակայն մենք նպատակ չունենք դիտարկելու այդ դարաշրջանի իրողությունները մանրամասն և մեկին: Դրանք ներկայանում են նախ և առաջ իբրև տիպաբանական անցյալ, որի հարադրությամբ պատմական Սպարտան կարող է երփներանգվել գունեղ պատկերներով:

Հետազոտողները համամիտ են, որ պատմական Սպարտան արդյունավորվել է ի հետևանս ընկերային և տնտեսական, կրոնական և քաղաքական, տեխնոլոգիական և ժողովրդագրական այն տեղաշարժերի, որոնք բաժին ընկան Հունաստանին դորիական նվաճումից հետո: Համաձայն արդի պատկերացումների՝ վերջինս Ուշբրոնզեդարյան քաղաքակրթական փլուզումի հետևանքներից էր՝ տեղի ունեցած Բ.ա. 13–12-րդ դարերում: Կործանվեցին պալատական քաղաքակրթական օջախները՝ Միկենքը, Պիլոսը, Սպարտան, Թերեն, Օքրոմենոսը, Աթենքը, որոնք կառուցվել էին երկրի տեղաբնիկների՝ աքայացիների ջանքերով: Կյանքն իջավ մեկուսի գյուղական հանրույթների մակարդակին: Միայն դարեր անց դրանցից պետք է ծլարձակեր համակեցական կյանքի այն նոր հարացույցը, որը պատմությանը հայտնի է իբրև հունական քաղաք–պետություն (πόλις):¹

¹ Հունական միջավայրում քաղաք–պետության ձևավորման գործընթացի տարաստեղծությունների և ընդհանրական հատկագծերի հիմնախնդիրների մասին անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում: Տե՛ս ի մասնավորի **Ստեփանյան**, 2014, 261–341, 342–357: Դրանցում հատկազօվել է Մ. Հ. Հանսենի դերակատարությունը: Համարում ենք, որ նրա հետազոտություններն ի մի են բերել գիտական պատկերացումները հունական քաղաք–պետության մասին՝ սկսյալ Ֆյուստել դե Կուլանժից մինչև մեր օրերը: Տե՛ս

Մենք այս ընթացքը դիտարկել ենք նախորդ իմաստային հանգույցում և արդ խնդիր ունենք ներկայացնելու դրա սպարտական բնօրինակը: Այլով բանիվ՝ խոսքը այն անցումային դարաշրջանի մասին է, որը դիմավորված էր, մի կողմից՝ հոմերոսյան Մենելայոսով (և Նեստորով), մյուս կողմից՝ սպարտական ավանդությամբ վկայված Լիկուրգոսով: Առաջինը Լակեդեմոնի արքան էր՝ ժառանգական իշխանությամբ, պալատով, վարչակազմով ու գործով: Նա իր պատվավոր տեղն ուներ Միկենյան դարաշրջանի իշխանական աստիճանակարգության մեջ՝ ամրագրված նախնյաց բարքերով ու կրոնաբարոյական հրամայականներով: Երկրորդը լեգենդար բարեփոխիչն էր՝ կոչված ավարտին հասցնելու այն գործընթացը, որն արդի հետազոտողները հաճախ բանաձևում են իբրև «պոլիսային հեղափոխության» սպարտական տարակերպ:² Նրան վերագրվող բարենորոգումներով ձևավորվեց ընկերային մի համակեցություն, որն ուղղաձիգ հրամայականի և հակակշիռների համակարգով ներկայացնում էր կաստայական անհավասարության, ամբողջատիրության և ժողովրդավարության պարադոքսալ համաձուլվածք:³ Այն պահպանվում էր ներքաղաքական բռնության և կրոնաքարիզմատիկ քարոզչության

Fustel de Coulanges, 1877, 248-293; Ehrenberg, 1969, 38-74; Starr, 1986, 35-51; Фролов, 2004, 6-55; Hansen, 1993, 7-29; Hansen, 2004, 3-156; Hansen, 2013, 259-278:

² Սպարտական քաղաք-պետության ձևավորման տիպաբանության և առանձնահատկությունների մասին տե՛ս Davis, 1997, 13-21:

³ Տե՛ս Klosko, 1984, 172-173: Այս համաձուլվածքն արդյունք էր պատմության երկու հակոտնյա միտումների. մի կողմից՝ նրա տարերային շարժի, մյուս կողմից՝ բանական ձգտումին՝ միավորելու այդ տարասեռությունները միասնական համակարգի ծիրում:

հնարքներով: Մոնոլիթ–միաքար էր՝ լի հնարավոր ճեղքվածքների վտանգով, ինչը պետք է հստակ ուրվագիծ ստանար Դասական դարաշրջանում (Ք.ա. 6-րդ դարի վերջ – 4-րդ դարի առաջին կես) և հարուցաներ Սպարտայի աստիճանական անկումը:

Այս բարդ ու բազմաբովանդակ փորձառությունը անդին է լույս սպարտական պայմանության շրջագծից և ունի համապատասխան բովանդակություն, զի հստակ կամ մոտավոր զուգահեռներով կրկին ու կրկին ցույց է տարբեր դարաշրջաններում, տարբեր գունավորումներով ու հանդերձանքներով: Տարօրինակ չէ, որ հետազոտողներն անընդհապ անդրադարձել են դրան՝ մեկնարկելով իրենց ժամանակների ըմբռնումներից:

Դա էլ երբեմն տեղիք է տվել պատկերի անհարկի պարզեցումների և միակողմանի մեկնաբանությունների՝ «կաստայական ընկերային կառույց», «ամբողջատիրական վարչակազմ», «ժողովրդավարություն», «կորպորատիվ արդարություն», «կրոնաժխսական պահվածք», «բարձր մշակույթի բացակայություն» և այլն:⁴ Դրանցից յուրաքանչյուրը պարունակում է ճշմարտության իր մասնաբաժինը, սակայն միայն ընդլայն համակարգի ծիրում ի գործու է ճանապարհ հարթելու առ ընդհանրական հասկացումը: Այլապես չափազանցություններն անխուսափելի են: Այս մասին է սպարտական ուսումնասիրությունների պատմությունը. բնորոշը հաճախ վերածվել է ընկերային համաձայնության տեսլականի կա՛մ ռազմաճամբա-

⁴ Այս դիտանկյունները տարբեր ձևակերպումներով բացահայտվել են տակավին Դասական և Հելլենիստական դարաշրջաններում, իսկ ապա նոր մեկնություններ ստացել նորդարյա Արևմուտքում: Տե՛ս **Rawson**, 2013, 1-12, **Morris**, 2004¹, 345-356:

րի, կամ ապացուցելի արժեքանական հարաբերությունների ամբողջության, կամ հարընթաց ներքին ու արտաքին ընդհարումների, կամ անձնաժխտության ու անձնագոհության ընկերային ողբերգության:

Մոտեցումները տարբեր են, թեպետ մեկնարկում են համարյա նույն սկզբնաղբյուրների տեղեկությից: Խնդիրը մեկնության և ըմբռնման մասին է:⁵ Հուսկ որոշել ենք մեր քննությունը կառուցել պատումային երկու հարացույցի հարադրությամբ: *Առաջինը* բացահայտում է Սպարտայի գրության ինքնահայեցողությունը. նկատի ունենք նրա սահմանադրությունը, որը հայտնի է իբրև «Լիկուրգյան ռեթրա»՝ համաբերողի անվամբ: *Երկրորդը* ներկայացնում է այդ սահմանադրական (անշարժ) պատկերի կերպափոխությունները՝ հընթացս պատմական ժամանակի:

1. «ԼԻԿՈՒՐԳՅԱՆ ՌԵԹՐԱՆ». ՀԱՆՐԱԿԱՐԳԻ ԱՆՇԱՐԺ ՊԱՏԿԵՐԸ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ

1.1. *Լիկուրգոս. պատմական ավանդություն և իրականություն*

Համաձայն ավանդության՝ այս պատմական այրև իր գործունեությունը ծավալել է Բ.ա. 8-րդ դարի վերջին կամ էլ 7-րդ դարի կեսերին: Հերոդոտը վկայում է, որ նա Ագեիդ տոհմի մանկահասակ արքա Լեոբոտոսի խնամակալն էր [Herod., I, 65-66]:⁶ Մեկ այլ ավան-

⁵ Տե՛ս Woodhead, Forrest, 1992, 1006-1008; Gilbert, 1895; Forrest, 1968; Cartledge, 2002; Cartledge, 2004; Андреев, 2014.

⁶ Արդի հետազոտողներից ոմանք խնդրական են համարում Լիկուրգոսի պատմականությունը: Գտնում են, որ դա մտացածին-համադրական կերպար է՝ համեմատելի էպիքական հերոսներին: Իսկ

դազրույցի մեջ մանկահասակ արքան Խաբիլայոսն էր Էվրիպոստիդների արքայատոհմից: Մինչ այդ Լիկուրգոսը հասցրել էր այցելել Կրետե, Փոքր Ասիա, Եգիպտոս: Եթե հավատանք տեղեկույթին՝ անգամ Լիբիա, Իբերիա (Սպանիա), Հնդկաստան [Plut., Lyc., 5, 3]: Ուսումնասիրել էր նրանց բարքերը, սովորությունները, օրենքները, պետական հաստատությունները: Հարուստ գիտելիքներով ու կենսափորձով վերադարձել էր Սպարտա և աստ ներմուծել *բարենկարգություն* (εὐνομία), որն արդի քաղաքական տեսությունը բանաձևում է իբրև *սահմանադրություն*:⁷

Մեկ անգամ էլ հատկանշենք՝ ավանդությունը Լիկուրգոսի բարենորոգումների հետ է կապում անցումը ավանդական տոհմացեղային կառույցներից դեպի պետական-քաղաքական և իրավական-գաղափարախոսական կառույցներ: Հետազոտողները հակված են դրանցում տեսնելու բարեփոխումների մի ամբողջ համալիր՝ կյանքի կոչված Ք.ա. 8-6-րդ դարերում:⁸ Մինչդեռ ժամանակը դրանք միավորել է մեկ ակա-

անունն արտածում են *գալլ* (λόκος) գոյականից, որը Ապոլոնի կերպարներից մեկն էր: Տե՛ս Cartledge, 2003, 58-59:

⁷ Այս բարենկարգությունը և նրա հեղինակ Լիկուրգոսը տակավին դասական տեքստերում արժանացել են տարասեռ գնահատականների: Քսենոփոնը, օրինակ, խանդավառ էր դրանցով և սպարտական սահմանադրությունը բանաձևում է գերադրական մակդիրներով՝ *հզորագույն* (δυνατότατη), *ամենահայտնի* (ὀνομαστότατη) [Xen., Lac. Polit., I, 1]: Այլ է Արիստոտելի պարագան. մի կողմից՝ նա բարձր է գնահատում Լիկուրգոսի բարենորոգչությունը, մյուս կողմից՝ չի շրջանցում սպարտական հանրակարգի թերությունները՝ ծայրահեղ ինքնաբավությունը, իրավական խտրականությունը, կանանց անհարկի ազատությունը և հարստությունը [Arist., Pol., 1269a-1273b, 20]: Տե՛ս Sihler, 1983, 439-443.

⁸ Դժվար է որոշարկել Լիկուրգոսի մասին սկզբնաղբյուրների (ի մասնավորի՝ Պլուտարքոսի) տեղեկույթի դժ մասն է պատմական, ո՞րը՝ առասպելաբանական: Տե՛ս Forrest, 1992, 629:

նավոր պետական գործչի դիմակի ներքո և ամրագրել մեկ փաստաթղթի մեջ, որ արդ հայտնի է իբրև «Մեծ ռեթորա»:⁹ Նպատակն էր ընդհանրացնելու և առարկայացնելու պատմական անցյալը՝ դարձնելով այն սպարտացիների կրոնաժխտական վերապրումի առարկա:¹⁰ Սակայն մեր խնդիրը չէ վերաբացել այս գործընթացի առանձին բաղադրիչները ըստ «պատմական ճշմարտության»՝ ինչո՞ւ, ե՞րբ, ո՞վ, ի՞նչ պայմանների ներքո: Մեզ համար առաջնային է սպարտական պատմության քաղաքակրթական դասը:

Սկսենք քննությունը Ք.ա. 11–9-րդ դարերի քաղաքակրթական հետընթացից՝ Մուր դարաշրջանից, երբ Հունաստանը իջավ գյուղական համակեցական միավորների մակարդակի, որոնք միավորված էին ցեղային կազմավորումների մեջ:¹¹ Սպարտա-

⁹ «Ռեթորա» եզրույթը (ῥήτρα) սովորաբար թարգմանվում էր իբրև «բանավոր համաձայնագիր կամ պայմանավորվածություն»: Տե՛ս **Liddell and Scott**, 1940, 574: Կարծում ենք՝ Լիկուրգոսի կյանքի և գործի մասին ավելի ընդհանրական և հստակ է Վ. Գ. Ֆորրեստի գնահատականը. «Մեծագույն բանը, որ արել է Լիկուրգոսը (եթե այդպիսի մարդ եղել է) այն է, որ հաստատագրել է, ինչ նախկինում եղել է Սպարտայում և առաջին անգամ համաբերել կանոնների ժողովածու»: Տե՛ս **Forrest**, 1968, 40: Հանդերձ այդու չպետք է մոռանալ նաև հետևյալ փաստը. նկարագրելով սպարտական հանրության անցումը «անկարգությունից դեպի բարեկարգություն»՝ Թուկիդիդեսը չի հիշատակում Լիկուրգոսին [Thuc., I, 18, 1]: Եվ այս հարցում նույնական էր նաև Հելլանիկոս Միթիլենացու մոտեցումը [Hell., FGr, 4F, 116]: Հմմտ. **Köiv**, 2005, 238–239:

¹⁰ Սպարտական կյանքի այս կողմն արդ ընկերաբանական սևեռումի խնդիր է դարձել: Հատկանշվում է, որ նման լույսով հասարակական պահվածքի տարբեր ձևեր (գերակայություն և եղբայրություն, մրցակցություն և համախմբում, լրջմտություն և առօրեական կեղծիք) ցույցանում են իբրև խորհրդապաշտական տեքստեր՝ միտված առ հանուր կայունությունը: Տե՛ս **Knottnerus, Berry**, 2002, 3–9.

¹¹ Կարծիք կա, որ Սպարտայի ձևավորման ճանապարհին նախապես միավորվել է երկու գյուղական համայնք: Հապացույց մատնացուցում են երկու արքաների առկայությունը՝ սկսյալ Մուր դարաշրջանից: Տե՛ս **Boer**, 1954, 170–179; **Forrest**, 1968, 26–30.

կան ավանդության մեջ վերջիններս վկայված են երկու տարբեր եզրույթներով՝ *φίλοι* և *ὄψαι*: Հետևելով դրան՝ Հերոդոտը և Արիստոտելը խոսում են թե՛ մեկի, թե՛ մյուսի մասին: Մինչդեռ Թուկիդիդեսը և Պլուտարքոսը նախապատվությունը տալիս են երկրորդ եզրույթին: Հետազոտողներից ոմանք մտածում են, որ հարկ չկա խստիվ հակադրելու դրանք. առաջինները ավանդական (դորիական ժամանակներից ներհատուկ) ցեղերն էին՝ համաբերված նախ և առաջ ըստ արյունակցական և կրոնաժխսական կապերի, մինչդեռ երկրորդները՝ վերջիններիս հետագա բարենորոգյալ տարակերպերը, որոնցում կարևորվում էր վարչաքաղաքական գործառույթը:¹² Արդեն Արիստոտելի ժամանակ համոզված էին, որ չորս օրերը Սպարտա քաղաքի թաղամասերն էին, որոնց հետագայում հավելվեց նաև հինգերորդը: Նշենք, որ կազմակերպման երկու ձևերը դեռ երկար ժամանակ գոյատևում էին զուգահեռաբար՝ ներկայացնելով սպարտական կյանքի երկու հակադիր, բայց և միմյանց փոխլրացնող կողմերը՝ տոհմիկ-նորմատիվ և վարչաիրավական:

Հետազոտողները հատկանշում են նաև հետևյալ իրողությունը. այս կազմավորումները չէին համաբերվում և իրենց հավաքները չէին անցկացնում Սպարտայի ծիրում: Տարօրինակ է, բայց փաստ. Քաղաքը չուներ (հունական պոլիսներին ներհատուկ) հրապարակ-ագորա:¹³ Աշխարհաժողովներն անցկացվում էին

¹² Հարկավ, այս եզրակացությունները հեռու են վերջնական լինելուց, սակայն ուղենշում են հետագա հետազոտությունների ուղին: Տե՛ս Osborne, 1996, 70-74;

¹³ Ասվածը թերևս վերաբերում է սպարտական պատմության վաղ շրջափուլին, երբ քաղաքն անգամ պատեր չուներ և հիշեցնում

Քաղաքից անդին՝ Էվրոտաս գետի հովտում, մի ընդարձակ տափարակում: Պատճառը թերևս վերնախավի ձգտումն էր՝ խուսափելու հնարավոր ամբոխավարական ծայրահեղություններից:

Մեր քննության ժամանակաշրջանում նման մտավախությունը թվում էր աննշան: Հանրային գիտակցության մեջ տակավին կենդանի էր դորիական նվաճման հիշողությունը՝ ամրագրված կրոնական վերապրումներով ու ծիսական գործողություններով: Ստորև կանդիդատնանք. դրանք կայուն հետևողականությամբ կրկնվում էին՝ ընդգրկելով սպարտական ողջ հանրույթը:

Այլով բանիվ՝ հանրույթը շարունակում էր ընկալվել նախ և առաջ իբրև մի հոծ ընկերային և կրոնածիսական ամբողջություն՝ հակադրված նվաճյալ աքայացիների տարասեռ զանգվածին: Փորձ էր արվում անտեսելու նրա դասային, իրավական և նյութական տարասեռությունները: Արվում էր ամեն բան նման վիճակի անխաթար պահպանության համար, և պետական քարոզչությունը ծառայում էր հենց այս նպատակին:¹⁴

Սակայն Ք.ա. 8–7-րդ դարերում Սպարտայում տեղի են ունեցել արմատական կերպափոխություններ, որոնք հետագոտողները սովորաբար բանաձևում են իբրև «հոպլիտական հեղափոխություն»: Պատմության

էր գյուղական համայնքների համակեցություն: Տե՛ս **Cook**, 157: Արխայիկ դարաշրջանում պատկերը փոխվում է, և հնագետները համոզված են, որ Սպարտան ուներ ագորա, բայց դրա ճշգրիտ տեղադրության հարցը այսօր էլ բաց է մնում: Տե՛ս **Cavanagh**, 2022, 67:

¹⁴ Հարկավ, այս համակարգն ի գործ էր ապահովելու կայունություն, սակայն միայն ռազմավարական և կրոնաքարոզչական հրամայականի գործառնությամբ: Հակառակ պարագային հանրույթը կարող էր հայտնվել ներքին և արտաքին սպառնալիքների դաշտում: Նման հակասական իրավիճակը Սպարտայում հիմք հանդիսացավ քաղաք-պետության ձևավորման համար: Տե՛ս **Starr**, 1986, 35–36:

ասպարեզ է ելել միջին գյուղացիությունը՝ պահանջելով ճանաչել իր իրավունքները հանրային հողի և հասարակական ներունակ դերակատարության նկատմամբ: Առաջին ակնառու քայլը բանակի նոր տեսակի՝ ծանրագեն հետևակի (*ὄπλιται*) ձևավորումն էր: Արիստոտելը հղացք է բանաձևել առ այն, որ այն նպաստել է հասարակության ժողովրդավարացման նպատակին: Համաձայն նրա՝ հին ժամանակներում զինուժը բաղկացած էր միայն հեծելազորից, և կառավարում էին արքաներն ու խմբիշխանները. «Սակայն հընթացս պետությունների զարգացման ավելի շատ մարդիկ դարձան ներունակ և սկսեցին իրենց մասը բերել կառավարման գործին» [Arist., Polit., 1297b, 20-25]:¹⁵

Միով բանիվ՝ ռազմակարգի կերպափոխությունը նաև հասարակական կերպափոխության խթան էր:¹⁶ Հանդերձ այդու կարծում ենք՝ սպարտական *ժողովրդավարացման* գործընթացում կարևոր դերակատարություն է ունեցել նաև դորիական համակեցական տեսլականը, որը շարունակում էր կենդանի մնալ մարդկանց գիտակցության մեջ:

¹⁵ Արդի հետազոտողները հանրությի «հուլիսացման» և «ժողովրդայնացման» հոլովույթների միջև կապն այս աստիճան անմիջական ու միագիծ չեն նկատում: Համարում են, որ վերնախավն անմասն չի միացել դրանցից, և հետագայում ձևավորված գաղափարախոսությունն էլ արտահայտում է իրականության հենց այս կողմը: Տե՛ս Hanson, 1999, 235-237:

¹⁶ Հետազոտողներն այս համակեցական տեղաշարժը հաճախ բանաձևում են իբրև «փաղանգի հեղափոխություն», որի տեսանկյունի արդյունքը արքաների և ավագանու բացարձակ իշխանության հաղթահարումն էր: Տե՛ս Forrest, 1968, 61-69: Գործընթացը ծավալվել է ոչ առանց ներքին հակասությունների և ընդհարումների: Այդ մասին է վկայում *կուսածինների գործը* (*παρθενία*)՝ հավանաբար սպարտիատների ստորակա ինչ-որ խավ, որ ձգտում էր ճանաչման: Պետությունը Իտալիայի հարավում հիմնեց իր առաջին գաղութը՝ Տարենտոնը, և ապա նրանց և այլ «թերարժեքների» տեղափոխեց այնտեղ: Տե՛ս Carr, Woodhead, 1992, 1037:

Սկսելով սպարտական հանրակարգի իր բարենորոգությունը՝ Լիկուրգոսը խնդիր ուներ նոր «հանդերձանքներ կարելու» այս կերպափոխության համար: Ասվածն իր ակնառու դրսևորումն ունի բարենորոգչի առասպելականացված կենսագրության մեջ: Պատմական ավանդությունը *Ռեթրայի* իրական հեղինակ համարում է Ապոլոնին՝ գիտելիքի, ճարտարության և իմաստության աստծոյանը: Լիկուրգոսը նրա և սպարտական հանրության կապող օղակն է միայն:

Ի հաստատումն այս մտքի՝ Պլուտարքոսը նշում է, որ նախքան բարենորոգումներին անցնելը «[...] նա ուղևորվեց Դելփք՝ զոհաբերություն կատարելու առ աստված և հարցանելու նրա գուշակին: Ապա վերադարձավ՝ բերելով Պյութիայի խոսքը, որ ինքն աստվածների սիրելին է և ավելի շատ աստված է, քան մարդ» [Plut., Lyc., V, 3]: Հուսկ Լիկուրգոսն սկսեց նաև մտածել, որ պետք է վերաբերի ժողովրդին իբրև բժիշկը հիվանդին, որը թալկացել է ի հետևանս բազում հիվանդությունների [Ibid.]: Եվ ժողովուրդն ու ընտրախավն անվերապահորեն վստահեցին նրա խոսքին: Տիրտեոս բանաստեղծը հենց սա նկատի ունի, երբ հատկազօծում է.

*«Սրացյալ Ապոլոնից այս գուշակությունները,
Բերյալ Պյութիայից իբրև սուրբ նշանք.
Աստվածընդիր արքայք, որք սիրում են երկիրը,
Թող նախագահեն ազգի հավաքին,
Եվ ծերերն էլ թող հաջորդեն նրանց այդ նույն հավաքում,
Եվ հասարակներն էլ թող լինեն վերջում.
Եվ թող ճշմարիտ Ռեթրան ընդունվի կամոք բոլորի»:*

Tyrtaeus, V, 26-30

Այլով բանիվ՝ բարենորոգումները ներկայացվում են իբրև հասարակական համախմբումի խթան ու նպատակ:¹⁷ Եվ իբրև ասվածի հաստատումն՝ առաջադրվում է նաև այն միտքը, որ դրանք կյանքի կոչելուց հետո Լիկուրգոսը հրաժարել է իշխանությունից և կրկին հեռացել՝ թողնելով Սպարտան ընդ առաջնորդությամբ աստծո:

1.2. Ռեթրայի ընկերային հենքը

Լուսաբանելով սպարտական կյանքի այս դիտանկյունը՝ հետազոտողները ուշադրություն են դարձնում հետևյալ իրողություններին: Առաջին, Սպարտան չի ունեցել գրավոր օրենքներ. իրավունքի և իրավագիտակցության հիմքը *նախնյաց սովորություններն* էին (θεσμοί), որոնք ավանդվում էր սերնդեսերունդ: *Երկրորդ*, օրենքը, իրավունքը և արդարությունը համարվում էին նույնարժեք հասկացություններ՝ համաբերված բարոյական արժեքների համալիրով: *Երրորդ*, իրավունքը նույնիմաստ չէր ողջ հանրության նկատմամբ. այն տարասեռված էր ըստ երեք ընկերային մի-

¹⁷ Տիրտեոսի վերոբերյալ բանաստեղծական հատվածը, անտաբակույս, այս համաձայնության մասին է: Այլով բանիվ՝ հանրության բարեկարգությունը դիտարկվում էր իբրև արդյունք նրա պատրաստակամության՝ լսելու աստծո պատվիրանը և հետևելու դրան: Բարոյական արժեքանության դիտանկյունից այն համարվում էր սպարտիադի *պարմի գործը* (τιμή, φιλοτιμία): Տես **London**, 1997, 109-119: Ռազմակարգը նույնպես դիտարկվում էր իբրև աստծո և սպարտիատների (և հատկապես զորահրամանատարի) համագործակցության արգասիք – σὺν τῷ θεῷ πράττειν [Xen., Hipp., V, 14; VI, 1]: **Anderson**, 1970, 70-71: Պղատոնը հակված էր զուգահեռներ տեսնելու բարենորոգչի և բժշկի միջև, զի երկուսն էլ պարտավոր էին գործառնել ոչ թե ըստ իրենց կարծիքի կամ ցանկության, այլ՝ արհեստից բխող անհրաժեշտության (ιατρία – բուժում, խնամք) [Plato, Alc., 135d-e]: Մեկը՝ հանրության, մյուսը՝ մարդկային մարմնի նկատմամբ:

ջավայրերի՝ սպարտիատներ, պերիոյկոսներ, հելլոս ստրուկներ: Յուրաքանչյուր միջավայրում վերջինս ուներ իր հստակ հաստատագրված սահմանները: *Չորրորդ*, իրավունքի կիրարկումը ծիսականացված էր, բայց նաև դիմավորված՝ ո՞վ, ե՞րբ, ի՞նչպե՞ս, ի՞նչո՞ւ: Ընդամեն, արված էր դա ոչ թե ըստ անհատական որոշումների և պատասխանատվության, այլ ավանդույթի ոգուն ու տառին խստորեն հետևելու իմաստով: *Հին-գերորդ*, իրավական համալիրն ընկալվում էր իբրև արդյունք աստվածային կամքի և սպարտիատների համայնքի համագործակցության:¹⁸

Այս բոլոր դիտանկյունները համաբերված էին «Լիկուրգյան ռեթրայի» իմաստային կոդի մեջ: Եվ հետագոտողից պահանջվում է նախ և առաջ վերլուծել (տարանջատել), համաբերել և մեկնաբանել դրանք՝ վավերագրի համարժեք հասկացման նպատակով:¹⁹ Նման մտահոգությամբ է առաջնորդվել տակավին Քսենոփոնը՝ նախաձեռնելով իր «Լալկեդեմոնական պոլիտեիա» երկասիրության շարադրանքը. «Խորհեցի մի օր. Սպարտան, թեպետ ամենանոսր բնակեցված, բայց [արդ] Հունաստանի ամենագոր և հայտնի քաղաք-պետությունն է: Եվ զարմացա՝ ո՞նց է հնարավոր: Սակայն երբ դիտար-

¹⁸ «Մեծ ռեթրայի» վերաբերյալ ծավալուն գրականությունն առնչվում է նրա կառուցիկ և բովանդակային տարաբնույթ հիմնահարցերին, որոնք հիմնականում համընկնում են ներկայացված տիպաբանության շրջանակին: Տե՛ս Jones, 1966, 165-175; Forrest, 1967, 11-19, Nafiss, 2012, 93-113, Fragkaki, 2015, 35-51, Schofield, 2021, 450-472:

¹⁹ Արդի տեքստաբանությունը գտնում է, որ գրության յուրաքանչյուր միավոր ենթադրում է մտավոր ուղի ակնհայտից դեպի անհայտը, տեսանելիից՝ անդրականը: Պատմական տեքստերի կապակցությամբ ասվածը ենթադրում է անցյալի իսկության բացահայտում: Իսկ դա նշանակում է *փաստերի ֆեյդիշիզմի* հաղթահարում: Տե՛ս Carr, 1961, 16-17:

կեցի նրա հաստատությունները՝ զարմանքս ի չիք դարձավ» [Xen., Lac. Polit., I, 1, 3]:²⁰

Մի խնդիր ևս. հընթացս ժամանակի *Ռեթրայի* նկատմամբ ձևավորվել է երկու մոտեցում. մեկը հետևում է «լիկուրգյան տրամաբանությանը»՝ շեշտադրելով բարենորոգումների մեջ իշխանական կառույցի նախաձեռնությունը, մյուսն առաջնորդվում է «իրերի տրամաբանությամբ»՝ շեշտադրելով բարենորոգումների հաջորդականությունը ըստ «սպարտական հանրակարգի տրամաբանության»:²¹

Որոշել ենք նախապատվությունը տալ երկու մոտեցումների համադրությանը, զի մեզ համար առաջնային է, կրկնենք մեկ անգամ էլ, սպարտական քաղաքակրթական տեքստի հասկացումը: Նման մոտեցումը

²⁰ Xen., Lac. Polit., I, 1, 1-5: Հմտ. **Schofield**, 2021, 453-458: Հարկավ, այս ոգևորությունը տեղիք է տվել նաև սթափ ընկալումների, որոնք, բացի ծիսական և քարիզմատիկ կայունությունից, Սպարտայում տեսնում էին նաև անհարկի անշարժություն և անգոսնություն բոլոր տեսակի կերպափոխությունների նկատմամբ: «Իրավիճակը փրկելու համար» սպարտական հասարակական կարծիքն աշխատում էր Լիկուրգոսին հեռու պահել այդ թերություններից: Ք.ա. 3-րդ դարի բարենորոգիչներ Ագիս Դ-ին և Կլեոմենես Գ-ին վերագրվում էր ցանկություն՝ վերադառնալու Լիկուրգոսի սկզբունքներին: Հարկավ, ասվածը հակասում է պատմական ճշմարտությանը, բայց հետաքրքիր է անցյալի «հասարակական վավերացման» դիտանկյունից: Տեն **Nafissi**, 2018, 94-95:

²¹ Տակավին անտիկ շրջանում արդեն առկա էին այս երկու մոտեցումները. առաջինի տիպիկ ներկայացուցիչ նկատվում էին Էփորոսը և Քսենոփոնը, իսկ երկրորդինը՝ Պդատոնն ու Արիստոտելը: Համարյա նույն մոտեցումն առկա է նաև արդի հետազոտություններում. առաջին մոտեցման համար կառանձնացնեինք՝ **Forrest**, 1967, 11-19, **Hooker**, 1988, 340-345, **Köiv**, 2005, 233-264, իսկ երկրորդի համար, կարծում ենք, հատկանշելի են՝ **Hammond**, 1950, 42-49, **Jones**, 1966, 165-175, **Finley**, 1968, 143-151, **Lévy**, 1977, 85-103, **Андреев**, 2014, 138-144: Հընթացս ձևավորվել է նաև երրորդ ուղղությունը, որի հետևորդները լիկուրգյան բարենորոգումները քննարկում են իբրև գոտ տեքստային միավոր, որի իսկությունը պայմանական է և առասպելականացված: Տեն **Nafissi**, 2009, 129:

միանգամայն հարիր է նաև մեր կարևորագույն սկզբնաղբյուրների տեղեկությոն: Խոսքը Հերոդոտի և Թուկիդիդեսի մասին է: Համաձայն Հերոդոտի՝ մինչ *Ռեթրան* սպարտացիներն ապրում էին վատթարագույն օրենքներով (*κακονομώτατοι*) [Herod., I, 65]: Թուկիդիդեսն ավելի հստակ է. «[...] դորիացիների թափանցումից հետո Սպարտան երկար ժամանակ տառապում էր ներքին գժտություններից: Սակայն արդեն հնագույն ժամանակներում այն ուռք դրեց բարօրիխության ուղի (ὁδός τῆς εὖνομίης) և երբևէ չշեղվեց դեպի բռնապետություն» [Thuc., I, 18, 1-3]: Հուսկ նրանք հասան մեծ զորության և կարգ սահմանեցին նաև այլ պոլիսներում:²²

Նման մոտեցմամբ իբրև բարենորոգումների իմաստային ելակետ ներկայանում է ընկերային կառույցի վերոհիշյալ եռակազմ միավորը: Լիկուրգոսի նպատակն էր «արդարացնել» այն ըստ համակեցական կյանքի նոր պայմանների՝ սպարտիատներ, պերիոյկոսներ, հելոտներ:²³ Ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում՝ այս հանրադասերը ներփակ էին, այսինքն՝ անցումը մեկից մյուսին խստորեն արգելվում էր ինչպես իրավաքաղաքական, այնպես էլ կրոնաքաղաքական առումներով:²⁴

²² Համաձայն Թուկիդիդեսի չափազանցված տեղեկությոն՝ Լիկուրգոսի ձևավորած սպարտական ընկերային և պետական կառույցը անխաթար պահպանվել է չորս հարյուր տարի [Thuc., I, 18, 1]: Միտքն արտահայտվել է Պելոպոննեսյան պատերազմի տարիներին (431-404 թթ.), երբ, չնայած իր սահմանափակ պաշարներին, Սպարտան գերակայում էր հարուստ ու բարգավաճ Աթենքի նկատմամբ: Առաջնորդվելով «անկիրք» մոտեցմամբ՝ Թուկիդիդեսը պատճառը տեսնում է լիկուրգյան ձեռնարկումների մեջ: Տե՛ս **Cartledge, Deubner**, 2012, 560-564:

²³ Տե՛ս **Paschalis, Ulman**, 1989, 48-51:

²⁴ Արդի հետազոտողները սովորաբար այսքան հեռու չեն գնում: Մեկնարկելով Արիստոտելի և Պլուտարքոսի վկայություններից՝ նրանք բավարարվում են՝ հղում կատարելով առ Կրետեի հանրակարգը:

Կարծիք կա, որ նման կառույցը փրկաբանորեն համաբերելի է հնագույն հանրակարգերին (նաև հնդեվրոպական) ներհատուկ ընկերային բաժանումներին: Իրենց փարասեռություններով դրանք դեռ երկար ժամանակ պահպանվում էին հասարակական իրականության և գիտակցության մեջ՝ մեկ համակարգի ծիրում միավորելով քրմերի, զինվորների և արտադրողների դասերը: Եվ աստիճանաբար նույնպես դասերը խիստ ներփակ էին:

Սպարտիադները (σπαρτιάται). Լիկուրգոսի սևեռումի առարկան էին նվաճող դորիացիների՝ քանակապես սահմանափակ հանրախումբը, որը խնդիր ուներ պահպանելու իր գերակա կարգավիճակը նվաճյալ աքայացիների նկատմամբ: Հետազոտողները հակված են մտածելու, որ լիիրավ սպարտիատների թվաքանակը չի գերազանցել 8-10 հազարը: Հաշվարկի մեկնակետ է ընդունվում նրանց պարտադիր ամրագրվող հողակտորների քանակը (κλέροι):²⁵

Ռեթրայի տեքստի արդիական մեկնաբանությունը հուշում է, որ այս հանրախումբը համաբերված էր ըստ երեք կարևոր սկզբունքի: Արդի ընկերաբանության մեջ դրանք բանաձևվում են իբրև հարաբերություններ ըստ հավասարության (egalitarianism), ըստ վաստակի (meritism) և ըստ ծագումի (genealogism):²⁶ Խորքա-

Nafissi, 2018, 114-117: Պղատոնի մոտ ուրվագծված է նաև եգիպտական հեռանկարը: Stephens, 2016, 45-48:

²⁵ Հերոդոտը խոսում է 8 000-ի մասին [Herod., VIII, 134]: Նկատի ունենալով, որ ընտանիքները միջին հաշվով բաղկացած էին հինգ-վեց անդամից՝ հետազոտողները հավանական են համարում, որ սպարտիատների թվաքանակը տատանվում էր 40-50 000-ի միջև: Տե՛ս Hansen, 2004b, 22-23:

²⁶ Համակենցական տարբեր կառույցներում այս եզրույթների համադրելության հնարավորությունների մասին տե՛ս մանրամասն Barbera, Bevia, Ronsati, 2015, 237-257:

յին իմաստով դրանք, հարկավ, հակադիր էին, բայց բարենորոգչի կամոք կոչված էին փոխարացնելու միմյանց մեկ ընդհանրական համակարգի ծիրում. «Լիկուրգոսը սպարտիատների տվեց օրենքներ՝ դրանց ենթարկվելու և դրանց միջոցով ծաղկման հասնելու նպատակով» [Xen., Lac. Polit., VII, 2]:

Առաջին սկզբունքն իրագործելիս Լիկուրգոսը նախ և առաջ առաջնորդվում էր նյութական հավասարության մղումով. «[...] հաստատեց սննդի հավասար հասանելություն բոլորի համար և [այդու] վերացրեց դրամի հմայքը» [Xen., Lac. Polit., VII, 3]: Հագուստն էլ սկսեց գնահատվել ոչ ըստ նրա նյութի ու կարվածքի, այլ ըստ դրանում ամփոփված մարմնի համաչափության և մարզվածության: Ասվածն արտահայտում էր պետական-պաշտոնական տեսակետը՝ համեմված որոշակի քարոզչական երանգներով: Հուսկ սպարտիատները դասական տեքստերում հաճախ անվանվում են նաև *հավասարներ* (ὁμοιοι): Սակայն իրական կյանքում պատկերը այլ էր ինչպես ունեցվածքի, այնպես էլ հասարակական դիրքի առումով:²⁷

Հավասարարական այս սկզբունքը գերակայում էր նաև հանրային ունեցվածքի այլ դրսևորումների նկատ-

²⁷ Հակառակ պաշտոնական քարոզչության՝ սպարտիատների շրջանում ունեցվածքային տարբերություններն անժխտելի էին, և դա ակնհայտ ուրվագիծ ստացավ արդեն դասական շրջանում: Խոսքն առաջին հերթին ավագանու ներկայացուցիչների անշարժ և շարժական գույքի մասին է: **Hodkinson**, 2000, 96-99, 176-182: Այս առումով որոշ հետազոտողներ չեն խորշում խոսելու նաև շքեղության մասին: Տե՛ս **van Wees**, 2018, 216-219: Մյուս կողմից՝ սպարտիատներն ամենօրյա հարաբերություններում հատկանշում էին իրենց տարբերություններն ըստ *հասարակական վաստակի*՝ հմտություններ, գիտելիքներ, բարոյական հատկանիշներ և արության գործեր, որոնց հետևում էին հեղինակությունն ու բարձր դիրքը: Տե՛ս **Forrest**, 1968, 50-51, հմմտ. **Jianxin Liu**, 2022, 180-181:

մամբ: Դրանցից Լիկուրգոսը առանձնացնում էր երիտասարդ սերունդը՝ մանուկ, տղեկ, պատանի: Այն նույնպես ընկալվում էր իբրև հանրային սեփականություն և գտնվում էր ավագների աչալուրջ հսկողության ներքո: Օրինախախտման կամ անբարո վարքի պարագային ավագներից յուրաքանչյուրն իրավունք ուներ երիտասարդներին պատժելու *հոր իրավունքով*²⁸ զրկելով սննդից, գանահարելով ու ձաղկելով: Ավելին. «Երբ գանահարված որևէ տղեկ այդ մասին պատմում էր սեփական հորը, ապա մեծ անպատվություն էր, եթե վերջինս նրա նկատմամբ չհավելեր գանի իր քանակը: Այս աստիճան հայրերը վստահում էին միմյանց» [Xen., Lac. Polit., VI, 2, 3]: Նույնը վերաբերում էր նաև ստրուկ հեղոսներին. այս պարագային ավագները գործում էին ընդհանուր տիրոջ իրավունքով. «Առևտուրն արգելված էր, սակայն կար սովորույթ օգտագործելու հարևանի ստրուկներին իբրև իրենցը, նաև շներին ու ձիերին, եթե տերը չուներ դրանց անմիջական կարիքը: Եթե Քաղաքից դուրս մեկն զգար ինչ-որ բանի կարիք, ապա կարող էր բանալ ցանկացած պահեստ և վերցնել, ինչ որ հարկն էր» [Xen., Lac. Polit., VI, 3, 4]:

Սակայն ունեցվածքի հիմնական ձևը հողն էր: Իրավունքի դիտանկյունից՝ այն սպարտիատների հանրախմբի միասնական սեփականությունն էր, որի իրականացումը հանձնարարված էր պետությանը: Յուրաքանչյուր սպարտիատ, հասնելով առևտրյան տարիքի, հուտեստ հասարակական դաշտից հողակտոր էր ստանում (κλέρος): Հողակտորների ծավալները տարբեր էին՝ կախված դրանց բերրիության աստիճանից:²⁸

²⁸ Հարկավ, սպարտական սահմանադրության ու քարոզչության դիտանկյունից՝ հողը դիտակվում էր իբրև սպարտիատների հա-

Այդուամենայնիվ, սպարտիատներն իրենք հողագործությամբ (և ընդհանրապես արտադրական գործունեությամբ) չէին զբաղվում: Հողաբաժինները նրանց տրվում էին հելոտների հետ միասին, որոնք ապրում և աշխատում էին դրանց վրա: Եվ կազմակերպված էին հանգույն հին (նախադորիական) գյուղական համայնքների [Thuc., I, 10, 25]: Ինչպես հատկանշվեց վերը, վերջիններս նույնպես դիտարկվում էին իբրև հանրային սեփականություն: Այս համակարգի նպատակն էր բացառել աղքատությունը. սպարտիատներին էր վերագրվում հետևյալ կենսական իմաստությունը. «Մարդն այն է, ինչ ունի. որևէ աղքատ չի կարող լինել լավ կամ պատվարժան» [Pindar., Isthm., II, 17]:²⁹ Սակայն, ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, այս վիճակը ներհատուկ էր սպարտական հանրության սոսկ վաղ շրջափուլին, կամ էլ արդյունք էր ընկերային տեսականի:

Երկրորդ սկզբունքը վերաբերում էր սպարտիատների կյանքի այն կողմին, որը կառուցված էր նրա անդամների փոխադարձ մրցակցության վրա (ἀγών): Եթե հավասարության սկզբունքը միտված էր հան-

մայնքի սեփականություն, իսկ առանձին սպարտիատը և իր ընտանիքը՝ դրա մեկ հատվածի վարձակալ: Վարձակալության պայմանների անխախտ կատարման պարագային հողակտորը կարող էր մնալ տվյալ ընտանիքի տնօրինության ներքո և անգամ ժառանգվել հետագա սերունդներին: Իսկ դասական շրջանում անգամ ճանաչվեց ընտանիքի իրավունքն այն գրավադնելու: Տե՛ս մանրամասն **Hodkinson**, 2000, 65-73:

²⁹ Այլով բանիվ՝ ընդհանրացնելով ասվածը սպարտիատների համայնքի ընդհանրական սեփականության մասին՝ կարող ենք հատկազօծել դրա երեք հիմնական բաղադրիչները՝ աճող սերունդը, հողը և հելոտները: Դրանց նկատմամբ վերաբերմունքը հիմնավորվում էր հոր և տիրոջ իրավունքով:

րակարգը տանելու դեպի «բարենպատակ անշարժություն», ապա այս մեկը խնդիր ուներ դրան հաղորդելու շարժման ներքո: Լիկուրգոսը «Համոզված էր՝ եթե կարողանա պատանիներին ներգրավել ի մեջ պայքարի, հանուն քաջության, ապա նրանք կհասնեն առնականության [բարձր] մակարդակի» [Xen., Lac. Polit., IV, 2]: Հարկավ, մրցակցությունը չէր ընթանում անձնակենտրոնության ծիրում՝ սեփական ապրումներ, մղումներ, նպատակներ: Առաջին հարթակին էր մրցակիցների պահվածքը՝ ըստ անցյալի հերոսների իդեալական նախատիպերի:³⁰ Այլով բանիվ, առկա էր յուրօրինակ հանրային թատրոն անընդհատ կրկնվող խաղընթացով ու դիմակներով:

Չնայած այս սահմանափակումին՝ մրցակցությունը, այնուամենայնիվ, կատարում էր իր դերը. պատանիների զանգվածից աստիճանաբար առանձնանում էր մի խումբ՝ օժտված քաջությամբ և նախաձեռնությամբ, հնարամտությամբ և որոշումներ կայացնելու վճռականությամբ:³¹ Դրանցից էլ բաղկանում էր սպարտիաոսների վերնախավը, որին բաժին էին ընկ-

³⁰ Այս կապակցությամբ հատկանշելի է սպարտիաոսի գիտակցության և ընկերային պահվածքի հետհայացությունը, որը, սակայն, զարմանալի կերպով համադրվում էր առօրյա գործառնականության հետ: Հուսկ արդարացի է պնդել, որ նա ապրում էր միաժամանակ արժեքանական կայուն անցյալի և հոսուն-անկայուն ներկայի հարթություններում: Ասվածի դրսևորումներից էին սպարտական կյանքի կառուցիկ ծիսականությունը և շարժը (դինամիկա): Տե՛ս Knottenrus, Berry, 2002, 6-21:

³¹ Այլ խոսքով՝ հասարակական ընտրախավի ձևավորման տևական գործընթացի մասին է: Խորքային իմաստով այն ներհակ էր ծագումնաբանական սկզբունքին, որը Սպարտայում առանձնակի հարգանքի առարկա էր: Սակայն չպետք է մոռանալ, որ սպարտիաոսների հանրախումբն ինքն էլ *ծագումնաբանական ընտրախավ* էր հասարակության մեծամասնության նկատմամբ: Եվ խոշոր հաշվով՝ խոսքը նրա վերարտադրության մասին էր: Տե՛ս Forrest, 1968, 54-55:

նում ինչպես փառքն ու ազդեցությունը, այնպես էլ հանրային դիրքն ու իրական հարստությունը:³²

Երրորդ սկզբունքը բխում է նախորդ երկուսից: Սպարտիատի թե՛ ընտանեկան, թե՛ համակեցական կյանքը բացահայտվում էր նախնիների հետ կապի առնչությամբ: Նա ներկայանում էր տոհմիկ հատկագծերով, զի համոզում կար, որ կյանքը տրված է այդ ալգորիթմը պահպանելու, հարստացնելու և շարունակելու աղազով: Անձնական մահը ճանապարհ էր դեպի տոհմիկ հավերժություն. պետք էր ապրել ըստ բարոյական արժեքների, ունենալ զավակներ և հարգել նախնյաց հիշատակը: Միով բանիվ՝ սպարտիատի կյանքը կառուցված էր առավելաբար (իրական կամ մտացածին) հետհայացության վրա:³³ Այս պարագային նույնպես հարկ է ընդգծել, որ ասվածը վերաբերում է կամ վաղ պատմական անցյալին, կամ էլ ուտոպիական հետհայացին: Հանդերձ այդու առկա են բավական թվով վկայություններ, որոնցում սպարտիատի կյանքը ներկայացված է անձնակենտրոն երանգավորմամբ [Xen., Lac. Polit., VII, 15; Arist., Polit., 1270a, 5-7; Plut., Agis,]:³⁴

³² Սկզբնաղբյուրներում հարստությունը (*πλοῦτος*) հաճախ հարադրվում է նրբակենցաղության հետ (*τροφή*): Միայն այս դիտարկման պարագային է, որ նրանց տեքստերը կարող են ստանալ հարիր ու համարժեք մեկնաբանություն: Տե՛ս **Christensen**, 2021, 119-122:

³³ Սպարտիատի մահը նույնացվում էր հոպլիտի մահվան հետ: Այն սովորաբար ներկայացվում էր իբրև *գեղեցիկ մահ* հանուն հայրենյաց (*κάλος θάνατος*), իսկ մահացածը՝ իբրև *այր բարորակ* (*ἀνὴρ ἄγαθός*): Նրա թե՛ կյանքը, թե՛ թաղման ծիսակարգը կազմակերպվում էին համաձայն հոպլիտական կարծրատիպերի և առասպելությունների: Այս առումով ցուցանելի է Հերոդոտի վկայությունը սպարտական արքաների հուղարկավորման մասին [Herod., VI, 58, 6]: Հմմտ. **Toher**, 1999, 113-117:

³⁴ Երևույթը նկատելի է հատկապես դասական շրջանում, երբ ավագանու տարբեր խմբերում սկսում է ձևավորվել անհատակենտ-

Պերիոյկոսների հանրախումբը. *περιοικοι* բառացի՝ շուրջքլոր կամ ծայրամասում բնակվողներ: Բացի Սպարտայից՝ նրանք վկայված էին Արգոլիդայում, Կրետեում, Էլիդայում, Թեսսալիայում, Մեսսենիայում: Եվ ամենուր նրանց կարգավիճակին ներհատուկ էին ինչ-ինչ տարբերիչ երանգներ:³⁵ Նրանց մասին տեղեկությոթը համեմատաբար հստակ է Սպարտայում: Դրանից մեկնարկելով՝ կարող ենք հաստատագրել, որ տեղական պերիոյկոսները հիմնականում նվաճյալ աքայացիներն էին, որոնք, սակայն, չէին իջեցվել ստրուկի մակարդակի: Հետազոտողներից ոմանք կարծում են, որ նրանց շարքերում կային նաև դորիացիներ, որոնք մեղադրվել էին օրինախախտության կամ էլ սրբապղծության մեջ: Կամ էլ նյութական հնարավորություն չունեին տղամարդկանց միությունների մուտքավճարի համար: Միություններ, որոնք համարվում էին ազատ սպարտիատի հասարակական մասնակցության պարտադիր ձևեր:³⁶

Անձնապես ազատ էին, սակայն չունեին քաղաքացիական իրավունքներ: Այսինքն՝ իրավունք չունեին մասնակցելու Սպարտայի պետական և կրոնաժխական կյանքին: Նրանց մի մասն ուներ հողակտոր և զբաղվում էր երկրագործությամբ:³⁷ Ավելի հաճախ

րոնություն՝ միտված առ իշխանություն, ազդեցություն և հարստություն: Այս մասին խոսք կլինի հետագա շարադրանքում:

³⁵ Սկզբնաղբյուրներում հիշատակվում են *քարիզմալիկ* և *հույժարժանի պերիոյկոսներ* (*χαρίσματοι τῶν περιοίκων, καλοὶ καὶ ἀγαθοὶ τῶν περιοίκων*) [Xen., Lac., Polit., V, 3, 9]: Հմմտ. **Futter**, 2012, 41-42:

³⁶ Այդ մասին թույլ հայումով վկայում են՝ Xen., Hell., III, 3, 6; Arist., Pol., 1271a, 26-30; Հմմտ., **Hawkins**, 2011, 401-402: Սպարտական տղամարդկանց միությունների մասին տե՛ս հետագա շարադրանքում:

³⁷ Հետազոտողները սովորաբար չափազանցված են համարում սկզբնաղբյուրների տեղեկություններն առ այն, որ նրանց Լիկուրգոսը

ապրում էին իրենց քաղաքներում՝ ինքնավար, բայց ենթակա Սպարտային:³⁸ Զբաղվում էին արհեստներով, հատկապես մետաղագործությամբ՝ կոչված նախ և առաջ բանակը զենքով ու զրահով ապահովելու:³⁹ Զբաղվում էին նաև առևտրով, որը Սպարտայում չափազանց թույլ էր զարգացած. հապացույց սովորաբար մատնացույց են անում այն փաստը, որ Լիկուրգոսը շրջանառությունից հանել էր ոսկին և արծաթը՝ թողնելով միայն անորակ երկաթից պատրաստված անարժեք ու չափերով մեծ դրամական միավորները: Նա իջեցրել էր շուկան բարիքների պարզ փոխանակության մակարդակի (ἀλλαγή)՝ հարստության տենչը լռեցնելու նպատակով: Հետազոտողներից ոմանք համոզված են, որ պերիոյկոսներն ունեին իրենց ստրուկները՝ տնտեսությունը և տունը վարելու համար:⁴⁰

Սկզբնաղբյուրներում պերիոյկոսները երբեմն որակվում են իբրև *սակալունակներ* (ὁπομείονες) [Plut., Agis, XXXII, 3-6]:⁴¹ Նրանց քանակությունը զգալի էր հատկապես Մեսսենիայում: Որոշ հետազոտողներ կարծում են, որ նրանք ունեին տեղական ինքնավարություն և ապրում էին քաղաքային կենտրոններում՝ ըստ սեփա-

տրամադրել էր 30 000 (հարկավ, ոչ մեծ) հողակտոր [Plut., Lyc., VIII, 3; հմմտ. Isocr., Panath., XII, 179]: Հմմտ. **Figueira**, 1986, 167:

³⁸ Տես Herod., VII, 234, Thuc., V, 54, 1, Xen., Lac Polit., VI, 5, 21: Հմմտ. **Cartledge**, 2002, 67:

³⁹ Տես **Larsen**, 1992, 801: Հետազոտողները հատկանշում են պերիոյկոսների երեք քաղաք՝ Մալեան, Սկիրտիսը և Կարդամիլը, որոնք հայտնի էին իբրև մետաղամշակության և զինագործության կարևոր կենտրոններ: Տես **Cartledge**, 2002, 158:

⁴⁰ Սեփական հեղուներ ունենալու իրավունքը բխում էր պերիոյկոսների ընդհանուր ընկերային կարգավիճակից՝ նյութական, իրավական, քաղաքական, ռազմական [Plato, Alc., 122d]: Տես **Cartledge**, 2002, 153-156, **Silva**, 2015, 54-58:

⁴¹ Տես **Hawkins**, 2011, 402:

կան օրենքների:⁴² Վճարում էին սահմանված պետական հարկերը: Ենթադրելի է, որ նրանց հանրախումբը, թեպետ ներքին տարասեռություններին, նույնպես կառուցված էր ըստ հավասարարական սկզբունքի: Սկզբնաղբյուրները տեղեկույթ են պարունակում, որ նրանք ծառայել են սպարտական բանակում: Եվ անգամ՝ հոպլիտի կարգավիճակով [Thuc., VIII, 6, 2, Plut., Agis, XXXII, 3]: Հավանաբար, խոսքն արտակարգ իրավիճակների մասին է:⁴³

Կարծում ենք՝ այս դասին պետք է վերագրել նաև սկզբնաղբյուրներում հիշատակվող «նոր իրավասուններ» բանաձևը (νεοδαμουνες) [Xen., Hell., III, 3, 15]: Նրանց մասին այլ վկայություններ չեն պահպանվել. արդյո՞ք խոսքը սպարտիկացիների հանրադասին անդամակցության մասին է, թե՞ միջակա ինչ-որ կարգավիճակի:

Աստ կանգ առնենք. պերիոկոսների մասին, ցավոք, էական այլ մանրամասներ չունենք:

Հելոյրների հանրախումբը, εἰλωτες. ստուգաբանության կապակցությամբ չկա ընդհանուր կարծիք: Հետազոտողներից ոմանք հակված են մտածելու՝ դա միկենյան դարաշրջանի էթնիկ խումբ էր, որ վերած-

⁴² Այս կապակցությամբ առկա է երկու բևեռային մոտեցում: Հետազոտողներից ոմանք կարծում են, որ ինքնավարությունը լիարժեք էր, և պետության ու պերիոկոսների համայնքների միջև առկա էին դաշնային հարաբերություններ: Տե՛ս Larsen, 1992, 801, Ehrenberg, 1960, 38-42, Shibley, 1993, 224-225: Մյուս խումբը (հատկապես հին դպրոցի ներկայացուցիչները) հակված են մտածելու, որ ինքնավարությունը սահմանափակ էր, և պետությունը պարբերաբար տեղական համայնքներ էր ուղարկում իր կառավարիչներին: Տե՛ս Gilbert, 1895, 36: Կարծում ենք՝ հավանական է, որ հարաբերություններն ունեցել են *ի տեղի* (ad hoc) երանգավորում, և շատ բան կախված էր կոնկրետ իրավիճակից ու հարաբերություններից:

⁴³ Տե՛ս Ridley, 1974, 288:

վել էր ստորակա հանրախմբի՝ ի հետևանս դորիական նվաճման:⁴⁴ Այդուհանդերձ, հելոտները վկայված են հունական աշխարհի տարբեր ծագերում՝ սկսյալ պոնտական գաղութներից մինչև Սիկիլիա: Եվ հարկավ, նրանց ընկերային կարգավիճակը պայմանավորված էր տարբեր պատմական իրողություններով:⁴⁵

Սպարտայի ազգաբնակչության մեծամասնությունն էին. եթե համաձայնենք Հերոդոտին՝ յոթ անգամ ավելի էին, քան ազատները [Herod., IX, 10, 29]: Հարկավ, չափազանցություն է, բայց արտահայտում է մի քանակային հարաբերություն, որտեղ սպարտիատները ակնհայտ փոքրամասնություն էին: Ավելի հստակ է հանրախմբի իրավաքաղաքական և տնտեսական կարգավիճակը: Սկզբնաղբյուրներից մեկը տվել է դրա ընդհանրական, բայց բավական տարտամ բանաձևը. «[հանրախումբ] ազատների և ստրուկների միջև» [Pollux, 3, 83]:⁴⁶ Խորքային առումով՝ աստ շեշտադրված է լոկ այն, որ հելոտներն էականորեն տարբերվում էին հունական աշխարհի մյուս ստրուկներից:

⁴⁴ Այս լույսով հավանական է համարվում *հելոտ* եզրույթի կապը *ἀλίσκομαι* բայաձևի հետ – «բռնվել–կալվել, ձերբակալվել» նշանակությամբ: Տե՛ս **Beekes and Beek.**, 2010, 69-70.

⁴⁵ Հելոտների իրավական և տնտեսական, կրոնական և արժեհամակարգային տարբերությունները միշտ չէ, որ լուսաբանվում են անտիկ սկզբնաղբյուրներում: Հիմնախնդիրն ուսումնասիրելու համար հետազոտողները համաբերում են տարաբնույթ տեքստեր՝ հնագիտական, պատմագիտական, կրոնագիտական, իմաստասիրական: Փորձ է կատարվում դրանց տվյալները մեկնաբանելու արդի ընկերաբանության, իրավագիտության, ազգաբանության լույսով: Տե՛ս **Luraghi**, 2009, 261-283; հմմտ. **Vlassopoulos**, 2011, 115-124:

⁴⁶ Ք.հ. 2-րդ դարի այս նշանավոր ճարտասանը Եգիպտոսի Նավկրատիս քաղաքից էր և իր այս բանաձևում, հավանաբար, մեկնարկում էր տեղական բնօրինակից: Հայտնի է՝ այդպիսին էին նաև հողի եգիպտական վարձակալները (պետական գյուղացիներ), որոնք ապրում էին համայնքներով և ունեին կյանքի և գույքի երաշխիքներ: Տե՛ս **Rowlandson**, 1999, 141-147:

Մեկ այլ մոտեցմամբ, ընդհակառակը, հատկանշվում է հեղոտների նվաստ կարգավիճակը և նրանց նկատմամբ սպարտիաոսների թշնամական վերաբերմունքը. «Հիրավի, վախը [հեղոտների] քանակի և համառության նկատմամբ ստիպեց սպարտիաոսներին դիմելու վճռական քայլերի [...]» [Thuc., IV, 80, 3]: Հիմքը, ամենայն հավանականությամբ, տարածված ասույթն էր. «Սպարտայում ազատն ավելի ազատ է, իսկ ստրուկը՝ ավելի ստրուկ» [Plut., Lyc., 28, 5]: Սակայն առկա էր նաև երրորդ մոտեցումը, որի հանաձայն՝ նման վերաբերմունքը ներհատուկ չէր *Ռեթրային*, այլ արդյունք է հետագա ճգնաժամային իրավիճակների: Ասվածը «փաստարկվում էր» այն համոզմունքով, թե թշնամանքը անհարիր էր Լիկուրգոսի մտքին և գործելակերպին [Plut., Lyc., 28, 6]:⁴⁷

Հեղոտների կապակցությամբ վերհիշենք. բարեփոխիչը «[...] համոզեց համաքաղաքացիներին միավորելու իրենց բոլոր հողաբաժինները ու վերաբաժանելու և ապրել միմյանց հետ ըստ հավասարության և նույնակերպության սկզբունքի» [Plut., Lyc., 8, 2]: Իբրև կանոն՝ հողաբաժիններն անբաժան էին դրանցում բնակվող հեղոտներից: Նրանք ապրում էին իրենց ընտանիքներով, որոնք նույնպես համարվում էին համապետական ունեցվածք [Strabo, VIII, 5, 4]: Այլորեն՝ նրանց և սպարտիաոսների հարաբերությունները միջնորդված էին պետական-իրավական կարգավորմամբ:⁴⁸

⁴⁷ Խոսքը Լիկուրգոսի անձի և գործի առասպելականացման մասին է, որ ներհատուկ էր հետագա դարաշրջանում: Forrest, 1963, 174-179: Հարդյունս այդ հոլովոյթի՝ սպարտական ավագանին աշխատում էր գաղափական հիմնավորում ձևավորել իր իշխանության անխնդրարկելության համար: Forrest, 1967, 12-14:

⁴⁸ Որոշ հետազոտողներ մեկնարկում են այն ըմբռնումից, թե հեղոտների հանրադասի վերաբերմամբ գործում էր իրավական

Ինչպես հատկազօծել ենք՝ հելոտներն ապրում էին իրենց գյուղերով, և յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր հոգ տանել իր հողակտորի նկատմամբ և վճարել հարկեր (*ἀποφορά*): Պետական հսկողության ներքո նրանք սերնդեսերունդ անում էին այդ գործը:⁴⁹ Եվ ամենայն հավանականությամբ, հենց դա նկատի ուներ Հերոդոտը՝ նշելով. «Սպարտացիները Հունաստանի լավագույն երկրագործներն են» [Herod., VI, 58; հմմտ. Xen., Oec., II, 17; Strabo, V, 85, 3]:

Սահմանված հարկաքանակից առավել սպարտիատը ոչինչ պահանջել չէր կարող. «Յուրաքանչյուր հողաբաժին այն չափի էր, որպեսզի ապահովեր տարեկան 70 մեդիմնոս գարի տղամարդու և 12 մեդիմնոս կնոջ համար: Նաև՝ համապատասխան քանակի գինի և ձիթայուղ: Լիկուորգուսը մտածում էր, որ այս քանակությունը բավարար է մարմնի աշխույժ և առողջ կյանքի համար: Բայց ոչինչ դրանից առավել» [Plut., Lyc., 8, 4]: Հարկերին հարկ է հավելել նաև այն ծառայությունները, որոնք հելոտները պարտավոր էին մատուցելու սպարտիատին և նրա ընտանիքին՝ առօրեական խնդիրները հոգալու համար. տան կարգուկանոնից, կերակրից, հագուստից մինչև հոգսը գավակների նկատմամբ:⁵⁰

կարգաբերումների մի համալիր, որը վերաբերում էր նրա կյանքի տարբեր կողմերին՝ ընկերային հարաբերություններ և պահվածքի նորմեր, հարկեր և ծառայություններ, ընտանիք և բարոյականություն: Այս և այլ հարցերի առնչությամբ տեսն **Зайков**, 2009, 5-13:

⁴⁹ Հելոտների իրավական կարգավիճակի և պարտականությունների մասին տես **Gilbert**, 1895, 30-34; **Печатнова**, 1997, 11-13: Դասական դարաշրջանում հելոտական *հատուն այրերի* ժողովրդագրական վիճակը տատանվում էր 170 000-ից մինչև 240 000-ը: Այս թվին հարկ է գումարել նրանց ընտանիքի անդամներին: Տես **Figueira**, 2003, 328-335:

⁵⁰ Տես **Finley**, 1992, 495-496: Կարծում ենք՝ աստ կիրարկելի է

Հանդերձ այսու, սպարտիատն իրավունք չուներ բաժանելու հելոտի ընտանիքի անդամներին կամ վաճառելու նրանց առանձին-առանձին: Դա հնարավոր էր միայն մի դեպքում՝ եթե առկա էր լուրջ օրինախախտում:⁵¹ Եվ գործարքն էլ իրագործվում էր պետության անունից: Մնացած բոլոր դեպքերում հելոտական ընտանիքը միախումբ էր իր հոր գլխավորությամբ: Ցավոք, չունենք տեղեկույթ հելոտների կյանքի և սովորույթների, հավատալիքների և ծեսերի վերաբերյալ: Հետազոտողները այս դիտանկյունները սովորաբար շրջանցում են: Եվ ակամա տպավորություն է ձևավորվում, թե դրանք կրկնում էին սպարտիատների կյանքի այս կողմերը, ինչը, կարծում ենք, թյուրըմբռնում է: Առավել հավանական է մտածել, որ նրանք պահպանել էին նախադորիական համակեցության և հոգևոր կյանքի ինչ-ինչ իրողություններ:⁵² Հավելենք, որ սկզբնաղբյուրները հիշատակում են նաև *սյորրականների* և *դոդագոդների* մասին, որոնք, թվում է, հելոտի հոմանիշներն էին:

Արդ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել մի երևույթի վրա, որի լույսով բացահայտվում է սպարտիատների և հելոտների հարաբերությունների տրագիզմը: Խոսքը ամեն տարի կրկնվող մի ծիսական գործողության մասին է, որը սկզբնաղբյուրները բա-

սյորրական հասարակություն եզրույթը, որը Աթենքի սկատմամբ միանգամայն անհարիր է: Տե՛ս Finley, 1980, 67; Figueira, 2018, 566-574:

⁵¹ Այս պարագային նրանց սկատմամբ կիրարկվում էր *օյտարնե-րի արստունան* իրավունքը (ξενλασία), զի օրինախախտները վաճառվում էին արտերկիր [Aristophanes, Av., 1013, Plato, Leg., 950b, 5-8; Plato, Prot., 342b-d; Strabo, XVII, 1, 19]: Տե՛ս Зайков, 1999, 6-15:

⁵² Տե՛ս Cartledge, 1993, 140-141:

նաձևում են իբրև կրիպտիա (κρυπτεία) – բառացի՝ «գաղտնի առաջադրանք»:⁵³

Աշնանը՝ հոկտեմբերին, ձևավորվում էին ընտիր երիտասարդ զինվորներից բաղկացած ջոկատներ և ուղարկվում պետության տարբեր շրջաններ: Համաձայն Պղատոնի՝ կրիպտիաներն ընթանում էին դաժան պայմաններում. «[...] մարդիկ ձմռանը քայլում էին բոկոտն, քնում առանց ծածկոցի, ապրում առանց ծառայի օժանդակության՝ թափառելով ողջ երկրով մեկ զօր ու գիշեր»: [Plato, Lg., I, 633c]: Պլուտարքոսն ավելի է հստակեցնում պատկերը. «Օրվա ընթացքին նրանք թաքնվում էին ճանապարհներից հեռու աննշան վայրերում և մնում անշարժ, բայց գիշերը դուրս էին գալիս [...] և սպանում հանդիպած հելոտի: Հաճախ նույն բանն անում էին դաշտերում՝ շարքից հանելով ուժեղ և աչքի ընկնող ստրուկներին» [Plut., Lyc., XXVIII, 2-3]:⁵⁴

Հետազոտողները կրիպտիաները համարում են արայացիների և դորիացիների պատմական բախ-

⁵³ Կրիպտիաները վաղուց է, ինչ գտնվում են հետազոտողների հայացքի ներքո: Ընդամիս, փորձեր են կատարվել դրանք դիտարկելու ազգագրական նյութի հիմամբ՝ զուգահեռներ ուրվագծելով ափրիկյան ցեղերի կենցաղում: Այս մասին տես **Jeanmaira**, 1913, 137-146: Հունական միջավայրում այն կապվում էր *սև որսորդի* ծիսական կերպարի հետ, որը պատանիների գաղտնածեսի մշտակա մասնակիցն էր: Տես **Vidal-Naquet**, 1989, 399-401:

⁵⁴ Հետազոտողները հակված են մտածելու, որ հելոտների նկատմամբ վերաբերմունքը նախապես այս աստիճան թշնամական չէր: Այդպիսին այն դարձավ Առաջին մեսսենական պատերազմից հետո, երբ տեղաբնակները համարյա առանց բացառության վերածվեցին հելոտների: Տես **Hall**, 2003, 171-173: Հայտնի ստրուկների քանակությունը սպարտական պետությունում կտրուկ աճեց՝ գերազանցելով ազատների քանակը մի քանի անգամ: «Իշխանության հաշվեկշիռը» պահպանելու համար սպարտիատներն անցան բռնաճնշումների համակարգված քաղաքականության: Եվ խորքային առումով նրանց պետությունը վերածվեց *ռազմարադարական իդրորության*:

ման ծիսական արձագանքը:⁵⁵ Ամեն տարի կրկնվելով՝ դրանք վերածվել էին «գաղտնի ոստիկանության գործառույթի»՝ նպատակավ ոչնչացնելու ռեժիմին անհաճո մարդկանց: Ուշադրություն է հրավիրվում նաև այն հանգամանքին, որ կրիպտիաները հանձնարարված էին պատանիներին, զի այր-սպարտիատին «հարիր չէր» գիշերը թիկունքից հարվածել ու սպանել անզեն հակառակորդին:⁵⁶

Պաշտոնական տեսակետը վկայում էր, թե հելոտներից շատերը նույնպես ներգրավված էին այս համապետական ցուցքի մեջ, և դրանից հետո կյանքը կրկին վերադառնում էր «իր բնականոն ընթացքին»: Հարկավ, իրական կյանքը հեռու էր նման քարոզչությունից:⁵⁷

Այս մասին են հելոտների ապստամբությունները՝ վկայված մի շարք սկզբնաղբյուրներում՝ Թուկիդիդես, Պլուտարքոս, Պավսանիա: Կենտրոնը Մեսսենիան էր: Ժամանակակիցներն առանձնացնում էին երկուսը՝ հատկանշելով դրանց թափը, ծավալը և սպառնալիքը սպարտական պետության համար: Առաջինը տեղի է ունեցել Ք.ա. 8-7-րդ դարերում՝ հանգեցնելով

⁵⁵ Այս մոտեցումը գալիս է Արիստոտելից, դրա մասին հաղորդում է նաև Պլուտարքոսը [Plut., Lyc., 28, 3]: Արիստոտելը հակված էր մտածելու, որ կրիպտիաները սկիզբ են առել հելոտների երկրորդ ապստամբությունից ի վեր: Հմմտ. Woodward, Forrest, 1992, 574, Hodkinson, 1997, 87-88:

⁵⁶ Տե՛ս Bury, 1900, 132:

⁵⁷ Կրիպտիաների նկատմամբ արդի հետազոտություններում առկա է երկու մոտեցում: Մի կողմից՝ խնդիրը լուսաբանվում է զուտ ռազմական դիտանկյունից. մասնակիցները (պատանի հերոսներ) համադրվում են կանոնավոր բանակի հույլիտներին: Տե՛ս Cartledge, 1977, 11-27: Մյուս կողմից՝ խնդիրը ներկայացվում է իբրև սպարտիատ պատանիների նվիրագործության ծես: Jeanmaire, 1913, 121-129, Couvenhes, 2014, 48-53:

երկրամասի սպարտական բռնազավթմանը և բնակչության մեծ մասի ստրկացմանը: Երկրորդը՝ Ք.ա. 465–462-ականներին:⁵⁸ Բոլոր դեպքերում էլ սպարտիատներին հաջողվել է լռեցնել ընդդիմությանը՝ գործելով մերթ բռնի ուժով, մերթ քարոզչությամբ, մերթ կեղծ խոստումներով [Thuc., I, 101, 2; Plut., Cim., XVI, 4-17, 2; Paus., I, 29, 8]:⁵⁹

Համաձայն *Ռեթրայի* տեղեկության՝ այսպիսին էր սպարտական հանրության ընկերային կառույցը. երեք ներփակ ընկերային հարթակներ, որոնք ներքին կազմակերպմամբ հավասարաբարական էին (կամ էլ ձգտում էին դրան): Սակայն ներառված էին մեկ մեզահամակարգի մեջ, որտեղ այս հարթակների հարաբերությունները շեշտված աստիճանակարգային բնույթ ունեին: Եվ անցումը մեկից մյուսին համարյա բացառված էր: Տարօրինակ չէ, որ հետազոտողները երբեմն դրանք զուգահեռում են հին հնդկական վարնաներին (կաստաներ): Հավելենք ասվածին, որ

⁵⁸ Տե՛ս **Woodward, Hooper**, 1992, 675-676: Վերջին ապստամբության առիթն ավերիչ երկրաշարժն էր, որը պատուհասեց Սպարտան Ք.ա. 465 թվականին: Նախ անհնազանդության նախապատրաստվեցին Լակոնիայի հելոտները, իսկ հետո գենքի դիմեցին մեսսենացիները: Սակայն վերջիններս չկարողացան իրենց կողմը գրավել լակոնական հելոտներին, որից էլ օգտվեցին սպարտիատները: Diod. Sic., XI, 69, 4; Plut., Cim., 16, 4-7:

⁵⁹ Սկզբնաղբյուրները և շատ հետազոտողներ մեսսենական այս դիմադրությունն անվանում են պատերազմ: Խոսելով վերջինիս մասին՝ Դիոդորոս Սիկիլիացին վկայում է, որ աթենացի Կիմոնի միջնորդությամբ կողմերի միջև հաստատվեց զինադադար, հարդյունս որի մեսսենացիների մի մասն իրավունք ստացավ հեռանալու հայրենիքից և բնակություն հաստատելու Լոկրիդայում: Աստ նրանք պահպանեցին իրենց ազգային ինքնությունը [Diod. Sic., 64,1]: Առկա սուղ տեղեկության համադրմամբ՝ հետազոտողները փորձում են բանաձևել մեսսենական ինքնության հիմնատարրերը և դրանց կերպափոխումները հընթացս պատմական ժամանակի: Տե՛ս **Figueira**, 1999, 22-26:

սպարտական մեգահամակարգի կայունության հիմնական երաշխավորը պետական համալիրն էր:

Մինչդեռ հնդկական տարբերակում առաջնային դերակալությունը պայրկանում էր կրոնական համալիրին: Համաձայն քրահմանիզմի՝ բոլոր կաստաները (քրահմանների քրմեր, քշապրիններ՝ զինախոններ, վայշիններ՝ ազատ արտադրողներ, շուդրաններ՝ սպրուկներ) արտածվում էին տիեզերասարեղծ գերագույն էակի՝ Պուրուշայի մարմնի տարբեր հատվածներից՝ գլխից, ձեռքերից, կոնքերից և ոտքերից:⁶⁰

2. ՌԵԹՐԱՅԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՆՔԸ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2.1 Ընդհանրական պայրկերը

Տակավին Արիստոտելը տիպաբանական վերլուծության է ենթարկել Սպարտայի պետական կառույցը և ներկայացրել դրա հիմնական առանձնահատկությունները: Պատկերի հարիր գնահատականը հնարավոր է նրա քաղաքական իմաստասիրության ընդլայն հենքի վրա միայն: Աստ իմաստասերը մեկնարկում է *սահմանադրություն* (πολιτεία) հղացքից՝ բանաձևելով այն իբրև հանրույթի կազմակերպման ձև. «[...] բաղկացած այն անձանցից, ովքեր բնակվում են տվյալ քաղաք-պետության (պոլիս) տարած-

⁶⁰ Վարնա բառացի նշանակում էր գույն, որ ամրագրված էր կաստաներից յուրաքանչյուրին. քրմերին՝ սպիտակը, զինավորներին՝ կարմիրը, արտադրողներին՝ դեղինը, սպրուկներին՝ կապույտը կամ սևը: Տե՛ս Müller, 1859, 570-571: Հինդուիզմի և բուդդայականության համակարգերում դրանք ստացան կրոնամիստիկական հիմնավորում: Հիմնախնդրի ընկերաբանական դիտանկյան համակողմանի վերլուծությունը պատկանում է Մ. Վեբերին, որի ազդեցությունն արդի հետազոտությունների վրա աներկբա է: Տե՛ս Weber, 1958, 9-17; հմմտ. Sahu, 2001, 3-18:

քում» [Arist., Pol., 1274b, 36-38]:⁶¹ Մեկ այլ տեղ այդ միավորման նպատակը ներկայացվում է իբրև նրանց *բարեկեցությունն ու ծաղկումը* (εὐτοχία) [Arist., 1278b, 8-10]: Խոսքը իդեալական վիճակի մասին է, զի կառավարման պարզ ձևերը (πολιτεία ὅρθαι) հրնթացս ժամանակի սովորաբար վերասերվում են իրենց հակաձևերի՝ միապետությունը՝ բռնատիրության, ազնվապետությունը՝ խմբիշխանության, իսկ չափավոր հանրապետությունը (պոլիտիա)՝ ծայրահեղ ժողովրդավարության:⁶² Եվ բարեկեցությունը սպառվում է՝ տեղը զիջելով անվստահության, զի կառավարողները և կառավարվողներն այլևս *չունեն ընդհանուր որևէ բան* (μεδὲν κοινόν) [Arist., NE, 1161a, 33-34; Polit., 1279b, 1-15]:

Միայն խառը կառավարման ձևը (πολιτεία μικτή) ներուժ ունի դանդաղեցնելու բնականոն վերասերման հոլովությոթ: Համաձայն Արիստոտելի՝ վերջինս ի գործու է համաբերելու միապետության, ազնվապետության և պոլիտիայի լավագույն հատկագծերը [Arist., Polit., 1265b-1266a; 1284a, 4-11, 25-35; 1288a, 15-30]:⁶³

⁶¹ «Քաղաքացի», «քաղաքացիական համայնք», «սահմանադրություն» հղացքները արիստոտելյան ընկերային իմաստասիրության կարևոր բաղադրիչներն են, որոնց միջոցով նա բացահայտում է մարդկանց ընկերային կյանքի շարժառիթը, նպատակը և տարաստությունները: Տե՛ս **Barker.**, 1906, 301-307:

⁶² Արիստոտելը հիմնավորում է դա՝ մեկնարկելով, այսպես կոչված, «բնական տեսությունից», համաձայն որի՝ յուրաքանչյուր կենդանի էակի կենսընթացը հոսում է բոլորակաձև (ἀνκύκλος) ուղիով՝ ծագում, զարգացում, ծաղկում, անկում և մահ: Իմաստասերը պետական կառավարման ձևերը դիտարկում է այս նույն հոլովությամբ [Arist., Eth. Nic., 1160b, 10-22; Pol., 1294b, 10-18; 1295a-1297a]: Ինչ վերաբերում է պոլիտիային, ապա դրանում նա տեսնում է այն հանրակարգը, որն առավել համապատասխանում է քաղաք-պետության գաղափարին: **Cherry**, 2009, 1406-1421; **Balot**, 2015, 103-122:

⁶³ Խառը կառավարման համակարգերի եռատակտ կառույցը,

Համաձայն իմաստասերի՝ ասվածը վերաբերում է Սպարտային, որի պետական կառույցը նույնպես եռակազմ էր, զի աստ դյուրավ կարելի էր առանձնացնել կառավարման պարզ ձևերի հատկագծերը: Դրանք համաբերված էին նախ և առաջ ապահովելու սպարտիատների բացարձակ գերակայությունը հանրային կյանքի այլազան տիրույթներում՝ ապահովելով միաժամանակ քարոզչական պատրանք հանուր ապահովության և բարօրության մասին:

Մի հատկագիծ ևս. իմաստասերը տպավորված էր սպարտական կառավարման համակարգի կայունությամբ. հրնթացս հարյուրամյակների այն քիչ կերպափոխությունների էր ենթարկվել: Եվ բացատրում էր դա սպարտական ընկերային և պետական կյանքի ինքնաբավությամբ (*αὐτάρκεια*):⁶⁴ Հիրավի, չնայած անձնակենտրոնության առանձին դրսևորումների՝ սպարտացիների հոգեբանությունը և հասարակական պահվածքը համաբերված էին ըստ պարզ ինքնավերարտադրության սկզբունքի: Նման արդյունքը, կրկնենք մեկ անգամ էլ, պատմական ավանդությունը կապում էր սպարտական կառավարման համակարգի հետ: Մինչդեռ արդի հետազոտական միտքը, կրկնենք մեկ անգամ էլ, սպարտական ընկերային-կառավարական համակարգում տեսանում է հույժ

թերևս, միակ տարբերակը չէր: Օրինակ՝ Պղատոնը (օտարերկրյա հյուրի բերանով) նախապատվությունը տալիս էր երկտակտ կառույցին՝ շեշտելով, որ հառաջացած կառավարման համակարգերը սովորաբար միափյուսում են *մենիշխանության և ժողովրդավարության հիմնադրարդերը* [Plato, Leg., 693d, 12-15]: Մեկ այլ վկայությամբ, սակայն, իմաստասերը չի բացառում դիտարկվող կառույցում նաև ազնվապետության կարևորությունը [Plato, Leg., 712a-e], տես **Baker**, 1918, 243-260; **Roochnik**, 2009, 156-163:

⁶⁴ Տես **Futter**, 2012, 42-44:

տարասեռ սկզբունքների և հաստատությունների համաբերում՝ ամբողջատիրություն, խմբիշխանություն, կաստայականություն և ժողովրդավարություն: Իշխանական հրամայականի ներքո դրանք պատմության բավական երկար ժամանակահատվածում փոխլրացնում էին միմյանց:⁶⁵

2.2 Արքայական իշխանությունը

Սպարտայում այն ներկայացնում էին երկու արխիեպտոսները (ἀρχηγέται, βασιλεις, βαγοί): Արդեն անդրադարձել ենք՝ սերում էին սպարտիատների ամենափառապանծ երկու տոհմերից՝ Ագեիդներից և Էվրիպոնտիդներից: Պատմական ավանդությունը գտնում էր, որ նրանց նախահայր Հերակլեսն էր: Նրանց միջև մրցակցությունն անվերջ էր՝ քաջության և փառքի, արդարության և առաքինության, հասարակական ազդեցության և հեղինակության համար: Այդուհանդերձ, հանրույթի սևեռուն հսկողության ներքո նրանց մրցակցությունը չէր հատում թույլատրելի սահմանը: Եվ միտված էր առ հանուր բարիքը: Ասվածին հավելենք, որ երկու տոհմերի միջև արգելված էին ամուսնությունները, հավանաբար, որպեսզի նրանք չմիավորվեին և չվտանգեին ավանդական հանրակարգը:

Իշխանությունը ժառանգական էր հորից այն որդուն, որն առաջինն էր ծնվել նրա արքա օծվելուց ի վեր [Herod., VII, 3, 5]: Ինչպես արդեն հատկանշել ենք, եթե վերջինս մանկահասակ էր, ապա մահացած արքայի ամենամերձ ազգականը դառնում էր

⁶⁵ Այս և այլ որակի սպարտական «անոմալիաների» մասին տես Hodkinson, 2018, 44-50:

նրա խնամակալը (πρόδικος): Ասվածին հավելենք, որ, նման բոլոր սպարտիատներին, արխեգետոսները պետք է գերծ լինեին մարմնական արատից, զի հանուր ընկալմամբ՝ մարմինը և հոգին անքակտելի միասնության էին կազմում: Եվ կրկին՝ նման մնացած սպարտիատներին, հուտեստ նրանց նույնպես տրամադրվում էր հողակտոր հեղոտներով հանդերձ: Կարելի է թերևս ենթադրել, որ դրանք ավելի պտղաբեր էին, մշակված և մեծ: Առկա է տեղեկույթ, որ նրանք բաժին ունեին երկրի «բարիքի հասույթից»: Նաև՝ ծիսական զոհաբերություններից ու խնջույքներից, որոնք բավական հաճախ էին ու առատ [Herod., VI, 57]:⁶⁶

Արխեգետոսների լիազորությունների մեջ հատկազօծվում էր երեք ուրույն տիրույթ՝ քրմական, ռազմական, իրավավարչական.

ա. Արքաների քրմական լիազորությունները. Հերոդոտի վկայությամբ՝ արքաները Ջևս աստծո երկու դիմավորումներին (Ուրանիա և Լակեդեմոն) նվիրված տաճարների քրմերն էին [Herod., VI, 56]: Եվ ղեկավարում էին սպարտացիների բոլոր կրոնական հանդիսությունները: Ասվածի իմաստը համարժեք գնահատելու համար հարկ է հիշել հետևյալ իրողությունը. սպարտիատների կյանքի բոլոր կողմերը՝ ընտանեկան կյանք և ընկերային հարաբերություններ, բանակ և պետություն, իրավունք և արժեհամակարգ, ենթակա էին կրոնաժիսական խիստ կարգավորման: Եվ դրանք կարգաբերվում էին քուրմ-արքաների ձեռամբ:

բ. Արքաների ռազմական լիազորությունները. արքաները համարվում էին սպարտական բանակի հրա-

⁶⁶ Այլով բանիվ՝ չսայած իրենց առանձնահատուկ հանրային դիրքին՝ արքաները համարվում էին սպարտական քաղաքացիական հանրույթի (հանուր մարմին) անկապտելի մասը: Տե՛ս Munson, 1993, 45:

մանատարներ (στρατηγοί): Դերակատարությանը համապատասխանելու համար մանկութ անցնում էին դաժան վարժանքների միջով, ինչպես մարմնական, այնպես էլ մարտավարական ու ռազմավարական: Պատերազմի ժամին արքաներից մեկը մնում էր տանը, մյուսը վարում էր բանակը: Հայսմ հիշատակելի է Քսենոփոնի բանաձևը. «[արքաները] վարում էին բանակը և ողջ պետությունը» [Xen., Hell., IV, 7, 2]: Լակեդեմոնի սահմանը հատելիս արքայի լիազորություններն անհամեմատ ընդլայնվում էին. նրան մշտապես ուղեկցում էին 100–300 ընտիր հեծյալ զինվոր՝ պատրաստ ի գործ դնելու նրա ցանկացած հրաման [Arist., Polit., 1285, 5-7; հմմտ. Xen. Lac.. Polit., XIII, 15;]: Աստ արքան մարմնավորում էր դարերով մշակված հերոսի կերպարը՝ պատրաստ անձնագոհության հանուն փառքի և մեծահոգության (δόξα καὶ μεγαλοψυχία): Իսկ դրանք, համաձայն բանաստեղծ Տիրտեոսի, միտված էին առ հանուր բարիքը.

*«Զի պարվաբեր է լավ մարդու համար
ընկնել ու մեռնել առաջնագծում՝
հանուն հայրենեաց»:*

Tyrteus, Fr. X, 1-3⁶⁷

Մահն ընկալվում էր իբրև նախադուռ դեպի ճշմարիտ կեցություն: Երկրային կյանքում դրա գետեղարանը արքայատոհմերի գերեզմանոցներն էին՝ տե-

⁶⁷ Զուգահեռը հոմերոսյան մահկանացու հերոսների հետ ակնբայն է: Ասվածը վերաբերում է նախ և առաջ արքաների գործունեության բարոյական շարժառիթներին: Սակայն նկատելի է նաև տարբերությունը. հոմերոսյան հերոսները անձնակենտրոն են, նրանց կապը աստվածների և ճակատագրի հետ է: Ի հետևանս՝ նրանք մենամարտում են միայն, մինչդեռ Տիրտեոսի արքա-հերոսները ռազմաշարքում են իբրև հոպլիտ: Տե՛ս Schein, 1984, 67-72:

ղաղրված Սպարտայի երկու տարբեր տեղանքում [Paus., III, 12, 8, 14, 2]: Երկնային կյանքում՝ հավերժական հիշողությունը՝ ձերբազատյալ առօրեականության բեռից: Հանդերձ այսու արքան իրավունք չունեի ընդհատելու պատերազմը, կնքելու զինադադար և խաղաղության պայմանագիր՝ առանց խորհրդակցելու իշխանական կառույցների հետ [Xen., Hell., V, 3, 24]: Եվ խոսքն առաջին հերթին Ծերակույտի մասին էր:

գ. *Արքաների իրավավարչական լիազորությունները.* նրանք վարում էին իրենց դիմած քաղաքացիների իրավական գործերը [Thuc., VI, 60, 20]:⁶⁸ Առաջնորդվում էին դարեր ի վեր հաստատված իրավաստվորության խորմերով (θέσμοι): Սկզբնաղբյուրներում գործունեության այս դիտանկյունը թույլ երանգով է ներկայացված. վկայված են դրա մի քանի կոնկրետ դրսևորումներ միայն: Ի մասնավորի՝ արքաներին էր վերապահված իրավական որոշումներ կայացնել որդեգրման և կանանց ժառանգության հարցերի կապակցությամբ [Plut., Lycurg., VI, 15, 5]:⁶⁹ Բացի այդ, արքաների հսկողության տակ էին պետական ճանապարհներն ու սահմանները: Նաև՝ պետական պաշտոնյաները: Ծերակուտական-

⁶⁸ Սպարտական արքայական իշխանության իրավաքաղաքական հենքը բանաձևելիս Հերոդոտը մեջբերում է արքայալ և պարսից Քսերքսես Ա-ի արքունիքում ապաստանած Դեմարատ արքայի փաստարկները: Մեկնակետն այն միտքն է, որ իր երկրում հարաբերված են երկու տարատես իշխանական սկզբունք. մի կողմից՝ մենիշխանությունը, մյուս կողմից՝ օրենքի բացարձակ գերակայությունը: Դրանց հատման կիզակետում էլ ձևավորվում է փաստական իրավաքաղաքական վիճակը [Herod., I, 65-66]: Հմմտ. **Munson**, 1993, 42-44:

⁶⁹ Արքաների իշխանության ծագումնաբանության, նրանց գործառնությունների և իրավահիմքերի քննությունը տես **Bury**, 1900, 120-122; **Miller**, 1998, 1-5:

ների հետ համախումբ՝ նրանք էին նախապատրաստում և հրավիրում սպարտական Աշխարհաժողովի նիստերը: Ունեին *սքրազան սուրհանդակներ* (πύθοι), որոնց հղում էին Դելփք՝ Ապոլոնի տաճար, օրվա առիթով Պյութիային խորհուրդ-գուշակությունը հարցանելու նպատակով:⁷⁰ Արքաներին կից կային նաև պաշտոնյաներ, որք պետության առջև պատասխանատու էին Լակեդեմոնում գտնվող օտարերկրացիների համար՝ *հյուրընկալներ* (πρόξενοι):

Ի մի բերելով ասվածը՝ հավելենք, որ առօրեական կյանքում սպարտական արքաները հույժ հասանելի էին. ցանկացած սպարտիատ ի գորու էր դիմել նրանց իրեն հուզող անձնական և հանրային խնդիրների կապակցությամբ: Կարող էր խորհուրդներ տալ, ցուցանել բացթողումները և անգամ այպանել: Կարող էր անգամ «դիպչել» արքայի անձնական կյանքի մանրամասնություններին: Եվ դրանք ընդունվում էին բարյացակամորեն, զի «խնդիրը հանուր բարօրությանն էր վերաբերում»: Նույնը վերաբերում էր նաև ծերակուտականներին և էփորներին:

2.3. Ծերակույտ (Γερουσία)

Այս պետական մարմինը, անտարակույս, գոյություն ուներ նախքան Լիկուրգոսը: Տակավին Միկենյան դարաշրջանում արքաներին կից գոյություն ուներ նման խորհրդակցական հաստատություն՝ բաղկացած նշանավոր տոհմերի ներկայացուցիչներից

⁷⁰ Արքայական գործառույթի այս դիտանկյան մասին տես Powell, 2009, 58-61: Այս ընթացքում նրանք ծիսականորեն կրկնում էին Լիկուրգոսի փորձառությունը, որի մասին խոսել ենք նախընթաց տեքստում:

(κάλοι και αγαθοί): Եվ ծերությունը ոչ միայն տարիքի, այլ նաև հասարակական դիրքի, փորձառության և հեղինակության ցուցիչ էր: Լիկուրգոսը որոշեց զարգացնել այս ավանդույթը:

Մեջբերելով *Ռեթրան*՝ Պլուտարքոսը հատկանշում է, որ օրենսդիրը «[...] ձևավորեց Ծերակույտ՝ բաղկացյալ երեսուն անդամից, ներառյալ երկու արքաները» [Plut., Lyc., VI, 1]: Եվ հավելում, որ ծերակուտականները (γερόντοι) ունեին խնդիրների նախաքննության գործառույթ (πρόβουλεῖς), զի ժողովրդին էր վերապահված ունենալու «վճռական ձայն և իշխանություն» [Ibid.]:

Ինչպես ցույց կտրվի ստորև, աստ գործ ունենք սպարտական սահմանադրության ձևական մեկնաբանության հետ: Իրականությունը բավական հեռու էր դրանից, և վճռական ձայնը պատկանում էր հենց ծերակուտականներին:⁷¹ Հետազոտողները գտնում են, որ նրանք, ինչպես և բոլոր պաշտոնյաները, ընտրվում էին ժողովրդի քվեով՝ վաթսուն տարեկանից բարձր տարիքի անձանցից, ցկյանս: Եվ թեկնածուներին առաջադրվող իրավաբարոյական խիստ պահանջներին ի գորու էր համապատասխանելու սպարտիստների միայն մի նեղ շրջանակ:⁷² Դա էր

⁷¹ Հույժ կարևոր է Ծերակուտարանի դերակատարությունը համապատմական հեռանկարում: Աստ բացահայտվում են նրա ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնակի հատկագծերը: Forrest, 1992, 465; Finer, 1997, 339-340:

⁷² Շրջանակը, հիրավի, նեղ էր, և դա ուներ իր ինչպես կենսաբանական, այնպես էլ ընկերային պատճառները: Նախ՝ քիչ սպարտիստներ էին հասնում այս տարիքին՝ պակաս կալորիական սնունդ, հիվանդություններ և անընդհատ ընթացող պատերազմներ: Մյուս կողմից՝ աստ ընդգրկված էին բացառապես ընտրախավի ներկայացուցիչները. չափանիշը բարոյական բարձր հատկանիշներն

պատճառը, որ Ծերակույտի ընտրությունները զգալի հետք չեն թողել Սպարտայի պատմության մեջ: Հավելենք, որ ծերակուտականների (ինչպես և ուրիշ պետական այրերի) պաշտոնավարությունը չէր վարձատրվում, այլ համարվում էր պատվի և առաքինության գործ [Arist., Polit., 1270b, 15]:

Բանաձևելով Ծերակույտի դերակատարությունը՝ Արիստոտելը և (նրա հետևողությամբ) Պլուտարքոսը հատկանշում էին, որ այն կոչված էր կայունություն ներբերելու սպարտական հանրակարգի մեջ. «Մինչ Լիկուրգոսը քաղաքական իշխանությունը փոփոխական էր և անկայուն: Երբեմն, հետևելով արքային, հակվում էր առ բռնատիրություն, երբեմն հետևելով մեծամասնությանը՝ առ ժողովրդավարություն: Սակայն Ծերակույտի ուժը վերածելով պետության նավի հակակշռի և գետեղելով այն ողնուցի վրա՝ նա ուղղեց նավը դեպի կայուն հանգրվան. քսանութ ծերակուտականները միշտ արքայի կողքին էին, երբ խնդիր էր առաջանում սահմանափակելու ժողովրդավարությունը և, ընդհակառակը, ժողովրդի կողքին էին՝ ընդդիմանալու բռնատիրական նկրտումներին» [Plut., Lyc., V, 9-10]:⁷³

Ի գործ դնելով այս կարևոր առաքելությունը՝ Ծերակույտը ձգտում էր հսկողության տակ պահել Աշխարհաժողովը. մշակում էր դրա բոլոր նիստերի

էին ու նախնայաց փառքը, որոնք, ըստ պաշտոնական քարոզչության, նրանց մենաշնորհն էին: Տե՛ս **Cartledge**, 1987, 121-123:

⁷³ Պետության ու նավի (πόλις και ναῦς) զուգահեռականության գաղափարն առկա է նաև Սոլոնի, Էսքիլոսի, Սոփոկլեսի գրությունում: Խարիսիսները կոչված են հավասարակշռելու նավ-պետության հակադիր սկզբունքները: Մման ըմբռնումն իմաստասիրական մշակման է ենթարկվել Պլատոնի գրությամբ [Plato, Rep., 488a-489d]: Տե՛ս **Brock**, 2013, 58-59:

օրակարգը և հարիր հարցադրումներով կանխագծում հնարավոր որոշումները: Ծերակույտն ուներ նաև դատական գործառույթ՝ ծանր հանցագործությունների, սրբապղծության և անբարո պահվածքի կապակցությամբ (ἀτιμία): Դրանք սովորաբար ավարտվում էին մահապատժով կամ արքորով: Նախապես նրանց էր վստահված նաև սովորույթների և օրենքների նկատմամբ վերահսկողությունը [Xen., Lac., Polit., X, 2; Arist., Pol., 1275b, 10]: Հետագայում, ինչպես ցույց կտրվի ստորև, դա մտավ հինգ էփորների իրավասությունների մեջ:

2.4. Աշխարհաժողով (Ἀπέλλα)

Բառի ստուգաբանությունը հստակ չէ: Հները հակված էին այն արտածելու Ապոլոն աստծու անունից, «ով պետական կարգի աղբյուրն էր և հեղինակը», և նրան նվիրված տոնակատարությամբ էլ բացվում էր Աշխարհաժողովի առաջին նիստը [Plut., Lyc., VI, 2]:⁷⁴ Համաձայն սահմանադրության՝ այս հաստատությանն էր վերապահված վերջնական որոշումներ կայացնելու պետության ներքին ու արտաքին քաղաքականության սկզբունքային կարևորության խնդիրների առնչությամբ՝ պատերազմ թե՛ խաղաղություն, թշնամանք թե՛ դաշինք. «[...] զի ժողովրդին պետք է պատկանեն որոշիչ ձայնը և զորությունը» [Ibid.]: Աստ հաս-

⁷⁴ Սպարտական Աշխարհաժողովի գործունեության տարբեր դիտանկյուններից անդրադարձել են Թուկիդիդեսը [Hist., I, 70-87], Արիստոտելը [Pol., 1273a, 5-17], Պլուտարքոսը [Lyc., VI, 2-3, Agis, VIII-XI]: Քսենոփոնը հավելում է հիմնախնդրի մի նոր երանգ. արտակարգ իրավիճակներում հրավիրվում էր *փոքր Աշխարհաժողովը* (μικρὰ ἐκκλησία) [Xen., Hell., III, 3, 8]: Սակայն ոչինչ հայտնի չէ դրա հրավիրման կարգի և իրավասությունների մասին: Տե՛ս Forrest, 1992, 79; Forrest, 1967, 14-16:

տատում էին արքաների թեկնածությունը, ընտրում և պարբերաբար լսում պետական պաշտոնյաների հաշվետվությունը:⁷⁵

Ինչպես նշվեց, Աշխարհաժողովի նիստերը հրավիրվում էին արքաների կամ ծերակուտականների նախաձեռնությամբ՝ *ժամանակ առ ժամանակ* (ὥρας ἕξ ὥρας) [Plut., Lyc., VI, 3]: Հետազոտողներն աստ տեսնում են հաստատության աշխատանքի կարգաբերում, զի նախկինում արքաներն այն հրավիրում էին, երբ հարմար էին գտնում:

Սակայն նախորդ շրջանի շատ իրողություններ պահպանվում էին. կրկին արքաներն էին (արդեն ծերակուտականների հետ միասին) մշակում Աշխարհաժողովի նիստերի օրակարգը, որին մասնակցում էին բոլոր լիիրավ քաղաքացիները՝ երեսունից բարձր տարիքի: Չկար առաջադրվող խնդիրների համակողմանի քննարկում. «Երբ բազմությունը հավաքվում էր, նրա կազմից ոչ ոք իրավունք չունեւր առաջարկություն անելու: Դա անում էին ծերակուտականները և արքաները» [Plut., Lyc., VI, 4]: Ի հակակշիռ դրա՝ հետագայում (երբ ձևավորվեց էփորների հանձնախումբը) Աշխարհաժողովի նիստերն սկսեցին վարել այս նոր գործակալները:⁷⁶

Չայնատվությունը խիստ պարզունակ էր. չկային քվեատուփ և գաղտնի քվեարկություն: Խնդիրները լուծվում էին աղաղակներով: Այս կապակցությամբ հիշենք, որ Աշխարհաժողովը հրավիրվում էր Սպար-

⁷⁵ Հարկավ, սա քարոզչական տեսլական էր, որի անունից խոսում էին համարյա բոլոր սպարտիատները՝ ոմանք «հուսով ու հավատքով», ոմանք էլ՝ օգտապաշտական նկրտումներով: Տե՛ս Forrest, 1992, 70:

⁷⁶ Տե՛ս Richer, 1998, 320-322:

տա քաղաքից դուրս՝ Էվրոտաս գետի հովտում, մի տափարակ վայրում՝ զուրկ բուսականությունից: Տափարակի կենտրոնում կառուցված էր հյուղակ՝ առանց լուսամուտի: Ձայնատվությունից առաջ աստ փակվում էին ամենահեղինակավոր և վստահելի հինգ քաղաքացիներ, որոնց խնդիրն էր վկայություն տալ, թե ո՞ր հարցադրման միջոցին էին աղաղակներն ավելի բարձր հնչել: Ըստ այդմ էլ որոշում էին՝ առաջարկությունն ընդունվել է, թե՛ ոչ: Արիստոտելն այս գործառույթը անվանում էր «երեխայական» [Arist., Polit., 1278b, 5]: Սակայն նրա գնահատականը զուրկ է բացասական երանգից, զի գիտե, որ սպարտիստները (այն էլ պատմության այս վաղ շրջանում) նախընտրում էին ճշմարտությունն ու փառքը:

Հետազոտողներն ուշադրություն են հրավիրում Պլուտարքոսի մի վկայության վրա. խոսելով Աշխարհաժողովի իրավասություններից՝ նա հատկազծում է. «[...] իսկ ժողովուրդն ի գորու էր լոկ ընդունելու կամ մերժելու [արքաների և ծերակուտականների] առաջարկությունը» [Plut., Lyc., VI, 4]: Դիոդոր Սիկիլացու տեքստից էլ պարզվում է, որ վերջիններս իրավունք ունեին նաև կասեցնելու «ժողովրդի թյուր որոշումը» [Diod. Sic., XI, 50]: Ավելին՝ ցրելու Աշխարհաժողովի նիստը (*ἀφίστασθαι*):⁷⁷ Հավանաբար, ասվածը վերա-

⁷⁷ Հետազոտողներից ոմանք գտնում են, որ այս վերաբերմունքը Աշխարհաժողովի նկատմամբ գալիս է Արիստոտելից և չի արտահայտում իրականության ողջ ծավալը: Ի հաստատումն ասվածի՝ հիշատակում են այն փաստը, որ Աշխարհաժողովը ղեկավարում էին *անհատական ելույթները*, որք ընդդիմություն էին ավագանու և արքաների նկատմամբ: Տե՛ս Ehrenberg, 1933, 292, Andrews, 1967, 20: Շարունակելով այս ընկալումը՝ հետազոտողներն ուշադրություն են հրավիրում Արիստոտելի հանրահայտ բանաձևի վրա, ըստ որի՝ Սպարտան «[...] ժողովրդավարության և խմբիշխանության խառնուրդ է» [Arist., Pol.,

բերում էր լույս սկզբունքային կարևորության խնդիրներին, որոնց կապակցությամբ նախապես ստացվել էր Դելփիի քրմուհու գուշակությունը: Այլով բանիվ՝ Ապոլոնն ինքն էր «մերժում և շիտակ ուղիով առաջնորդում սպարտիատներին»: Ուստի նման դեպքերը բացասաբար չէին անդրադառնում նրանց համակեցական համերաշխության վրա:⁷⁸

Աշխարհաժողովի մասին ասվածն ամբողջացնելու նպատակով հարկ է հատկազօծել նրա գերագույն դատական ատյանի գործառույթը, երբ քննության առարկա էր լիիրավ քաղաքացու կյանքի և մահվան խնդիրը: Այսօրինակ գործը սովորաբար հարուցվում էր հայրենադավության, սրբապղծության, քրեական ծանր հանցանքների դեպքերում: Սակայն դրանք հազվադեպ էին: Հարցը լսվում էր նախապես Ծերակույտում, իսկ ապա ներկայացվում Աշխարհաժողովին: Հարկավ, այս պարագային նույնպես խոսքն ավելի դատավարության ձևական կողմի մասին էր, զի սպարտիատների զանգվածը սոսկ հաստատում էր ներկայացված դատավճիռը: «Թյուր որոշման» պարագային աստ նույնպես հնարավոր էր արքաների և ծերակուտականների (աստվածահաճո) վետոն:⁷⁹

1294b, 10]: Սակայն հիշենք, որ երկու ռեժիմներն էլ նրա քաղաքացիության ծիրում դիտարկվում են իբրև *արարալուր կառավարման ձևեր*: Հմնտ. *Доватуп*, 1965, 249:

⁷⁸ Ասվածը թերևս ճիշտ է Արիստիլ դարաշրջանի համար, զի հետագայում (համակեցական կյանքի անհատականացման հոլովույթի ներքո) որոշումների կայացման ընթացքում արքաների և ավագանու գերակայությունն սկսում է խաթարվել: Տե՛ս *Hodkinson*, 1983, 269-273:

⁷⁹ Այդուամենայնիվ, եղել են հետազոտողներ, որոնք, ուրույն ձևով մեկնաբանելով և թարգմանելով *Ռեթորայի* տեքստը, ձգտել են հաստատագրել, թե սպարտիատների զանգվածն իրավունք ուներ Աշխարհաժողովում մերժելու ավագների որոշումները: Տե՛ս *Huxley*, 1962, 47-48:

Սպարտայի կառավարման երեք հիմնական հաստատությունները՝ Մենիշխանություն, Ծերակույտ, Աշխարհաժողով, կոչված էին փոխլրացնելու միմյանց: Սակայն այս աղերսը նույնաչափ չէր բոլոր մակարդակներում: Առավել ներունակ էր արքաների և ծերակուտականների հարաբերություններում: Աստ *Ռեթրան* արձանագրում էր իրական փոխզիջում, զի գտնում էր, որ պետական կառավարման համակարգի հիմքը մենիշխանության և ազնվապետության փոխհամաձայնությունն է: Ժողովրդավարության բևեռին հասկացվում էր օժանդակ դերակատարություն:

Խորքային առումով, հարկավ, ասվածը հակասում էր վերոբերյալ բանաձևին, թե Սպարտայում ժողովրդին պետք է պատկանեն *որոշիչ ձայնը և զորությունը*: Հենց դա էր պատճառը, որ հետագայում բռնատիրության ձգտող բոլոր գործիչները փորձում էին օգտագործել այս հակասության պաշարը հօգուտ իրենց եսակենտրոն նպատակների: Եվ հանդես էին գալիս սպարտիատների ողջ համայնքի անունից:

2.5. *Էփորայր* (τὸ ἐφορεῖον)

Ածանցվում է *ἐφοράω* բայաձևից՝ «վերհայեցել (աստղագուշակել), դիտարկել, վերահսկել» նշանակությամբ: Առկա է նաև մեկ այլ մեկնաբանություն, որն այն արտածում է *οἶρος* գոյականից՝ «պահապան-վերահսկիչ» նշանակությամբ: Ըստ էության երկու մեկնությունները չեն հակասում միմյանց:⁸⁰ Հիմնարկի ներմուծության հեղինակ պատմական ավանդությունը ճանաչում է նույն Լիկուրգոսին [Xen., Lac. Polit., VIII,

⁸⁰ Տե՛ս Boer, 1954, 197-199:

10; Plat., Epist., 354b] կամ էլ Թեոպոմպոս արքային [Arist., Polit., 1313a, 5-10; Cicero, Leg., III, 7, 15-16; Rep., III, 7, 15-16]: Համաձայն Պլուտարքոսի՝ վերջինս կառավարել է Լիկուրգոսից 130 տարի անց [Plut., Lyc., VII, 29]:

Քսենոփոնը համոզված էր, թե նախաձեռնությունը գալիս էր սպարտիատների համայնքից. «[քաղաքացիներն] առաջնորդվում էին այն համոզմամբ, որ հնազանդությունն է իրենց գերագույն շնորհը՝ թե՛ պետական կյանքում, թե՛ բանակում, թե՛ տանը» [Xen., Lac. Polit., VIII, 3]: Եվ էփորները կոչված էին մարմնավորելու *հասարակական պահվածքի այս արժեքը*: Արժեք, որ ենթադրում էր նախ և առաջ ենթակայություն օրենքներին և աստվածների ձայնին: Եվ վերջին հաշվով այն պահանջելի էր ինչպես սպարտիատներից, այնպես էլ պերիոյկոսներից ու հելոտներից: Այլով բանիվ՝ խոսքը հասարակական դասերի և իրենց դերերի համապատասխանության մասին էր:⁸¹ Էփորները դիտարկվում էին իբրև հենց այս հավասարակշռության երաշխավորներ: Հայսմ հասարակական կարծիք էր ձևավորվել՝ «[...] որքան մեծ է այս գործակալների գործությունը, այնքան շատ նրանք կարող են ներագդել քաղաքացիների մտա-հորիզոնի վրա» [Xen., Lac. Polit., VIII, 4-5; հմմտ.. Arist., Polit., 1275b, 10]:⁸²

⁸¹ Հանդերձ այդու կարծիք կա, թե արքաներն ուղղորդել են էփորների ընտրության գործընթացը: Ասվածը կարելի է ընդունել որոշակի վերապահությամբ և միայն այս պաշտոնեության վաղ շրջանի վերաբերյալ: Տե՛ս Richer, 1996, 276-278:

⁸² Էփորների հավասարակշռող դերակատարության մասին տե՛ս Richer, 1996, 499-505: Հեղինակը մտածում է, թե այս մոտեցումը հակասում է Պղատոնին առ այն, որ *էփորները բռնապետներ էին* [Plato, Leg., 712]: Կարծում ենք՝ չափազանցություն է. ամենայն

Հավելենք, որ էփորներն ընտրվում էին մեկ տարով, աշխանային օրահավասարին՝ առանց վերընտրվելու իրավունքի: Հինգն էին՝ 30–60 տարեկան սպարտիատներից: Նրանցից մեկին անվանում էին *էպոնիմոս* (*ἐπώνυμος*) անվանատու, զի նրա անունով էր կոչվում տվյալ տարին և Աշխարհաժողովը: Սա *հիմնավորվում էր* այն փաստով, որ նրա ընտրության ժամանակ ամբոխի աղաղակներն ավելի բարձր էին հնչել:⁸³ Պոլիբիոսի տեքստում պահպանվել է նրանց ցանկը, որը թեպետ ամբողջական չէ, բայց վկայում էր այս գործակալության կարևորության մասին: Ամեն ամիս էփորները հանդիսավոր երդում էին տալիս հանուն պետության [Polyb., XXII, 25, 10–25; Xen., Lac. Polit., XV, 7, 1]:

Նույն Քսենոփոնը, խոսելով էփորների արտակարգ լիազորություններից, բանաձևում է. «Հուսկ էփորներն իրավագոր են (իրենց կամոք) ընտրելու և տուգանելու ում ցանկանան և կիրարկելու պատիժն անմիջապես: Լիիրավ են պաշտոնանկ անելու (ցանկացած) գործակալի, ձերբակալելու և դատական հետապնդում սկսելու նրա դեմ: Օժտված այսօրինակ իշխանությամբ՝ նրանք չեն արտոնում (ինչպես ընդունված է այլ պետություններում), որ վերջիններս շարունակեն գործառել իրենց պաշտոնավարման տարում, այլ բռնակալների նման գործում են անմիջապես՝ թույլ չտալով, որ նրանք խեղեն օրենքը և կարգը» [Xen., Lac. Polit., VIII, 4]: Միննույն ժա-

հավանականությամբ, իմաստասերը նկատի ուներ վաղ հունական տիրաններին, որք ներկայանում էին ժողովրդի անունից և ճանապարհի հարթում առ ժողովրդավարություն: Տե՛ս Cawkwell, 1995, 76–80; Fleck, Hanssen, 2013, 395–400:

⁸³ Տե՛ս Woodward, Forrest, 1992, 388:

մանակ, որոշումներ կայացնելիս պահանջվում էր էփորների միաձայնությունը. «Եթե էփորներից մեկը, ժողովրդին սատարելու փոխարեն, քայլ ձեռնարկի կառավարության դեմ և դիմադրի նրա ձեռնարկումներին, չէն կարծում, որ նա արժանի կլինի դաժան պատժի ինչպես իր պաշտոնակիցների, այնպես էլ ամբողջ պետության կողմից» [Xen., Hell., II, 3, 34]:⁸⁴

Արդ փորձենք ի մի բերել ասվածը՝ մեկնարկելով Պղատոնի ըմբռնումներից: Օրենքի ու իշխանության մասին նրա տրամախոսության մասնակիցներից մեկը գտնում էր. թեպետ նախընթաց բարեփոխություններին՝ սպարտական իշխանական համակարգը *տակավին ջղաձգվում և մխում էր*: Պատճառն այն էր, որ ինքնակամ արքայական իշխանությունը համակցված էր *տարիքի* իշխանության հետ: Խոսքը, հարկավ, Ծերակույտի մասին էր. «[...] քսան և ութ ավագներ, որք կարևորագույն գործերում համակշիռ էին արքաներին» [Plato, Leg., 692b, 5]: Այլով բանիվ՝ էփորատը ստեղծվել էր ի հակակշիռ վերնախավի հենց այս երկմիասնության: Եվ նախաձեռնությունն էլ բխում էր, ամենայն հավանականությամբ, հասարակ սպարտիատների միջավայրից:⁸⁵

⁸⁴ Հմմտ. Richer, 1998, 313-322:

⁸⁵ Այս առումով հատկանշական է Արիստոտելի բանաձևն առ այն, որ *նրանք ժողովրդից էին* (ἐκ τοῦ δῆμου) [Arist., Pol., 1270b]: Ասվածին հավելենք, որ անցյալի, ներկայի և ապագայի էփորները, հարկավ, գործում էին միանգամայն իրական հասարակական գիտակցության և պահվածքի ծիրում, որը կոչված էր զսպելու ավագանու հնարավոր նկրտումներն առ բացարձակություն: Այլ էր հակառակ կողմի մոտեցումը, որն արտահայտում է Արիստոտելը՝ կապելով էփորների իշխանությունը խմբիշխանության և ժողովրդավարության հետ՝ կառավարման ձևեր, որոնք նրա տեսության մեջ, ինչպես հատկանշել ենք, ունեն բացասական արժեքանություն [Arist., Pol., 1265b, 35]: Հմմտ. Kōiv, 2005, 251-254:

Դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ էփորները հաճախ կրկնում էին այլ կարևոր գործակալների գործառույթները: Սակայն ավելի հաճախ ներկայանում էին վերահսկիչ դերակատարությամբ՝ ընկերային հարաբերություններ և բարոյականություն, իրավունք և դատարան, ընտանիք և կրթական համալիր, կրոն և ծիսական կյանք, բանակ և միջպետական հարաբերություններ: Եվ ամենուր շեշտում էին, թե հանդես են գալիս ի բարօրություն սպարտական ողջ հանրությի, զի արտահայտում են նրա ընդհանրական կամքը:

Ի հաստատումն այս մտքի՝ էփորներն իրավունք ստացան ղեկավարելու Աշխարհաժողովի նիստերը՝ թեպետ հրահանգ ունեին չխախտելու արքաների և ծերակուտականների մշակած օրակարգը: Հետագոտողները հատկազծում են նաև էփորների մի կարևոր գործառույթ. ինը տարին մեկ, հայեցելով գիշերային երկինքը, նրանք գուշակություն էին անում երկրի և արքաների բախտի վերաբերյալ: Եվ նրանց վստահում էին անվերապահորեն:⁸⁶

Ի մի բերելով իր ըմբռնումները սպարտական պետական-քաղաքական համակարգի մասին՝ Արիստոտելը բանաձևում է. «Կառավարման ողջ համակարգը միտված է ո՛չ ժողովրդավարության, ո՛չ էլ խմբիշխանության, այլ միջակա մի վիճակի, որը սովորաբար անվանում են պոլիտիա՝ բաղկացած ծանրագեն հետևակի զինվորներից» [Arist., Polit., 1265b, 15-16]:⁸⁷

⁸⁶ Այս մասին տե՛ս մանրամասն **Richer**, 1998, 21-24; 393-397:

⁸⁷ Հունական քաղաքական միտքը պոլիտիան (πολιτεία) բնութագրում էր իբրև սահմանափակ մասնակցության հանրապետություն: Ընդամին, սահմանափակման չափորոշիչը ունեցվածքային ցենզն էր: Ծանրագեն հետևակի զինվորի ծախքն ապահովելու համար (հան-

3. ՍՊԱՐՏԻԱՏԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Սպարտիայի կայացումը

Սպարտայում հավատացած էին, որ սպարտիա-տը ձևավորվում է երկու սկզբունքների ներքո՝ ծագման և դաստիարակության: Առաջին բաղադրիչը ներկայացնում էր նրա արյունն ու անունը, իսկ երկրորդը՝ ընկերային ներգրավվածությունը:⁸⁸

Ամեն ինչ սկսվում էր երեխայի ծնունդից: Համաձայն ընդունված կարգի՝ հայրը նրան ներկայացնում էր *ցեղերի ավագանու* դատին: Նրանք գնում էին նորածնի մարմինը և որոշում կայացնում՝ արդյո՞ք կարող է դառնալ սպարտիատների համայնքի լիիրավ անդամ: Դրական որոշման պարագային նրան վերադարձնում էին ընտանիք՝ տնային դաստիարակության, որը տևում էր մինչև նրա յոթնամյակը:⁸⁹ Բացասականի դեպքում նետում էին Տայգետի խորխորատը. «[...] համոզված, որ նրա կյանքը, ում բնությունն ի սկզբանե չի տվել պատշաճ առողջություն և զորություն, անօգուտ է թե՛ իր, թե՛ պետության համար» [Plut., Lyc., XVI, 1-2]:⁹⁰ Ասվածն ամենևին չի

դերձանք, գենք, զրահ) քաղաքացուց պահանջվում էր առնվազն միջին ունեցվածք: Սպարտիատի պարագային դա ապահովվում էր ի հաշիվ պետությունից ստացած հողակտորի եկամտի:

⁸⁸ Պաշտոնական քարոզչությունը, հարկավ, հատկազծում էր, թե դրանք փոխրացնում էին միմյանց: Սակայն իրական կյանքում տարբերությունը նկատելի էր. ծագումնաբանական սկզբունքը հաստատագրվում էր կրոնաժխական հրամայականի, իսկ մերիտոկրատիկ սկզբունքը՝ դաստիարակության և աթլետիկ ազոնի ճանապարհով: Sñu Christesen, 2012, 208-212:

⁸⁹ Sñu Boer, 233-234:

⁹⁰ Պանթեիզմը (համաստվածություն) համարվում էր սպարտա-

վկայում դաժանության մասին. մտածում էին՝ ամենայն ինչ ստեղծում է Մայր բնությունը, որը վատ օրինակի փոխարեն շուտով կուղարկի լավը:

Առաջին յոթ տարիներից հետո սպարտիատի դաստիարակությունն ընթանում էր հասարակական ծախքով և խիստ հսկողությամբ (*ἀγωγῇ τῶν παίδων*): Սկզբնաղբյուրները հատկազօնում են, որ այս կապակցությամբ սպարտականն արմատապես տարբերվում էր հունական այլ կրթահամալիրներից, որոնք հիմնականում մասնավոր էին, և վարժանքը կազմակերպում էին սովորաբար ստրուկ մանկավարները: Մինչդեռ Սպարտայում գործը վստահված էր ազատ, հեղինակավոր և հատուկ պատրաստության անձանց, որոնց ընտրում էին էփորները (*παιδονόμοι*). «[...] նրանք պետք է հոգ տանեին աշակերտների մասին և խստորեն պատժեին անբարո արարքի համար» [Xen., Lac. Polit., XVI, 4]: Դաստիարակությունն ընթանում էր մի քանի շրջափուլով, հրնթացս որոնց աշակերտն անցնում էր կերպափոխությունների հետևյալ շարքը. *մանուկ* (*παῖς*), *պատանի* (*παίδισκος*), *թերի այր* (*μελλείρην*):⁹¹ Եվ ի վերջո՝ *այր* (*εἴρην*, *νέος*): Դրանք ընդգրկում էին կյանքի մի բավական երկար ընթացք՝ յոթից մինչև երեսուն տարեկան:⁹² Այս ամբողջ ըն-

կան կրոնական ապրումի և գիտակցության կարևոր հատկազօնից: Այն ժառանգվել էր դորիական անցյալից և ներհյուսվել ավելի զարգացած կրոնական համալիրի մեջ: Տե՛ս **Richer**, 2007, 246-247:

⁹¹ Այս շրջափուլերի և դրանց ընկերային բովանդակության մասին տես մանրամասն **Ducat**, 2006, 119-138: Վերջիններիս համահունական համաձիքը և շարժը հրնթացս ժամանակի հույժ կարևոր է անտիկ պատմության տիպաբանական առանձնահատկությունները լուսաբանելու դիտանկյունից: Տե՛ս **Kennell**, 2013, 26-34:

⁹² Սպարտական կրթանքի համակարգային առանձնահատկությունների, նպատակների, շրջափուլերի և ակնկալվող վերջնարդյունքների մասին տես մանրամասն **Powell**, 2015, 90-111: Այս

թացքին. «Ավագ այրերը հետևում էին՝ այցելելով այն տեղերը, որտեղ ընթանում էին նրանց վարժանքը, ուժային մրցակցությունը, կամ էլ բացահայտվում էին հստությունն ու միտքը» [Plut., Lyc., XVII, 1]:⁹³

Առաջին շրջափուլ. մինչև տասներկու տարեկան մանուկները միավորվում էին *երամակների* մեջ (ἀγέλη): Նրանք ձեռք էին բերում տառաճանաչություն ու հաշիվ, սովորում էին սրբազան երգեր, մասնակցում ծեսերին: Սակայն հիմնական ժամանակը նվիրված էր ծանր մարմնավարժանքին ու խաղերին: Երամակների մեջ ընդգրկված էին նաև նույն տարիքի աղջիկները, զի Օրենսդիրը «[...] նրանց մարմնավարժանքը կարևորում էր ոչ պակաս, քան այն, ինչ նախատեսված էր տղամարդկանց համար» [Xen., Lac. Pol., I, 3]: Ապրում էին ծայրահեղ սուղ պայմաններում՝ բոկոտն, ձմեռ-ամառ մի թեթև թիկնոցով, սնվում էին հիմնականում հացահատկի (գարի, վարսակ, ցորեն) և ընդեղենի, կաթի ու պանրի սահմանափակ քանակությամբ: Քնում էին մեծ շինություններում կամ էլ բաց երկնքի ներքո: Անկողինն իրենք էին պատրաստում՝ Էվրոտասի ափերին աճած եղեգնից: Ավագները մտածում էին, որ այս կերպ «[...] նրանք ավելի պատրաստ կլինեն ամառային տապին և ձմեռային սառնամանիքին» [Xen., Lac. Polit., II, 4]: Պլուտարքոսն ավելի պերճախոս է. մանուկներին սո-

ամենի մեջ հույժ կարևոր էր հանրային տեսլականը՝ կառուցված Լիկուրգոսի անձի շուրջ և նրա կողմից սահմանագծված առաքինությունների ծիրում: Սպարտական դաստիարակության այս դիտանկյան մասին տես մանրամասն **Jaeger**, 1945, 77-99:

⁹³ Հետազոտողները հաճախ սպարտական կրթահամալիրը բանաձևում են իբրև «ամբողջատիրական և ռազմական»: Նկատի ունեն գործընթացի վերաբերյալ հանրային պահանջը: Տես **Beck**, 1992, 369-370:

վորեցնում էին «[...] լինել գոհ ու երջանիկ, չփնտրել հաճույք ուտելիքի մեջ, չվախենալ մթից ու միայնությունից, չտրվել անգոսնելի թշվառությանն ու կոծին» [Plut., Lyc., XVI, 3]: Այս պահվածքին հարիր սակավախոս էին՝ սովոր մտքերն արտահայտելու հակիրճ ու հստակ: Այստեղից էլ՝ լակոնական ոճը:⁹⁴

Վերն արդեն հատկազօել ենք՝ չնայած միասնության և համախմբման ոգուն, արդեն այս տարիքում սպարտիատների միջև ընթանում էր անզիջում պայքար առաջնության, հեղինակության և ազդեցության համար: Դրա կիզակետը երամակի ավարտական քննությունն էր, որը կազմակերպում էին էփորները Արտեմիս Օրթա դիցուհու տաճարի տարածքում: Ներկա էր սպարտիատների ողջ հանրույթը: Քննությունը ներսերնդային ընտրության միջավայր էր. մասնուկները մրցակցում էին մարմնակրթանքի տարբեր ասպարեզներում: Այս ընթացքին առանձնանում էին քաջերը, համարձակները և նախաձեռնողները [Plato, Prot., 325c-326c, Leg., 794c-808c, Arist., Pol., 1336a, 9-15]:⁹⁵ Աստ ավարտվում էր սպարտիատի կրթանքի առաջին շրջափուլը: Աղջիկները վերադառնում էին տուն. համարվում էր, որ նրանք ձեռք են բերել առողջ

⁹⁴ Տե՛ս մանրամասն **den Boer**, 1954, 233-245:

⁹⁵ Խոսքն ագոնի (ἀγών) մասին է՝ *մրցակցություն*, որ բխում էր ծիսական գործողությունների համալիրից և միտում ուներ առաջնորդելու նվիրյալին առ աստված: Այս դիտանկյունը ներկա էր սպարտական մանուկների մրցակցությունում. հավատում էին, որ հանդիսականներից վեր աստվածներն էին կանգնած, որք հետևում և առանձնացնում էին նրանց ընդհանուր գանգվածից: Տե՛ս **Тарасова**, 2017, 48-53: Ի մի բերելով նախորդ ասվածը՝ կարող ենք արձանագրել, որ երամակն անցնում էր մի բավական երկար ուղի, որի հանգրվաններն էին՝ երեխա, մանուկ, տղեկ, աղջնակ (մինչև 12-14 տարեկան): Տե՛ս **Weiler**, 2018, 104-109:

մարմին և հոգի՝ ապագայում ընտանիքի մայր դառնալու համար:⁹⁶ Իսկ տղաները պատրաստվում էին անցում կատարելու կրթանքի նոր մակարդակի:

Երկրորդ շրջափուլ. հրնթացս ձևավորվում էր պատանին: Ամենատես հսկողության ներքո շարունակվում էր նրանց դաստիարակությունը: Ծանր մարմնավարժանքից բացի՝ արդ կարևորվում էին ռազմախաղերը՝ նպատակավ աշակերտների մեջ զարգացնելու մարտավարական և ռազմավարական գիտելիքներն ու հմտությունները: Միևնույն ժամանակ նրանց մտապատկերի մեջ ամրագրվում էր փաղանգի (սպարտական կոռ ռազմամիավորի) պատկերը, որտեղ յուրաքանչյուրին պատշաճում էր իր տեղը՝ ըստ ուժի և համարձակության:⁹⁷

Այս գործում մանկավարի կողքին էր *երիպասարդայրը* (εἰρηγ): Նա արդեն անցել էր վարժանքի ողջ ընթացքը և գրանցել բարձր արդյունքներ: Զօր ու գիշեր պատանիների կողքին էր: Կազմակերպում էր նրանց խաղ-ճակատամարտերը և գործնական հենքով ամրագրում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Երեկոները պատանիների հետ քննարկում էր անցյալի սպարտական հերոսներին. «Այս

⁹⁶ Սկզբնաղբյուրները հիշատակում են նաև այն կանանց, որոնք հառաջացել էին մուսական արվեստների մեջ և անգամ հասել իմաստասիրության բարձունքներին. բանաստեղծ Կլիթագորա, երգահան-իմաստասեր Կիլոնիս, Տիմոքա, Կլատիոկլեա: Նրանք առանձնակի հակում ունեին պյութագորական դպրոցի նկատմամբ, որը միավորում էր կրոնական անդրականությունը իմաստասիրական խոհի հետ: **Pomeroy**, 2002, 10-11; **Ducat**, 2006, 223-231:

⁹⁷ Փաղանգի իրական և տեսլական-առասպելական կերպարները միահյուսվում էին պատանու մտապատկերում և ուղեկցում նրան ողջ կյանքում: **Goldsworthy**, 1997, 5-11: Այս կապակցությամբ հիշենք, որ փաղանգը սպարտիատների համակենցության մանրակերտն էր և նրանց ընկերային ներգրավվածության ցուցանիշը:

կերպ տղաները սովորում էին ճշմարիտ դատողություններ անել ականավոր քաղաքացիների գործերի մասին՝ շահագրգիռ [կրկնելու] դրանք» [Plut., Lyc., XVIII, 2]:⁹⁸

Դրա հետ մեկտեղ չէր արգելվում ստելը կամ գողությունը. դրանք դիտարկվում էին իբրև ծայրահեղ պայմաններում գոյատևման միջոց [Plut., Lyc., XVII, 3]: Սակայն բացահայտման պարագային պատանիներին սպասում էր ծանր պատիժ և ստորացում: Այլով բանիվ՝ յուրաքանչյուր ոք ընտրում էր իր ուղին՝ կանխավ իմանալով դրա հնարավոր ելքը: Եվ դատիարակությունը կառուցված էր ոչ թե *անմիջական ժխտումի* (չի կարելի), այլ *հնարավոր ընտրության* վրա (կարելի է, բայց ...):

Թեպետ սկզբնաղբյուրները հստակ չեն մատնանշում, սակայն կասկածից վեր է. այս շրջափուլը նույնպես ավարտվում էր քննությամբ: Ենթադրելի է՝ այն կրկին անցկացվում էր Արտեմիս Օրթայի տաճարի տարածքում, ողջ հանրության ներկայությամբ: Հանրային ընտրության այս նոր մակարդակը ուրվագծում էր տվյալ սերնդի սերուցքի շրջանակը:

Երրորդ շրջափուլ. ներկայացնում էր սպարտիա-տի հանրային վարժանքի ավարտը: Դրա կրողները սկզբնաղբյուրներում ներկայանում են իբրև *կրպսերայրեր* (μελλεϊρηνες, ήβόντες), իսկ նրանց երամակը երբեմն՝ *ցլախումբ* (βουφόρβια): Նկատի ունենի, որ մարմնապես արդեն կատարելության էին հասել, բայց հոգեկան և բարոյական մակարդակը տակավին կարիք ուներ ճշգրտումների [Xen., Lac. Polit., IV, 2]: Ուս-

⁹⁸ Հմմտ. Hodkinson, 1997, 97–98:

տի նրանց ուղարկում էին հեռավոր վայրեր՝ կայազորային ծառայության, զի երկյուղում էին, թե կարող են հայտնվել ինչ-ինչ իշխանատենչ անձանց ազդեցության ներքո և խաթարել հասարակական անդորրը:⁹⁹

Հետազոտողներից ոմանք կարծում են, թե հանրահայտ կրիպտիաները հենց այս շրջափուլի ավարտական քննությունն էին:¹⁰⁰ Արդեն խոսել ենք դրանց մասին՝ իբրև սպարտիապոսների և հելոտների հակամարտության ծիսական արձագանքի: Կրկենք, որ դրանք կազմակերպում էին էփորները: Եվ կարելի է ենթադրել՝ այս մասին հանրաձայնվում էր հանդիսավոր արարողությամբ:

Հետայդու նրանք իրավունք ունեին ամուսնանալու, զավակ ունենալու և հանրային դաշտից հողաբաժին ստանալու (հելոտներով հանդերձ): Այլով բանիվ՝ լիիրավ սպարտիատ-այրն արդյունք էր կատարելագործման տևական ու տանջալի գործընթացի, հընթացս որի համաբերվում էին հասարակական հրամայականը և անհատական կամքը: Եվ այդը ներկայանում էր իբրև *ենթարկելու ու ենթարկվելու* հարաբերությունների միասնություն: Հիշենք՝ այս վիճակը Արիստոտելը համարում էր քաղաքացու իրավաքաղաքական մեծագույն ձեռքբերումը [Arist., Polit., 1277b, 15-16]:¹⁰¹ Ասվածին հավելենք, որ այդ դառնա-

⁹⁹ Տե՛ս den Boer, 1954, 245-248: Սակայն այս դիտանկյունը հաճախ դուրս է մնում հետազոտական քննությունից, զի «խաթարում է» սպարտիապոսների հանրախմբի իդեալական այն պատկերը, որն արտածվում է հատկապես Քսենոփոնի և Պլատոնի տեքստերից:

¹⁰⁰ Մեր տեղեկույթը սպարտիատի դաստիարակության մասին թեպետ ավանդորեն վերագրվում է Լիկուրգոսին, հետազոտողներից շատերը կապում են դասական դարաշրջանի փորձառության հետ: Տե՛ս Ducat, 2006, 43-45:

¹⁰¹ Այս բարդ ու շրջելի հարաբերությունների ամբողջությունն ըն-

լուց ի վեր սպարտիատն սկսում էր վճարել *վարձ արքունական* [Xen., Lac. Polit., VI, 59; cf. Plato, Alcib., 123a, 5]: Առավել հավանական բացատրությունը դիտարկում է դա իբրև *առնության հարկ* առ արքան: Զի նա համարվում էր սպարտիատների *իրական և երևակայական միության* առաջնորդը:¹⁰²

Հետազոտողները կարծում են, որ սպարտիատի կրթանքը շարունակվում էր մինչև երեսուն տարեկան հասակը. կրկին ծանր վարժություններ և ռազմախաղեր, մրցակցություն և համախմբում: Անգամ ամուսնացած՝ նա շարունակում էր ապրել յուրայինների հետ, միայն ժամանակ առ ժամանակ *այցելում էր* կնոջը և զավակին:¹⁰³ Հավատարմությունը երամակին ուղեկցում էր սպարտիատին հընթացս իր ողջ կյանքի: Սակայն այր դառնալուց ի վեր նրա դիմաց բացվում էին նաև ընկերային մեկ այլ կազմակերպության դռները, որը պաշտոնապես կոչվում էր *ընդհանուր վրան*:¹⁰⁴

կած էր սպարտիատի ինքնության հիմքում: Այն դարձավ ակնառու հատկապես էփորների պաշտոնի ներմուծմամբ: Հմնտ. **Romney**, 2018, 564-568:

¹⁰² Այս կրթական համալիրի հեղինակությունն սկսեց տարածվել Հունաստանում: Տարբեր քաղաք-պետություններից լակոնասեր հայրերն իրենց զավակներին ուղարկում էին Սպարտա՝ «տղամարդուն հարիր դաստիարակություն ստանալու»: Եվ նրանք անվանվում էին *συντρόφοι* – *համապրեղ կրթյալներ*: Կրթանքի ընթացքին նրանք Սպարտայում օգտվում էին հյուրի (ζέως) կարգավիճակից: Տես **Humble**, 2004, 134-235: Հավելենք՝ արդեն Ք.ա. 5-րդ դարի մայրամուտին, երբ սպարտիատների թվաքանակը խիստ նվազել էր, նրանցից ոմանք իրենց «հավատարիմ հեղտներին» տալիս էին նման դաստիարակություն՝ բանակում ծառայելու, իսկ ապագայում նաև ազատություն ստանալու հեռանկարով: Տես **Paschalis, Ulman**, 1989, 49-50:

¹⁰³ Ինչպես նշվեց վերը, այս տարիքի պատանիները սկզբնաղբյուրներում հաճախ կոչվում են նաև *հեքոնպոն* (ἡβόντες), որ սերում է ἡβᾶω բայաձևից՝ *լինել այրերի կարգում*: **Liddel, Scott**, 1940, 281:

¹⁰⁴ Հետազոտողներից ոմանք կարծում են, որ սպարտիատի դաստիարակման գործընթացն ուներ նաև իր *թաքուցյալ կողմը*

3.2. Ընդհանուր վրանը (συσkehνία)¹⁰⁵

Տղամարդկանց այսօրինակ միություններ հանդիպում էին նաև Հունաստանի այլ վայրերում՝ Կրետե, Մեգարա, Կորնթոս, որտեղ դրանք կոչվում էին անդրեխա:¹⁰⁶ Սպարտայում դրանք հայտնի էին նաև այլ անուններով, որոնցում հատկանշվում էր տղամարդկանց համատեղ ճաշկերույթը – *συσσιτιον*, *φειδίτια*:¹⁰⁷ Հետազոտողները պնդում են, որ խոսքը լոկ ընթրիքի մասին է. նախաճաշը և ճաշը սպարտիատն ընդունում էր ընտանեկան միջավայրում:

Իմաստը հետևյալն էր. տարբեր տարիքի տասնհինգ–քսան տղամարդ միավորվում էր միևնույն վրանի ներքո՝ համատեղ ճաշկերույթների համար: Վրանի պահեստ (φειδίτης) էին ներմուծում անհրաժեշտ քանակության սննդամթերք՝ հատիկեղեն, ընդեղեն,

(hidden face), որտեղ կարևոր էր ընտանիքի և մասնավոր վարժանքների դերակատարությունը: Տե՛ս **Ducat**, 2006, 12-132:

¹⁰⁵ Թերևս *համավրանություն* եզրույթն ավելի հստակ արտահայտեր այս միության իմաստը: Սակայն արհեստածին է, ուստի հազիվ թե ընդունելի:

¹⁰⁶ Հմմտ. *Plut., Lyc., XII, 2*: Եզրույթը (*ἀνδρεία*) բառացի նշանակում էր *առնություն* կամ *առնական ոգի*: Սպարտական ընդհանուր վրանը տիպաբանորեն առնչվում է տոհմացեղային կենցաղին ներհատուկ տղամարդկանց միություններին: Ավելի ճշգրիտ բանաձևմամբ այն դորիական ծագում ուներ: Տե՛ս **Андреев**, 2004, 141-155: Նորագույն հետազոտություններում հատկանշվում է համատեղ ճաշկերույթների դերը՝ համակշռելու չափավորությունն ու (ինարավոր) շքեղությունը: Տե՛ս **van Wees**, 2018, 247-251:

¹⁰⁷ Վերջին եզրույթը (φειδίτια) Պլուտարքոսը մեկնաբանում է նաև իբրև *ընկերության* և *բարեկամության* հոմանիշ (*Plut., Lyc., XII, 2*): Թերևս նրա մտքի հակառակ հեռանկարում այն առասպելույթն էր, որը համաբերում էր համատեղ ուտելու գործառույթը ընկերային, կրոնական և ծիսական արժեքների հետ: Իր հետագա զարգացմամբ այն սկսեց դառնալ նաև խմբային ինքնության հաստատագրման միջոց: Այս մասին տե՛ս մանրամասն **Twiss**, 2019, 155-176; **Kennell**, 2013, 39-43:

չորացած թուզ, պանիր, ձիթայուղ, գինի: Մուծում էին նաև տասն էգինյան օրոդոս՝ միս գնելու համար, որն օգտագործում էին ծիսական *սև արգանակ* պատրաստելիս [Plut., Lyc., IV,12]:¹⁰⁸

Սակայն ընդհանուր վրանի իմաստաբանությունն անհամեմատ ավելին էր, քան սննդամատույցը: Դատողամարդկանց ընկերային միություն էր իր քաղաքական և իրավական, ռազմական և կրոնածիսական բովանդակությամբ: Ուներ իր առաջնորդը, որի ընտրության մասին, ցավոք, ոչինչ չգիտենք: Գիտենք նոր անդամի ընդունելության ծիսակարգի մասին, որի կենտրոնական բաղադրիչը ձայնատվությունն էր: Պահանջվում էր բոլոր անդամների համաձայնությունը. «Խմբի յուրաքանչյուր անդամ վերցնում էր փափուկ հացի մի փոքրիկ գնդիկ և գցում այն խոր պնակի մեջ, որը սպասյակը տանում էր գլխից վերև: Ով համակրում էր հավակնորդին, գցում էր իր գնդիկն անփոփոխ, իսկ ով դեմ էր, մատներով հարթեցնում էր այն [ու ապա գցում], դա բացասական քվե էր համարվում: Եթե պնակում գտնվում էր այսօրինակ գեթ մի գնդիկ, ապա հավակնորդը մերժվում էր» [Plut., Lyc., XII, 2]: Դա հարված էր նրա հեղինակությանը: Եվ եթե դեպքը կրկնվում էր մեկ այլ վրանում նույնպես, հավակնորդը համարվում էր հանրությանից մերժված:

Ընտրված հավակնորդը հայտնվում էր սերտ ընկերակցության համաձիրում, որտեղ տիրում էր փոխա-

¹⁰⁸ Արդի դարաշրջանում, հանրային տարբեր համատեքստերում տղամարդկանց միությունները տարբեր ինքնույթենական, իմաստային և դերային հանդերձանքով են ներկայանում՝ սկսյալ *անգլիական ակումբներից* մինչև ֆաշական *եղբայրությունները*: Հիմնախնդրի մերօրյա ընկալումների մասին տես **Կոն**, 2009, 23–36:

դարձ աջակցության ոգին: Հընթացս ճաշկերտյութների ծավալվում էին քննարկումներ ներկայի և անցյալի տարաբնույթ հիմնախնդիրների շուրջ՝ զինվորական գործ, ներքին ու արտաքին քաղաքականություն, կրոն ու ծես, օրենք ու բարոյականություն: Ձևավորվում էին ընդհանուր մտտեցումներ և ըմբռնումներ, որոնք կարող էին դրսևորվել Աշխարհաժողովում, կրոնաժխական գործողություններում: Սկզբնաղբյուրները հատկազծում են այս կազմակերպությունների դերակատարությունը ռազմակարգում: Փաղանգի առաջնազծում էին, և ժամանակակիցները նրա հաղթանակները սովորաբար կապում էին վերջիններիս քաջության և փոխգործակցության հետ:¹⁰⁹

Յուրաքանչյուր վրանում առկա էր իր աստիճանակարգությունը՝ քաջարի և տարիների փորձառությանը իմաստնացած ավագներ, որոնց հետևում էին երիտասարդները: Շատ դեպքերում այն նույնական չէր արտաքո պաշտոնական աստիճանակարգին: Եվ տարօրինակ չէ, որ վրանը ներկայանում էր իբրև համակեցական ուրույն միավոր:¹¹⁰ Համաձայն

¹⁰⁹ Ընդհանուր վրանի կապը բանակի հետ համարվում էր նրա դերակատարության կարևորագույն չափանիշը [Plato, Leg., 625d, 633a]: Տե՛ս **Андреев**, 2004, 171-180; **Singor**, 1999, 371-73:

¹¹⁰ Զարգացնելով այս միտքը՝ Պղատոնի իմաստասիրական երկխոսություններից մեկի մասնակիցը՝ Աթենացին, հատկանշում է, որ ընդհանուր վրանը կարող է անգամ դառնալ ներքին անհամաձայնությունների և ընդհարումների պատճառ [Plato, Leg., 636b]: Արդի հետազոտողներն այս իրողությունը դիտարկում են իբրև սպարտական համակեցության խորքային հակասություններից մեկը, որը հընթացս ժամանակի սրել է նրան ներհատուկ այլ հակասություններ: Եվ այս գործընթացն սկսեց ցայտուն կերպարանք ստանալ դասական դարաշրջանում, երբ սկսեցին բացահայտվել «հավասարների» կարգավիճակային, ունեցվածքային և հոգեբանական տարբերությունները: Տե՛ս **Hodkison**, 1983, 244-251:

Պլուտարքոսի՝ «Պատանիներն էլ էին հաճախում ճաշկերույթներին իբրև սթափության դպրոց՝ լսելու քաղաքական քննարկումներ և տեսանելու ազատ պահվածքի իրական օրինակներ» [Plut., Lyc., XII, 3]: Վրանի ավագը սովորաբար դիմում էր նրանց. «Այս դռնից ոչ մի բառ դուրս չի ելնում»:

Հիշենք նաև, որ վրանների մեջ ներգրկված էին առանց բացառության բոլորը՝ սկսյալ արքաներից, ծերակուտականներից, քրմերից և էփորներից մինչև վերջին սպարտիատը: Նրանք բոլորն անցնում էին ընտրության նույն սանդղակով: Ենթադրելի է, որ վրանները ծիսականորեն պահպանել էին դորիական համակեցական տեսլականի ինչ-ինչ հատկագծեր: Եվ դա կարևոր էր՝ առօրյա կյանքում խուսափելու ծայրահեղություններից, զի աստ ընտրախավն անմիջականորեն առնչվում էր հասարակական կարծիքի ձևավորման հոլովույթին:

Տղամարդկանց միության ծիրում ձևավորվում էր սպարտիատի հոգեբանության մի կարևոր հիմնագիծ. նա իրեն ավելի սերտ էր զգում վրանակիցների և պետական-հասարակական կառույցների, քան ընտանիքի և արյունակից բարեկամների հետ: Հարկավ, դա ընդհանրական պատկերն էր. իրականում սերտության և այլության բևեռների միջև առնչությունները բավական բարդ էին ու տարասեռ: Եվ հետագա պատմությունը դրա բազում օրինակներ է ներկայացնում:¹¹¹

¹¹¹ Խոսքը կրկին Դասական դարաշրջանի մասին է, որը, ինչպես ցույց կտրվի ստորև, սպարտական հանրույթին գումարեց մի նոր լարում՝ հասարակական հոծ համալիրի և անհատականացող սպարտիատի: Տե՛ս **Hodkison**, 1983, 260–265:

4. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

Սպարտիաոս կանայք արմատապես տարբերվում էին հունական այլ համայնքների կանանցից. ավելի մարզված ու առողջ, ազատ ու (իրենց միջավայրին հարիր) կրթյալ էին: Եվ դա իր կնիքն էր դնում նրանց հանրային դիրքի վրա: Արդեն խոսել ենք. մինչև տասներկու տարեկան տղաներին հավասար կրթանք էին ստանում:¹¹² Դրանից հետո վերադառնում էին ընտանիք և սկսում յուրացնել տնարարության հիմունքները՝ մաքրություն, շուկա, սնունդ, հագուստ, ծառաների կառավարում: Մասնակցում էին պետական ու կրոնական ծիսակատարություններին: Հետևում էին սերնդակից տղաների հաջողություններին: Չէին խուսափում նրանց հետ հանդիպումներից, որոնք, սակայն, զուրկ էին առանձնակի հուզականությունից:¹¹³

Վերարտադրությունը համարվում էր սպարտական հանրության գերակա խնդիրը: Ի համեմատություն Հունաստանի այլ կանանց՝ սպարտոսիկներն ամուսնանում էին ավելի ուշ՝ տասնութ-քսան տարեկանում: Սպարտայում հավատացած էին, որ «մայրությունն ազատ կնոջ կարևորագույն գործառնությունն է», և այս տարիքն էլ՝ առավել հարիր այդ նպատակի համար [Xen., Lac. Polit., I, 1, 4]: Տղամարդկանց համար այդպիսին համարվում էր առնության առաջին շրջափուլը՝ քսանմեկ տարեկանից հետո:¹¹⁴

¹¹² Բացի մարմնակրթանքից՝ սպարտոսիկներն ստանում էին նաև մուսական կրթության տարրեր՝ երգեր, պարեր, ասմունք: Նրանցից ոմանք էլ բավական հառաջանում էին այդ ասպարեզում: Տե՛ս Pomeroy, 2002, 5-12:

¹¹³ Տե՛ս Pomeroy, 2002, 34, Katz, 2002, 103:

¹¹⁴ Հավելենք, որ պատշաճ տարիքում ձևակերպված և պտղաբեր ամուսնությունները քաջալերվում էին պետական կարգաբերմամբ և

Ամուսնության նպատակով տղամարդը դիմում էր նախ աղջկա հորը, որը խնդիրը քննարկում էր ընտանիքում: Դրան մասնակցում էր նաև աղջիկը, ով ի մոտո ճանաչում էր սերնդակիցներին և ուներ իր նախընտրությունները: Վճռական ձայնը պատկանում էր հորը, որը հաշվի էր առնում նաև դստեր կարծիքը՝ ով է հավակնորդը, ինչ ընտանիքից, ինչ երամակից, ինչ հատկանիշներ և հեղինակություն ունի: Դրանից հետո կայացվում էր որոշում՝ դրական կամ բացասական: Դրականի պարագային ընտանիքը դստեր համար օժիտ էր նախապատրաստում:¹¹⁵

Հարսանիքը չէր առանձնանում ո՛չ ծիսական մանրամասներով, ո՛չ էլ հյուրասիրության զեխությամբ: Հետո ամուսինը «փախցնում և առաջնորդում էր» կնոջն իր տուն:¹¹⁶ Սակայն առաջիկա տարիներին դեռ միասին չէին ապրում. ամուսինը ժամանակ առ ժամանակ այցելում էր կնոջը՝ խուսափելով ի ցույց դնել իրենց համատեղ կյանքի մանրամասները: Հատկանշել ենք՝ նա շարունակում էր մնալ իր երամակի կազմում՝ մասնակցելով մարմնական վարժանքներին և ռազմական խաղերին: Այս ընթացքին կիսն ապրում էր ուրույն կյանքով. կառավարում էր տունը և հեղոտներին,

հանրային բարոյականությամբ: Դրա կողքին ունենք տեղեկույթ, որ ուշ ամուսնության կամ դրա բացակայության դեպքում (*ἀγαμία*) նախատեսվում էին պարսավ և (անգամ) պատիժ [Pollux, *Onomasticon*, VIII, 40]:

¹¹⁵ Սկզբնաղբյուրներում հիշատակվում են նաև պետական հատուկ գործակալներ՝ *պահապան պրիեր* (κῆρυοι), որք առաջադրանք ունեին հետևելու ամուսնության գործընթացի օրինականությանն ու նպատակահարմարությանը: Տե՛ս **Cartledge**, 1981, 100:

¹¹⁶ Դրան հակառակ՝ սրբատեղիներում անցկացվող ծիսական գործողություններն աչքի էին ընկնում հնարավոր շքեղությամբ: Համարում էին, որ աստվածներին են վերադարձնում *նրանց տվածը*: Տե՛ս **van Wees**, 2018, 219-224:

ժամանցներ ունենում ընկերուհիների և ընկերների հետ: Երբ երևում էին գավակներ, ինքը և ամուսինը միայն ուղղորդում էին նրանց դաստիարակությունը, մնացյալն անում էին ծառաները:

Հանրային հոգեբանության դիպլոմատիկայից՝ սպարտիանների հանրադասը իրեն գիտակցում էր իբրև համամարմնություն, որի անդամները փոխադարձ փոխադրվելի էին: Ի հասարակությունն այս մարմին հաճախ բերվում է Զենոփոսի հերկյալ վկայությունը. «Չավակներ ունենալու աղագալ ծեր ամուսինը կարող էր տուն բերել մեկին, որի մարմնական և բարոյական հարկագծերը հավանում էր հույժ»:

[Xen., Lac., Polit., I, 7]¹¹⁷

Համատեղ կյանքն սկսվում էր, երբ կյանքի երեսունմեկերորդ տարում տղամարդն անցնում էր տարիքային հաջորդ շրջափուլին և դառնում էր *այր ավագ*: Սովորաբար ընտանիքը տեղափոխվում էր իր կալվածքը, որտեղ կինը հանձն էր առնում դրա կառավարումը:¹¹⁸ Հուսկ աճում էին նրա դերն ու ազդեցությունը: Մինչդեռ ամուսինը շարունակում էր ներգրավված մնալ հանրային կյանքի մեջ: Եվ վերջինիս կարևորագույն բաղադրիչները շարունակում էին մնալ նրա մշտական մարզումներն ու մասնակցությունը ռազմական արշավանքներին:

¹¹⁷ Համարվում էր, որ այս իրավիճակը չի խաթարում սպարտական մենամուսնության հիմքերը: Սակայն դասական դարաշրջանի ավարտին, երբ սպարտիատների հանրադասը կանգնեց ժողովրդագրական լուրջ խնդիրների առաջ, բազմամուսնությունն անգամ խրախուսվում էր [Polyb., XII, 6b, 8]: Տե՛ս **Scott**, 2011, 418-419:

¹¹⁸ Սովորության իրավունքի և հանրային հոգեբանության դիտանկյունից դա համարվում էր միանգամայն բնական, զի կրթանքի առաջին շրջափուլից հետո նրանք տրվում էին տան գործերին և ի մոտո ծանոթ էին դրա կառավարմանը: Տե՛ս **Pomeroy**, 2002, 44-45:

Այս գործուն տարիքը սովորաբար շարունակվում էր տասը–տասնհինգ տարի:¹¹⁹ Ոմանց մարզավիճակը թույլ էր տալիս, որ դա ձգվի անգամ մինչև վաթսուոնամյա հասակը, երբ դառնում էին *ծեր*: Սակայն հընթաց տարիների անցնելով պատերազմների թոհուրոհով՝ նրանք հաճախ զոհվում էին «հանուն պետության ու հայրենիքի»: Եվ ծերերի քանակությունը սպարտիատների հանրությունը բավական սահմանափակ էր:¹²⁰

Այլ էր կանանց պարագան: Սպարտացիներն անգամ ստեղծել էին նրանց հավաքական իդեալական կերպարը: Եվ հավատացած էին, որ դրան առավել համապատասխանում է Գորգոն՝ Լեոնիդաս արքայի կինը (Ք.ա. 489–480): Բացի կատարյալ մարմնակրթանքից՝ թագուհին ստացել էր նաև *ակադեմիական դաստիարակություն*. հմուտ էր գրականության, երաժշտության, պարի մեջ: Պլուտարքոսի խոսքերով՝ ուղարկելով ամուսնուն Թերմոպիլյան ճակատամարտի (որտեղ մահն անդառնալի էր), հարցրել էր՝ «ինչ անեն»: Ի պատասխան հնչել էր վերջինիս իմաստուն խոսքը. «Ամուսնացիր մարդու հետ, ով քեզ լավ կվե-

¹¹⁹ Դրա հետ մեկտեղ ունենք տեղեկույթ, որ սպարտիատի կյանքը այս աստիճան ենթակա չէր հանրային կարգաբերման: Եթե հավատանք Դիոնիսիոս Հալիկարնացուն՝ «[...] յուրաքանչյուրի տան դուռը հատկանշում էր նրա ազատության սահմանը» [Dion. Halicarn., Rom. Ant., XX, 13. 2]:

¹²⁰ Սպարտիատների հանրադասի ժողովրդագրական պատկերն անտիկ սկզբնաղբյուրների տվյալների և արդի հետազոտական մեթոդների կիրարկմամբ վերականգնվում է բավարար ճշգրտությամբ: Ընդամեն ասվածը վերաբերում է տարբեր ժամանակաշրջաններին՝ Արխայիկ, Դասական, Անկման: Գործընթացն ընթանում էր նվազման կորագծով՝ 8–10 000–ից մինչև 5–3000: Շրջադարձային կետ է ընդունվում Ք.ա. 465 թվականի ավերիչ երկրաշարժը, որին հաջորդեց Պելոպոննեսյան պատերազմը: Տե՛ս մանրամասն Ֆիգիրայի մենագրային հոդվածը՝ **Figueira**, 1986, 177–187; 192–199:

րաբերի, ծնանիի նրան զավակներ, ապրիի արժանավայել կյանքով» [Plut., Mor., 225a, 3]: Հակադարձելով օտարերկրուի ու կշտամբանքին, թե սպարտուիհիները գերակայում են տղամարդկանց նկատմամբ, նույն Գորգոն շեշտել է. «Ձի միայն նրանք են ծնանում [ճշմարիտ] տղամարդկանց»:

Սակայն առկա էր նաև սպարտուի ու բացասական կերպար: Արտահայտելով իր դարաշրջանի մտայնությունը՝ Արիստոտելը գտնում էր, որ Սպարտայի թուլացման պատճառը կանանց մեծ քանակությունն էր. ժառանգության և օժիտի (πατροῦχος) միջոցով ձեռք էին գցել երկրի հողակտորների երկու հինգերորդական մասը [Arist., Polit., 1270a, 20-25]: Ապրում էին հույժ բարեկեցիկ կյանքով՝ խախտելով սպարտական ավանդական ժուժկալությունը: Նրանց երբեմն անվանում էին *դրամասեր* և *ընչաքաղց* (φιλοχρήματα):¹²¹

Երկու պատկերների պարագային էլ կանայք մնում էին սպարտիատների ընտանիքի կենտրոնական դեմքը: Ընտանիք, որի անդամների միջև բացակայում էին խոր անձնական կապն ու հուզականությունը: Ինչպես նշել ենք՝ դրանք միջնորդված էին պետական-հանրային հրամայականով ու ծեսով:

¹²¹ Սպարտուիհիների կյանքի այս կողմն իր ազդեցությունն էր թողել հանրային կյանքի համարյա բոլոր հարթակներում: Առավելաբար ավագ տարիքում, երբ ժողովրդագրական գերակայությունն իրենց կողմն էր, նրանք միջամտում էին հանրային գործընթացներին որդիների և թոռների միջոցով: Արիստոտելը և այլ հեղինակներ հենց դրանում էլ տեսնում էին Սպարտայի անկման ներգործուն պատճառներից մեկը: Տե՛ս Redfield, 1978, 148-150; Hodkinson, 2004, 9-20: Արդի հետազոտություններում առկա է նաև մեկ այլ մոտեցում, ըստ որի՝ նման պատկերացումն ստեղծվել է աթենական քաղաքության ներքո: Տե՛ս Millender, 1999, 363-365:

Ինչ վերաբերում է պերիօյկոսների և (մանավանդ) հելոտների ընտանիքներին, ապա դրանց մասին տեղեկություն աղքատիկ է ու կցկտուր: Վստահաբար կարող ենք սուսկ ասել, որ դրանք ավելի ներփակ էին՝ հեռու սպարտիափաների հնարավոր ոտնձգություններից: Մյուս կողմից էլ՝ վերջիններս աշխատում էին հեռու մնալ նման հանցարարքներից, զի օրենքը ծանր պատիժ էր նախատեսում:¹²²

5. ԲԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՐԳ

Ռազմակարգը փաղանգն էր (φάλαγξ), որը սպարտիափաների համամարմնության գերագույն ձևն էր նկատվում: Դրա կարևորագույն բաղադրիչը քաղաքացին էր, որ հասել էր այրության մակարդակի: Նա արդ հույլիտ էր՝ ծանրագեն հետևակի զինվոր: Իր տեղը ռազմակարգում որոշվում էր կրթանքի նախորդ շրջափուլերի արդյունքներով:¹²³

Վերադառնալով սպարտական հույլիտի կերպարին՝ հատկանշենք, որ նա կրում էր ստանդարտ գենքեր՝ բրոնզե կլոր մեծ վահան (ἄσπις), կարճ երկսայրի սուր (ξίφος), նիզակ (δόρυ): Գլխին ուներ բրոնզե սաղավարտ (κράνος), որը ծածկում էր ամբողջ դեմքը՝ բացառությամբ աչքերի ու քիթ-բերանի: Կրծքավանդակը ծածկում էր բրոնզե զրահը (πανοπλία):¹²⁴

¹²² Անտարակոյս, Սպարտայի կախյալ հանրադասերն ունեին իրենց իրավունքները, որոնք ամրագրված էին օրենքներով և անձեռնմխելի էին: Դրանց խախտումը ենթադրում էր ծանր պատիժ: Տե՛ս Зайков, 1999, 6-9; Зайков, 2009, 8-13:

¹²³ Փաղանգի ձևավորումը, բացի ռազմավարական նորամուծություններից, ուներ նաև ընկերային կյանքի վերակառուցման հստակ միտում ըստ մերիտոկրատիկ սկզբունքի: Տե՛ս Snodgrass, 1965, 113-115:

¹²⁴ Սպարտայում կար մի հին ավանդություն, որը «փաղանգի

Այս ամենը բավական թանկ արժեք է, կրկնենք մեկ անգամ էլ, հասանելի էր լոկ ունևոր գյուղացիության զանգվածին: Հիշենք, որ զինվորն ինքն էր հոգում զենքի ու զրահի ծախսը:¹²⁵

Սպարտական փաղանգը հոծ ու խիտ զանգված էր, սակայն ոչ առանց ներքին հստակ հորինվածքի: Առկա էին ենթակառույցներ, որոնք «հրամանի և գործողության» ուրույն միավորներ էին: Առաջին միավորը *շարքն* էր (στίχος)՝ բաղկացյալ մինչև 16 հոպլիտից, հավանաբար միևնույն վրանից: Երկրորդը *երդվյալների խումբն* էր (ἐνομότια). պարառում էր մինչև 32 հոպլիտ, որք միավորված էին կրոնածիսական փոխադարձ պարտավորություններով: Երրորդը՝ *դարանը* (λόχος), միավորում էր 256 հոպլիտ: Չորրորդը՝ *ռազմակարգը* (μῶρα)՝ չորս դարանից, որ հավասար էր 1024 հոպլիտի: Հինգերորդը՝ ամբողջական *փաղանգը*՝ բաղկացյալ 5–6 ռազմակարգից՝ մոտավորապես 6–8 հազար հոպլիտ:¹²⁶ Յուրաքանչյուր

հայտնագործումը» կապում էր Տիմոմաքոսի հետ: Նա Էգեիդների արքայատոհմից էր և, համաձայն Արիստոտելի, առաջինը սահմանեց բանակի այս նոր միավորի մարտավարական և ռազմավարական սկզբունքները: Տե՛ս Arist., fr. 532, Rose: Փաղանգի զինատեսակների, ճակատամարտի ժամին դրանց հերթական օգտագործման մասին տե՛ս Echevarraia, 2012, 292-295:

¹²⁵ Ասվածը մտնում էր հոպլիտների փաղանգի կազմակերպման և ռազմավարության ընդհանուր կանոնակարգի մեջ, որի արմատները գալիս էին կրոնածիսական ազոնի միջավայրից: Այն պահանջում էր պետություններից փոխադարձ պահանջների ձևակերպում և ներկայացում, պատերազմի հռչակում, ճակատամարտի վայրի ընտրություն, մարտավարության համաձայնեցում, ռազմական գործողությունների ընթացքի կարգաբերում, զինադադարի հաստատում, բանակցությունների սկզբնավորում, խաղաղության պայմանների ճշգրտում և պայմանագրի կնքում: Համարվում է, որ նման ալգորիթմիկ վիճակն իր իրավածիսական ձևակերպմանը հասել է միայն Ք.ա. 5-րդ դարում: Տե՛ս Krentz, 2002, 25-34:

¹²⁶ Փաղանգի առաջին քայլերը հետազոտողներից ոմանք տես-

ստորաբաժին ուներ իր զորահրամանատարը, որի աստիճանակարգը կարևորվում էր սկսյալ հատկապես դարանի մակարդակից՝ լոխոգարխոս, ստրատեգոս, ավտոկրատոր:

Հանձին վերջինիս՝ նկատի ունեին արքային, որի լիազորությունները ռազմարշավի ընթացքին ընդլայնվում էին՝ հասնելով ինքնիշխանության աստիճանի (*αὐτοκρατία*): Նշանների հատուկ համակարգով՝ այս մակարդակից հրամաններն իջեցվում էին մինչև շարքի մակարդակ: Հրամանատարները դրանք գիտեին իրենց վարժանքներից: Հայսմ խիտ ու կայուն փաղանգը դառնում էր նաև ճկուն ու դյուրին կառավարելի:¹²⁷

Իր կառուցվածքով փաղանգը ներկայացնում էր քառանկյուն կամ ուղղանկյուն: Յուրաքանչյուր լոխոսի ճակատային շարքում կանգնում էր սովորաբար 8 կամ 12 հոպլիտ (*πρόμαχοι*): Նույնքան էլ շարքեր կային: Դրանց միջակա տարածությունը ռազմերթի ժամին 2 մետր էր, իսկ հարձակման և (մանավանդ) պաշտպանության ժամին կրճատվում էր մինչև 0,5 մետր: Արդեն հատկանշել ենք՝ առաջին երկու-երեք շարքերում կանգնում էին ամենափորձված ու մարտունակ հոպլիտները: Շարքերի խորացմանը զուգընթաց՝ այս հատկանիշները թուլանում էին: Հետին շարքի հոպլիտները սովորաբար

նում են (անգամ) Հոմերոսյան դարաշրջանում: Իսկ դրա կայացման հոլովույթի կապը քաղաք-պետության զարգացման շրջափուլերի հետ հատուկ հետազոտական խնդիր է: Հմմտ. **Griffith**, 1992, 809, **Echeverria**, 2012, 303-308:

¹²⁷ Հետազոտողները հատկազօնում են, որ փաղանգը կրկնում էր սպարտական հանրույթի հիմնարար բարոյահոգեբանական առանձնահատկությունները: Ի մասնավորի՝ խոսքը գինիորների անվերապահ ենթարկվելու պահանջի մասին է: Ինչպես հատկազօնել ենք՝ Լիկյորգոսը դա համարում էր յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը: Տե՛ս մանրամասն **Андреев**, 2014, 258-265:

վիրավորներին դուրս էին բերում մարտադաշտից, իսկ անհրաժեշտության պարագային փոխարինում ընկածներին: Սկզբնաղբյուրներն առանձնացնում են նրանց մեկ այլ կարևոր գործառույթ, այն է՝ ի գործ էին դնում, այսպես կոչված, *հրումը կամ ճնշումը*: Նկատի ունեն՝ հետին շարքերից եկող մարմնական ճնշումը, որը միտված էր քայքայելու հակառակորդի ռազմակարգը: Այս կապակցությամբ, կարծում ենք, ճշգրիտ է Տիրտեոսի խոսքը՝ ուղղված սպարտական փաղանգի հոպլիտին.

*Գնա ընդառաջ հակառակորդին,
[...] սեղմիր վահանդ նրա վահանին,
Եվ սաղավարտի՝ իր սաղավարտին, կուրծքդ՝ իր կրծքին,
Տապալիր նրան՝ սեղմած [ափիդ մեջ] բռնակը սրիդ
կամ էլ նիզակիդ:*

Tyrtaeus, VII, 31-34¹²⁸

Յուրաքանչյուր ռազմարշավ Սպարտայում դիտարկվում էր իբրև նաև կրոնաժխական գործողություն: Նպատակն էր սրբազան իրավունքի դիտանկյունից արդարացնել (կամ մերժել) դրա հանձնառությունը: Այս առնչությամբ քրմերը նախ գուշակություն էին անում՝ իմանալու աստվածների կամքը: Դրանից ելնելով միայն՝ արքաները, ծերակուտականները և Աշխարհաժողովը կարող էին որոշում կայացնել:¹²⁹

Դրականի պարագային կատարվում էր հաջորդ քայլը. առաջադրվում էր այն արքայի թեկնածությունը, որը ղեկավարելու էր արշավանքը՝ արտակարգ լիա-

¹²⁸ Հմմտ. Herod., IX, 62, 2; Thuc., VI, 70, 2; Xen., Hell., II, 4, 35: Հրումի կամ ճնշումի ռազմավարական և մարտավարական նշանակության մասին տես Pritchett, 1971, 134-143: Խոշոր հաշվով՝ դա սպարտիատների հանրախմբի *համամարմնության* դրսևորումներից էր:

¹²⁹ Տես Krentz, 2002, 33-36:

գորություններով: Եվ միայն դրանից հետո նա կատարում էր բանակի համագրում, իսկ էփորները նշանակում էին նրա թիկնագորի անդամներին: Վերջիններս սովորաբար փառապանծ ընտանիքների զավակներ էին՝ առավելագույնը 300 զինվոր:¹³⁰ Հեծյալ էին, կատարում էին արքայի հանձնարարությունները, իսկ ճգնաժամի պահին նետվում էին հոգնություն հոպլիտներին:¹³¹ Հիշենք՝ արքային ուղեկցում էր նաև էփորներից մեկը, որի խնդիրն էր հակակշռելու վերջինիս՝ բացարձակության ձգտող իշխանությանը:

Հարկավ, փաղանգում կային նաև պերիոյկոսներ, որոնք սովորաբար ծառայում էին իբրև թեթևագեն զինվոր (*πελαστής*): Նրանք նաև զենք ու զրահ էին պատրաստում և նորոգում: Իսկ ճակատամարտի ծանր պահերին սպարտիատները նրանց իրավում էին կռվել հոպլիտի հանդերձանքով և մարտավարությամբ: Իրենց ծառայության դիմաց կարող էին լիի-

¹³⁰ Ավելի ճշգրիտ՝ էփորներն ընտրում էին երեք *հեծելընտիր*, որք հավաքագրում և ղեկավարում էին արքայի թիկնագորը: Ռազմարշավի ժամին այն աչքի էր ընկնում առանձնակի քաջությամբ և ինքնագոհողությամբ [Xen., Lac. Polit., IV, 6]:

¹³¹ Հետազոտողները կարծում են, որ այս 300 հեծյալները ռազմաշարքում մարտնչում էին իբրև ծանրագեն հետևակի զինվոր: Հեծյալ էին, երբ կատարում էին արքայի հատուկ հանձնարարությունները: Տե՛ս **Андреев**, 2014, 246-247: Նրանց հետ էր, որ Ք.ա. 480 թվականին Լեոնիդաս արքան որոշեց կանգնել պարսից բանակի դեմ Թերմոպիլյան կիրճում: Հետազոտողներից ոմանք արքայի և ավագանու երիտասարդ ներկայացուցիչների այս միասնության մեջ տեսնում են մենիշխանության և ազնվապետության այն նախնական համերաշխությունը, որի դեմ ձեռնարկվեց «փաղանգի հեղափոխությունը»: Տե՛ս մանրամասն **Salmon**, 1977, 84-101: Այլ հետազոտողներ, սակայն, հակված են մտածելու, որ կապն այս աստիճան ուղղագիծ ու անմիջական չի եղել. արքաները և վերնախավը նույնպես շահագրգիռ են եղել փաղանգի կազմավորման գործում: Տե՛ս **Cartledge**, 1977, 21-23:

րավ քաղաքացի դառնալ:¹³²

Փաղանգում կային նաև հելոտներ, որք ունեին օժանդակ դերակատակություն. սնունդ էին պատրաստում, բեռներ տեղափոխում, դարմանում վիրավորներին, ընկածներին հանձնում հողին: Սակայն ունենք բազում տեղեկություններ, որ ծանր պահերին նրանք նույնպես հոսյալի տի հանդերձանքով մարտի դաշտ էին մտնում [Herod., IX, 61,2; 80, 1-3; X, 1, 28; Thuc., IV, 93-96; V, 64, 2]:¹³³ Ենթադրելի է, որ նրանցից ոմանք ծառայության դիմաց ստանում էին անձնական ազատություն [Thuc., IV, 26., 5; Xen., Lac. Polit., VI, 5, 28]: Սակայն նման դեպքերն սկսում են տիպական դառնալ սկսյալ Ք.ա. 4-րդ դարի սկզբներից միայն, երբ սպարտիաոսների հանրադասը սկսում է առերեսվել ժողովրդագրական լուրջ խնդիրների:¹³⁴

Ասվածին հավելենք մի ուրվագիծ նույնպես. պատերազմների բարեհաջող ելքի պարագային սպարտացիները ձեռք էին բերում բավական հարուստ ավար և ռազմատուգանք: Սակայն դրանք չէին դառնում անձնական հարստացման աղբյուր: Համաձայն Քսենոփոնի՝ կար մի պետական մարմին՝ գանձարան (ταμειον), որը հավաքում, հաշվարկում և բաշխում էր եկամուտը՝ ի բարօրություն պետության և հանրության

¹³² Ի հետևանս նման փոփոխությունների՝ արդեն Ք.ա. 4-րդ դարի սկզբներից «լակեդեմոնացի» եզրույթի մեջ սկսեցին ներգրավել երկրի ողջ ազատ ազգաբնակչությանը՝ ինչպես սպարտիաոսներին, այնպես էլ պերիոյկոսներին: Տես **Forrest**, 1968, 131-133:

¹³³ Տես մանրամասն **Hant**, 1997, 129-144:

¹³⁴ Տես **Finley**, 1992, 495; **Finley**, 1964, 239-240: Սակայն ստրկալուծման գործընթացը միշտ չէ, որ ընթացել է հարթ ու դյուրին: Թուկիդիդեսը, օրինակ, պատմում է, որ Պելոպոննեսյան պատերազմի ժամանակ սպարտիաոսները խաբել են հելոտներին: Ծանր իրավիճակն օգտագործել են նրանցից խիզախներին առանձնացնելու, իսկ ապա կոտորելու համար [Thuc., IV, 80, 3]: Հմմտ. **Jordan B.**, 1990, 38-39:

[Xen, Lac. Polit., XIII, 2]: Դրա աշխատանքին ուշիուշով հետևում էին էփորները և ողջ հանրույթը:

6. ՍՊԱՐՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սպարտական պատմությունը (մանավանդ վաղ շրջափուլերում) քիչ էր անհատականացված: Մեր տեղեկություն ականավոր գործիչները թույլ են ուրվագծված կամ էլ իսպառ բացակայում են: Արտաքուտ պավորությունն այն է, թե աստ գերակայում է *պայրմական ընդհանրական շարժը*:

Սակայն ճակատագրապաշտության որոգայթից խուսափելու համար հարկ է սպարտական պատմությունը տիպաբանել ըստ առանձին հիմնախնդիրների ու դարաշրջանների: Ամենաընդունելի տարբերակներից մեկը ներկայանում է հետևյալ հանդերձանքով:

6.1. Ինքնակայացման նախնական շրջափուլը

Սպարտան, որը ներկա քնության հիմնախնդիրն է, սկսում է պատմական ընթացքը Բրոնզեդարյան քաղաքակրթական փուլումից և դորիական նվաճումից ի վեր՝ Ք.ա. 12–9-րդ դարեր: Ինչպես հատկազօել ենք, այս իրադարձություններն ուղեկցվել են քաղաքակրթական հետընթացով, հարդյունս որի միկենյան պալատական խոշոր համալիրներին եկան փոխարինելու մանր, ցաքուցրիվ գյուղական բնակավայրեր:

Հուսկ Սպարտան սկսեց մի նոր պատմուղի՝ տոհմացեղային կառույցներից դեպի պետական կառույց:¹³⁵

¹³⁵ Մութ դարաշրջանը դիտարկվում է ոչ միայն իբրև հետընթացի, այլ նաև արտադրական տեխնոլոգիաների, հասարակական հարաբերությունների և կառավարման համակարգերի վերակա-

Գործընթացն ուղեկցվում էր անընդհատ պատերազմներով, հընթացս որոնց բյուրեղացավ արքայական իշխանության և ազնվապետության համերաշխությունը: Դա էլ դարձավ պետական կազմավորման հիմքը: Ամենայն հավանականությամբ այս վիճակը շարունակվել է մինչև Ք.ա. 7-րդ դարի կեսերը, երբ տարածում ստացավ փաղանգը, և պատմական ասպարեզ իջան հոպլիտները՝ ունևոր գյուղացիությունը: Նրանց հետ է կապվում սպարտական հանրային կյանքի որոշակի ժողովրդայնացումը:

Հետազոտողները գտնում են, որ այս անցումները արդյունք էին հետևողական բարենորոգումների, որոնք պատմական ավանդությունը միավորել է Լիկուրգոսի անվան ներքո, ամենայն հավանականությամբ՝ Ք.ա. 7-րդ դարի վերջին: Նրա *Ռեթրան* սպարտիատների ներքին փոխզիջման ու համախմբման փաստաթուղթն էր, որը հնարավորություն էր տալիս կառուցելու իրենց հանրային հրամայականը կախյալ ազգաբնակչության նկատմամբ՝ պերիոյկոսներ և հելոտներ: Հիշենք՝ հասուն սպարտիատներն ընդամենը 8–10.000 էին, իսկ մնացածները՝ մոտավոր հաշվարկով տասն անգամ ավելի:¹³⁶ Այս էթնիկ-ընկերային տեքտոնիկ խզվածքին հարկ է հավելել նաև իրավաքաղաքական խզվածքը՝ մենիշխանական–ազնվապետական բևեռի և

նուցման բարդ ու ընդգրկուն գործընթացի միջավայր: Տե՛ս **Martin**, 1996, 36–50:

¹³⁶ Հարկավ, հաշվարկն արված է տարաբնույթ մոտավորությունների համադրման ճանապարհով, որն ընդգրկել է ընկերային, կենսաբանական և տնտեսական բնույթի տեղեկությունը: Այն վերցված է հիմնականում հնագիտական նյութերից ու գրավոր սկզբնաղբյուրներից: Հմնտ. **Doran**, 2018, 18–24: Հեղինակների մի խումբ էլ առաջնորդվում է Սպարտայի վարած պատերազմների և ճակատամարտերի փաստագրությունից՝ որքան զինվորներ, որքան վիրավորներ ու սպանվածներ: Տե՛ս **Figueira**, 1986, 170–175:

ժողովրդավարության միջև: Հընթացս հետագա պատմության դրանք մեկ անգամ չէ, որ պետք է կանգնեցնեին Սպարտան քաղաքակրթական ճգնաժամի առջև:

6.2. Սպարտան՝ համահունական ուժային կենտրոնի հեգեմոն

Այս ներքին կերպափոխություններին համընթաց՝ տեղի էին ունենում բախումներ հարակա ժողովուրդների և պետական կազմավորումների հետ: Նախ սպարտացիները հաջողության հասան իրենց արևելյան հարևանների նկատմամբ և դուրս եկան հարավային Դելոպոննեսի արևելյան ծովեզր: Տեղաբնիկներին վերածեցին հելոտների: Ապա հարվածն ուղղեցին ընդդեմ արևմտյան հարևանների՝ մեսսենացիների, որոնց երկիրը հարուստ էր «անվերջանալի, բարեբեր դաշտերով, այգիներով, հարուստ բերքով ու առատությամբ» [Tyrtaeus, Fr., 36, 15-21]: Աստ նրանք հանդիպեցին զորեղ դիմակայության, որը տևեց մոտ հարյուր տարի: Սկզբնաղբյուրները խոսում են մեսսենական պատերազմի մասին՝ Ք.ա. 8-7-րդ դարերում: Աստ փաղանգը ցույց տվեց իր մարտական լավագույն հատկանիշները և գրավեց երկիրը:¹³⁷ Համարյա բոլոր մեսսենացիները վերածվեցին հելոտի: Դրան անմիջապես հետևեց նրանց կատաղի ապստամբությունը, և երկու կողմերից եղան բազում զոհեր: Սպարտացիները կրկին հաղթեցին, սակայն սկսեցին մեղմել վերաբերմունքը նվաճյալների նկատմամբ:

Եվ սա դարձավ նրանց արտաքին քաղաքականու-

¹³⁷ Երկրամասի էթնիկ կազմի, պետական և ռազմական կազմակերպության առանձնահատկությունների, հակասպարտական պատերազմների մասին տե՛ս մանրամասն Thirlwall, 2010, 341-358; Luraghi, 2008, 292-329:

թյան հիմնագիծը՝ հնարավորինս խուսափելու պարտավածների վրեժխնդրությունից:¹³⁸ Հետագայում վերջինս ծնունդ տվեց *դաշնային հարաբերությունների համակարգին*:¹³⁹ Ավանդությունը կերպավորության հեղինակ է համարում Էփորոս Քիլոնին: Չկարողանալով կոտրել հարևան Տեգեիայի դիմադրությունը՝ նա առաջակեց դաշնություն, որն ընդունվեց: Դա Ք.ա. 550 թվականն էր: Առաջիկա հիսուն տարիներին Սպարտան այսօրինակ հարաբերություններ հաստատեց Պելոպոննեսի համարյա բոլոր պետությունների հետ:¹⁴⁰ Եվ ապա դուրս եկավ դրա սահմաններից՝ դաշնության ծիրի մեջ ներգրավելով այնպիսի զարգացած քաղաք-պետություններ, ինչպիսիք էին Կորնթոսը, Սիկիոնը, Մեգարան: Դրանք անհանգստացած էին Աթենքի արագ զարգացմամբ և կարիք ունեին աջակցության:¹⁴¹

Նախապես դաշնությունը կառուցված էր բացա-

¹³⁸ Այս գործում հետազոտողները կարևորում են մի հանգամանք, որը միշտ չէ, որ արժանանում է ուշադրության. սպարտական և հարակա երկրների ավագանիների միջև հաստատվում էին կրոնաձիսական հյուրընկալության (ξενία) հարաբերություններ: Տե՛ս **Hodkinson**, 1997, 93-94:

¹³⁹ Ասվածն իրականության սպարտական գունագարդման երանգներ է պարունակում: **Андреев**, 2014, 71-73: Սակայն ինչ-որ չափով շիտակ է սպարտական ծավալման մասին Պելոպոննեսի տարածքում և ապա դրանից անդին:

¹⁴⁰ Եվ ոչ միայն Սպարտան, պաշտոնական քարոզչության մեջ համարյա բոլոր պետությունները (ի շարս դրանց՝ նաև Աթենքը) խոսում էին *ալլախիրության* մասին՝ հատկազօծելով, որ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվում են սեփական անվտանգության, պատվի և նոր միայն օգուտի շարժառիթներով: Տե՛ս **Chittick, Freyberg-Inan**, 2001, 86-89: Ինքնաբավ Սպարտայի քարոզչության և արտաքին քաղաքականության առնչությունն ավելի սերտ էր: Դաշնակիցների շրջանում անգամ սկսեց ձևավորվել «պատվավոր պարտություն» հղացքը: Տե՛ս **Cartledge**, 2001, 218-219:

¹⁴¹ Միավորման ձևավորման հոլովույթի և դրա իրավաքաղաքական հիմնավորման մանրամասների մասին տե՛ս **Cawkwell**, 1993, 364-376:

ռապես Սպարտայի շուրջ: Նրա հետ էին դաշնակիցները հարաբերում: Մտնելով միության մեջ՝ նոր անդամը հանրաձայնում էր. «[...] երդվում եմ՝ ունենալու Սպարտայի հետ միևնույն թշնամին ու բարեկամը (τὸν αὐτὸν ἐχθρὸν καὶ φίλον)» [Xen., Hell., II, 2, 20]:¹⁴²

Այս պարագային սպարտական Աշխարհաժողովի որոշումները պարտադիր էին նկատվում բոլորի համար: Սակայն հրնթացս ժամանակի դաշնակիցներն սկսեցին գիտակցել իրենց դերակատարությունն այս ուժային կենտրոնի մեջ, և ծնվեց միության Համաժողովը (Συνέδριον), որը քննարկում և քվեարկությամբ ընդունում կամ մերժում էր հեգեմոնի առաջակությունները: Հետազոտողները գտնում են, որ այս կարևոր կերպափոխությունը տեղի է ունեցել Ք.ա. 506 թվականին՝ խորաթափանց Կլեոմենես Ա արքայի նախաձեռնությամբ: Նա գիտակցում էր, որ պետք է գնալ զիջման՝ գերակայությունը պահպանելու համար: Հավատացած էր՝ Սպարտան ինքնաբավ է, և դաշնակիցներն իրենք պետք է խնդրեն, որ նա *դուրս գա* իր ավանդական շրջանակներից: Նման փոխլրացման ճանապարհով հունական միջավայրում ձևավորվեց աշխարհաքաղաքական առաջին ուժային կենտրոնը՝ *Պելոպոննեսյան միությունը*:

6.3. Անհատականացման և կերպափոխության մարտահրավերը

Դիտարկվող գործընթացը դառնում է ակնառու Ք.ա. 5-րդ դարում և 4-րդի առաջին քառորդին: Երկու հակադիր պատմական միտումներ էին բախվում.

¹⁴² Պելոպոննեսյան ռազմաքաղաքական միության կայացման, ներքին հարաբերությունների և կառույցի առանձնահատկությունների մասին տես մանրամասն **Bolmarcich**, 2008, 66-69:

ավանդականը՝ միտված պահպանելու առկա պետական կարգն ու գաղափարաբանությունը, և արմատականը՝ կերպափոխելու դրանք: Երկուսի պարագային էլ կարևոր էին գործող անձանց (իշխանատենչ) շարժառիթները: Նախկինում ընդունված էր առաջին բևեռում տեսնելու էփորներին, իսկ երկրորդում՝ արքաներին:¹⁴³ Սակայն արդ պատկերն ավելի բարդ էր. դիմակները կարող էին փոխվել:

Ք.ա. 5-րդ դարի սկզբից Սպարտան ոտք դրեց աշխարհաքաղաքականության ընդլայն հարթակ: Նախաձեռնողը Կլեոմենես Ա արքան էր (Ք.ա. 519–491 թթ.):¹⁴⁴ Այդուհանդերձ, նրա (և այս տիպաբանության այլ գործիչների) կենսուղին դեռ տատանվում էր ծավալումի և ինքնաբավության բևեռների միջև: Պելոպոննեսյան միության բարենորոգմանը զուգընթաց՝ արքան փորձեց գերակայություն հաստատել Աթենքի նկատմամբ, բայց չհաջողեց: Իր պաշտոնակից Դեմարատի դրդմամբ՝ նրան հակազդում էին կորնթացիները [Herod., V, 70-75]: Թերևս այս խթանով էլ որոշեց չսատարել հոնիական հույների հակապարսկական ապստամբությանը (Ք.ա. 499 թ.):¹⁴⁵

Արքան սահմանափակվեց տեղական նշանակության խնդիրներով և (դելփյան գուշակի անունից) կեղծ մեղադրանքներ առաջադրեց իր պաշտոնակ-

¹⁴³ Տե՛ս **Grundy**, 1912, 261-263:

¹⁴⁴ Տե՛ս **Forrest**, 1992, 250:

¹⁴⁵ Հերոդոտը մանրամասներ է հաղորդում այս մասին. ապստամբ Միլեթ քաղաքի ներկայացուցիչ Արիստագորասը մտավ Կլեոմենեսի տուն և փորձեց նրան կաշառել հակապարսկական պատերազմին մասնակցելու համար: Առաջարկում էր ահռելի գումար՝ հիսուն տաղանդ արծաթ, բայց արքայի մանկահասակ դուստրը (մեզ արդեն հայտնի Գորգոն) պահանջեց. «Հայր, դուրս արա օտարերկրացուն, այլապես նա քեզ կկաշառի» [Herod., V, 51, 2]:

ցին [Herod., VI, 65-66]: Դեմարատն արքսորվեց, բայց շուտով կեղծիքը բացվեց: Ինքն էլ արքսորվեց, թեպետ շուտով էփորների օժանդակությամբ վերադարձավ, բայց մտազարվեց և ինքնասպան եղավ: Կենսահոգեբանական այս բեկումը, հարկավ, արդյունք էր խորքային ընկերային բեկման [Herod., VI, 6, 84]:¹⁴⁶

Նույն պատմական խաղընթացի հաջորդ արարի հերոս դաձավ գահի խնամակալ Պալսանիասը: Գործել է ընդամենը երկու-երեք տարի (Ք.ա. 479-477 թթ.), մասնակցել հակապարսկական պատերազմի բախտորոշ իրադարձություններին: Խոսքն առաջին հերթին Պլատեիայի ճակատամարտի մասին է (Ք.ա. 479 թ.), որտեղ հույները նրա առաջնորդությամբ տարան անսախաղեպ հաղթանակ. պարսից զորահրամանատարը զոհվեց, իսկ զինվորներն ընկան կամ էլ գերվեցին ի ստրկություն:¹⁴⁷

Դրանից հետո ռազմական գործողությունները տեղափոխվեցին Էգեյան ծով, որտեղ գերակայությունն արդեն Աթենքինն էր: Սպարտական զորավարը կարծես չէր նկատում այս փոփոխությունը. հաստատվել էր Հելլենսպոնտոսում, խիստ էր ու արհամարհական դաշնակիցների նկատմամբ, մեղմ՝ բարբարոսների. «Դաշնակիցների մեծ մասը, չկարողանալով տանել Պալսանիասի անգթությունը և արհամարհանքը, հարեց [աթենացի] Կիմոնին և Արիստիդեսին:¹⁴⁸ Նրանք

¹⁴⁶ Հետազոտողներից ոմանք, հարկավ, ոչ առանց չափազանցության, Կլեոմենես Ա արքային դիտարկում են իբրև սպարտական միջավայրում «առաջին անհատականություն»: Տե՛ս **Суриков**, 2005, 212-213:

¹⁴⁷ Հակատամարտի ռազմավարական պլանի, ընթացքի և նշանակության մասին տե՛ն Herod., IX, 60-72, հմմտ. **Holland**, 2005, 350-355:

¹⁴⁸ Այս ականավոր ռազմական և քաղաքական գործիչների ջանքերով հունական միջավայրում սկսեցին հստակ գիտակցել, որ հակապարսկական պատերազմը վերջնականապես փոխել է իր

էլ տեղեկացրին էփորներին, որ Սպարտան կորցրել է հեղինակությունը, և Հունաստանը շփոթության մեջ է, ուստի հարկ է Պալսանիասին հետ կանչել» [Plut., Cimon, VI, 3; հմմտ. Arist., XXIII, 4-6]: Հետ կանչեցին և մի քանի անգամ դատական գործ ձեռնարկեցին: Գումարվեցին նոր մեղադրանքներ առ այն, որ նա հարաբերությունների մեջ է պարսից արքունիքի հետ, որ անգամ միտք ունի հելոտների ներգրավմամբ կատարելու պետական հեղաշրջում և դառնալու միահեծան [Diod. Sic., XI, 45, 5-6]: Դժվար է ասել, թե որքան էին արժանահավատ այս մեղադրանքները, բայց համարելով, որ այլ ելք չունի, Պալսանիասը որոշեց ապաստանել Աթենաս աստվածուհու տաճարում: Եվ աստ, մերժված բոլորից, սովամահ եղավ [Thuc., I, 134, 2; Diod. Sic., XI, 45, 7]:¹⁴⁹

Խաղընթացի երրորդ արարի հիմնական դերակատարը երիտասարդ արքա Պլիստոնաքսն էր (Ք.ա. 458–445 թթ.): Ընթանում էր Առաջին Պելոպոննեսյան պատերազմը (Ք.ա. 460–445 թթ.), գերակայության պայքարում բախվել էին Պելոպոննեսյան և Դելոսյան ռազմաքաղաքական միությունները, որոնց առաջնորդում էին Սպարտան և Աթենքը: Դաշնակիցների զորքի հետ սպարտական արքան մտավ Ատտիկա և գրավեց նրա կրոնական կենտրոնը՝ Էլևսինը: Ոչինչ չէր խան-

րնույթը և դարձել ծովային: Ուստի Սպարտայի առաջնորդությունը դարձել է ժամանակավրեպ: Տես **Суриков**, 121-131; 212-217:

¹⁴⁹ Խոսքը սրբազան ապաստանի մասին է (*ἀσυλία*): Համաձայն ծիսական իրավունքի՝ տաճարի տարածքում անձը հայտնվում էր աստծո հովանավորության ներքո: Նրա վրա չէր տարածվում դրական իրավունքի ուժը: Ուստի սպարտացիները որոշեցին Պալսանիասին կտրել արտաքու աշխարհից՝ շարելով տաճարի մուտքը: Եվ առաջին աղյուսը դրեց արքայի մայրը [Diod. Sic., XI, 45, 7]:

գարում գրավելու Աթենքը, սակայն նա կանգ առավ, կնքեց խաղաղության համաձայնագիր և հեռացավ [Thuc., I, 114, 2]: Հավանաբար արքան չէր ցանկանում իսպառ թուլացնել Աթենքը՝ երկյուղելով պարսիկների ծավալապաշտությունից: Սակայն նրա հակառակորդները պնդում էին, որ նա կաշառվել է: Տեղի ունեցավ քննություն. արքայի խորհրդականը դատապարտվեց մահվան, իսկ իրեն թույլ տվեցին հեռանալու հարևան Արգոս: Աստ Լիկեյան Ջևսի տաճարում նա ապրեց տասնութ տարի [Plut., Pericles, 22, 2-3]:¹⁵⁰

Իսաղընթացի չորրորդ արարի գործող անձն այս նույն արքայի որդին ու ժառանգորդն էր՝ Պալսանիասը (Ք.ա. 408–395 թթ.), որը շարունակեց խաղաղության քաղաքականությունը:¹⁵¹ Նրա հակառակորդն էր ծովակալ Լիսանդրոսը՝ հայտնի իր բազում հաղթանակներով: Ի լրումն դրանց՝ Ք.ա. 405 թվականին նա ջախջախեց աթենական բարոյալքված նավատորմը: Դա երկար ու ձիգ Երկրորդ Պելոպոննեսյան պատերազմի վերջնակետն էր (Ք.ա. 431–404 թթ.): Հաջորդ տարում սպարտական ցամաքային և ծովային ուժերը գրավեցին Աթենքը: Թեպետ արքաների ներկայու-

¹⁵⁰ Սակայն հետո արդարացվեց, վերադարձվեց ի գահ (Ք.ա. 427 – 408) և դարձավ Ք.ա. 421 թվականի Նիկիապայան համաձայնագրի նախաձեռնողներից: Այն հիսունամյա խաղաղություն էր խոստանում երկու ռազմաքաղաքական միություններին, զի կողմերն սպառել էին ծավալումի իրենց պաշարը [Thuc., V, 13-24]: Հայսմ հետազոտողներից ոմանք կարծում են, որ հարկ չէ ընդգծել այս կամ այն գործչի առանձնակի ծառայությունը. «Ժամանակն էր զինադադարի»: Տե՛ս **Legon**, 1969, 323-334:

¹⁵¹ Տակավին դասական ժամանակներում այս արքայի անձը, կյանքը և գործը տեղիք է տվել տարասեռ մեկնաբանությունների, ինչից զուրկ չեն և արդի հետազոտությունները՝ «լայնախոհ և փափուկ ձեռքի կառավարիչ» կամ «հայրենիքի դավաճան»: Տե՛ս **Hamilton**, 1979, 85-86:

թյան՝ դեպքերին տոն էր տալիս ծովակալը: Աթենքը ճանաչեց իր անվերապահ հանձնումը, ցրեց Աթենական ծովային միությունը և քանդեց երկար պարիսպները: Ծովակալը նրան պարտադրեց «երեսուն բռնապետների» վարչակարգը: Գործում էր իբրև *կարգ ու կանոն հաստատող* (ἀρμοστής):

Նման կերպ արդեն վարվել էր իր *ազապագրած* բոլոր վայրերում. «[...] քաղաքները նա հանձնում էր ամենահանդուգն և կռվազան խմբիչխանների» [Plut., Lys., XIII, 5]: Գտնում էր, որ այս կերպ դյուրին է կառավարել պարտվածներին: Այսու հասցրել էր Հունաստանում ձևավորել անձնական ազդեցության մի ամբողջ համացանց, ինչին Սպարտայում անհանգստությամբ էին հետևում:¹⁵²

Սակայն Ք.ա. 403 թվականին, երբ սպարտական զորքը հեռացել էր, Աթենքում բռնկվեց քաղաքացիական պատերազմ բռնապետների և ժողովրդավարների միջև: Վախենալով Լիսանդրոսի իշխանատենչ նկրտումներից՝ Սպարտայում որոշեցին հարցի կարգավորումը հանձնարարել Պավսանիասին: Նա եկավ և Աթենքում վերականգնեց ժողովրդավարությունը. համարում էր, որ այն այլևս վտանգ չէ ընդդեմ Սպարտայի: Հրավիրեց Աշխարհաժողով և աթենացիներին հայտարարեց, որ «[...] չկա պատճառ անհանգստության, պետք է ապրեն ըստ այն օրինաց, որոնց ներքո

¹⁵² Ծովակալի իշխանական համացանցի և նկրտումների մասին մեր տեղեկությոնը բխում է հիմնականում Քսենոփոնի գրույթից: Գնահատականը, հարկավ, դրական է, զի հեղինակի հակաաթենական տրամադրությունները հանրահայտ էին: Տե՛ս Westlake, 1992, 631; Bury, 2006, 299-301: Հավանաբար, ծովակալը մեկնարկում էր նաև սեփական դերի ինքնագիտակցումից. հիշենք՝ իր անունը Λυσάνδρος, ընդունված էր արտածել լսո՞ւ բայաճնից՝ «լուծել-ազատել» նշանակությամբ: Տե՛ս Liddel, Scott, 1940, 391:

նախկինում ապրել են» [Xen., Hell., IV, 42]:¹⁵³

Սպարտայում այս քայլն սկսեցին ընկալել իբրև կաշառքի հետևանք: Հատկապես փութեռանդ էին Լիսանդրոսի կողմնակիցները: Կրքերը շիկացան, երբ նրանց սկսեց սատարել մյուս արքան: Հարցի քննությունը տեղափոխվեց Ծերակուտարան, և Պալսանիասը խուսափեց ծանր պատժից միայն ձայների չնչին առավելությամբ: Աստ ակնհայտ դարձավ, որ սպարտական ավագանին անդառնալիորեն պառակտվել է: Եվ պարադոքսն այն էր, որ երկու կողմերն էլ (գիտակից կամ անկուր) միտված էին առ իշխանության բացարձակացման:¹⁵⁴

Հանգուցալուծումն իրական պատկեր ստացավ

¹⁵³ Իրական քաղաքականության (Realpolitik) լույսով հետազոտողներից ոմանք կարծում են, թե այս «փափուկ» մոտեցմամբ սպարտական արքան հույս ուներ հակառիկ ստեղծել բարձրացող Թերեի դեմ: Տե՛ս **Forrest**, 1968, 121: Սակայն ավելի ընդունելի է մեկ այլ (փոքր-ինչ պարադոքսալ թվացող) փաստարկ. պատմական ընդլայն հեռանկարում Աթենքը, հարկավ, պարտվել էր և չունեցրել այլևս համահունական գերակայության հավակնություն, սակայն հաղթությունը Սպարտային էլ հիմք չտվեց իրագործելու այդ նույն նպատակը: Այսինքն՝ կողմերից ոչ մեկը չէր հասել Պելոպոննեսյան պատերազմի իր ելակետային նպատակին: Իրականում «հաղթողներ չկային, կային միայն պարտվածներ»: Տե՛ս **Roberts**, 2006, 369:

¹⁵⁴ Այլ խոսքով՝ ճգնաժամը համակարգային էր. չնայած իրենց առօրեական պահվածքին՝ հակադիր քաղաքական խմբակցությունները գործում էին համարյա նույն տրամաբանությամբ: Հետազոտողներից ոմանք (ոչ առանց չափազանցության) հատկազոծում են ճգնաժամի մանրամասները՝ դրա ծիրի մեջ ընդգրկելով «դրամական կաշառքը», «ունեցվածքային անհավասարությունը», «ավագանու ներքին պառակտումը»: Տե՛ս **Finley**, 1982, 30-34: Պատկերն ամբողջացնելու աղագավ հարկ է հավելել, որ կար պառակտումի մեկ այլ բևեռ նս. Բ.ա. 398 թվականին Սպարտայում բացահայտվել էր մի շարժում, որը խնդիր ուներ միավորելու ստորիններին (հեղոտներ, պերիոյկոսներ) ընդդեմ սպարտիատների տիրապետության: Սպարտիատները գործեցին արագ և անզիջում. մահապատժի ենթարկեցին դրա առաջնորդին՝ Կինադոնին, և նրա մերձավորներին: Տե՛ս **Forrest**, 1968, 124; հմմտ. **Печатнова**, 1997, 44-47:

Ք.ա. 395 թվականին: Աքեմենյան արքունիքի սատարմամբ Սպարտայի դեմ ձևավորվել էր դաշինք, որի մեջ էին Արգոսը, Կորնթոսը, Աթենքը, Թեբեն: Սպարտացիները համագրեցին երկու բանակ՝ Պալսանիասի և Լիսանդրոսի հրամանատարությամբ: Ռազմավարական խնդիրն էր՝ մտնել Բեոտիայի տարածք և շարքից հանել հիմնական ախտյանին: Սակայն ծրագիրը ձախողվեց՝ ի հետևանս զորավարների անհամաձայնության: Լիսանդրոսն առաջինը հայտնվեց հակառակորդի հանդիման, մարտի բռնվեց և պարտվեց: Չոհվեց, իսկ զինվորներից շատերը գերի ընկան: Մեկ օր անց մարտի դաշտում հայտնվեց Պալսանիասը, բայց սիրտ չարեց տալու ճակատամարտ. ընդունեց պարտության պայմանները և նահանջեց. «Նահանջի ժամին լակեղեմոնացիները հուսաբեկ էին, իսկ թեբացիները՝ ամբարտաճան: Եթե մեկը թեկուզ մեկ քայլ շեղվում էր ճանապարհից, հարվածներով հետ էին քերում» [Xen., Hell., III, 25]: Նման ստորացում սպարտացիները չէին տեսել իրենց ողջ պատմության ընթացքին: Դա նրանց գերակայության անփառունակ ավարտն էր:¹⁵⁵

Իսկ Պալսանիասին սպասում էր միևնույն բախտը. մի կերպ խուսափեց մահապատժից և ապաստան գտավ «Արկադիայում՝ Աթենաս աստվածուհու տաճարի սրբազան տարածքում» [Plut., Lyc., 30, 10]: Ապրեց բավական երկար և գրեց «Ճառ ի վերայ Լիկուրգոսի օրինաց» [Strabo, VIII, 5, 5]: Հավանաբար հակալիկուրգյան բովանդակություն ուներ:

Արիստոտելը գիտեր ժամանակակիցների կար-

¹⁵⁵ Տե՛ս Cary, Forrest, 1992, 793: Հիմնախնդրի նոր մանրամասների մասին տե՛ս Ruzé, 2018, 323-326:

ծիքը, որ Պավսանիասի և Լիսանդրոսի տարբերությունն սկզբունքային չէր. «[...] Լիսանդրոսը փորձում էր ի չիք դարձնել արքաների, իսկ Պավսանիասը՝ էփորների իշխանությունը» [Arist., Pol., 1301a, 16-20]:

Իմաստասերի այս բանաձևը կիրարկելի է նաև սպարտական խաղընթացի նախորդ հերոսների նկատմամբ. նրանք ձգտում էին բացարձակացնել իրենց հեղինակությունը՝ խախտելով ավանդական իշխանական իրավիճակը: Միաժամանակ անտարբեր էին պատմական մարտահրավերների նկատմամբ: Բարենորոգումների փոխարեն նախընտրում էին ապավինել ռազմական ուժին ու հարկադրանքին:¹⁵⁶ Չզիմացան հաղթությունների փորձությանը և ոչինչ չձեռնարկեցին նաև ռազմուժի արդիականացման համար: Այդ բանն արեցին Թեբեում, իսկ հետո՝ Մակեդոնիայում: Եվ Սպարտան կամաց-կամաց լքեց պատմության թատերաբեմը:

Տիպաբանտրեն նույն հիմնախնդրի առջև հայտնվեցին հռոմեացիները. իրենց պայքարության արշալույսին նրանք նույնպես բաղկացած էին ներսիակ կաստաներից՝ պարրիկներ և պերեյներ: Սակայն նրանց բանակն ու պեդական կառույցը թույլ էին. տեղի ունեցավ «դասերի պայքար», որը տևեց ավելի քան երկու

¹⁵⁶ Պեդոպոնեսյան պատերազմի հաղթական ավարտից հետո Սպարտան ներգրավվեց մանր ու մեծ ռազմական բախումների մեջ՝ խախտելով հավասարակշիռ հրամայականի իր ավանդական սկզբունքը: Հարկավ, դա իշխանության անհատականացման միտում էր պարունակում, բայց ոչ հանրային արմատական վերակառուցման ծրագիր: Սպարտան շարունակում էր մնալ կաստայական անհավասարության և ընկերային լարումի միջավայր՝ անհաղորդ արտաքո մարտահրավերներին: Հուսկ անկարող եղավ գտնելու այն ուղին, որը տանում էր ի վեր թե՛ հաղթանակից, թե՛ պարտությունից: Դա տերության կերպափոխվելու ուղին էր, որն անհասանելի մնաց Սպարտայի համար: Տե՛ս Hutchkinson, 2014, XIII-XIX:

*հարյուրամյակ (Բ.ա. 494 – 286 թթ.): Հաղթեց փոխզիջման տրամաբանությունը, փլուզվեցին ընկերային անջրպետները, և կազմավորվեց միացյալ Հռոմեական ազգը – Populus Romanus. Այն հույժ զգայուն էր պատրուխյան մարտահրավերների նկատմամբ։*¹⁵⁷

7. ՄՊԱՐՏԱՅԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ.¹⁵⁸ ՊՂԱՏՈՆ

Տակավին 5-րդ դարի երկրորդ կեսին, երբ թափ էր առնում ընկերային անկայունությունը, Հունաստանի զարգացած պոլիսներում տարածում ստացավ *լսկոնասիրությունը*¹⁵⁹՝ իբրև հասարակական պահվածքի և մտայնության կերպ։ Այն բավական ակներև էր Աթենքում. սկսեցին երևալ երիտասարդներ, որոնք «անտարբեր էին» հագուստի և կենցաղի նկատմամբ, չէին լողանում և կրում էին երկար մազեր [Aristoph., Aves, 1281-1283]։ Լսկոնասիրությունը դարձավ նաև իմաստասիրական խոհի առարկա. հատկազծվում էին սպարտացիների արժեհամակարգը և (հատկապես) պետական կարգը։ Պղատոնի հաղորդմամբ՝ այն բավական ներունակ էր տակավին Սոկրատեսի մտավորական շրջապատում [Plato., Rep., 544c]։¹⁵⁹ Բայց ընդգրկման տիրույթն անհամեմատ ավելի լայն էր՝ պարառելով խոսույթի և գրույթի տարբեր ժանրեր՝ սկսյալ թատերգությունից

¹⁵⁷ Այս բարդ ու տևական հոլովույթի մասին տես Abbot., 1901, 33-53, Cornell, 1995, 252-271, Bradley, 2020, 237-262, Stepanyan, 2024, 17-24:

¹⁵⁸ Որոշ հետազոտողներ նախընտրում են *սպարտական պարանք* (mirage spartiate) եզրույթը, որն առաջարկել է տակավին Ֆ. Օլլերը։ Համաձայն հեղինակի՝ այն ավելի հարիր է այս մտավոր փորձառության բովանդակությանը։ Նման մոտեցումը իրնթացքս ժամանակի բավական տարածում է ստացել։ Տես Ollier, 1933, 22-27:

¹⁵⁹ Տես Schofield, 2021, 454-456.

մինչև պատմագրություն, ճարտասանություն, մարմնակրթանք, բարոյագիտություն և իմաստասիրություն: Տարբեր մակարդակով և ընդգրկմամբ դրանք մարմնավորում էին այնպիսի ականավոր դեմքերի, ինչպիսիք էին Արիստոփանեսը, Հերոդոտը, Թուկիդիդեսը: Սակայն որոշել ենք հիմնախնդիրը ներկայացնել լակոնասիրության երկու ներկայացուցիչների հարադրությամբ՝ Քսենոփոնի և Պղատոնի:

Երկուսն էլ Սոկրատեսի մերձակա միջավայրից էին: Առաջինի գրույթը՝ «Լակեդեմոնական սահմանադրությունը», հիմնականում նկարագրական է՝ համաբերված բացարձակ լակեդեմոնասիրությամբ: Բացակայում է սպարտական համակեցության նկատմամբ քննադատական հայացքը՝ արատները և դրանց դիւնամիկան պատմական ժամանակի և տարածության մեջ: Հենց այս բացարձակացմամբ է պայմանավորված այն, որ Քսենոփոնի ազդեցությունը համեմատաբար մեծ չէ հետագա իրավաբաղադրագիտական մտքի վրա: Այլ է Պղատոնի պարագան. նրա լակոնասիրությունն ավելի արտաքո բնույթ ունի: Հիշենք նրա մտքերն առ այն, որ Սպարտան պակասավոր ընկերային և պետական ձև է (κακοπολιτεία), որտեղ իմաստությունից առավել սիրում են պատիվն ու հաղթությունը [Plato, Rep., 544a, 1-3, 545a, 2]:¹⁶⁰

Նման սթափ մոտեցումը խթան էր պարունակում՝ համաբերելու համակեցության մի իդեալական միջավայր՝ ձերբազատյալ գենետիկ գերազանցության, կաստայական սահմանափակվածության ու ինքնաբավության կապանքներից: Պղատոնն իրագործել է այս ծրագիրը մի քանի տարբերակներով,

¹⁶⁰ Հմմտ. Futter, 2012, 35-37:

որոնք դյուրությամբ լրացնում են միմյանց, զի հիմնարար սկզբունքները նույնական են: Այս հանգամանքն իմաստասերի իդեալական համակեցության պատկերին հաղորդում է համապատմականություն: Ի հետևանս՝ վերջինս այսօր էլ ներունակ է՝ հանդերձ իր տարասեռ մեկնաբանություններով:

Մեկնարկելով այս իրողությունից՝ որոշել ենք մեր քննությունը կառուցել ըստ իմաստասերի այն հիմնարար ըմբռնումների, որոնք ակնառու են նրա հատկապես «Հանրապետություն» և «Օրենքներ» երկասիրությունների մեջ:¹⁶¹

Պղատոնի լակոնասեր սևեռումը տիրական դարձավ Ք.ա. 4-րդ դարի սկզբին, երբ անկել էին ինչպես Աթենքը, այնպես էլ Սպարտան: Անհրաժեշտ էր *անցյալը պահ* տալ ուտոպիական գրույթի ծիրում և փորձել բանաձևել ապագայատեսական մի ծրագիր, որը հակամարտիսավարական իմաստ ու բովանդակություն կունենար:¹⁶²

Հընթացս ժամանակի հասունացավ նաև ցանկություն՝ միավորելու դրանք և կյանքի կոչելու Սիկիլիայի

¹⁶¹ Խորագրոյն առումով՝ պղատոնական իդեալական քաղաքը մարմնավորում էր այն համակեցական արժեքները, որոնք ներհատուկ էին նախապատմական Աթենքին և Սպարտային: Դրանց հակապատկեր–ապագան առասպելական Ատլանտիսն էր՝ խճճված հարստության և տեխնոլոգիաների մեջ: Տե՛ս **Charbit**, 2002, 226-229:

¹⁶² Պղատոնական խոսույթում *ամբոխավարությունը* հոմանիշ էր *ժողովրդավարության*: Նման ընկալումն իր տրամաբանական–իմաստաբանական–քաղաքագիտական զարգացմանը հասավ Արիստոտելի գրույթում: Տե՛ս **Cheek Jr.**, 1991, 59-63: Միևնույն ժամանակ Պղատոնի հայացքն ուղղված էր իր օրերի Աթենքին՝ համոզված, որ նրա անկումն ու պարտությունը Պելոպոննեսյան պատերազմում հետևանք էին հենց ամբոխավարության: Այդօրինակ իրավիճակներում, որպես կանոն, վերանում են պետական այն գործիչները, «[...] որոնք գիտեն, երբ սկսել պատերազմ, երբ կնքել խաղաղություն» [Plato, Polit., 304f]: Հմմտ. **Murray**, 1944, 2-3:

Սիրակուզա քաղաք-պետությունում: Կյանքի շուրջ քսան տարին Պղատոնը նվիրել է այս գործին՝ վստահելով տեղական բռնապետին և նրա շրջապատին:¹⁶³ Փորձը տապալվեց, զի հույժ պատրանքային էր, իսկ շրջապատը՝ երեսպաշտ ու եսասեր: Սակայն, ինչպես նշեցինք, իմաստասերի գաղափարներն ու հղացքները այսօր էլ հետազոտական սևեռումի առարկա են:¹⁶⁴

Անդրադարձել ենք. Պղատոնի «Օրենքների» մեջ իմաստասիրական երկխոսության մասնակիցներից մեկը, խոսելով Սպարտայի կառավարման համակարգի մասին, միտք է հայտնում, որ դա արդյունք էր հետևողական երեք բարենորոգումների: *Առաջինը* բխում էր աստվածային կամքից և կարգաբերեց արքայական իշխանությունը՝ բաժանելով այն երկու հավասարակշիռ թևի: *Երկրորդը* բխում էր մարդկային էությունից, որում առկա էր աստվածային սկիզբը: Արգասավորվեց Ծերակույտի ձևավորմամբ՝ ի հակակշիռ արքայական իշխանության: *Երրորդը* ձևավորվեց մարդկային նախաձեռնությամբ և ծնունդ տվեց Էփորատին՝ ի հակակշիռ առաջին երկուսի [Plato, Leg., 691d-692 c]:¹⁶⁵

¹⁶³ Խոսքը բռնապետ Դիոնիսոս Ա-ի (-Ք.ա. 405 – 367 թթ.) և նրա որդու մասին է: Տե՛ս **Momigliano, Woodhead**, 1992, 350-351: Մեկնարկելով Իմաստասերի տեսական հարցադրումներից և ձգտումից՝ մարմնավորելու իր գաղափարներն իրական կյանքում՝ հետազոտողներից ոմանք նրա ծրագիրը բանաձևում են իբրև *գործառնական ուղույիս*: Տե՛ս **Moore**, 2011, 82:

¹⁶⁴ Նպատակին հետամուտ՝ իմաստասերը երեք անգամ այցելել է Սիկիլիա: Համփորոշությունների արդյունքները ամփոփված են նրա նամակներում՝ ոգևորություն, հեռանկարներ, բարեփոխությունների ծրագրեր և ապա հիասթափություն: Այս մասին տե՛ս մանրամասն **Euangeliou**, 2017, 289-301:

¹⁶⁵ Դժվար չէ նկատել, որ պղատոնական այս տարբերակն արմատականորեն տարբերվում է տակավին Արիստիլ ժամանակաշրջանում ձևավորված տարբերակից, որի հերոսը օրենսդիր Լի-

Համոզում կար, թե աստվածային հավասարակշռությունից մինչև իշխանության մարդկային մակարդակ առաջնությունը պատկանում էր արքայական կառավարմանը. «Հարդյունս այն բանի, որ արքայական իշխանությունը բաղկացած էր շիտակ բաղադրիչներից ու չափից, ոչ միայն պահպանեց ինքն իրեն, այլ նաև կյանքի կոչեց մյուսներին» [Plato, Leg., 692a]: Հընթացս ժամանակի, սակայն, այդ հավասարակշռությունը խաթարվեց: Երկխոսության նույն մասնակիցը միտք է հայտնում, որ եթե այն պահպանվեր նախնական ձևով, ապա «[...] ո՛չ պարսկական, ո՛չ որևէ այլ գենք չէր ուղղվի ընդդեմ Հունաստանի, և [ոչ ոք] մեզ չէր արհամարհի իբրև աննշան ազգի» [Plato, Leg., 692c]:

Իմաստասերը հավասարակշռության խաթարման պատճառին անդրադառնում է իր «Հանրապետություն» երկասիրության մեջ, որտեղ սկետումի առարկան իդեալական քաղաք-պետությունն է: Դրա հիմնադրադիրը քաղաքացու և ընկերային միջավայրի համակերպությունն է: Հղացքը բացատրելու նպատակով իմաստասերը կենտրոնանում է մարդու հիմնախնդրի վրա: Գտնում է, որ նրա կարևորագույն կառույցը հոգին (ψυχή) է, որն էլ դարձնում է իր առանձնահատուկ քննության առարկան:

Համաձայն Պլատոնի՝ հոգին բաղկացած է երեք հիմնարար բաղադրիչներից, որք պատասխանատու են մարդ էակի կենսական երեք կարևորագույն գործառնությունների համար: *Մուսշինը* բանականությունն է (λο-

կուրգոսն էր: Տե՛ս Kőiv, 2005, 254-262: Հարկավ, Պլատոնն ինքը չէ դրա հեղինակը. այն գոյություն է ունեցել վաղուց անտի և սովետրվել առաջին տարբերակի ներքո:

γιστικόν)՝ պատասխանատու նրա խոհերի, մտահանգումների և ըմբռնումների համար: Իր բարձրագույն դրսևորմամբ այն ի գործու է մերձենալու հավերժական ճշմարտությունների ոլորտին: *Երկրորդ* բաղադրիչը պարառում է զգայական մղումներն ու կրքերը (θυμοειδές): *Երրորդը* դիտարկվում է իբրև մարմնական գրգիռների գետեղարան (ἐπιθυμητικόν) [Plato, Rep., 435d-e, 439e, 442a, etc.]:¹⁶⁶ Դրանք տրվում են յուրաքանչյուրին ի ծնե, սակայն գտնվում են համաչափ վիճակում միայն ընդ առաջնորդությամբ բանականի [Plato, Rep., 435e]:¹⁶⁷ Այլապես կարող են գերակայել կրքերը կամ էլ մարմնական գրգիռները, և անհատը լիարժեք լինել չի կարող: Ավելին՝ կարող է դառնալ չարիքի աղբյուր ինչպես իր, այնպես էլ շրջակա միջավայրի համար:

Ասվածի դիտակետից իմաստասերն անցնում է իր հղացքի հաջորդ մակարդակին և կառուցիկ զուգահեռներ տեսնում մարդու ու հանրային միջև:¹⁶⁸ Իդեալական քաղաք-պետությունը (καλλίπολις), համաձայն

¹⁶⁶ Վաղ միջնադարյան հայկական տեքստերում այս տեսությունն ունի հստակ դրսևորում: Ասվածը, ի մասնավորի, վերաբերում է Եղիշեին: Նրա գրությամբ հոգու հիշյալ հատվածները ներկայացված են հետևյալ եզրաբանությամբ՝ *բանական, ցանական և ցանկական*: Տես **Stepanyan**, 2024, 285–294:

¹⁶⁷ Բանականի առաջնորդությամբ շարժումը դիտարկվում է իբրև հոգու ինքնաշարժ, որի պարագային այն ի գործու է հասնելու իր նպատակին՝ ինքնակայացմանը: Տես **Campbell**, 2021, 534: Պղատոնի համատեքստում բանականը ներկայանում է ոգեկանության (θύμος) հետ համախոս: Եվ հոգու եռատակտ միասնությունը դառնում է երկտակտ՝ հակադրված մարմնականությանը: Տես **Long**, 2003, 3–4:

¹⁶⁸ Տեսությունը երբեմն բանաձևում են իբրև *ընկերային մարդակերպություն* (social anthropomorphism), որն ունի խոր իմացաբանական արմատներ հին հունական առասպելաբանության և տիեզերաբանության, կրոնի և ընկերային արժեքաբանության, արվեստի և հոգեբանության մեջ: Տես **Cartledge**, 1995, 17–28;

նրա, մարդակերպ է, զի իրագործում է նույն գործառնությունները, ինչ իր անդամ-քաղաքացիները՝ բանական, ոգեկան, մարմնական: Եվ բանական սկզբունքի ներքո իդեալական պետությունն ի զորու է ապահովելու համակեցական կյանքի հիմնարար չափությունները՝ *արդարություն* (δικαιοσύνη), *հավասարություն* (ισότης) և *բարեկեցություն* (εὐτυχία):¹⁶⁹

Այս պարագային է, որ բացահայտվում է Պլատոնի հանրահայտ բանաձևի իմաստը՝ «քաղաք-պետությունը պետք է լինի մեկ, բայց ոչ բազում» [Plato, Rep., 423d]: Այսինքն՝ չնայած իր (ընկերային և քաղաքական) բաղադրիչների առկայությանը՝ պետք է ներկայացնի անխախտելի միասնություն: Տարօրինակ չէ՝ որոշ հետազոտողներ հակված են վերջինս դիտարկելու իբրև մեծղի մարմին, որի կարևորագույն օրգանները նույնական են նրա կարևորագույն հանրադասերին՝ կառավարողներ, զինվորներ և արտադրողներ:

Անդրադառնալով Պլատոնի իդեալական պետության ընկերային-քաղաքական կարգի առանձնահատկություններին՝ հետազոտողներից ոմանք դա բանաձևում են իբրև «ամբողջատիրական ժողովրդավարություն»:¹⁷⁰ Ինչպես ցուցանում է համապատասխան փորձը, բոլոր ամբողջատիրական ռեժիմներն այս կամ այն աստիճան պարունակում են նաև ժողովրդավարության որակներ: Զի կառավարող ընտրախափի ձայնն ուղղված է առ «համակեցական հանուրը»՝ նպատակավ օրինականացնելու իր իշխանությունը:¹⁷¹

¹⁶⁹ Արդարությունն իր բազմիմաստ կառույցով Պլատոնի իդեալական համակեցական միջավայրի հիմնաքննությանից մեկն է: Տե՛ս Sembou, 2012, 45-66:

¹⁷⁰ Տե՛ս Klosko, 1984, 171-173:

¹⁷¹ Այսու՝ տարօրինակ չէ, որ ամբողջատիրական քարոզչության

Պղատոնի գրույթում զուգահեռն սպարտական բնօրինակի հետ անժխտելի է: Սակայն, միայն առաջին հայացքից, զի նրա իդեալական պետական կառույցը զուրկ է իրավական և արժեքանական բացասական երանգներից: Արդեն հատկանշել ենք՝ վերջինիս հանրադասերը իրավահավասար են. տարբերությունները վերաբերում են առավելաբար նրանց հասարակական դերակատարությանը:

Մարդիկ ծնվում են հոգեկան կառույցի տարբերություններով. մեծամասնության մոտ գերակշռում է մարմնականության, մինչդեռ մյուս զանգվածի մոտ՝ ոգեկանության բաղադրիչը: Միայն մի փոքր խմբի մոտ գերակշռում է բանականությունը: Ընդամին, «ստորինները» կարող են լինել «վերինների» կենսաբանական զավակները: Տարբերություններն ի ծնե են՝ ամրագրված կրթությամբ: Ուստի մանկավարը պետք է ճանաչի իր աշակերտի բնությունը և նախատեսի համապատասխան կրթընթացը: Միայն այս պարագային բնությունը կարող է դառնալ նրա հանրային պահվածքի հիմնաքարը. «Այն հանրույթը, որ նկարագրեցինք, երբևէ չի կարող դառնալ իրականություն կամ էլ [ինչպես ասում են] տեսնել լույս ու օր: Պետությունների և համայն մարդկության խնդիրներին վերջ չի լինելու, քանի դեռ իմաստասերները չեն դարձել արքա, կամ էլ նրանք, որոնց անվանում ենք արքաներ ու կառավարիչներ, չեն դարձել իմաստասերներ: Քանի դեռ քաղաքական իշխանությունը և իմաստասիրական խոհը չեն համատեղվել» [Plato, Rep., 499d]:

չատ խորհրդապաշտական և պատկերագրական կարծրատիպեր շարունակում են գործառել նաև ժողովրդավարական միջավայրերում: Տե՛ս **Sviličič, Maldini**, 2013, 570:

Այլով բանիվ՝ պետք է կառավարեն նրանք, որք գիտեն իրերի բնությունը:¹⁷²

Իրերի բնության կատարյալ համաչափությունը, համաձայն Պլատոնի, արտահայտում է կատարյալ թիվը՝ 5040: Այն միավորում է անտես և տեսանելի տիեզերքը, մարդուն և իր ընկերային միջավայրը: Արդյունք է մեկից մինչև յոթ թվերի հետևաշար բազմապարկման: Իդեալական քաղաք-պետությունը նույնպես քաղկացած է 5040 քաղաքացիներից, զի դյուրությանը նրանց կարելի է միավորել ու բաժանել տարբեր նպատակներով՝ սկսյալ ընտանիքից մինչև Աշխարհաժողով, հողաբաշխումից մինչև ռազմակարգ: Հմնյր. Plato, Rep., 546b.¹⁷³

Ի մի բերելով Պլատոնի պետական տեսականը՝ հարկ ենք համարում պարագծել հետևյալ նկատա-

¹⁷² Կարծիք կա, որ կառավարիչ-իմաստասերների ընկերային պահվածքն էականորեն տարբերվում էր մյուս հանրադասերի ներկայացուցիչների պահվածքից: Շնորհիվ գիտելիքների պաշարի՝ նրանք *ավելի ճկուն էին*՝ պատրաստ ոչ ավանդական որոշումների և լուծումների: Տե՛ս Kłosko, 1984, 183-187:

¹⁷³ Հարկավ, Պլատոնի թվերի տեսությունը շատ անգամ ավելի բարդ ու բազմապիսի է, երբ թիվը կապվում է «քնական ձևերի» անդրական բովանդակության հետ՝ կես, զիծ, եռանկյունի, քառանկյունի, հնգանկյունի... ընդհուպ քսանանկյունի: Աստ նա հետևում է Պյութագորասին՝ ներկայացնելով գոյակարգն իր հետևողական անցումներով և հավասարակշռություններով [Plato, Phileb., 56d-e; Phaedo, 102a-105b; Rep., 526a]: Տե՛ս Petrie, 1911, 252-255; Mohr, 1981, 620-627: Հանրակարգի անդրադարձով՝ իմաստասերը դիտարկում է 5040 թիվը նախ և առաջ իբրև գործիք՝ ճիշտ կազմակերպելու ժողովրդագրական վիճակը (ամուսնություն, ծնելություն, մահ): Ըստ նրա՝ դա ընկերային կայունության գրավականն է, որի վրա կառուցվում են քաղաքական, իրավական և կրոնական հաստատությունները [Plato, Leg., 737d-738a]: Տե՛ս Charbit, 2002, 208-210: Սակայն թվերի իմաստաբանությունը հունական միջավայրում շատ ավելի ընդգրկուն էր՝ պարառելով մտքի և իրական աշխարհի այլազան հարաբերությունները, որոնց կենտրոնում քաղաքացիական համայնքն էր և մարդը (քաղաքացի): Տե՛ս Bogdanović, 2013, 116-119:

ռումները: Առաջին, ի տարբերություն Քսենոփոնի նկարագրության՝ Պղատոնը ձգտում է տիպաբանել և ըմբռնել սպարտական համակեցական կարգը: Նաև՝ դրա անկումը, որն իր օրերին ընդունել էր անդառնալի երանգներ: *Երկրորդ*, պետության իր տեսլականում (առանց հատկանշելու) նա փորձում է հաղթահարել սպարտական կարգի «հիմնարար արատը»՝ հանրադասերի ծագումնաբանական և իրավաքաղաքական անջրպետը: *Երրորդ*, ամրագրել դրանց իրավահավասարությունն ու գործառնական կարևորությունը հասարակական հանուրի դիտանկյունից: *Չորրորդ*, վերհանել կրթական համալիրի կարևորությունը հանրադասերի ինքնանույնականացման հոլովություն: *Հինգերորդ*, լուսաբանել իմաստասեր-կառավարիչների դերակատարությունը իդեալական հանրություն՝ միտված ապահովելու հանուր բարեկեցություն և երջանկություն: *Վեցերորդ*, իմաստասերը համոզված է , որ այս կերպ հնարավոր կլինի խուսափել սպարտական համակեցական հարացույցի ծիսական ինքնաբավությունից և ճանապարհի հարթել դեպի աշխարհի ստեղծագործական յուրացումը՝ իմաստասիրություն և գիտություն, բարձր մշակույթ և տեխնոլոգիաներ:¹⁷⁴

¹⁷⁴ Մյուս կողմից՝ պահանջել Սպարտայից նման նորամուծություններ, կարծում ենք, օրինական չէ, զի աստ մշակույթը ծիսական էր: Համահունական մշակութային տիրույթում այս տարակերպը միանգամայն բնական էր և ընդունելի: Հիշենք՝ Հունաստանում ամեն բան բազմապիսի էր և բազմաչափ: Պետք չէ Սպարտայից պահանջել այն, ինչ տիպական էր Աթենքի կամ Կորնթոսի համար:

ՀԱՄԱԲԵՐՈՒՄ

Կարծում ենք՝ նպատակահարմար է Սպարտային նվիրված հետազոտական հանգույցը ներկայացնել հետևյալ տրամաբանությամբ:

1. Մեր քննության առարկան սպարտական քաղաք-պետությունն է, որն արդյունավորվել է Հեռմիկենյան դարաշրջանում՝ հարդյունս «պոլիսային հեղափոխության»: Դրա արմատները հասնում են մինչև Մութ դարաշրջան, երբ կործանվել էին պալատական քաղաքակրթության նշանավոր օջախները, և հասարակությունն իջել էր գյուղական համայնքների մակարդակի: Պատմական զարգացման տրամաբանությամբ և նվաճող դորիացիների ինքնապահպանության բնագոյով «ընտրվեց» ինքնակայացման մի նոր ուղի, որի արդյունքները հետագայում ի մի բերվեցին և վերագրվեցին Լիկուրգոս բարենորոգչին և նրա համաբերած սահմանադրությանը: Այն հայտնի է «Մեծ ռեթրա» վերտառությամբ:

2. Իրականում *Ռեթրան* արդյունք էր հետևողական բարենորոգումների մի ամբողջ շարքի, որ տեղի էին ունեցել Արխաիկ դարաշրջանում՝ Ք.ա. 8–6-րդ դարերում: Հընթացս դրանց արձանագրվել էին փոխզիջումներ մի կողմից՝ արքայական իշխանության և տոհմիկ ավագանու, մյուս կողմից՝ նրանց և միջին ունեցվածքի գյուղացիության միջև: Առաջին դեպքում կյանքի էր կոչվել Գերուսիան (Ծերակույտ), երկրորդ դեպքում՝ Փաղանգը (հոծ մարտակարգ), որն իր հերթին խթանել էր Ապելլայի (Աշխարհաժողով) դերակատարության զորացմանը: Հետագա-

յում այն կյանքի կոչեց նաև Էփորատը՝ արտակարգ լիազորություններով օժտված ամենամյա ընտրովի պաշտոնյաների հանձնախումբը, որը պետք է հակակշիռ դառնար արքաների և ավագանու ներուժի բացարձակացման միտումին:

3. Կառավարման այս համակարգը խառնված էր մի յուրօրինակ ընկերային հենքի վրա՝ բաղկացած երեք ներփակ հանրադասերից (կաստա)՝ սպարտիատներ, պերիօլկոսներ և հելոտներ: Կառավարող սպարտիատները հասարակության լիիրավ փոքրամասնությունն էին, և իրենց գերակայությունը թերիրավ և անիրավ մեծամասնության նկատմամբ ապահովելու աղագավ օգտագործում էին կրոնական և ռազմական, իրավաքաղաքական և մշակութային հրամայականը: Այսու իրավացի են այն հետազոտողները, որոնք Սպարտայում տեսնում են ամբողջատիրության անժխտելի տարրեր: Սակայն պատկերն ավելի բարդ է, զի առկա էին նաև ազնվապետության և ժողովրդավարության տարրեր: Համոզում կա, որ դրանց միջոցով իրագործվում էր արդարությունը: Հները (ի մասնավորի՝ Պղատոնն ու Արիստոտելը) դիտարկում էին դա իբրև քաղաքացիական հասարակության հիմնարար արժեք: Սակայն Սպարտայում արդարությունը միանշանակ ու համընդհանուր չէր: Կորպորատիվ էր՝ յուրաքանչյուր հանրադասի համար իր չափով ու բովանդակությամբ:

4. Տարասեռ հասարակական համալիրները հարակարգելու նպատակով Սպարտայում նախընտրեցին մոնոլիտ պետական-ընկերային կառույցը, որտեղ գերակայում էր կրոնաժխսական և ռազմական հրամայականը: Որքան այն ներունակ էր արտակարգ ռեժիմի

պայմաններում, նույնքան էլ խնդրական հասարակական անդորրի ժամին: Սպարտիատները դյուրությամբ հաղթահարում էին այս երկընտրանքը, զի իրենց կյանքը պարագծվում էր իբրև արտակարգ իրավիճակների շարան՝ ըստ ռազմակարգի հարացույցի: Եվ դրան նախապատրաստվում էին մանկութ՝ անցնելով հանրային դաստիարակության տևական ու բարդ աստիճաններով: Հանդերձ այդու սպարտիատների համախմբումը չէր հանգում անշարժության, զի դաստիարակությունն ուղեկցվում էր դաժան մրցակցությամբ: Դրա ընթացքին առանձնանում էին ապագա առաջնորդները՝ առանց ընտանեկան կամ տոհմական պատկանելության չափորոշիչի: Դաստիարակությունը և տղամարդկանց միությունները (ընդհանուր վրան) ընկերային շարժի միջավայրեր էին նկատվում:

5. Ռազմակարգը (փաղանգ) սպարտական հանրակարգի հիմքն էր և խորհրդանիշը: Աստ ամեն անհատ և հանրադաս ուներ իրեն սահմանված տեղը. սպարտիատները ներկայացնում էին հիմնական (հոպլիտային) ուժը, իսկ մյուս երկու հանրադասերը՝ օժանդակ-սպասարկող կազմը: Բանակը հոմեոստատիկ վիճակ էր ապահովում ինչպես Սպարտայի ներսում, այնպես էլ արտաքին միջավայրում: Նրա ներգործությամբ պետությունը գերակայության հասավ իր մերձավոր շրջապատի նկատմամբ (Պելոպոնես), իսկ ապա նաև հունական աշխարհում՝ ձևավորելով իր ուժային կենտրոնը՝ *Պելոպոննեսյան միությունը*: Սակայն գերակայությունը համեմված էր նաև դաշնակիցների շահերի հաշվարկով, որն ապահովվում էր նրանց վերնախավերի հետ շարունակական շփումներով:

6. Այս ձեռքբերումներով հանդերձ՝ Սպարտան շարունակում էր մնալ ինքնաբավ համակեցական միջավայր, որտեղ արհեստականորեն բուծվում և ներդրվում էր «արհամարհանք» մարմնական աշխատանքի, հարստության, բարձր մշակութային և տեխնոլոգիական նորարարությունների նկատմամբ: Համախմբման ռազմածիսական պաշարը շուրջ երկու հարյուրամյակ ապահովում էր պետության կայունությունը: Բայց Ք.ա. 5-րդ դարից սկսեցին ուրվագծվել խնդիրներ՝ կապված անհատապաշտական նկրտումների, հարստության, արտադրության ու կառավարման նոր կարությունների հետ: Պարադոքս է, բայց իրողություն. երկարամյա և հյուծիչ Պելոպոննեսյան պատերազմում Աթենքի նկատմամբ հաղթանակ տոնելով՝ Սպարտան ոտք դրեց Ք.ա. 4-րդ դար՝ անպատրաստ Հունաստանն առաջնորդելու պատմական մարտահրավերին: Ք.ա. 3-րդ դարում նշանավոր արքաների ձեռամբ (Ագիս Դ և Կլեոմենես Գ) բարենորոգումների փորձեր ձեռնարկվեցին, սակայն ձախողեցին: Ժամանակը բաց էր թողնվել: Եվ ուժն ու համախմբումը վերափոխվել էին իրենց հակաձևերին:

7. Սոկրատեսի երկու նշանավոր աշակերտները՝ Քսենոփոնը և Պղատոնը, սպարտական անկումի ականատեսներն էին: Քսենոփոնն իր երկասիրություններում խնդիր ուներ պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու Սպարտայի փառքը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է նրա «Լակեդեմոնական սահմանադրությանը»: Մինչդեռ Պղատոնն իր խնդիրը տեսնում էր այլ հարթությունում. մաքրել սպարտական հարացույցն արմատական արատներից՝ գենետիկ-կաստայական հանրակազմ, կառա-

վարման ռազմաժխտական հրամայական, մշակութային-հոգեբանական ինքնաբավություն և այլն: Եվ ձգտում էր բանաձևել ընկերային մի ուտոպիա, որն իրականություն դառնալու հեռանկար չուներ: Սակայն կարևոր էր իբրև մտավոր փորձառություն: Իմաստասիրական այս նախաձեռնության գրության միջավայրը Պղատոնի «Հանրապետությունն» էր:

ՄԱԿԱԲԱՆ



Ի մի բերելով ներկա հետազոտության արդյունքները՝ ցանկանում ենք ներկայացնել դրանից բխող եզրակացությունները հետևյալ համապատկերով:

Հանգույց Ա.

1. Միկենյան, Մուֆ և Արխաիկ դարաշրջանները (Ք.ա. 13–6-րդ դդ.) ցոլանում են իբրև բազմաշերտ համակեցված միջավայրերի փոխակերպության դարաշրջանների մի շարան, որը պարառում էր Բրոնզեդարյան պալատական քաղաքակրթական միավորների փլուզումը, դրան հետևող կյանքի հետադիմությունը մինչև գյուղական համայնքի մակարդակ և ապա համակեցական վերընձյուղումը քաղաք–պետությունների (պոլիս) հանդերձանքով: Արդի հետազոտողն այս հոլովույթը մեկնաբանում է ճգնաժամի տեսության լույսով: Դա ներկայանում է սինուսիդի տեսքով: Երբ այն հասնում է իր ստորագույն մակարդակին՝ հանրույթը (և առաջին հերթին՝ նրա ընտրախավը) փնտրտուք են սկսում իրադրությունը գնահատելու, կառավարելու և ելքի ուղիներ նախանշելու նպատակով:

Հունաստանում դա սկզբնավորվեց Մուֆ դարաշրջանում, երբ ընտրանու դերակատարությունն իրագործում էր հիմնականում քրմական դասը: Ուստի խոսել հասարակաշինական բանական ծրագրերի մասին հարիր չէ: Մնում է ապավինել պատմության

ընդհանրական տրամաբանությանը, որին հանրախմբերն ու անհատները ենթարկվում են՝ պատասխաններ մշակելով իրենց ուղղված նյութական և մտահոգևոր մարտահրավերներին:

2. Մերձավորարևելյան քաղաքակրթական միջավայրերը, որոնց հետ շփվում էր Միկենյան Հունաստանը, գետային էին, լեռնային կամ ծովահայաց: Իրենց նյութական պաշարների, տեխնոլոգիաների և էթնիկ-մարդկային պաշարների պակասը լրացնելու աղագավ դիմում էին «տարածքային ծավալման հնարքին»՝ ձևավորելով գորեղ պետական կառավարում, վարչական համակարգ, բանակ, քրմություն և քարոզչություն:

Հունաստանը գուրկ էր զարգացման նման հնարավորություններից. տարածքը սահմանափակ էր, կտրտված և հիմնականում սակավ բերրի: Չկային խոշոր գետեր, մետաղի հարուստ հանքավայրեր և անտառներ: Հուսկ Բրոնզեդարյան պալատական կենտրոնների հնարավորություններն այստեղ ավելի քան սահմանափակ էին: Եվ նրանց կործանումն ավելի կործանարար եղավ: Ավելին՝ հետագա դարաշրջաններում նրանց վերականգնումը երբևէ չդարձավ համահունական օրակարգի լուրջ խնդիր: Հունաստանը գնաց քաղաք-պետությունների ձևավորման ճանապարհով: Եվ դրանք էլ համասեռ ու միատեսակ չէին. յուրաքանչյուր տարածաշրջանում (Էգեյան ավազան, Փոքր Ասիայի առափնյա շրջաններ, Բալկանյան թերակղզի՝ Թեսալիա, Բեոպոլիա, Ատտիկա, Արգոլիդա, Լակեդեմոն և այլն) ունեին իրենց առանձնահատկությունները: Ի հետևանս՝ չձևավորվեց համահունական մոնոլիթ պետական կազմավորում իր ընկերային կա-

ռույցով, վարչական կազմով և կառավարման համալիրով: Ծնվեց հունական աշխարհը՝ ազգային համախմբում, որը կառուցված էր տարաստեղծությունների հենքի վրա: Դա հանդերձավորվեց մշակութային տարաստեղծություններով և կյանքի կոչեց հունական ազգային ինքնության նոր հարացույցներ՝ ճկուն և բազմաչափ: Դրանք պետք է գերակա դառնային արդեն Դասական դարաշրջանում:

3. Ազգային ինքնության այս նոր հարացույցի կայացման հոլովությունում կարևորագույն դերակատարություն ունեցավ Մեծ գաղութացումը: Ք.ա. 7–6-րդ դարերի հունական ցրումը դեպի բնակեցված աշխարհի հեռավոր ծագեր հետևանք էր բազում պատճառների՝ տնտեսական և ընկերային, քաղաքական և մշակութային, կրոնական և հոգեբանական: Քաղաք–պետությունների սահմանափակ մարդկային ու նյութական պաշարների պայմաններում դրանք հղի էին կործանարար հետևանքներով: Նման հեռանկարից խուսափելու առավել ներուժակ ձևերից մեկը դարձավ դիտարկվող գործընթացը. Կողքիսից մինչև Սպանիա (Իբերիա), հարավային Գաղիայից մինչև Նեղոսի դելտա ընկած տարածքում հույները հիմնեցին շուրջ հինգ հարյուր գաղութ՝ քաղաք–պետություններ, առևտրական հենակետեր, գյուղատնտեսական և արհեստագործական բնակավայրեր:

Ի հետևանս այս ցրումի և գաղութացման՝ հունականությունն ընդունեց համացանցի կերպարանք: Հետագայում ակնհայտ դարձավ դրա բաղադրիչ–գաղութների փոխլրացման միտումը՝ տնտեսության, քաղաքականության, մշակույթի, իրավագիտակցության այլազան տիրույթներում: Եվ դա հունականու-

թյան դիմաց բացեց զարգացման նորանոր հեռանկարներ:

4. Արխաիկ դարաշրջանի Հունաստանում տեղի ունեցավ «տեխնոլոգիական հեղաշրջում»: Կատարվեց աշխատանքի ապասրբագնացում և տարասեռում: Հարդյունս՝ ի հայտ եկան բազում և բազմապիսի արհեստներ՝ սկսյալ մետաղամշակությունից և զինագործությունից մինչև կերամիկա, մանածագործություն և նավաշինություն: Դրանք բոլորը գործառում էին ըստ ազատ և ստեղծագործ աշխատանքի (երգոս), որն իր հերթին խթանում էր նորարարություն և մրցակցություն: Զարգացման հաջորդ շրջափուլը պետք է տասներ խոշոր գործատուների ձևավորմանը (երգաստերիա) և արտադրության սերիականացմանը: Հետագոտողները, հարկավ, ոչ առանց չափազանցության, այս կերպափոխությունը բանաձևում են իբրև «արդյունագործական հեղաշրջում»: Այն տեսանելի հատկագծեր ձեռք բերեց Դասական դարաշրջանում, որոնք ուղեկցվում էին շուկայական հարաբերությունների և դրամական շրջանառության աննախադեպ ընդլայնմամբ: Հենց այս ժամանակ էլ հայտնաբերվեց ծովային երթևեկի հունական կատարյալ միջոցը՝ տրիբենը, եռատախտակամած նավը: Այն թեթև էր, արագընթաց և դյուրին կառավարելի: Եվ ծառայում էր ինչպես առևտրական, այնպես էլ ռազմական նպատակներին:

5. Արխաիկ դարաշրջանի ստեղծագործականությունն ուներ նաև համակեցական դիտանկյուն, որը միտված էր հանրակարգի բանական կերպափոխման նպատակին: Հունական զարգացած քաղաք-պետու-

թյուններում այս հոլովույթն անցել է մի քանի շրջափուլերով: *Առաջինի* գլխավոր գործող անձն ավագանին էր, որը (երբեմն բախման, երբեմն փոխգիշման ճանապարհով) վերջ դրեց տոհմիկ արքաների գերակայությանը: *Երկրորդի* դերակատարը միջին ունեցվածքի քաղաքացիներն էին (հոպլիտներ), որոնց գործունեությամբ քաղաք-պետություններն սկսեցին ոտք դնել ազատականացման ուղի: *Երրորդը* կապվում էր տիրանների հետ՝ «քաղաքական հերոսների», որոնք թեպետ առաջնորդվում էին եսակենտրոն նկրտումներով, սակայն «պատմության անտես խթանի ներքո» հանրույթն առաջնորդում էին դեպի ժողովրդավարություն: Այս «պարադոքսի» հեղինակներն էին Կիսելուսը և Պերիանդրոսը (Կորնթոսում), Թեագենեսը (Մեգարայում), Կլիսթենես Ավագը (Միկիոնում), Պոլիկրատեսը (Սամոսում), Թրասիբուլոսը (Միլեթում), Պիսիստրատեսը (Աթենքում): Տարբեր էին միմյանցից, բայց նրանց հիմնարար բարեփոխությունները համընկնում էին՝ պարտային ստրկության վերացում, պարտքերի (ամբողջական կամ մասնակի) ներում, հողի վերաբաշխում, քաղաքացիության ինստիտուտի ներմուծում, օրենքի գերակայության հաստատում և այլն: Իր դերը կատարելով՝ տիրանիան լքում էր պատմական ասպարեզը երբեմն բռնի ուժի ներքո, երբեմն հասարակական համաձայնությամբ:

6. Նշանակալից էին Արխաիկ դարաշրջանի մշակութային ձեռքբերումները: Դրանք վերաբերում էին մարմնի, խոսքի, մտավոր հարաբերումի տիրույթներին՝ ենթադրելով դրանց նկատմամբ երգաստիկ-ստեղծագործական վերաբերմունք: *Առաջին*, մարմնի կապակցությամբ նման վերաբերմունքն արդյունա-

վորվեց սպորտի ծնունդով. գիմնասիոններում և պալեստրաներում քաղաքացիները մարզվում էին՝ փոխելով իրենց մարմնական բնությունը: Եվ ծնվում էր մարզիկը (ἀθλητής), որի անունը հաճախ մեկնաբանվում էր իբրև «ազնվագարմ»: Դրան հետևում էր մրցակցությունը համահունական և տեղական մրցումներում: Ամենահայտնի Օլիմպիական խաղերն էին, որոնք կազմակերպվում էին Էլիդա երկրամասում՝ սկսյալ Ք.ա. 776 թվականից: Հաղթանակը մարզիկին տալիս էր համահունական ճանաչում և հեղինակություն: *Երկրորդ*, խոսքի պարագային պետք է հատկազօել հետևյալ կերպափոխությունը. երգաստիկ ներգործությամբ մի կողմից՝ բանական քննության ենթարկվեցին ավանդական ասքերը (Հոմերոս), մյուս կողմից՝ ստեղծվեց դիդակտիկ (ուսուցողական) էպոսը (Հեսիոդոս): Ի հետևանս հետագա անհատականացման՝ կյանքի կոչվեց քնարական քերթարվեստը՝ Տիրտեոսից մինչև Պինդարոս, Ալկմանից մինչև Սապֆո: *Երրորդ*, նույն կերպափոխության ծիրում հարկ է դիտարկել նաև թատրոնի ձևավորման հոլովույթը: Երգաստիկ-ստեղծագործական խթանով Դիոնիսոսին նվիրված ծիսակարգն սկսեց բանականացվել և վերաձևակերպվել իբրև դրամատիկ խաղընթաց՝ իր հատակ իմաստային սկզբով, զարգացմամբ և ավարտով: Այն հավակնում էր բացահայտելու հանրույթի և անհատի «աներևույթ-թաքուցյալ, սակայն հույժ կարևոր» դրսևորումները՝ ծիծաղի և լացի համաձիրում:

7. Մտավոր համաբերումը հիշյալ կերպափոխությունների մյուս կարևոր օղակն էր: Վերջինիս կայացման միջավայրն արխատոկրատական գրույց-խնջույքն էր՝ կառուցված ըստ մտքի գեղագիտության կանոնի՝

փաստարկ, մեկնություն, մտահանգում, հասկացում: Ընդամին, տղամարդկանց մտավոր այս մերձեցումը զարգանում էր նախապես ընտրված որևէ թեմայի շուրջ՝ բարոյագիտական, քաղաքագիտական, իմաստասիրական: Դա ծավալվում էր երաժշտության, գեղագիտական պահվածքի ու խոսքի տիրույթում: Ընդունված է մտածել, որ այստեղից էլ մակածվել է հունական իմաստասիրությունը՝ որպես աշխարհի, մարդկային համակեցության և *ընկերային կենդանու* (քաղաքացի) վերլուծության և հասկացման մտավոր միջավայր:

Հանգույց B.

1. Սպարտական հանրակարգն ու կառավարման համակարգն արդյունավորվել էին Հետմիկենյան դարաշրջանի կերպափոխություններից՝ համեմված տեղական առանձնահատկություններով: Ասվածն առաջին հերթին վերաբերում էր դորիական նվաճմանը: Այս երկրամասում վերջինս սաստիկ երանգներով էր ընթացել. նվաճող փոքրամասնությունը նվաճվածների զանգվածը (աքայացիներ) իջեցրել էր պետական ստրուկների կամ թերարժեք քաղաքացիների մակարդակի: Ռազմական հրամայականի ներքո ձևավորվել էր կաստայական ընկերային միջավայր՝ սպարտիատներ, պերիոյկոսներ, հելոտներ: Դրանց իրավաքաղաքական և կրոնաքարոյական սահմանները հաստատուն էին և անանցանելի:

2. Հետագա հանրակարգային կերպափոխությունները հետազոտողները կապում են «պոլիսային», իսկ ապա՝ «հոպլիտական» հեղափոխությունների հետ:

Առաջինը դորիական գյուղական համայնքներից ձևավորեց քաղաք-պետությունը՝ կառուցված արքայական իշխանության և տոհմիկ ավագանու համաձայնության վրա: *Երկրորդն* այդ համաձայնության ծիրի մեջ ներբերեց նաև միջին կարողության սպարտիատներին, որոնք դարձան նոր տիպի բանակի (փաղանգ) հիմքը: Եվ կրկին՝ առանց ցնցումների, զի տիրապետող փոքրամասնության համախմբման նպատակին էր միտված:

3. Դրան հաջորդեց բարեփոխությունների մի ամբողջ շարք, որը խնդիր ուներ կանոնակարգելու կատայական հանրակարգն ըստ քաղաքական և կրոնա-ծիսական հաստատությունների՝ Մենիշխանություն (արխեգետտոսներ), Ծերակույտ (Գերուսիա), Աշխարհաժողով (Ապելլա), Էփորատ: Այսու հաստատագրվեց նաև դասերի իրավական վիճակը և հարաբերումի ձևը ինչպես հանրակարգում, այնպես էլ ռազմակարգում: Հայսմ՝ Սպարտայում իր ավարտին հասավ ռազմա-ծիսական հրամայականի գերակայությունը: Ասվածին հավելենք, որ դարերի ընթացքին իրագործված այս բարենորոգումներն սկսեցին հստակ համակարգվել մեկ փաստաթղթի մեջ՝ «Մեծ ռեթրա», և վերագրվել լեգենդար պետականաստեղծ հերոսին՝ Լիկուրգոսին:

4. Համաձայն *Ռեթրայի*՝ հանրակարգի շարունակականությունը հնարավոր է ապահովել նախ և առաջ կրթական համալիրի միջոցով: Համոզում կար՝ սպարտիատ դառնում են համապատասխան ընկերային պայմանների ներքո: Անցնելով կրթանքի հետևողական ընթացքով ու քննություններով՝ սպարտիատ մանուկը դառնում էր տղեկ, պարման,

իսկ ապա՝ այր: Այս ամենն ուղեկցվում էր դաժան մրցակցությամբ, որը բացահայտում էր տվյալ սերնդի ապագա առաջնորդներին: Սպարտիատի իրական հասունությունն սկսվում էր երեսունմեկ տարեկանից: Այդժամ նա արդեն լիիրավ զինվոր էր, քաղաքացի, հողատեր և ընտանիքի հայր:

Սպարտիատի հասարակական կայացմանը միտված էր նաև մեկ այլ կարևոր հաստատություն՝ *ընդհանուր վրանը* (սիսկենիա): Միավորում էր տարբեր տարիքի մինչև տասնհինգ-քսան այրերի՝ համատեղ ընթրիքի աղագավ: Բայց սնունդն ամենակարևորը չէր. աստ անբռնագրոս գրույց էր ընթանում տարբեր հարցերի շուրջ՝ ռազմական գործ և կառավարում, իրավունք և բարոյականություն, պետական շահ և արտաքին քաղաքականություն: Հընթացս ձևավորվում էր վրանի անդամների աստիճանակարգ, որի վերին հարթակին էին իմացողները, փորձառուները, քաջարիները: Այն հաճախ չէր համընկնում պետական-պաշտոնական աստիճանակարգի հետ: Այդու՝ համատեղ վրանը (խորքային իմաստով) հակակշիռ էր Սպարտայի պաշտոնական պետական կառույցին: Եվ այդ առնչությամբ ընկալվում էր իբրև հանրային կյանքի հույժ կարևոր օղակ: Նրա անդամները միասնական էին Աշխարհաժողովում: Հաճախ՝ նաև ռազմակարգում:

5. Պաշտոնական քարոզչությունը պարուրել էր *Ռեթրան* առասպելածիսական շղարշով: Եվ դրա մեջ տեսնում էր աստվածային Ապոլոնի կամքը՝ համոզված, որ տեքստի փոփոխություններն անհարկի են: Հարկ է սոսկ կատարել նախանշված պատգամներ:

րը: Հընթացս ժամանակի դա հանգեցրեց Արխաիկ դարաշրջանի էրգաստիկ-ստեղծագործ խթանի թուլացման: Եվ կառավարման բնական միջոց սկսեց համարվել կրոնաքարիզմատիկ և ռազմական հրամայականը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Ներքինի վերաբերյալ խոսք եղավ: Ինչ վերաբերում է արտաքինին, այն տարավ Սպարտայի ծավալմանը՝ նախ Պելոպոննեսի ծիրում, ապա՝ դրանից անդին: Հուսկ ծնվեց Պելոպոննեսյան ուժային կենտրոնը, որը դարձավ պահպանողականության հենարանը ողջ հունական աշխարհում: Հանդերձ այդու՝ այս գերակայությունն ուներ նաև որոշակի «գրավչություն», զի լինելով ինքնաբավ ընկերային-քաղաքական կառույց՝ Սպարտան չէր հետապնդում միայն իր «բացարձակ և հավերժական» շահերը: Հաշվի էր նստում նաև դաշնակիցների ձայների հետ: Եվ այս հավասարակշռությունը շուրջ երկուսուկես հարյուրամյակ ապահովեց նրա առաջնորդությունը հունական կյանքում:

6. Սակայն անհնար էր արմատապես շրջանցել պատմության տրամաբանությունը: Եվ հընթացս ժամանակի Սպարտայում նույնպես սկսեցին գորանալ մտքի ու պահվածքի անհատակենտրոն որակներ: Դրանք ակներև դարձան Ք.ա. 6-րդ դարում և հասան իրենց բարձրակետին Ք.ա. 5-րդ դարի երկրորդ կեսին: Հոլովույթի մեջ ընդգրկվեցին արքաներ, էփորներ, ավագանու ներկայացուցիչներ: Տարբեր շարժառիթներով նրանք աշխատում էին կերպավիժել ավանդական սպարտական հանրակերպը: Մանավանդ, որ առկա էին դրա առարկայական պատճառ-

ները՝ արտադրական ու ռազմական տեխնոլոգիաների անբավարար մակարդակը, սպարտիստների թվաքանակի կտրուկ անկումը: Բարենորոգման բոլոր փորձերն ի դերն ելան: Եվ հանրահայտ սպարտական կայունությունը հանգուցալուծվեց մի տարօրինակ իրավիճակով. Պելոպոննեսյան երկարատև պատերազմում հաղթանակ տոնելով Աթենքի նկատմամբ՝ Սպարտան ոտք դրեց Ք.ա. 4-րդ դար՝ հյուծված ու անկարող առաջնորդելու հունական աշխարհը: Եվ մեկընդմիջտ կորցրեց իր պատմական շանսը:

7. Պղատոն իմաստասերը փորձել է գրույթի տարածքում ի կատար ածել այն, ինչ հնարավոր չեղավ իրական կյանքում: Իր «Հանրապետությունում» բանաձևել է իդեալական հանրաձևը՝ մեկնարկելով Սպարտայի նախատիպից: Սակայն ձերբազատել է այն «ծննդյան արատներից», ի մասնավորի, *գենեյրիկ կաստրայականությունից* և ծայրահեղ ինքնաբավությունից: Եվ հյուսվել է մի ուտոպիկ տեքստ, որը երբեմն համեմատում են կամերտոնի հնչումի հետ. մելոս չէ, բայց նպաստում է դրա կայացմանը: Դա է պատճառը, որ այն առ այսօր հետազոտական սևեռումի առարկա է:

ANCIENT GREECE. RESEARCH ESQUISSES, V. 1.

From the Archaic Social Transitivity to the Spartan Ritual and Military Stability

CONCLUSION

The volume looks at the interpretation and understanding of the main results of Greek history from the Mycenaean collapse to the late classical period (c. 12th – 4th centuries BC.).

1. It covers two main aspects of the problem. In particular, the first focuses on the crucial metamorphoses of the Archaic period (8th–6th centuries BC.), including new technologies in material production and social integration, political regimes and culture, religious beliefs, and social psychology. The two valuable results of the epoqe are put out by modern scholars – on the one hand, the formation of the city-state, the universal paradigm of social and political consolidation of Greeks, on the other hand, the *hoplitization* of the army (phalanx), which is credited with paving the way for the democratization of society. All these metamorphoses implied the Greek way of socialization after the Bronze Age collapse. Greece entered the Archaic Age as a *world of numerous city-states* with their peculiarities in social structure, government, religion, and culture. Despite military

clashes and enmity, they complemented each other. Another aspect of the Archaic Age was the Great Colonization from Caucasian Colchis to Spain (Iberia), which reshaped the Greek world into a network based on various state and individual relationships. Greeks entered into active contact with other tribes and nations, which changed the borders of their identity.

2. The next aspect of our investigation concerns the Spartan social experience. In the extreme ethnic conditions, the creative aspirations of the Spartans met with serious impediments and lost momentum. At the social level, this gave rise to the strict military domination of the Spartiates (the Dorian minority) over the entire population of Lacedaemon (the Achaeans majority). This confrontation gave rise to self-sufficient (autarkic) social estates, including the Spartans, Perioeci, and Helots. The Spartiates with full social and political rights were at the top of this pyramid. They constituted the "community of equals" led by kings, the elite, and the priesthood. They owned all the land of the state and other resources. The perioeci were on the second level. They had personal freedom, lived in autonomous cities, and were engaged in crafts and trades. However, they did not have the right to vote. The helots occupied the lowest level of the social pyramid: they were slaves, attached to land allotments that belonged to the state. They were distributed among Spartiate families without the right of alienation.

3. The last two estates made up the majority of the population in Sparta. Overcoming this imbalance, Spartiates enhance and consolidate the government resources exclusively. The political regime of Sparta had a tripartite configuration, including elements of monarchy, aristocracy, and democracy. All these institutions were accessible only for the Spartiate minority. The first element was represented by two kings, the descendants of the two most prominent families. The second was the Gerousia (Senate), the house of elders distinguished for their ancestry and merits. The third represented the Public Assembly open to all Spartiates. At a later date, a new institution was introduced to

counterbalance the absolutization of kings and elders. It came to be known as the colleague of the ephors.

4. Despite origin, the social status of a Spartiate was determined by his education, which consisted of four stages. Passing through them, a boy grew into a full-fledged citizen who had his place in the Popular Assembly and Phalanx. Severe competition and examinations selected their leaders. After that, the young Spartiate gained the right to marry. He also gained entrance into male unions with a hierarchy (in some cases) different from that of the official.

5. All aspects of Sparta's social institutions were installed and described in the "Lycurgan Rhetra", the constitution of the legendary reformer of the 7th century B.C. It brought, on the one hand, strict stability to Spartan life, but, on the other hand, contained elements of degradation. These tendencies acted in parallel. The first generated a strict hierarchy, excluding creativity in various areas, from technology to mentality and forms of social organization. As a result, they were ritualized. Ritualized strategy and tactics reshaped the Spartan military forces into the most powerful army of the time. Through that, Sparta subjugated the Peloponnese and part of Central Greece, and founded the *Peloponnesian League*.

6. The second tendency had less impact in the initial stage of history, but gained momentum in the Classical period. It was combined with the individualization of history. Sometimes, kings and ephors deviated from the traditional way, proposing reforms in various areas of Spartan life. They acted under communal or individual stimuli. However, at the beginning of the 4th century, both resources were exhausted. It became explicit after the victory over Athens in the long Peloponnesian War. Sparta declined under the burden of "glorious successes." Soon, its irrelevance in leading and ruling Greece also became evident. And its degradation gradually became irreversible.

7. The last problem under consideration is the Platonic text on the ideal social organization described in the "Republic".

It is usually credited to have been composed after the Spartan paradigm. However, this reflects only the first impression. The philosopher's approach to the Spartan affairs is complicated, he intended to overcome their *innate vices*.

He proceeded from the concept about a human being consisted of three principal elements, bodily, affective, and mental. Their correlation was thought to be strictly personal, distributed to everyone from birth. Consequently, they were dominated by one element, either bodily, affective, or mental. This heritage had to be developed through education, resulting in philosopher-rulers, soldiers, and producers. In other words, Plato drew on the concept of anthropomorphism to envision an ideal society. Despite real parents, nature and destiny determined the essence of every citizen. Therefore, a philosopher-ruler could give birth to a producer and vice versa. Plato believed that the knowledge of the nature of members of the ideal community and their relevant education would pave the way to eradicate the principal vice of Sparta, the genetic separation and autarky of social estates. However, the philosopher's program was too schematic and had no chance to be carried out in real historical time and conditions. For centuries, it remained an interest for intellectual aesthetes of the West.

ՀԱԿԻՐԱՆՔ

- AA* 2000, R. Brock, S. Hodkinson (eds), *Alternatives to Athens: Varieties of Political Organization and Community in Ancient Greece* (Oxford, UP).
- AC* *L'Antiquité Classique*.
- AGC* 1993, M. H., Hansen (ed.), *The Ancient Greek City-states*. (Copenhagen, The Royal Danish Academy of Science and Letters).
- AH* *Ancient History*.
- AHB* *Ancient History Bulletin*.
- AJA* *American Journal of Archeology*.
- AS* *Ancient Society*.
- ASI* 1966, E. Badian (ed.), *Ancient Society and Institutions* (Oxford, Blackwell).
- BASA* *Behavior Analysis and Social Action*.
- BCS* 2012, A. Bengakos and A. Tsamakis (eds.), *Brill's Companion to Sparta* (Leiden and Boston, Brill).
- BICS* *Bulletin of the Institute of Classical Studies*.
- BJS* *The British Journal of Sociology*.
- BS* *Byzantine Studies*.
- CA* *The Classical Antiquity*.
- CAE* 2015, M. Bloomer (ed.), *A Companion to Ancient Education* (Malden (Ma), Oxford, Wiley Blackwell).
- CAG* 2009, K. A. Raaflaub, H. van Wees (eds), *A Companion to Archaic Greece* (Malden (Ma), Oxford, Wiley-Blackwell).
- CANE* 2020, D. C. Snell (ed.), *A Companion to the Ancient Near East*, 2d ed. (Hoboken, Wiley Blackwell).

- CCABA* C. W. Shelmerdine (ed.), *The Cambridge Companion to the Aegean Bronze Age* (Cambridge, UP).
- CCAG* 2007, H. A. Shapiro (ed), *The Cambridge Companion to Archaic Greece* (Cambridge, UP).
- CCAGPT* 2009, S. Salkever (ed.), *The Cambridge Companion to Ancient Greek Political Thought* (Cambridge, UP).
- CCR* *Comparative Civilizations Review*.
- CEH* 2007, W. Scheidel, I. Morris and R. Saller (eds), *The Cambridge Economic History of the Greco-Roman World* (Cambridge, UP).
- CGR* 2007, D. Ogden (ed.), *A Companion to Greek Religion* (Malden (Ma), Oxford, Blackwell).
- CIHAG* 2002, P. Cartledge (ed.), *The Cambridge Illustrated History of Ancient Greece* (Cambridge, UP).
- CJ* *The Classical Journal*.
- CP* *Classical Philology*.
- CPBA* 2015, B. Knapp and P. van Dommelen (eds), *Cambridge Prehistory of Bronze and Iron Age Mediterranean* (Cambridge, UP).
- CPGC* 2001, A. J. Graham, *Collected Papers on Greek Colonization* (Leiden. Boston. Köln, Brill).
- CQ* *The Classical Quarterly*.
- CR* *The Classical Review*.
- CS* 2018, A. Powell (ed.), *A Company to Sparta*, v. 1 (Hoboken (NJ), Blackwell & Sons).
- CSSH* *Comparative Studies in Society and History*.
- CW* *The Classical World*.
- DHI* 1974, W. P. Philip (ed.) *Dictionary of the History of Ideas*, v. 4 (Virginia, UP).
- DPAG* 1997, L. G. Mitchell and P. J. Rhodes (eds), *The Development of the Polis in Archaic Greece* (London, New York, Routledge).
- EA* 1989, I. M. Diakonoff (ed.), *Early Antiquity* (Chicago & London, Chicago UP).
- GACP* 2019, M. Foster, L. Kurke, N. Weiss (eds), *Genre in Archaic and Classical Poetry: Theories and Models, Studies in Archaic and Classical Greek Song – 4* (Leiden, Brill).

- GEB* Games and Economic Behavior.
- GEI* 2016, I. Rutherford (ed.), Greco-Egyptian Interactions: Literature, Translation, and Culture, 500 BC. – AD. 300 (Oxford, UP).
- GH* 1992 J. D. Hunt (ed.), Garden History: Issues, Approaches, Methods (Washington DC., Harvard UP).
- GR* Greece and Rome.
- GVV* 2018, A Kampakoglou and A. Novokhatko (eds), Gaze, Vision, and Visuality in Ancient Greek Literature (Berlin, Boston, De Gruyter).
- HM* 2003, N. Luraghi and S. E. Alcock (eds.), Helots and their Masters in and Messenia: Histories, Ideologies, Structures. Hellenic Studies 4 (Washington DC. Center for Hellenic Studies).
- HPT* History of Political Thought.
- IACP* 2004, M. D. Hansen and Th. H. Nielson (eds.), An Inventory of Archaic and Classical Poleis (Oxford UP).
- IS* 2011, T. Kämmerer (ed.), Identities and Societies in the Ancient Near East – Mediterranean Regions (Münster, Ugarit Vrlg).
- ISSR* The International Social Science Review.
- JAGPT* The Journal for Ancient Greek Political Thought.
- JAH* The Journal of Acts and Humanities.
- JAR* The Journal of Archaeological Researches.
- JAS* The Journal of Archeological Science.
- JESHO* The Journal of the Economic and Social History of the Orient.
- JGH* The Journal of Garden History.
